ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

N 14 (644)
11 ՕԳՈՍՏՈՍԻ 2025Թ.

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



ՀԱՅՈՑ ՄԵԾ ԱՐԱՄԸ՝ ԿԱՊԱՆԱ ՏԵՒՑ

Արամ Սահակյանի արձանը Երևանի Դանդուրեանների հրապարակի մոտ
2018 թ., քանդակագործ՝ Դավիթ Սրմաստյան

ISSN 1829-3468
9 771829 346006 25014



...Մենակ ենք և պետք է ապավինենք միա՛յն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու, և թե՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար:

Արամ Մանուկյան



Կապան. Համալսարան

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ

հայ քանդակագործների ստեղծագործություններում

Արամ Մանուկյանի կիսանդրին Կապանում, քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան, 2009 թ.

Արամ Մանուկյանի կիսանդրին Գյումրիում, քանդակագործ՝ Թադևոս Գևորգյան, 1989 թ.

Արամ Մանուկյանի կիսանդրին ՀՀ ոստիկանության շենքի դիմաց, քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան, 2009 թ.



Արամ Մանուկյանի հարթաքանդակը Դավիթբեկի դպրոցում, քանդակագործ՝ Դերենիկ Ահարոնյան

Արամ Մանուկյանի կիսանդրին ծննդավայր Դավիթբեկում, վերականգնող քանդակագործ՝ Դերենիկ Ահարոնյան

«Ժառանգություն» կոմպոզիցիա-քանդակ Կապանում, քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան, 2009 թ.

Համարի բովանդակությունը

4-5 **Արամ Մանուկյանի կերպարը հայ քանդակագործների ստեղծագործություններում**

Նախագծի հեղինակը և հովանավորը

8 Արամ Մանուկյանը՝ ընդօրինակման արժանի պետական ու ազգային գործիչ

Խոսք համարի առիթով

10 Հայաստանի ներքին գործերի առաջին նախարարը

Խմբագրական

11 Սյունյաց աշխարհի փառապանծ զավակ Արամ Մանուկյանը

Վան-Վասպուրականում

18 Վանի նահանգապետությունը (1915 թ. մայիսի 7–հուլիսի 18) հայոց նորագույն պետականության նախատիպ

23 Արամ Մանուկյանը Վանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար

26-27 Վանի ինքնապաշտպանությունը

28-29 Վասպուրականցիների գաղթը

1918 թ. Մայիսյան հերոսամարտերից առաջ և հետո

30 Արամ Մանուկյանի գործունեությունը Սարդարապատի հերոսամարտի օրերին

34-35 Սարդարապատի, Բաշ–Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերը

36 Արամ Մանուկյանը՝ ժողովրդական դիկտատոր

38 Իրադրությունը ՀՀ–ում Մայիսյան հերոսամարտերից հետո. Արամ Մանուկյանը Վարիչների մարմնի նախագահ

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման պատմությունից

42 Արամ Մանուկյանի պետական գործունեությունը

44 Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայրերը. Արամ Մանուկյան և Ռոստոմ

49 Արամ Մանուկեանը՝ ՀՀ ներքին գործերի առաջին նախարար (1918-1919 թթ.)

Հայ-թուրքական շփումները 1918 թ. 2-րդ կեսին

56 Հովհաննես Քաջազնունու և Արամ Մանուկյանի հանդիպումը Խալիլ փաշայի հետ Երևանում. 1918-ի օգոստոս

Մահը, հուղարկավորությունը

60 Ի՞նչ էր կատարվում Արամ Մանուկյանի հուղարկավորության ժամանակ Երևանում

62 Երևանի Սուրբ Պողոս–Պետրոս եկեղեցին, որտեղ դրվել էր Արամ Մանուկյանի աճյունը

63 Նիկոլ Աղբալյանի դամբանական խոսքը Արամ Մանուկյանի հուղարկավորության ժամանակ

64-67 **Համարի ֆոտոալբոմը**

Հիշողություններ և կարծիքներ

68 Արամ և Ռոստոմ

71 Արամ Մանուկյանը Ռուբենի հուշերում

74 Արամ

77 Արշավիր Շահխաթունու հուշերից

78 Արշալույս Աստվածատրյանի հուշերից

79 Սարգիս Օհանջանեանի /Ֆարհատի/ հուշերից

80 Զորավար Սիլիկյանի, Գարեգին Նժդեհի և Շահան Նաթալիի կարծիքները

Գրականագիտություն

81 Հատված Դավիթ Գասպարյանի «Գուրգեն Մահարի. կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունից

86 Հատված Կիմ Աղաբեկյանի «Գուրգեն Մահարի» գրքից

92 Երկու Արամ

95-97 **Գաղափարակիցներ, մարտական ընկերներ**

Կենսագրություն. ճշգրտումներ ծննդավայրի հարցում

98 Թե ինչպես Չեյվա (Դավիթբեկ) գյուղում ծնված Սարգիս Հովհաննիսյանը դարձավ Արամ Մանուկյան

100 Արամ Մանուկյանի դուստր Սեդայի նամակն Արմեն Ասրյանին

105 Արամ Մանուկյանի ծննդավայր Դավիթբեկ (Չեյվա) գյուղը

107 Արամը

109 Արամի մասին (հատված Թադէի հուշերից)

Արխիվային նյութեր

110 **Էջեր «Արամ Մանուկյան. փաստաթղթերի ժողովածու»-ից**

119 **Ֆիլմեր և հեռուստահաղորդաշարեր՝ նվիրված Արամ Մանուկյանին**

Արամ Մանուկյանը երգերի մեջ

120 Արամ Մանուկյան (Ռաֆֆի Հալէպլեան)

121 Արամ Մանուկյան (Սուրեն Աճէմեան, Գուսան Հայկազուն)

122 Անունը՝ Արամ (Սաքո Բուդուգյան)

123 Շուշի՝ հայոց հնամյա պատմության առասպելը, որտեղ մանկությունն է անցկացրել Արամ Մանուկյանը

124-125 **Հայաստանի առաջին հանրապետությունը**

Հիշատակի հավերժացում

126 Սարդարապատում բացվել է Արամ Մանուկյանին նվիրված հուշակոթող

127 Արամ Մանուկյանի հողմասունքը՝ նրա հուշակոթողի մեջ՝ Սարդարապատի վեհ բարձունքում

129 Արամ Մանուկյանի անձնական իրերը թանգարանում

130 Արամի փողոցը Երևանում

130 Արամ Մանուկյան փողոցը Կապանում

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Գրանցման վկայական՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 16.5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000: Ստորագրված է տպագրության 01.08.2025թ.:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿԸ ԵՎ ՀՈՎԱՆԱԿՈՐԸ

Արամ Մանուկյանը՝ ընդօրինակման արժանի պետական ու ազգային գործիչ

Ողջունում եմ «Այունյաց երկրի» հերթական հատուկ համարի ծնունդը, որը նվիրված է Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր, ազգային ու պետական նշանավոր գործիչ, հայոց արժանապատվության խորհրդանիշ, քրիստոնեական ու ազգային մեր արժեքների նվիրյալ Արամ Մանուկյանին:

Եղել ու մնում եմ կարծիքին, որ Հայաստանի հարավային մայրաքաղաք Կապանը ժամանակների հոլովույթում կենսունակ և իր առաքելության մեջ հաստատուն է եղել ու շարունակում է այդպիսին մնալ նախևառաջ իր հերոսական պատմությամբ, մեր փառապանծ նախնիների մասին չխամրող հիշողությամբ:

Գևորգ Փարսյան
Կապան համայնքի ղեկավար

Այդ տրամաբանությամբ ու այդ սկզբունքով էլ այսօր ոգեկոչում ենք Արամ Մանուկյանի հիշատակը:

Համարում կարևոր տեղ է զբաղեցնում հայրենագիտական, գիտակրթական ու դաստիարակչական բաղադրիչը, որը մեր օրերում պահանջված հանգամանք է:

Սակայն, դրա հետ մեկտեղ ու առաջին հերթին, ներկայացվում է պետականակերտ ու պատմակերտ, հայ ժողովրդի ազատագրական պայքարի ջատագով ու կազմակերպիչ Արամ Մանուկյանը:

Նրա կյանքն ու գործունեությունը, առանց չափազանցության, դասագրքային բացառիկ օրինակ են և պատասխան են հարցերին, թե ինչ են պետությունն ու պետականությունը, ինչ է դիվանագիտությունը, ինչ ասել է համազգային միասնություն ու համերաշխություն և ինչպես կարելի է դրան հասնել, ինչպես պետք է հարաբերվել-երկխոսել հարևան ժողովուրդների հետ՝ իբրև անսակարկելի անկյունաքար ունենալով հայ ժողովրդի շահերը: Դասագրքային օրինակ են նաև նրա պատկերացումներն իշխանության, իշխանավորի ու նրա վերկուսակցական-վերանձնական վարքի մասին:

Մեր ժողովրդի դարերի պատմության մեջ, անշուշտ, ոսկե տառերով է գրված Վան-Վասպուրականի 1915 թ. ապրիլ-մայիսյան ինքնապաշտպանության, դրա շնորհիվ ստեղծված Վանի նահանգապետության մասին: Հերոսական այդ իրադարձությունների ընթացքում նորովի երևան եկան Արամ Մանուկյանի կազմակերպչական բացառիկ տաղանդը, պետական գործուն և ժողովրդանվեր իշխանություն ստեղծելու նրա կարողությունը, հայ մարդու ֆիզիկական ապահովության համար գործադրած ջանքերը:

Այդքանով հանդերձ՝ ինձ միշտ էլ հաճելիորեն զարմացրել ու զարմացնում է Արամ Մանուկյանի գործունեությունը 1918 թ. մայիսյան օրերին:

Թշնամին Երևանի ու Էջմիածնի մատույցներում էր, Ալեքսանդրապոլում թուրքն էր տեր ու տիրական դարձել, ամենուրեք խուճապ էր... Թվում էր, թե ուր որ է՝ պատմական թատերաբեմից դուրս կմղվի հազարամյա Հայաստանը, իսկ հայ բնակչությունը նոր ցեղասպանության կենթարկվի, բայց...

Բախտորոշ այդ հանգրվանում, սակայն, ճակատագիրը հայ ժողովրդին էր պարգևել Արամ Մանուկյան, Մովսես Սիլիկյան, Դրո, Գարեգին Նժդեհ և բազում այլ փառապանծ գործիչներ: Ու նրանք,

ամբողջ ժողովրդին ոտքի հանելով, իսկական հրաշքներ գործեցին, անկարելին իրականություն դարձրին: Սարդարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում թուրքական գերակշռող ուժերը պարտություն կրեցին ու նահանջեցին:

Եվ ոչ միայն փրկվեցին Հայաստան աշխարհն ու հայ ժողովուրդը, այլև իրականություն դարձավ դարերի մեր ազգային ամենագլխավոր երազանքը՝ վերականգնվեց կորսված հայոց անկախ պետականությունը:

Երբեմն ինքս ինձ հարցնում եմ՝ արդյո՞ք մեզանում կա պատշաճ գիտակցում այն ամենի, ինչ տեղի ունեցավ 1918 թ. մայիսյան օրերին: Արդյո՞ք կա պատշաճ գիտակցում, թե պատմական ի՞նչ նշանակություն ունեցավ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրումը: Չէ՞ որ հետագայում չէին լինի Հայաստանի երկրորդ և երրորդ հանրապետությունները, եթե չհիմնադրվեր առաջին հանրապետությունը: Չէր լինի նաև մեր այս օրը, եթե չլիներ առաջին հանրապետությունը, որի հիմնադիրն էր հայ ժողովրդի պարծանք, մեր հայրենակից Արամ Մանուկյանը:

Առիթից օգտվելով՝ երախտագիտությունս եմ հայտնում հայագիտության այն նվիրյալներին, ովքեր անգամ պետական մակարդակով հարուցված դժվարություններին, դեռևս խորհրդային տարիներին առանձին հոդվածներով շատ թե քիչ արթուն են պահել Արամի մասին հիշողությունը:

Երախտագիտությունս բոլոր այն հայագետներին, ովքեր անկախության տարիներին, նաև մեր օրերում, գիտական ուսումնասիրություններով, հետազոտություններով, լրագրային հրապարակումներով ճշմարտացիորեն ներկայացնում են Արամի կյանքն ու գործունեությունը:

Վահանավանքի Մայր տաճարը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

Կարծում ենք՝ այդ առումով ուշարժան իրադարձություն կլինի ծննդավայր Դավիթբեկ (Չեյվա) գյուղում Արամ Մանուկյանի տուն–թանգարանի հիմնումը, որը նաև պատշաճ գործընկեր կլինի թեմայով հետաքրքրվող գիտնականների, ուսանողների ու դպրոցականների համար:

«Այունյաց երկրի» սույն համարով, տուն-թանգարան ստեղծելով, գիտաժողովներ ու քննարկումներ կազմակերպելով, թեմային առնչվող գիտական հետազոտություններ իրականացնելով՝ փորձում ենք Արամին լիարժեքորեն վերադարձնել հայ ժողովրդին, որին նվիրել է իր ամբողջ կյանքն ու գործունեությունը:

Խոնարհվում եմ Արամ Մանուկյանի անշեջ հիշատակի առջև: Բայց դրանից առաջ այլ բան կուզենայի ասել՝ գոնե ուշացումով սովորենք Արամ Մանուկյանից, հանուն հայոց պետության ու պետականության, հանուն հայ ժողովրդի ապահովության ու արժանապատվության ապրենք ու գործենք այնպես, ինչպես ինքն էր ապրում ու գործում...

Կապանի հովանավոր լեռը՝ Խուստուփը

ԽՈՍՔ ՀԱՅՐԻ ՄԻԹՈՎ

Հայաստանի ներքին գործերի առաջին նախարարը

Ազգային և պետական մտածողության մեծագույն նվիրյալ էր Հայաստանի ներքին գործերի առաջին նախարար Արամ Մանուկյանը: Մարդ, ով ուներ ռազմաքաղաքական ու պետական գործչի, տաղանդավոր կազմակերպչի ու ղեկավարի բացառիկ ունակություններ:

Արամ Մանուկյանը Հայաստանի առաջին հանրապետության ներքին գործերի առաջին նախարարի պաշտոնը ստանձնեց 1918 թվականի հուլիսի 26-ին և պաշտոնավարեց մինչև մահը՝ 1919 թվականի հունվարի 29-ը: Երկրի համար աննկարագրելի ծանր ժամանակներում հենց Արամ Մանուկյանն էր այն պետական գործիչը, ով կարող էր այդ խառնակ օրերին կարգ ու կանոն, ներքին անդորրություն ու անվտանգություն ապահովել, - այդպիսին է նրա մասին հավաքական կարծիքը:

Ներքին գործերի նախարարի պաշտոնում Արամ Մանուկյանն անասելի դժվար առաքելություն ուներ: Մեծ չափերի էին հասել հանցագործությունները, այդ թվում՝ հրազենի գործադրմամբ սպանություններն ու ծանր հանցագործությունները: Այդ խնդիրների լուծման կարևոր միջոցներից մեկը բնակչության մոտ գտնվող զենք-զինամթերքի առգրավումն էր: Արամ Մանուկյանը նախաձեռնեց բնակչության մոտ պահվող զենք-զինամթերքի պետականացման մասին օրենքի ընդունումը: Նա մասնավոր զենք-զինամթերքը պետականացնելը հիմնավորում էր հետևյալ կերպ. եթե ժամանակին ժողովրդին զինելն անհրաժեշտ էր նրա ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով, ապա պետության գոյության պարագայում քաղաքացու անձեռնմխելիությունը, ունեցվածքի և իրավունքների պաշտպանությունը պետության պարտականությունն է:

Արամ Մանուկյանը ժողովրդի հետ ամենօրյա անմիջական շփումների մեջ էր, գերազանց գիտեր նրանց հուզող խնդիրները՝ դրանց լուծումը դարձնելով իր կարևորագույն գործերից մեկը: «Կան դէպքեր, երբ օրէնքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցաւորներ կը դառնանք, մանաւանդ այնպիսի ծանր ու անբնական ժամանակներում, երբ դէպքերը տեղի են ունենում գահավէժ արագութեամբ եւ ստեղծում դրութիւններ, որոնք օրէնքը չէր կարող նախատեսել»,- նաև այսպիսին էր ծանր կացության մեջ գտնվող ժողովրդի վիճակը կիսող Արամ Մանուկյանի վերաբերմունքը: Ամեն կերպ ձգտում էր նախարարության աշխատակիցների մեջ սերմանել ծառայության նկատմամբ սրտացավություն, բարեխղճություն, պետականամետ մոտեցում:

Արամ Մանուկյանը հետևողական աշխատանք էր տանում իր ղեկավարած համակարգն ու իշխանության մարմինները պատահական կադրերից մաքրելու, օրինազանցությունները վերացնելու, երկրում կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ:

Առաջնորդվելով ազգայինպետական մտածողությամբ, բանիմացությամբ, անձնական անշահախնդրությամբ, ունենալով բացառիկ կազմակերպչական տաղանդ՝ կարողացավ ապահովել իրավակարգի հաստատման, ՆԳ նախարարության կայացման ու ամրապնդման դժվարին գործը՝ մեծապես նպաստելով հայոց նորաստեղծ պետականության ամրապնդմանը:

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման գործում հայ ժողովուրդը մեծապես պարտական է Արամ Մանուկյանին:

ՀՀ ներքին գործերի նախարարություն

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

Սյունյաց աշխարհի փառապանծ զավակ Արամ Մանուկյանը

Ճիշտ է ասված՝ հայ ժողովրդի պատմության 900 տարվա ընթացքում Արամ Մանուկյանը, իբրև քաղաքական ու պետական գործիչ, հավասարը չունի: 20-րդ դարասկզբի նշնավոր ազգային գործիչ Օննիկ Մխիթարյանը գրում է՝ «... Անիկա մեր օրերու Մովսէսը եղաւ, որ առաջնորդեց մեզ բոլորս Կարմիր ծովերէն եւ Երեւանի Ազգային խորհրդարանի վրայ կախեց մեր ցեղի Անկախութեան ու Ազատութեան նուիրական նշանատախտակը»: Ռաֆայել Իշխանյանի տեսակետն էլ անվիճելի է. «Կփրկվե՞ր արդյոք Երևանն առանց Արամ: Հազիվ թե: Անշուշտ Դրոն վճռական դեր խաղաց հարավային Լոռին Հայաստանի կազմի մեջ պահելու գործում, իսկ Նժդեհի շնորհիվ Զանգեզուրը մնաց Հայաստանի մեջ: Բայց նախ պետք է, որ Հայաստանը լիներ, որպեսզի նրա այդ մասերը միացվեին: Արամի դերը այդ Հայաստանը ստեղծելն ու փրկելն էր 1918-ի գարնան այն անհույս, լիովին անհեռանկար թվացող օրերին»: Ազգային, ռազմական ու պետական այդ գործչի, պատմակերտ այդ անձնավորության մասին հիշողությունը երկար տարիներ պատվել էր մոռացության շղարշով: Անկախության շրջանում, բարեբախտաբար, մոռացության շղարշն աստիճանաբար վերացվում է:

Սամվել Ալեքսանյան

Այդ նպատակն է հետապնդում նաև «Սյունյաց երկրի» հերթական հատուկ համարը, որի հրատարակման նախաձեռնողը Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանն է:

Նրա նախաձեռնությամբ է, որ վերջին տարիներին թերթում ենք պատմության էջերը և նոր լույս սփռում Սյունյաց աշխարհի նշանավոր զավակների կյանքին ու գործունեությանը, նաև մեր երկրամասի պատմության հերոսական դրվագներին: Ասվածի վկայությունն են Զանգեզուրի ինքնապաշտպանության հերոս Պողոս Տեր–Դավթյանին (18 օգոստոսի 2023 թ.) և Կապան մայրաքաղաքով Սյունիքի (Բաղաց) թագավորությանը նվիրված (15 օգոստոսի 2024 թ.) հատուկ համարները:

Մեր երկրի ու հատկապես Սյունիքի համար բախտորոշ ներկա ժամանակաշրջանում Արամ Մանուկյան պետական ու ազգային գործչին ընթերցողին ներկայացնելով՝ նաև փորձում ենք նրանից դասեր քաղելը դարձնել օրվա հրամայական:

Ինքն էր պատգամում՝ **«... Մենակ ենք և պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ ճակատը պաշտպանելու և թէ երկրի ներսը կարգ հաստատելու համար»:**

Առաջին հանրապետության հիմնադիրներից Ռոստոմն էլ ասում էր. **«Վնասակար են այն սողունները, երբ փքուն խօսքեր փչելով ու փարիսեցիական ձևեր բանեցնելով՝ շահագործում են ամբոխի դիւրահաւատութիւնն ու տգիտութիւնը»:**

Արամն իր ապրած կյանքով ու գործունեությամբ, իր կերպարով, հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ մեծագույն պատասխանատվությամբ կարող է և պետք է օրինակ լինի նորօրյա Հայաստանի ղեկավարների համար:

Եվ իսկապես, մեր պետական ու քաղաքական գործիչները որքա՞ն բան ունեն սովորելու Արամից: Ասենք, օրինակ, դիվանագիտության, հաշտարարության և այլ ոլորտներում:

Կամ՝ քանի–քանի անգամ ենք ինքներս մեզ հարցրել՝ արդյո՞ք

Արամը կամ նրա տեսակը (լինելու պարագայում) չէինք կարող մի նոր Սարդարապատ կազմակերպել 2020-23 թվականներին, երբ վճռվում էր հայոց հնամենի Արցախի ճակատագիրը:

***

Հայոց պատմության մեջ իբրև Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր հավերժացված Արամ Մանուկյանը դեռևս Շուշիի, ապա՝ Երևանի թեմական դպրոցներում աչքի ընկավ ակտիվությամբ:

Մասնակցեց Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման մասին Նիկոլայ 2-րդի հրամանագիրը չեղյալ համարելու համար մղվող պայքարին:

1903 թվականից Կարսում էր, զբաղվում էր ազատագրական շարժման խորացմանը միտված քարոզչությամբ, Երկիր ուղարկվող զինատար խմբերի կազմակերպմամբ:

1905-ին տեղափոխվեց Վան՝ տեղի ՀՅԴ կոմիտեի իրավահավասար անդամի լիազորությամբ: Այդտեղ էլ, առաջին հերթին, զբաղված էր հետագա պայքարի համար զենք կուտակելով:

1908-ի երիտթուրքական հեղաշրջումից հետո արտահայտվեց նրանց հետ համագործակցելու իր կուսակցության քաղաքական գծի օգտին:

Առաջին համաշխարհայինի սկզբնական փուլում, թուրքական իշխանությունների հետ բանակցելու միջոցով, փորձեց Վանի հայությանը փրկել ջարդից: Բայց երբ խաղաղ միջոցներով անհնար դարձավ հայոց մեծամասշտաբ ջարդերի կանխումը, քաղաքական այլ ուժերի ու գործիչների հետ ձեռնարկեց Վանի 1915 թ. ապրիլյան ինքնա-պաշտպանության կազմակերպումը:

Վանի ինքնապաշտպանությունը տևեց 1915 թ. ապրիլի 7-ից մայիսի 3-ը. թուրքական գերազանցող ուժերի բոլոր հարձակումները հետ մղվեցին, ինչի շնորհիվ 200 հազար վասպուրականցի փրկվեց կոտորածից:

1915 թ. մայիսի 7-ին ռուսական Կովկասյան բանակի 4-րդ կորպուսի հրամանատարության կողմից Արամ Մանուկյանը նշանակվեց Վանի նահանգապետ:

Նրա հետևողական ձեռնարկումների շնորհիվ Վանի նահանգապետությունը ոտքի կանգնեց, կյանքը Վան–Վասպուրականում զարթոնք ապրեց:

Սակայն Վանի նահանգապետությունը երկար կյանք չունեցավ: Կովկասյան բանակի 4-րդ կորպուսի անսպասելի նահանջի հետևանքով հուլիսի 18-ին Վան–Վասպուրականի հայությունը հարկադրաբար բռնեց գաղթի ճանապարհը:

Արամը վճռականորեն դեմ արտահայտվեց այդ քայլին և փորձեց կանխել այն, սակայն գաղթի կասեցումն այլևս անհնար էր:

Հարկադրաբար Վանից հեռանալով՝ Արամը մինչև 1917 թ. դեկտեմբեր Թիֆլիսում էր և ակտիվ մասնակցություն էր ունենում մեր ազգային–քաղաքական կյանքին:

1917 թ. սեպտեմբեր–հոկտեմբերին Թիֆլիսում կայացած հայոց ազգային համախորհրդակցությունում Արամն ընտրվեց արևելահայության կյանքը ղեկավարելու նպատակով ստեղծված Թիֆլիսի հայոց կենտրոնական ազգային խորհրդի անդամ:

1917 թ. հոկտեմբերի 21-ից մինչև 1918 թ. ապրիլի 14-ը Երևանի «Աշխատանք» թերթի խմբագիրն էր նաև:

1917 թ. դեկտեմբերին Թիֆլիսի հայոց ազգային և հայ զինվորական խորհուրդներն Արամ Մանուկյանին՝ արտակարգ լիազորություններով, գործուղեցին Երևանի նահանգ: Նրա խնդիրն էր՝ այնտեղ ստեղծել ամուր իշխանություն և իրականացնել զորահավաք:

1917 թ. դեկտեմբերի 18-ին Արամն արդեն Երևանում էր...

1918 թ. մարտի 24-ին Երևանի բնակչությունը, զորքը և հայոց ազգային խորհուրդն Արամ Մանուկյանին ընտրեցին Երևանի նահանգի դիկտատոր:

Մեր պատմության եզակի դեպքերից էր, երբ ժողովուրդը կամովին ընտրեց դիկտատոր, ով էլ իր անսահմանափակ իշխանությունը մինչև վերջ օգտագործեց բացառապես հօգուտ համազգային շահերի:

1918 թ. մայիսի 15-ին թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, մայիսի 20-ին՝ Երևանից 40 կմ հեռավորության վրա գտնվող Արաքս կայարանը, իսկ հաջորդ օրը՝ Սարդարապատ կայարանն ու գյուղը:

Առջևում Սուրբ Էջմիածինն էր ու Երևանը, ամենուրեք խուճապ էր...

Բախտորոշ այդ օրերին Արամ Մանուկյանը դրսևորեց ողջ հայ ժողովրդին ոտքի հանելու, թշնամուն հակահարված տալու և Հայաստան աշխարհը փրկելու բացառիկ կամք, եռանդ ու վճռականություն:

Այդ օրերին, կարելի է ասել, հայ ժողովուրդն ունեցավ իր երկրորդ Ավարայրը: Նրա բազմադարյա պատմության մեջ տեղի ունեցան ամենավճռական ու բախտորոշ հերոսամարտերը՝ Սարդարապատը, Բաշ Ապարանը և Ղարաքիլիսան: Այդ կռիվներում հայ ժողովուրդը կարողացավ թուրքին արժանի հակահարված տալ և վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու ու տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը:

Մայիսյան հաղթական հերոսամարտերը հիմք հանդիսացան Հայաստանի անկախ պետականության վերականգնման համար, իսկ թուրքը ստիպված էր հաշվի նստել հայ ժողովրդի հետ ու ճանաչել մեր անկախ ապրելու իրավունքը:

1918 թ. մայիսի 30-ին Թիֆլիսում գտնվող Հայոց ազգային խորհուրդն ընդունեց հայտարարագիր (հռչակագիր) Հայաստանի անկախության մասին:

Եվ մինչ Ազգային խորհուրդը Թիֆլիսից կժամաներ Երևան (ինչի համար, զարմանալիորեն, պահանջվեց մեկուկես ամիս)՝ Արամ Մանուկյանը ստանձնեց Հայաստանի նախակառավարության դեր ստանձնող Երևանի ազգային խորհրդի վարչության նախագահի և զինվորական վարիչի պարտականությունները, կարողացավ նորանկախ երկիրը պահել համեմատական կայունության մեջ:

1917-ի դեկտեմբերից, կարելի է ասել, Հայաստանն անկախ էր, որն էլ գլխավորում էր Արամ Մանուկյանը: Սակայն 1918 թ. հուլիսի 24-ին Հայաստանի Հանրապետության առաջին կառավարությունը ձևավորվեց Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ:

Հայաստանի Հանրապետության փաստացի հիմնադիր Արամ Մանուկյանին նորաստեղծ կառավարության մեջ վստահվեց Ներքին գործերի նախարարությունը, որի իրավասության ներքո էին նաև լուսավորության, հաղորդակցության, պարենավորման ու խնամատարության գործերը, ինչպես նաև տեղական իշխանությունների խնդիրները:

Նոր պաշտոնում և նոր պայմաններում նրա ազգային–պետական մտածողությունն ու գործելակերպը նոր շունչ և նոր որակ ձեռք բերեցին:

Այդ ամենի մասին ընթերցողն ավելի հանգամանալից կիմանա թերթի սույն համարից:

***

20-րդ դարասկզբի հայոց պատմությունը, ազգային–ռազմական–պետական մի շարք գործիչների հետ, մեծամասամբ կապված է Արամ Մանուկյանի հետ...

Եվ համարում ներկայացվող տարբեր նյութերում արտացոլված են մարդկային այն որակները, որոնք բնորոշ էին պատմակերտ ու պետականակերտ այդ անձնավորությանը, արտացոլված են այն սկզբունքները, որ որդեգրել էր կամ որով առաջնորդվում էր նա մեր պատմության բախտորոշ հանգրվանում, երբ կանգնած էինք Հայաստանի լինել–չլինելու ստույգ վտանգին դեմ հանդիման:

Մարդկային այդ որակներից կամ հավատամք դարձած սկզբունքներից մի քանիսը կամեցանք առանձնացնել՝ հաշվի առնելով նաև դրանց արդիականությունը:

● Նախ՝ պետության գլխավոր խնդիրներից առաջինը բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովումն էր, իսկ ինքնիշխանությունը, անկախությունն այդ գերնպատակին հասնելու միջոց էին:

Իշխանությունը նրա համար ժողովրդի վերքերն ամոքելու, մարդկանց ծառայելու, իր գործունեությունը սեփական ժողովրդին ծառայեցնելու, ազգային երազանքները, ժողովրդի շահերը, երկրի շահերը, մարդկանց անվտանգությունը պաշտպանելու միջոց է և ոչ թե առավելություն, ոչ թե փառամոլություն դրսևորելու հնարավորություն:

● Փառահեղ հաղթանակները, բարձրագույն պաշտոնները, հասարակական դիրքը, անսահմանափակ լիազորություններն ու հնարավորություններն աննշան չափով անգամ չսասանեցին նրա բարոյական վեհ նկարագիրը:

● Քաղաքական բոլոր ուժերին, հոսանքներին հաշտեցնելու, նրանց գործունեությունը մեկ կետի վրա բևեռելու, հայ ժողովրդին համախմբելու, հայության ուժերը կենտրոնացնելու հետևողական ձգտում ուներ:

● Երրորդ ուժի բացառում, որը, սակայն, չէր բացառում դաշնակիցներ ունենալը, դրսից օգնություն ստանալը, բայց և անկարելի էր արտաքին որևէ ուժի ապավինելը: Ասել է՝ բարեկամ լինենք, բայց չապավինենք որևէ մեկին:

● Դիվանագիտական բացառիկ ունակություններ, հատկապես հարևան ժողովուրդների հետ հարաբերվելու, երկխոսելու կարողություն:

Թուրքերի, ադրբեջանցիների, քրդերի հետ երկխոսելն անհրաժեշտ էր, բայց երկխոսությունը պետք է ինքնանպատակ չլիներ և արդյունք պիտի ունենար Հայաստանի ու հայ ժողովրդի համար:

Այդպիսի արդյունք ունեցանք դեռևս Վասպուրականում՝ թուրքերի հետ բանակցություններում:

Այդպիսի արդյունք ունեցանք Երևանում, երբ երկխոսություն էր տարվում հայաստանաբնակ ադրբեջանցիների հետ:

Այդպիսի արդյունք ունեցանք Խալիլի հետ հանդիպումների շնորհիվ:

● Դեմ էր ռուսական բանակի կազմում հայկական կամավորական ջոկատների գործունեությանը: Դա, ըստ նրա, կորստաբեր ուղղություն էր թրքահայության համար, ինչպես և եղավ:

● Դեմ էր ինքնավար զինված խմբերի, ֆիդայական ջոկատների գործունեությանը, ջատագովն էր ազգային բանակ ունենալուն, ինչին և հասավ:

● Հեռատեսություն, իրավիճակը ճիշտ գնահատելու կարողություն, նպատակասլացություն...

Հայագետներից ոմանք շարունակում են մնալ կարծիքին՝ եթե Արամը կենդանի լիներ, ապա 1920 թ. հայ–թուրքական պատերազմը գուցե և տեղի չունենար:

Եթե Արամը կենդանի լիներ, գուցե և Կարսի մարզն ու Իգդիրը մնային Հայաստանի կազմում:

● Իրատեսություն և սթափություն... Այդ մասին է խոսում նաև 1918 թ. ձմռանը Թիֆլիսում՝ Խորհրդային Ռուսաստանի հետ կնքված համագործակցության համաձայնությունը, որի հիմքում հայ ժողովրդի ֆիզիկական ապահովությունը գերնպատակ էր:

● Անձնական կյանքը վերջին պլանում էր... Ըստ Արշալույս Աստվածատրյանի՝ «Արամը որևէ տեղից ռոճիկ չէր ստանում, ապրում էր զրկանքներով, այդ մարդն իր մասին մտածել չգիտեր»: Իսկ նման թեմայով հարցերին այսպես էր պատասխանում՝ «Մի կերպ կապրենք, չենք մեռնի»:

● Հետաքրքրիր մի հատկանիշ էլ՝ պետական պաշտոնյաներին զգուշացնում էր, եթե իրենց նկատմամբ լրագրերում հրապարակված մեղադրանքները կարճ ժամանակում չհերքեն, ապա կհեռացվեն աշխատանքից և դատի կտրվեն:

● Երկաթյա կամք, հաստատակամություն, վճռականություն, հետևողականություն, կազմակերպչական բացառիկ ձիրք, ինչին հատկապես ականատես եղանք 1918-ի Մայիսյան հերոսամարտերի օրերին, նաև դրանից առաջ ու հետո:

● Անզիջում էր անարդարության, ստորաքարշության, քծնանքի, ընչաքաղցության, դավաճանության հանդեպ:

Միևնույն ժամանակ անհուն էր նրա սերն ու նվիրվածությունը հայ ժողովրդի հանդեպ, ամեն մի հայ մարդու հանդեպ:

Բավարարվենք այս թվարկումներով. նրա մարդկային մյուս որակներին ընթերցողը կարող է ծանոթանալ նաև համարի նյութերում:

Իսկ վերոգրյալը թույլ է տալիս ասել՝ Արամից սովորելը, Արամից դասեր քաղելը երբեք այնքան կարևոր ու պահանջված չեն եղել, ինչպես հիմա...

***

Արամ Մանուկյանի կյանքի ու գործունեության մեջ յուրահատուկ տեղ է զբաղեցնում Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև Բաթումում կնքված՝ խաղաղության և բարեկամության մասին պայմանագրին հաջորդած ժամանակաշրջանը:

Պայմանագիրը ստորագրվեց 1918 թ. հունիսի 4-ին:

Թուրքիայի կողմից պայմանագիրը ստորագրել են Վեհիբ–Մահմեդ փաշան և Խալիլ Բեյը, Հայաստանի կառավարության կողմից՝ Հովհաննես Քաջազնունին և Ալեքսանդր Խատիսյանը:

Ստորացուցիչ այդ պայմանագրով Հայաստանի տարածքը կազմելու էր մոտ 12 հազ. քառ. կմ:

Արամ Մանուկյանը չէր կարող Երևանից միջամտել բանակցությունների ընթացքին և պայմանագրի հոդվածների համաձայնեցման գործընթացին, բայց և զուսպ, հավասարակշռված վերաբերմունք ունեցավ հաշտության պայմանագրի հանդեպ:

Հայ ժողովուրդը ցասումով ընդունեց Բաթումի պայմանագրի ստորագրումը և, ցավոք, հունիսի 6-ից Երևանում սկիզբ առած բողոքների ժամանակ նախևառաջ թիրախավորված էր Արամ Մանուկյանը:

Բաթումի հաշտության բոթը լսելուց հետո Երևանում ստեղծված վիճակը հանգամանորեն ներկայացված է Ռոբերտ Կարայանի «Փրկություն» վեպում:

Եվ, այդքանով հանդերձ, Հայաստանի կառավարությունը քայլեր էր ձեռնարկում՝ բանակցությունների միջոցով կարգավորելու հայ–թուրքական հարաբերությունները և ընդլայնելու հանրապետության սահմանները:

Այդ ընթացքում Կովկասյան ճակատի թուրքական զորքերի գերագույն հրամանատար Խալիլ Փաշան Արամ Մանուկյանի հետ հանդիպելու ցանկություն է հայտնում: Նաև կամենում է, որ Երևանի կայարանում իրեն դիմավորի Արամը:

1918 թ. օգոստոսի 31-ին Արամն անձամբ ժամանեց Երևանի երկաթուղային կայարան՝ Ալեքսանդրապոլից եկող թուրք գործչին դիմավորելու համար, գրկախառնվեց, անգամ համբուրվեց նրա հետ:

Այնուհետև, դիվանագիտական էթիկայի կանոններին համապատասխան, ընդունելություն կազմակերպեց Երևան ժամանած թուրք զորավար, եղեռնագործ Խալիլի համար:

Խալիլը, Արամի ուղեկցությամբ նաև այցելեց սպարապետ Նազարբեկյանին:

Հաջորդ օրը, դարձյալ Արամի ուղեկցությամբ, Խալիլն այցելեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին:

Չափազանց ուշագրավ է Արամի և Խալիլի բանակցությունների մի դրվագը՝ կապված Մեղրու տարածաշրջանի հետ: Ըստ «Հայերը և թուրքերը» գրքի՝ ՀՅԴ առաջնորդներից Ռուբենը (Տեր-Մինասյան) գրում է. **«Արամը ... Խալիլ փաշայից, ով եկել էր Երևան, պահանջում էր սահմանների ընդարձակում և ապրելու հնարավորություն: Խալիլ փաշան սկզբունքորեն չէր մերժում Հայաստանի հողերի ընդարձակման պահանջը: Նա կանխավ առաջարկում էր, որ հայերը դատարկեն Զանգեզուրի Մեղրի գավառակը, որպեսզի իրենք անմիջապես կապվեն Բաքվի հետ: Դրա փոխարեն պատրաստ էր Ադրբեջանի հաշվին ընդարձակել Հայաստանի սահմանները դեպի Ջևանշիր ու Վարանդա: Նա առաջարկում էր զինվորական դաշինք կնքել դաշնակիցների դեմ: Այս խոսակցությունները ոչինչ չտվեցին: Միակ օգուտը եղավ այն, որ Արամի անձնական կապի շնորհիվ Խալիլ փաշան Հայաստանին շնորհեց 25 հազար փութ ցորեն գաղթականների համար և հրահանգ տվեց Բաշ-Գառնիի շրջանի Միլլի ձորի թաթարներին՝ հեռանալ՝ հայ գաղթականների համար տեղ բացելու նպատակով: Եկած ցորենը բաժանվեց սովահարներին, իսկ Միլլի ձորը դատարկվեց թաթարներից»:**

Ըստ Արշավիր Շահխաթունու՝ Խալիլը երկրորդ անգամ է այցելել Երևան՝ գաղտնի՝ Արամի հետ բոլորովին անհայտ տեղում և գաղտնի հանդիպելու նպատակով, քանզի «կարևոր հայտնություն ուներ ասելու Արամին»:

Երկրորդ այցի և Արամի հետ հանդիպման մանրամասներին կարելի է ծանոթանալ վերոնշյալ հեղինակի **«Խալիլ փաշայի հանդիպումը Արամի հետ»** վերտառությամբ հոդվածում:

Ցավոք, հնարավորություն չունեցանք բոլոր այդ նյութերը զետեղել համարում, բավարարվեցինք միայն մեկ հոդված հրապարակելով:

Թուրքիայի ներկայացուցչի հետ Արամ Մանուկյանի հանդիպումները մինչև հիմա քննարկման նյութ է պատմաբանների, քաղաքագետների, նույնիսկ որոշ պետական գործիչների համար:

Ոմանք մեր օրերում, ծանոթ չլինելով այդ հանդիպումների բովանդակությանը, քննարկված հարցերի շրջանակին, անտեսելով ժամանակի առանձնահատկություններն ու Հայաստանի համար ստեղծված ծանրագույն իրավիճակը, պարզունակ դատողություններ են անում ու մերօրյա առանձին գործիչների պրոթուրքական կողմնորոշումը փորձում հիմնավորել՝ իբրև նախադեպ ներկայացնելով Արամի գործելակերպը:

***

Համարի խնդիրներից մեկն էլ Արամ Մանուկյանի ծննդավայրի հարցում ճշգրտումներ կատարելն է:

Մեծ իմաստով՝ այնքան էլ տարբերություն չկա՝ Շուշիո՞ւմ է ծնվել, թե՞ Կապանի Զեյվա գյուղում, քանզի Սյունիքի ու Արցախի ամեն մի անկյուն կամ ամեն մի բնակավայր մեզ համար հայրենիք է, սրբազան հայրենիք:

Եվ, այդուհանդերձ, մեծ հայորդու կենսագրության ամեն մի դրվագ պետք է ճշգրտված լինի:

Սկսենք արձանագրումով, որ իբրև Արամ Մանուկյանի ծննդավայր նշվում է՝ մի դեպքում՝ Շուշին, մյուս դեպքում՝ Կապանի տարածաշրջանի Զեյվա (ներկայումս՝ Դավիթբեկ) գյուղը:

Շուշիի վարկածը հատկապես զարգացրել ու հանրահռչակել է Արամ Մանուկյանի կյանքն ու գործունեությունը հետևողականորեն ուսումնասիրող, մեծահարգ պատմաբան Արմեն Ասրյանը:

Զեյվա գյուղի վարկածը... Դեռևս 1920-ական թվականներին Արամի կուսակցական և զինակից ընկերները (նրա մասին խոսք ասելիս) իբրև ծննդավար նշում էին Զեյվա գյուղը. Սիմոն Վրացյան, Թադե... «Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան» գրքում նույնպես նշվում է՝ «Ծնուել է Ղափանի Զեյվա գիւղում, արհեստաւորի մի համեստ ընտանիքում, 1879-ին»:

Հարցին լույս է սփռում Արամ Մանուկյանի դուստրը՝ Սեդա Մանուկյանը՝ Արմեն Ասրյանին գրած նամակում: Ահա՝ **«Ինչպես ինձ հայտնի է՝ նրա ծննդավայրը Շուշին է, այդ մասին լսել եմ մանկուց՝ մորիցս, հորաքրոջիցս և այլ ղարաբաղցիներից: Զեյվայի տարբերակի մասին տեղեկացա միայն 70-ականներին: Հավանական է, որ այս տարբերակի ստեղծման պատճառն այն է, որ Արամի հայրը Ղափանից էր: Արամի հայրը՝ Հարություն Հովհաննիսյանը, զինագործ էր...»:**

Իսկ ահա թե ինչ է գրում Դավիթբեկ գյուղի բնակիչ, մեր թերթի բարեկամ, այլևս լուսահոգի Սաֆար Եղիազարյանը «Սյունյաց երկիր» թերթի 2009 թ. N 4–ում (Արամ Մանուկյանը ծնունդյան օրվանից Սարգիս Հովհաննիսյան էր):

– Սարգսի երկու տարեկանը չլրացած՝ մահանում է հայրը՝ Արամը, – գրում է Սաֆար Եղիազարյանը: – Երկու տարվա ընթացքում Շուշանի (Սարգսի մոր) հարազատները գալիս–գնում են Շուշիից, ի վերջո Շուշանին համոզում են և երեխայի հետ տանում հորանց տուն՝ Շուշի: Որոշ ժամանակ անց երևան է գալիս Մանուկյան ազգանունով (անունը մոռացել եմ) մարդ, ամուսնության առաջարկ անում Շուշանին: Վերջինս պնդում է, որ պահպանի երեխայի Սարգիս Հովհաննիսյան անուն–ազգանունը, Մանուկյանն իրենն է պնդում: Հաշտվում են՝ Սարգսին գրանցել հոր անունով՝ Արամ և Մանուկյան ազգանունով: Այսպես Սարգիս Հովհաննիսյանը դարձավ Արամ Մանուկյան:

Կարծում ենք՝ վերոնշյալ փաստարկները բավարար ենք համարում եզրակացնելու կամ արձանագրելու՝ **Արամ Մանուկյանն իսկապես ծնվել է Զեյվա գյուղում,**

և ծննդավայրի հարցը չի կարող այլևս բանավիճային լինել:

***

Արամ Մանուկյանի նկարագիրը, նրա բացառիկ դերակատարությունը ճշմարտության լույսի ներքո հասկանալու համար, պատմական ստույգ փաստերի հետ մեկտեղ, անհրաժեշտ է դիմել նաև ժամանակակիցների հուշերին ու կարծիքներին, որոնցից մի քանիսին ընթերցողը կարող է ծանոթանալ համարում:

Մեր խորին համոզմամբ՝ այդ առումով անգերազանցելի է Արշալույս Աստվածատրյանի հուշերն Արամ Մանուկյանի մասին: Անկեղծորեն՝ հնարավոր չէ այդ հուշագրությանը ծանոթանալ առանց հուզմունքի, առանց հպարտության զգացումի:

Ուշագրավ են նաև Ռուբենի հուշերը, Արամի ու Ռոստոմի առնչությունների մասին հուշերը, Արշավիր Շահխաթունու, Վահան Նավասարդյանի, Օննիկ Մխիթարյանի և բազում այլ ժամանակակիցների հուշերը:

Շատ ափսոս, սակայն, որ չկարողացանք ամբողջապես դրանք ներկայացնել համարում: Մինչդեռ հենց այսօր կարիք ունենք այդ հուշագրություններն առանձին գրքույկով հրատարակված տեսնել:

Հուշագրությունները ցույց են տալիս, թե գործնականում ինչ ասել է հայրենատիրություն, հայրենասիրություն, պետական մտածելակերպ, պետական ու ազգային շահ...

Իսկ կարծիքներ՝ որքան ուզեք...

Զորավար Մովսես Սիլիկյան. «Ես այժմ էլ առանց Արամի հետ խորհրդակցելու ոչ մի կարևոր քայլ չեմ անում...**»:**

Գարեգին Նժդեհ. «Արամն ու Վանը եկան վկայելու աշխարհին, թե, այո՛, հայությունը կարելի է ջարդել, երբ ան անզեն է, անհամերաշխ և անղեկավար, բայց ո՛չ պարտության մատնել, ո՛չ ալ կասեցնել ընթացքը հայ արիության, երբ ան կը ղեկավարվի Ցեղի Ոգիին»:

Համարում ներկայացնում ենք նաև որոշ փաստաթղթեր. դրանք արխիվներում պահպանված, ժամանակի մամուլում տեղ գտած վավերագրեր են Արամ Մանուկյանի կյանքի և գործունեության մասին:

Վավերագրերը հիմնականում վերցրել ենք **«Արամ Մանուկյան. փաստաթղթերի ժողովածու»–ից (գլխավոր խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան):**

Ժողովածուում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված վավերագրերը (1903-1919 թթ.) հայտնաբերվել են Հայաստանի ազգային արխիվում ու ՀՅԴ կենտրոնական արխիվում՝ քաղված ժամանակի մամուլի էջերից և հուշագրություններից:

Առանց չափազանցության՝ ներկայացվող փաստաթղթերից յուրաքանչյուրը հետաքրքիր է:

Կուզենայինք այդ փաստաթղթերից գոնե մեկը վերհիշել՝ գրված 1918 թ. հունիսի 26-ին, ուղղված Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին՝ Հայաստանի ծանր կացության և նրա՝ շտապ կարգով Երևան գալու անհրաժեշտության մասին:

Բանն այն է, որ 1918 թ. մայիսի 28-ին կամ 30-ին հռչակվել էր Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրումը, իսկ հայոց կառավարությունը չէր շտապում վերադառնալ Երևան:

Նամակում Արամ Մանուկյանը մասնավորապես գրում է. **«Ամենքը զարմանում են ձեր անտարբերության վրա...»: Եվ պահանջում է՝ նամակը ստանալուց հետո երկու շաբաթվա ընթացքում վերադառնալ Երևան, այլապես կազմվելու է Սահմանադրական ժողով, ժողովրդի կամքով որոշվելու է երկրի բախտը–ճակատագիրը...**

Եվ միայն 1918 թվականի հուլիսի 19-ին Հայաստանի Հանրապետության ոչ լիակազմ կառավարությունը և Հայոց ազգային խորհուրդը Թիֆլիսից ժամանեցին մայրաքաղաք Երևան (կառավարության կազմը Երևանում ստացավ ավարտուն տեսք):

Համարը նախապատրաստելու ընթացքում հաջողվեց գտնել նաև Արամի օրագիրը:

Պարզվում է՝ Արամը սովորություն ուներ օրագիր պահելու: Սակայն գտնվել են միայն 1905 թ. ձմռանը և գարնանը Վանում գրված նրա հուշերը:

Օրագրային այդ պատառիկները վերստին ի հայտ են բերում նրա արտակարգ մեծությունն ու համեստությունը: Սակայն համարի սահմանափակ հնարավորությունները թույլ չտվեցին օրագրային գրառումները ներկայացնել ընթերցողին:

***

Արամ Մանուկյանի կերպարը հայ գրականության մեջ...

Կարևոր համարեցինք այս հարցի քննարկումը մի քանի առումով:

Նախ, որքան էլ զարմանալի է՝ մեր նոր պատմության ստեղծողը, հայ ժողովրդի բազմադարյա երազն իրականացնողը, Ազատ և Անկախ Հայաստան կերտած անձնավորության կերպարը մեզանում գրեթե չի գեղարվեստականացվել ըստ պատշաճի:

Մյուս կողմից՝ եթե ոմանք էլ փորձել են գեղարվեստականացնել, ապա դա, մեղմ ասած, չի հաջողվել, որոշ դեպքերում էլ աղավաղվել է ամբողջովին:

Խնդրո առարկան քննարկելիս առաջին հերթին հիշեցինք Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» վեպը, որի առաջին հրատարակությունը լույս է տեսել 1966-ին, երկրորդը՝ լրամշակումներով, 1979-ին: Եղել է նաև երրորդ հրատարակություն՝ նախկին հրատարակությունների մեկնություններով ու ծանոթագրություններով:

Վեպում Մահարին ներկայացնում է նաև Արամի կերպարը, ընդ որում՝ բացասական լույսի ներքո:

Վեպը ժամանակին ստեղծեց հակասական տրամադրություններ, այդ մասին մանրամասն տես Դավիթ Գասպարյանի **«Գուրգեն Մահարի. կյանքը և ստեղծագործությունը» մենագրության մեջ (էջ 354-404):**

Ճանաչված գրականագետի մենագրությունից մի հատված ներկայացնում ենք համարում:

Մեզ հետաքրքրող վեպը քննարկել է նաև գրականագետ Կիմ Աղաբեկյանը՝ «Գուրգեն Մահարի» գրքում, որից նույնպես մեկ հատված ներկայացնում ենք: Ըստ գրականագետի՝ Մահարու սուբյեկտիվ վերաբերմունքն Արամի կերպարը զրկել է համոզչությունից:

«Այրվող այգեստաններին» անդրադարձել են նաև ուրիշ գրականագետներ (Սուրեն Աղաբաբյան, Սաթենիկ Ավետիսյան, Մուշեղ Սարուխանյան, Սեյրան Գրիգորյան...):

Արամ Մանուկյանի մասին մեծածավալ գրականություն է ստեղծվել, և հեղինակների զգալի մասը (բացառությամբ Ա. Եկարյանի, Ա. Թերզիբաշյանի) նրան ներկայացրել են քաղաքագետի և հայրենասեր գործչի լավագույն հատկանիշներով:

Կան նաև ժամանակակիցների բազմաթիվ հուշեր, կան պատմական անթիվ–անհամար փաստեր:

Չնայած այդ ամենին՝ հայ գրականության մեծանուն դեմքերից մեկը՝ բազմաթիվ հրաշալի ստեղծագործությունների հեղինակ Գուրգեն Մահարին, աղավաղել է ազգային ու պետական անզուգական գործիչ Արամ Մանուկյանի կերպարը:

Արամ Մանուկյանի կերպարին հանդիպում ենք նաև Ռոբերտ Կարայանի «Փրկություն» վեպում, որ նաև կոչվում է «Սարդարապատի դյուցազներգություն»: Անշուշտ, այդ վեպը

1918 թ. մայիսյան օրերի գեղարվեստական ու զորաշունչ պատմությունն է՝ պատմական փաստերի խորազնին իմացությամբ, բախտորոշ և ճակատագրական այդ ժամանակները շնչավորած: Այդքանով հանդերձ՝ չենք տեսնում Արամ Մանուկյանի կերպարը լիարժեք ու բազմակողմանի դրսևորումներով:

Արամ Մանուկյանի կերպարին անդրադարձել է նաև Վիկտոր Գարդոնը (Վահրամ Կաբավյան)՝ «Բոսորավառ հայտնություն», «Ձմրուխտավառ ասպետը», «Կյանքի կանաչ արևը» վեպերում, որոնց, ցավոք, չկարողացանք ծանոթանալ:

Ի վերջո համոզված ենք, որ **Արամ Մանուկյանի կերպարը դեռ գեղարվեստականացվելու է, ու այդ ընթացքում (անպայմանորեն) հիմքում դրվելու է պատմականությունը:**

***

Դժբախտաբար՝ Արամ Մանուկյանին վիճակված չէր երկար ապրել և շարունակել հանրապետության ամրապնդմանը միտված գործունեությունը:

1918 թ. վերջին և 1919-ի սկզբներին բծավոր տիֆը Երևանում առատ հունձք էր անում...

Արամն էլ վարակվեց տիֆով, բայց սկզբնական շրջանում մնաց ոտքի վրա:

Երբ նրա հիվանդությունը հաստատվեց, Երևանի բժիշկներից շատերը ոտքի կանգնեցին:

Ինքը՝ Արամը, ըստ ականատեսների, լուրջ չէր վերաբերվում այդ հիվանդությանը: Մինչդեռ վիճակը կարճ ժամանակում ծայր աստիճան վատթարացավ:

Կառավարության նիստին վերջին անգամ մասնակցեց 1918 թ. դեկտեմբերի 28-ին, իսկ դեկտեմբերի 30-ին վերջին անգամ փաստաթուղթ ստորագրեց:

Մահկանացուն կնքեց 1919 թ. հունվարի 29-ին՝ ժամը 14:30–ին:

Հուղարկավորությունը տեղի ունեցավ փետրվարի 1-ին:

Աճյունը դրվել էր մայրաքաղաք Երևանի սրտում գտնվող Սուրբ Պողոս–Պետրոս եկեղեցում (Աստծո այդ տաճարը հիմա չկա. 1933-36 թթ. եկեղեցին քանդվեց և տեղում կառուցվեց «Մոսկվա» կինոթատրոնի շենքը):

Արշալույս Աստվածատրյանի պատմելով՝ **«Արամի հուղարկավորությունը համաժողովրդական մեծ սուգ էր: Հազարավոր մարդիկ եկել էին վերջին հարգանքը մատուցելու այն մարդուն, ում վստահել էին իրենց բախտը կյանքի ամենածանր օրերին: Ամբողջ քաղաքը, մեծ ու փոքր, դուրս էին եկել փողոց: Պողոս-Պետրոս եկեղեցուց մինչև հանգստարան դիակառքը մնաց դատարկ: Դագաղը տանում էին ձեռքերի վրա»:**

«Ձանգ» թերթում հրապարակված բացառիկ մի հոդվածից իմանում ենք՝ **«... Սգերթի առջևից գնում էր ձիավոր զորքը, դագաղի երկու կողմից շղթա էր կազմել միլիցիոներների խումբը, դագաղի առջևից գնում էին աշակերտներն ու որբերի խմբերը՝ իրենց դասատուների առաջնորդությամբ, ապա բազմաթիվ դրոշակներ էին տարվում... Դագաղին հետևում էին պաշտոնակիցների և հարգողների խմբերը, ապա հետիոտն զորքը, իսկ վերջից՝ թնդանոթները...»:**

Թափորը կանգ է առել Աստաֆյան փողոցում գտնվող Դաշնակցության տան առջև, որի պատշգամբից խոսք են ասել Նիկոլ Աղբալյանը, Յ. Մխիթարյանը, Դավիթ Մել–Դադայանը և Հայկ Սարգսյանը:

Հանգստարանում հրաժեշտի խոսք է ասել Հովհաննես Քաջազնունին:

Այդ օրը հնչած հրաժեշտի խոսքերի որոշ հատվածներ մինչև հիմա շրջանառվում են հանրության ամենատարբեր շրջանակներում: Ուշագրավ էր հատկապես Նիկոլ Աղբալյանի դամբանական խոսքի այս հատվածը՝ **«Երբ գիշերը գայ, մտէք ձեր հոգիի սենեակը և խօսեցեք ձեր խղճի հետ և ըսէք՝ արդեոք աշխատե՞ր էք հայ ժողովրդի համար, ինչպես Արամը, եղե՞ր էք այնքան անձնազոհ, որքան Արամը, տուեր էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը...»** (Նիկոլ Աղբալյանի խոսքն ամբողջապես զետեղված է համարում):

Հայաստանի Հանրապետության հիմնադրի աճյունը հողին հանձնվեց Երևանի կենտրոնական գերեզմանատանը՝ ՀՅԴ պանթեոնի տարածքում:

Հետագայում, սակայն, օրվա տերերը քանդեցին այդ պանթեոնը:

Երևանի քաղաքային խորհրդի՝ Կենտրոնական գերեզմանատունը զբոսայգու վերածելու որոշմամբ պայմանավորված՝ Արամի աճյունը տեղափոխվեց «Կոզեռն» կոչվող գերեզմանատուն:

Մի քանի տարի հետո էլ՝ այդ տարածքում ժամացույցի գործարան և դպրոցի շենք կառուցելու պատճառով Արամի աճյունը տեղափոխվեց Թոխմախի գերեզմանատուն, որտեղ և հանգչում է ներկայումս:

Մի խումբ հայրենասերներ, գաղտնիության պայմաններում, 1982 թ. օգոստոսի 11-ին խաչքար հասցրեցին Թոխմախի գերեզմանոց և (առանց տեխնիկայի օգտագործման) տեղադրեցին Արամ Մանուկյանի գերեզմանին:

Թերթի սույն համարը պատրաստելիս՝ 2025 թ. հունիսի 19-ին, մենք այցելեցինք Արամ Մանուկյանի գերեզման, ուղեկցող ընկերների՝ Դավիթ Ծատրյանի, Արման Մեժլումյանի և Կարեն Լազարյանի հետ, խոնարհվեցինք Հայոց մեծ Արամի հիշատակի առջև ու ծաղիկներ դրեցինք խաչքար–հուշարձանի պատվանդանին:

***

Համարի տարբեր հատվածներում անդրադարձ ենք կատարում Արամ Մանուկյանի հիշատակի հավերժացմանը:

Նախ՝ Արամ Մանուկյանի կերպարը տեղ է գտել հայ քանդակագործների ստեղծագործություններում: Այդ շարքում ամենաուշագրավը, անշուշտ, նրա արձանն է Երևանի Հանրապետության հրապարակի մերձակայքում (2018 թ., քանդակագործ՝ Դավիթ Մինասյան):

Հաջորդը՝ Արամ Մանուկյանի կիսանդրին է ՀՀ ոստիկանության շենքի կենտրոնական մուտքի մոտ (2009 թ. մայիսի 30, քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան):

Արամ Մանուկյանի կիսանդրին դրված է նաև նրա ծննդավայր Դավիթբեկում (վերականգնող քանդակագործ՝ Դերենիկ Ահարոնյան):

Նույն հեղինակի՝ Դերենիկ Ահարոնյանի ստեղծած հարթաքանդակն էլ տեղադրված է ծննդավայրի՝ Արամ Մանուկյանի անունը կրող դպրոցի մուտքի պատին:

2009 թ. սեպտեմբերի 28-ին Կապանում՝ քաղաքապետարանի մերձակա հրապարակում, բացվեց Արամ Մանուկյանի կիսանդրին: Նախաձեռնության հեղինակներն էին Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը, Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը:

Նույն ժամանակ՝ 2009 թ. սեպտեմբերի 28-ին, Կապանում բացվեց «Ժառանգություն» կոմպոզիցիա–քանդակը, որում պատկերված են Արամ Մանուկյանի, Սուրբ Մովսես Խոտանանցու և լեռնագործի կերպարները:

Վերջին երկու հուշարձանի հեղինակը նույնպես ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Լևոն Թոքմաջյանն է:

Եվ, այդուհանդերձ, Գյումրին առաջինն էր, որտեղ 1989 թվականին տեղադրվեց Արամ Մանուկյանի կիսանդրին (քանդակագործ՝ Թադևոս Գևորգյան):

Արամ Մանուկյանի ծննդյան 140-ամյակի առիթով հուշակոթող է տեղադրվել Սարդարապատում (28 մայիսի 2019 թ.): Վեց մետր

բարձրությամբ կարմիր տուֆից կերտված համալիրը կառուցվել է ՀՅԴ Կանադայի կառույցի և Տորոնտոյում Հայաստանի պատվավոր հյուպատոս Վան Լապոյանի բարերարությամբ, հեղինակել են ճարտարապետ Հայկ Ասատրյանը և քանդակագործ Արտակ Համբարձումյանը:

2019 թ. հունիսի 7-ին Արամ Մանուկյանի սարդարապատյան հուշակոթողի մեջ զետեղվեցին նրան առնչվող մասունքներ՝ Արամ Մանուկյանի գերեզմանից, նրա Երևանի տնից, Վանից ու Շուշիից բերված հող–մասունքներ, որի նպատակն էր ապահովել Արամ Մանուկյանի ներկայությունն ու կենդանի շունչը հուշահամալիրում՝ Սարդարապատի, Բաշ–Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսների՝ նրա զինակիցների ու գաղափարակիցների հետ:

Մտահղացման հեղինակն ու նախաձեռնողը Հակոբ Ջամբարյանն էր:

1990 թ. սեպտեմբերին Դավիթբեկ գյուղի միջնակարգ դպրոցն անվանակոչվեց Արամ Մանուկյանի անվամբ:

Ներկայումս էլ՝ Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանի նախաձեռնությամբ, հիմնանորոգվում է գյուղի այն տունը, որտեղ 1879 թ. մարտի 19-ին ծնվել է Արամ Մանուկյանը՝ այն տուն–թանգարան դարձնելու նպատակով:

Արամ Մանուկյանի կերպարը հատկապես վերջին 20 տարում զբաղեցրել է նաև կինոարվեստի ներկայացուցիչներին ու հեռուստաընկերություններին:

Ստեղծված գործերից մի քանիսի վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է համարում՝ QR-կոդերով, ասել է թե՝ ընթերցողը կարող է դրա օգնությամբ դիտել ներկայացված ֆիլմերն ու հեռուստահաղորդումները:

Տարիների ընթացքում ծնվել են նաև երգեր՝ նվիրված Արամ Մանուկյանին. Արամ Մանուկյան (Ռաֆֆի Հալէպլեան), Անունը՝ Արամ (Սաքո Բուդուզյան), Արամ Մանուկյան (Սուրեն Աճեմեան և Գուսան Հայկազուն):

Երգերը նույնպես ներկայացված են QR-կոդերով, այնպես որ՝ համարն ընթերցելիս կարող եք լսել նաև այդ երգերի կատարումները:

Արամ Մանուկյանի հիշատակը հավերժացվեց նաև Կապանում ու Երևանում՝ նրա անունով փողոցներ կոչելով (փողոցների լուսանկարները՝ համարում):

Արամ Մանուկյանի հիշատակը հավերժացնելուն, նրա կյանքին ու գործունեությանը ծանոթանալուն նպաստել են նաև մայրաքաղաքում, Սյունիքում, Արցախում ժամանակ առ ժամանակ կազմակերպված գիտաժողովները:

Արամ Մանուկյանի շիրմի մոտ (19.06.25թ.): Ձախից՝ **Կարեն Լազարյան, Դավիթ Ծատուրյան, Արման Մեժլումյան, Սամվել Ալեքսանյան:**

Հիշենք դրանցից մի քանիսը...

Գիտաժողով՝ «Արամ Մանուկյան–130», 20 դեկտեմբերի 2009 թ., կազմակերպիչներ՝ Սյունիքի մարզպետարան, Կապանի քաղաքապետարան, Գորիսի պետական համալսարան, Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Արմեն Ասրյան:

Գիտաժողով՝ «Արամ Մանուկյանը Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր», 22 սեպտեմբերի 2009 թ., կազմակերպիչներ՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, ԵՊՀ:

Գիտաժողով՝ «Վանի հայկական նահանգապետությունը հայոց նորագույն պետականության նախատիպ», 7-9 հոկտեմբերի 2010 թ., կազմակերպիչներ՝ «Վասպուրական» հայրենակցական միություն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ:

Գիտաժողով՝ «Սարդարապատի հերոսամարտը հայրենական պատմագրության մեջ», 12-14 ապրիլի 2007 թ., Ստեփանակերտ, կազմակերպիչ՝ Արցախի պետական համալսարան:

Գիտաժողով՝ «Արամ Մանուկյանի անհատականությունը, որպես պատմակերտ գործոն», Երևան, 9-10 դեկտեմբերի 2015 թ., կազմակերպիչներ՝ ՀՅԴ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ:

***

Համարի նախապատրաստման ընթացքում՝ հանդիպելով թեմային առնչվող բազմաթիվ մարդկանց, մտավորականների, հայագետների հետ, համոզվեցինք վերստին՝ Արամի ոգին կենդանի է ու թևածում է նաև Սյունյաց աշխարհում:

Եվ մահվանից 106 տարի անց, պայմանավորված երկրի ներսում ու երկրի շուրջ ստեղծված ոչ սովորական դրությամբ, Արամ Մանուկյանի կերպարն ավելի է մերձենում մեր հոգիներին՝ նրա հանդեպ սերն ու հարգանքը վերածելով պաշտամունքի:

Համոզվեցինք՝ Արամ Մանուկյանի կյանքն ու գործունեությունը, նրա պետականակերտ վարքը նոր խորությամբ հանրահռչակելու կարիք ունի: Աճող սերնդի շրջանում՝ հատկապես:

Եվ այսկերպ կամեցանք խոնարհվել Սյունյաց աշխարհի փառապանծ զավակ, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի և անկախ պետականության ու հայոց արժանապատվության խորհրդանիշ Արամ Մանուկյանի հիշատակի առջև:

ՄՈՆՈԳՐԱՖԻԱ

Վանի նահանգապետությունը (1915 թ. մայիսի 7 - հուլիսի 18) հայոց նորագույն պետականության նախատիպ

Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտի հաղթանակից հետո, մայիսի 7-16-ը ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության արձակած հրամաններով ստեղծվեց Վան-Վասպուրականի նահանգապետությունը: Նահանգապետ նշանակվեց հերոսամարտի ղեկավարներից մեկը՝ Արամ Մանուկյանը (1879-1919)՝ լիազորվելով կազմել բացառապես հայերից բաղկացած կառավարություն[1]:

Արմեն Ասրյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայկական նահանգապետության վերաբերյալ ճիշտ պատկերացում կազմելու համար հարկ է նկատի ունենալ, որ ռուսական զորահրամանատարության գլխավոր մտահոգությունը ոչ թե հայերին ինքնուրույնություն շնորհելն էր, այլ նրա միջոցով իր քաղաքականության իրականացումը: Մասնավորապես, Կովկասյան բանակի հրամանատար գեն. Յուդենիչի կողմից Արամ Մանուկյանին նահանգապետ նշանակելու հրամանում, որ նա պետք է **«ամբողջովին ենթարկվի զինվորական իշխանությանը ի դեմս Վանի կայազորի պետի, և որ նրա միջոցով փոխանցվեն զինվորական իշխանության բոլոր կարգադրությունները»**[2]: Դա ենթադրում է, որ հայկական նահանգապետությունը, ամենից առաջ նահանգապետ Արամը ստիպված էին լինելու մեծ ջանքեր գործադրել նահանգապետությունը հայության շահերին ծառայեցնելու համար:

Նահանգապետի պաշտոնը ստանձնելու հաջորդ օրը՝ մայիսի 8-ին, Ա. Մանուկյանը ժողովրդին դիմեց ուղերձով՝ կոչ անելով համախմբվել ձևավորվելիք **«կառավարութեան շուրջը, վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի և ամբողջ շրջանի մեջ»**[3]: Արամի կոչին դիպուկ գնահատական է տվել Ա-Դոն՝ գրելով, որ **«նա անհատի կոչ չէր, այլ մի ժողովրդի, դա մի հավաքական կոչ էր, որի մէջ խօսում էր հայ ժողովուրդը իր հետ, որի մէջ տասնեակ տարիներ գոյութեան ու մահի կռիվը մղող, պայքարող ժողովուրդը կոչ էր ուղղում իր բոլոր տարրերին գալ համախմբուել ընդհանուր գործի շուրջը և իրականացնել երէկւա երազանքները»**[4]:

Մայիսի 7-22-ը ձևավորվեց հայ գործիչներով համալրված պետական ապարատ իր օրենսդիր և գործադիր ճյուղերով: Ստեղծված կենտրոնական գործադիր մարմիններն էին՝ ոստիկանական տեսչությունը, կալվածական-գաղթականական, տնտեսական, առևտրական և առողջապահական մարմինները, քաղաքառեալական վարչությունը, դատարանը, գավառային վարչությունը[5]: Նրանց աշխատանքները գլխավորում էր նահանգային վարչությունը: Նահանգի օրենսդիր մարմնի գործառույթները իրականացնելու համար ձևավորվեց Վարչական խորհուրդ, որում ընդգրկվեցին գործադիր մարմինների ղեկավարները: Այն մշակելու էր օրինագծեր՝ ենթարկելով նահանգապետի վավերացմանը, որն ուներ վետոյի իրավունք[6]: Ինչպես վարչական խորհրդի, այնպես էլ նահանգային վարչության նախագահը նահանգապետն էր, որի կողմից ընտրվում էին այդ մարմինների և՛ անդամները, և՛ նախագահները:

Վերոհիշյալ մարմինների աշխատանքը վերահսկելու նպատակով ստեղծվեցին ընդհանուր և մասնագետ քննիչների հաստիքներ:

Կառավարությունը ձևավորելիս Արամը դրսևորեց ապակուսակցական մոտեցում՝ նրանում ընդգրկելով բացառապես բանիմաց գործիչների: Այսպես, նպաստից հանձնաժողովի նախագահ Հ. Կուլօղլյանը, բյուջեի

հանձնաժողովի նախագահ Ա. Թերզիբաշյանը, կրթական տեսչության նախագահ պրոֆ. Մինասյանը, քաղաքի ոստիկանապետի օգնական, ապա ոստիկանապետ Ղևոնդ Խանջյանը (1930-1936 թթ. ՀԿԿ Կ I քարտուղար Աղասի Խանջյանի հայրը)[7], նահանգային վարչության դիվանապետ Ա. Դարբինյանը[8], Շահբազ, Բերկրի, Թիմար, Արճակ, Հայոց-Ձոր, Արտամեդ, Ձիբուխլի շրջանների ոստիկանության ընդհանուր ղեկավար Ա. Եկարյանը[9] ռամկավարներ էին, շրջանային դատարանի նախագահ Աղաբեկ Համբարյանը չեզոքներից էր[10], ընդհանուր դատախազ Հ. Գալիկյանը հնչակյան էր[11] և այլն: Անգամ տարբեր առիթներով Ա. Մանուկյանի և ՀՅԴ քննադատությամբ հանդես եկած ռամկավար ազդեցիկ գործիչ Ա. Թերզիբաշյանը, գրող Գուրգեն Մահարին նշել են, որ նահանգապետ Արամը պաշտոնյաներ նշանակելիս դրսևորել է անաչառ, ապակուսակցական մոտեցում[12]: Այնուամենայնիվ Արամի կուսակիցները՝ դաշնակցականներ, կառավարության մեջ մեծամասնություն էին: Այդ իրողությունն ինքը՝ Արամը բացատրում էր նրանով, որ «առհասարակ նրանք շատ են և ձեռնհաս ուժերը այնտեղ են»:[13] Ընդհանուր առմամբ, 1915 թ. մայիսի 22-ի դրությամբ Վանի նահանգում պաշտոնեության թիվն անցնում էր 1000-ից, որի գրեթե կեսը կազմում էր ոստիկանությունը:

Նահանգի իշխանության կենտրոնական մարմինների ձևավորմանը զուգընթաց ձևավորվեց նահանգի վարչական կառուցվածքը, ի դեմս գավառապետությունների: **Վասպուրականի տարածքը բաժանվեց 14 գավառ-գավառակների. Ոստան, Շատախ, Մոկս, Բերկրի, Արճակ (այն բաղկացած էր երկու մասից՝ Եզդիխանե և Սարայ), Ձանիկ, Ալյուր (վերջին երկուսը Թիմարի շրջանի մասերն էին), Արտամեդ, Հայոց-Ձոր, Շահբազ, Նորգուզ, Խոշաբ, Արճեչ, Ալջավազ:** Ձևավորվեցին գավառապետությունների կառավարման մարմիններ՝ նահանգապետի կողմից նշանակված գավառապետերի գլխավորությամբ: Նրանք իրենց կողքին ունեին մեկական օգնական, թարգմանիչ, ոստիկանապետ՝ անհրաժեշտ թվով ոստիկանությամբ[14]:

Գավառապետությունների վրա ընկած էր ծանր բեռ և մեծ պատասխանատվություն. նրանք էին անմիջական գործադրողներն ինչպես բնակչությանը հուզող խնդիրների, այնպես էլ նահանգապետարանի կողմից առաջադրվող ծրագրերի: Այդ առումով առանձնահատուկ դեր էր վերապահված գավառային վարչությանը, որը որպես նահանգի կենտրոնական իշխանության մեկ օղակ մշտական ձևով իրականացնում էր հարաբերությունները կենտրոնի և գավառապետությունների միջև՝ ուղղորդելով վերջինիս աշխատանքները:

Վան քաղաքը կառավարում էր նահանգապետի կողմից նշանակված քաղաքապետը:

Նորաստեղծ նահանգապետությունը գտնվում էր բավական ծանր կացության մեջ: Նահանգը շրջապատված էր արևմտահայության 1915 թ. ցեղասպանությանը մասնակից քրդական ցեղախմբերով, որոնք պատրաստ էին հարմար պահի ներխուժել նահանգի տարածք և իրագործել նոր ջարդեր: Բացի այդ, նահանգի տնտեսությունը գտնվում էր ավերված վիճակում, նահանգը լի էր անօթևան և գոյության տարրական միջոցներից զուրկ տասնյակ հազարավոր գաղթականներով և այլն:

Նման պայմաններում նահանգապետությունը ձեռնամուխ եղավ նահանգի անվտանգության ապահովման, քայքայված տնտեսության վերականգնման, գաղթականության խնամքի, օրինականության և կարգ ու կանոնի ապահովման և այլ խնդիրների լուծմանը:

Նահանգի անվտանգությունը ենթադրում էր ստեղծել ինքնապաշտպանական ուժեր ամբողջ նահանգի տարածքում և կանխել քրդերի վերադարձը իրենց երբեմնի բնակավայրեր, ինչպես նաև նրանց հարձակումները հայկական բնակավայրերի վրա: Քրդական ներխուժումը կասեցնելու համար գավառներում և Վան քաղաքում ստեղծվեցին ինքնապաշտպանական խմբեր, որոնցում ընդգրկվեց շուրջ հազար մարդ: Ընդհուպ մինչև հուլիսյան գաղթը՝ նախ կամավորների հետ, ապա միայն տեղական ուժերով, հաջողվեց չեզոքացնել քրդական վտանգը: Այդ գործին իր նպաստը բերեց նաև գավառների ոստիկանությունը, որում ընդգրկված էր 400 ոստիկան (40 տասնապետ և 360 ոստիկան, որոնց կեսը հեծյալ, կեսը հետևակ)[15]:

Այլևայլ, բայց հատկապես քրդերի վերադարձի առնչությամբ առկա էին լուրջ տարակարծություններ նահանգապետ Արամի և ռուսական զինվորական հրամանատարության միջև: Այն դեպքում, երբ Արամը ձգտում էր ամեն կերպ խափանել քրդերի վերադարձը՝ ոչնչացնելով կամ շահագործելով նրանց կալվածքները, ռուսական կողմը նրանց հանդեպ ցուցաբերում էր կարեկցական մոտեցում: Այսպես, Վանի կայազորի պետ գեն. Նիկոլաևը հունիսի 22-ի հրամանով ազդարարում էր, որ կովկասյան չորրորդ բանակային կորպուսի հրամանատարը թույլատրել է ռուսական հպատակությունն ընդունած քրդերի վերադարձը Արճակի, Բաշկալեի, Նորդուզի և այլ շրջաններում գտնվող իրենց բնակավայրեր: Նահանգի հայությունից պահանջվում էր չհարձակվել քրդերի վրա, իսկ նահանգապետը համարվում էր պատասխանատու քրդերի կյանքի և գույքի ապահովության համար[16]:

Անհանգստացած իր ժողովրդի ճակատագրով՝ Արամը հունիսի 26-ին դիմեց Նիկոլաևին, հունիսի 27-ին Կովկասյան բանակի և չորրորդ կորպուսի հրամանատարներին՝ փորձելով կանխել այդ որոշման կենսագործումը: Մատնանշելով 1914 թ. աշնանը և ձմռանը քրդերի ոճրագործությունները նահանգի հայկական բնակավայրերում և թուրքերի հետ համատեղ գործողությունները ռուսական զորքերի դեմ, քրդական հավատարմության դրսևորումը ռուսներին բացատրելով նրանց պարենային ծանր կացությամբ՝ Արամը գտնում էր, որ նրանց հարկ է դիտել որպես ռազմագերիների՝ դրանից բխող հետևանքով կամ էլ նրանց մեջ տեսնել սովորական հանցագործների և ի հարկին պատժել[17]: Նա աշխատում էր հրամանատարությանը համոզել, որ քրդերի վերադարձով կխախտվի անդորրը Վանում այն պարզ պատճառով, որ ջարդված և կողոպտված հազարավոր հայերի հարազատները չէին կարող անտարբեր մնալ իրենց թշնամիների հանդեպ: Նա իրավացիորեն նշում էր, որ թույլատրել քրդերին վերադառնալ՝ կնշանակի, թե կարելի է անպատիժ կերպով կողոպտել և սպանել հայերին և վերջիններիս՝ Թուրքիայում «ռուսական զենքի

հաջողության միակ անկեղծ կողմնակիցների» մոտ կառաջացնի ծանր հիասթափություն Ռուսաստանի հանդեպ[18]: Արամը համարձակորեն նշում էր, որ որոշման գործադրման դեպքում ինքը չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել Վանի շրջանում հանդարտության և օրինակարգի համար և հայտնում էր իր բողոք-նկատառումները. 1) չգործադրել հունիսի 22-ի հրամանը, 2) հայոց ջարդերի ու թալանի մասնակից հանձնված քրդերին ենթարկել պատասխանատվության, 3) զգուշացնել չգրավված տարածքների մահմեդականներին, որ հայոց նկատմամբ ոճրագործությունների մասնակիցները ենթակա են պատասխանատվության[19]: Թեև նահանգապետի փաստարկները հիմնավոր էին, իսկ նշված հրամանը հակասում էր 1915 թ. գարնանը Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հրապարակած հռչակագրին, որով հայոց ջարդերի իրականացնողները համարվում էին պատասխանատու, Վանի կայազորի պետը, հասկանալի համարելով հանդերձ Արամի անհանգստությունը, մերժեց չեղյալ համարել հրամանը, գտնելով, թե իբր դա կնշանակեր արտոնել հայերին հարձակվել քրդերի վրա և կողոպտել նրանց[20]: Իրական պատճառն այլ էր. ռուսական հրամանատարությունը, ելնելով պատերազմական իրավիճակից, որոշակիորեն վարում էր քրդերին սիրաշահելու քաղաքականություն:

Նահանգապետությունը հետևողական քայլերով ձեռնամուխ եղավ տնտեսության վերականգնմանը: Այդ ուղղությամբ իրականացված քայլերից կարևորագույնը, թերևս, երկրագործական աշխատանքների վերսկսումն էր, որի շնորհիվ ժողովուրդը կստանար աշխատանք և կհաղթահարվեր սովի վտանգը: Դա թույլ կտար պարենով ապահովել նաև բանակին: «Աշխատանք» թերթի դիպուկ արտահայտությամբ՝ հացահատիկը պատերազմի մեջ խաղում էր այնպիսի դեր, ինչպիսին թնդանոթն ու փամփուշտը[21]: Այդ նպատակով կենտրոնացվեցին նահանգում եղած գյուղատնտեսական գործիքները, դրսից ներկրվեցին հազար հատ գերանդիներ և ձրի բաժանվեցին ժողովրդին: Կովկասում պատվիրվեցին 3000 ռուբլու հնձող և կալսող մեքենաներ: Պարենային պրոբլեմը լուծելու, ինչպես նաև թուրք և քուրդ բնակչության վերադարձը կանխելու համար նահանգապետությունը ի դեմս Արամի անհրաժեշտ գտավ մշակել նրանց կողմից լքված արտերը, սակայն հանդիպեց Վանի պարետի ընդդիմությանը: Վերջինս գտնում էր, որ հայ բնակչությունը պետք է օգտվի միայն սեփական հողերից, իսկ քրդական հողերը ինքնակամ գրավողներին սպառնում էր պատժել որպես կողոպտիչների[22]: Մեծ ջանքերի շնորհիվ Արամը հասավ այն բանին, որ զինվորական իշխանությունը, որը լքված հողերը համարում էր ռուսական բանակի սեփականությունը, դրանք հանձնի հայերի օգտագործմանը: Գեն. Նիկոլաևի հունիսի 27-ի կարգադրությամբ այդ հողերը վարձակալության իրավունքով, միայն բերքը հավաքելու համար տրվում էին հայերին[23]:

Ավերված տնտեսության վերականգնմանը միտված կարևոր քայլ էր նահանգից հեռացած թուրքերի ու քրդերի տների, հողամասերի ու այգիների աճուրդը, քանզի մի կողմից նահանգապետության գանձարան էին մտնում դրանց վաճառքից գոյացած գումարները, որոնք ուղղվում էին տնտեսության և այլ կարիքների լուծմանը, մյուս կողմից նոր տնտեսություններ էին կազմվում, որը ևս նշանակում էր հայրենիքի վերաշինության արագացում:

Նահանգապետությունը տեր կանգնեց փախստական ժողովրդին և կատարեց հնարավորինը նրանց ծանր դրությունը մեղմելու հատկապես սովի և համաճարակի ճիրաններից փրկելու համար: Համաճարակներից օրական մահանում էր 30-40 մարդ: Շուրջ 15-25 հազար գաղթականների տեղավորելով հիմնականում Աղթամարում և Ոստանում, կառավարությունն այլ վայրերից սննդամթերք էր հասցնում նրանց համար:

Քանի որ նահանգապետության միջոցները սուղ էին՝ Արամը օգնության խնդրանքով դիմեց նախ նահանգի ժողովրդին՝ հայցելով նրա աջակցությունը: Գտնելով, որ սովն ու հիվանդությունները կարող են ավելի մեծ ավերածություններ գործել, քան թուրքական բռնությունները, նահանգապետը նշում էր. **«Մի մոռնաք որ փոխադարձ օգնութեամբ միայն կրնանք պահել մեր ազգային գոյութիւնը: Եթէ մէկը չ՛օգնէ միւսին, մենք կորած ենք. մէկը ամէնքին, ամէնքը մէկին, հոս է մեր փրկութեան խարիսխը»:** Նահանգապետը կոչ էր անում ժողովրդին աջակցել գավառապետերին, որոնց ինքը հանձնարարել էր հանգանակություն ծավալել սովյալների օգտին[24]: 1915 թ. հունիսի 23-ի դրությամբ տեղական միջոցներով հավաքվել էր 10000 փութ ցորեն, որի կեսը, ինչպես նաև 8000-10000 ոչխար, ավելի քան 2000 խոշոր անասուն արդեն իսկ բաժանվել էր ժողովրդին:

Նահանգապետ Արամը և Վանի շրջանային վարչությունը գաղթականների, առհասարակ նահանգի բնակչության դժվարությունները թեթևացնելու, ինչպես նաև տնտեսությունը վերականգնելու մտահոգությամբ դիմեցին նաև Կովկասի և գաղութների հայությանը խնդրելով փութացնել բժիշկների, դեղորայքի, սննդի և երկրագործական մեքենաների առաքումը[25]: Առանձին գրությամբ Արամը խնդրեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի աջակցությունը[26]: Օգնությունն անհրաժեշտ էր նկատվում ոչ միայն տվյալ պահի, այլև ձմռան պահուստ կուտակելու համար: Ի պատիվ դրսի հայության՝ օգնությունը առաքվեց ժամանակին: Բուժարան-հիվանդանոց ստեղծվեց Վանում, սննդակայարան Արճեշում, բուժարան՝ Ոստանում և այլն:

Հատուկ ուշադրություն դարձվեց ժողովրդի շահերի պաշտպանությանը ռուս զինվորականությունից: Բանն այն է, որ նահանգում հաստատված բանակային միավորումների և բնակչության միջև շփումներն անխուսափելի էին, իսկ նման դեպքերում զինվորական իշխանությունը փաստելով պատերազմական իրավիճակը, հաճախ դիմում էր ապօրինությունների. գյուղերից ձրի վերցնում էին սննդամթերք, քանդում էին տները՝ փայտերը վառելու նպատակով, վնասում էին արտերն ու այգիները: Նմանօրինակ վարմունքը հուզում էր առաջացնում բնակչության շրջանում: Հիմք ընդունելով այդ առթիվ իրեն հասցեագրված մեծաքանակ բողոքները, նահանգապետ Արամը դիմում էր Վանի կայազորի պետին՝ այդօրինակ արարքներին վերջ տալու շեշտադրումով: Նա նշում էր, որ արտերի առանց փոխհատուցման փչացումները կարող են կասեցնել երկրագործական աշխատանքները, ինչը բացասաբար կանդրադառնար

նաև բանակի վրա: Առաջարկվում էր քայլեր ձեռնարկել, որպեսզի արտերը չվնասվեին և բնակչությունն անարգել զբաղվեր գյուղատնտեսական աշխատանքներով, ինչպես նաև արդարացիորեն փոխհատուցել յուրաքանչյուրին պատճառված վնասը[27]: Հայկական կողմին հաջողվեց որոշ չափով մեղմել ռուս զորականների ապօրինի արարքները[28], իսկ վնասների փոխհատուցման չհաջողվեց հասնել, թեև Արամի ջանքերով ստեղծվել էր բնակչությանը հասցված վնասների գնահատման և փոխհատուցման հանձնաժողով, իսկ Նիկոլաևն էլ խոստացել էր բավարարել բոլոր հիմնավոր պահանջները՝ անհրաժեշտ նկատելով, որ բնակչությունը շարունակի դաշտերը մշակել նախկինի պես[29]:

Հաճախակի էին ռուս զինվորականության կողմից հայերից զենքի առգրավման դեպքերը: Ընդառաջելով ժողովրդի բողոքներին՝ նահանգապետը 1915 թ. մայիսի 27-ին դիմեց Նիկոլաևին՝ խնդրելով վերջ տալ հայերից զենքերի բռնագրավմանը, իսկ դրանք վերադարձնել իրենց տերերին կամ նահանգապետությանը՝ դարձյալ իրենց տերերին հանձնելու համար[30]: Հաջորդ օրը Նիկոլաևն արգելեց հայերից առգրավել զենքերը, սակայն նմանաբնույթ քայլերը, որոնք բնորոշ էին ոչ միայն Վանին, հետագայում ևս շարունակվեցին: Միայն հուլիսյան գաղթի օրերին, երբ արևմտահայության մնացորդները տեղահանվում էին երկրից, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարն արգելեց ռուս զինվորներին Թուրքիայի գրավյալ նահանգների քրիստոնյա բնակչությունից առգրավել զենք, որը նրան հարկավոր էր ինքնապաշտպանության համար[31]:

Զինվորական իշխանության առջև հարց բարձրացնելուց բացի, Արամը, փորձելով ինչ-որ չափով պաշտպանել հայոց շահերը, զենքի արտոնագրեր էր տալիս դրա կարիքը զգացող բնակիչներին[32], որը նրանց հնարավորություն էր ընձեռում ապահով շրջել նահանգի հեռավոր շրջաններում և վերահաստատվել ազատագրված, բայց քրդերի ներխուժման վտանգին ենթակա բնակավայրերում:

Նահանգապետությունը որոշակի ուշադրություն դարձրեց նաև հասարակական անդորրի և իրավակարգի ապահովմանը: Արդեն մայիսի 8-ին նահանգապետը հրապարակեց հրահանգ, որով արգելվում էր հրազենի գործադրումը, ոգելից խմիչքների վաճառքը զորքերին, լքված տների ինքնագլուխ զբաղեցումը, թալանը, ապօրինի ծառահատումները և այլն[33]: Այս մոտեցումը կարևոր էր նաև զինագրավումները կանխելու առումով, քանզի դրանք հաճախ պատճառաբանվում էին հայերի կողմից իրականացվող անտեղի կրակոցներով: Գողությունները և անիշխանական այլ քայլեր կանխելու համար բնակիչներին խստագույնս արգելվեց զինվորներից գնել որևէ ապրանք, իսկ հայ կապալառուներին ապօրինի յուրացնել լքված մահմեդական գյուղերի հացահատիկը և մյուս ապրանքները[34]:

Պետական մեխանիզմների նոր ձևավորման պայմաններում Արամը հարկադրված էր մեծ ժամանակ հատկացնել բնակչության շահերի պաշտպանությանը: Այսպես, հուլիսի 6-ի շրջաբերականով նա պաշտոնեությանը արգելում էր առանց ստացական տալու քաղաքացիներից որևէ գումար գանձել, իսկ վերջիններիս իրավունք էր տրվում այդպիսի դեպքերում վճարումներ չկատարել[35]: Բազմաթիվ էին Արամի կարգադրությունները նահանգի պաշտոնեությանը, հատկապես գավառապետերին՝ քաղաքացիների հանդեպ կատարված անարդարություններն ուղղելու, ինչպես նաև նրանց կարիքներին լուծում տալու վերաբերյալ[36]: Մայիսի 28-ին Արամը Ոստանի գավառապետին կարգադրեց Կիմ գյուղի գյուղացիներին վերադարձնել ոմն Տիգրանի կողմից նրանցից խլված անասունները[37]:

Նահանգապետության, անձամբ Արամի հոգածության ներքո էր գտնվում նաև եկեղեցին: 1915 թ. ընթացքում ավերված և կողոպտված եկեղեցիներն ու վանքերն ազատվեցին տուրքերից, ինչը նրանց հնարավորություն կտար ոտքի կանգնել: Ընդառաջելով Նորաշենի եկեղեցականների մայիսի 20-ի խնդրանքին՝ կարգադրվեց եկեղեցուն հատկացնել նոր գերեզմանատեղի, տնտեսական կարիքները բավարարելու համար հատկացնել 200 ծառ և այլն[38]:

Տնտեսության վերականգնման, նահանգի տարբեր գավառների միջև արագ և կայուն հաղորդակցություն ապահովման նպատակով աշխատանք ծավալվեց քաղաքի և գավառների ճանապարհների ու կամուրջների, ինչպես նաև Վանա լճի նավատորմի վերանորոգման ուղղությամբ[39]: Առանձնակի կարևորություն ուներ նավատորմը, որովհետև նրա միջոցով ապահովվում էր արագ կապ և բեռնափոխադրություն լճի տարբեր ափերին ընկած շրջանների միջև:

Հետապնդվելիք խնդիրներն իրագործելու նպատակով 1915 թ. մայիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կազմվել էր նահանգապետության բյուջե՝ 178.340 ռուբլի գումարով: Բյուջեի մուտքերը պիտի գոյանային Վանում և արվարձաններում գործող 1250 առևտրականներից և արհեստավորներից գանձվող եկամտահարկից, տասանորդից, ոչխարի տուրքից, լքված կալվածքների շահագործումից ստացված եկամուտներից և այլն[40]: Հին ռեժիմից վերցված այս տուրքերի կիրառումն անխուսափելի էր, որովհետև մեկ-երկու ամսում հնարավոր չէր արմատապես փոխել հարկային համակարգը: Նույնը կարելի է ասել նաև օրենսդրության մասին. ժամանակավորապես կիրառվում էր որոշ փոփոխության ենթարկված օսմանյան օրենսդրությունը: Ավելացնենք միայն, որ վերջինիս կողքին հաշվի էին առնվում նաև Ազգային սահմանադրության և ազգային սովորույթների պահանջները:

Նկատենք, որ հայկական նահանգապետությունն ուներ նաև թերություններ: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ է հայտնում Արամի կողմից հուլիսի 1-ին Վան քաղաքի քաղաքապետարանի, ոստիկանության և տնտեսական մարմինների վերահսկիչ նշանակված Իսահակ Տեր-Ղազարյանը[41]: Մասնավորապես, միևնույն արարքի համար Վանի ոստիկանապետարանը և նրա շրջանապետությունները երբեմն նշանակում էին տարբեր տուգանքներ, հստակ չէին վարում գործավարությունը: Տնտեսական մարմնի կողմից առկա էին թերացումներ աճուրդների կազմակերպման հարցում, այն է՝ երբեմն աճուրդի առարկան վաճառվում էր արժեքից մի քանի անգամ էժան գնով: Որոշակի բացթողումներ կային

եկամուտների աղբյուրների հաշվառման և նահանգային բյուջեի մուտքերի ավելացման գործում: Սակայն, էականն այն է, որ հայկական կառավարության, անձամբ նահանգապետ Արամի կողմից ձեռնարկվում էին քայլեր եղած թերությունները շտկելու, նահանգային մարմինների գործունեությունը վերահսկելու և կանոնավորելու ուղղությամբ:

Արամի գլխավորությամբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Վանի հայկական նահանգապետությունը օր-օրի ոտքի էր կանգնում. կյանքը Վան-Վասպուրականում զարթոնք էր ապրում: Ապագայի հանդեպ լավագույն հույսերով տոգորված ժողովուրդը վերականգնում էր ավերված օջախները, կառուցում նորերը, մշակում դաշտերն ու այգիները, վերաբացում արհեստանոցներն ու խանութները, փռերը, շուկան, աշխուժացնում առևտուրն ու կրթական կյանքը: Դրա վառ վկայություններից էր հունիսի 11-ին կայացած Վարժապետանոցի անդրանիկ շրջանավարտների հանդեսը: Հանդեսին ներկա գտնվող Արամը մասնակիցներին կոչ արեց միշտ մնալ բարձունքի վրա, ինչպես եղել էր ապրիլյան օրերին[42]: Կազմվում էին օրինագծեր կրթական, քաղաքապետական, բանտային և այլ բնագավառների վերաբերյալ:

Դժբախտաբար, Վանի հայկական նահանգապետությունը երկար կյանք չունեցավ, ընդամենը 70 օր: 1915 թ. հուլիսի 11-ին ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատից ռուսական Կովկասյան բանակի IV կորպուսի զորամասերի նահանջի օրերին վերջինիս հրամանով Վան-Վասպուրականի հայությունը հուլիսի 18-ին բռնեց հարկադիր գաղթի ուղին: Թուրքական յաթաղանից գերագույն ջանքերի շնորհիվ փրկված միակ հայկական նահանգը՝ Վան-Վասպուրականը ևս հայաթափվեց ու վերածվեց մոխրակույտերի:

Այսպիսով, Վանի հայկական նահանգապետությունը կարելի է համարել հայոց նորագույն պետականության նախատիպ, քանզի ազգային գործիչներով համալրված նրա իշխանության մարմինները, նրա վարչական կառուցվածքը, հետապնդած խնդիրները և մոտեցումը նրանց լուծմանը իրենց մեջ պարունակում էին պետականությանը բնորոշ քայլեր: Բացի այդ, նահանգապետության շրջանում ձեռք բերված փորձը նրա ղեկավարի՝ Արամ Մանուկյանի կողմից կարճ ժամանակ անց օգտագործվեց ի նպաստ Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման և ամրապնդման:

Ծանոթագրություններ

1. ՀԱՍ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 4, գ. 19, թ. 44:
2. Նույն տեղում, գ. 19, թ, 44; ֆ. 121, ց. 2, գ. 158, թ. 1:
3. Նույն տեղում, թ. 4:
4. Ա-Դօ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թւականներին, Ե., էջ 442 :
5. ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 7; Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1969, N 1, էջ 212:
6. ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 48, թ. 2:
7. Նույն տեղում, գ. 74, թ. 54:
8. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890 Էն 1940), Փարիզ, 1947, էջ 331:
9. ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 55, թ. 11, գ. 74, թ. 55:
10. Նույն տեղում, գ. 74, թ. 54:
11. Նույն տեղում, գ. 39, թ. 6:
12. Թերզիբաշեան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 228; Գուրգեն Մահարի, Այրվող այգեստաններ, Ե., էջ 570-571:
13. ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 40:
14. «Աշխատանք» , Վան, 1915, հունիսի 13, N 2 4 (223):
15. Սահակյան Ռ. Օ., Ոստիկանության ծառայության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում, Բանբեր Հայաստանի արխիվների, 2003, N 2, էջ 155:
16. ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 42; ֆ. 503, ց. 1, գ. 62, թ. 6:
17. Նույն տեղում, ֆ. 242 , ց. 1, գ. 39, թ. 42-44:
18. Նույն տեղում, թ. 45-46:
19. Նույն տեղում, թ. 45-47:
20. ՀԱԱ. ֆ. 242, ց. 1. գ. 5, թ. 176; ֆ. 503, ց. 1, գ. 62, թ. 8:
21. «Աշխատանք » 1915, հունիսի 24, N 27 (226):
22. ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 45:
23. Նույն տեղում, թ. 46:
24. Նույն տեղում, գ. 43, թ. 1, գ. 68, թ. 1:
25.«Մշակ», 1915, հուլիսի 9, N 147:
26. Ավետիսյան Մ., Փաստաթղթեր Արամ Մանուկյանի պետական գործունեության մասին, Բանբեր Հայաստանի արխիվների, 1990, N 2, էջ 137-138:
27. ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ 92-93:
28. Նույն տեղում, գ. 39, թ. 38:
29. Նույն տեղում, թ. 93:
30. Նույն տեղում, գ. 50, թ. 297:
31. Նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 135, թ. 1:
32. Նույն տեղում, ֆ . 242, ց. 1, գ . 2, թ. 8; գ. 16, թ. 2-3 և այլն:
33. Նույն տեղում, գ. 43, թ. 1:
34. Նույն տեղում, թ. 12:
35. Նույն տեղում, գ. 43, թ. 9:
36. Նույն տեղում, գ . 1, թթ. 29, 36 , 48; գ. 62, թ. 29; գ. 26, թթ. 3, 4, 6; գ. 18, թ.37 և այլն:
37. Նույն տեղում, գ . 13, թ. 7:
38. Նույն տեղում, գ. 4, թ. 4:
39. Նույն տեղում, գ. 54, թ. 9; գ. 39, թ. 36:
40. Նույն տեղում, գ . 57, թ. 1-8:
41. ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14-ի II մաս, թ. 183, 169-176:
42. «Աշխատանք», 1915, հունիսի 13, N 24 (223):

ՀԱՅ-ԿԱՌՈՒՑԱԿԱՆՈՒՄ

Արամ Մանուկյանը Վանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար

Թուրքական իշխանությունները, օգտվելով սկսված համաշխարհային պատերազմի ընձեռած պատեհ հնարավորությունից, որոշեցին իրականացնել իրենց հրեշավոր ծրագիրը՝ բնաջնջելու միջոցով լուծել հայկական հարցը: Այնպես որ, հայոց ցեղասպանությունը նախօրոք մտածված, մանրամասն ծրագրված ու հատուկ այդ նպատակով ստեղծված պետական կառույցների կողմից իրականացվող քաղաքականություն էր, որին զոհ գնացին ավելի քան մեկուկես միլիոն անմեղ հայեր:

Սուրեն Սարգսյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ստեղծված իրավիճակում այլ ելք չունենալով՝ հայությունը ոտքի ելավ ինքնապաշտպանվելու, թուրքական արնախում ոհմակին դիմագրավելու, սեփական պատիվն ու կյանքը փրկելու համար: Ցավոք, շփոթված, հանկարծակիի եկած, հիմնականում անզեն ու գլխատված ժողովուրդը չկարողացավ կազմակերպել համընդհանուր, կազմակերպված, միասնական ինքնապաշտպանություն, ինչի հետևանքով Արևմտյան Հայաստանի մեծ մասում տեղահանվեց ու անխնա կոտորվեց: Սակայն մի շարք գավառներում, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը կարողացավ կազմակերպված ինքնապաշտպանվել և փրկվել թուրքական յաթաղանի ամենակուլ երախից:

Արևմտահայության ինքնապաշտպանական կռիվների զարդապսակը (հատակապես՝ արդյունավետության տեսակետից) Վան-Վասպուրականի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանությունն էր, որի ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր հայ ժողովրդի նշանավոր զավակ Արամ Մանուկյանը:

Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան) ծնվել է Կապանի Զեյվա գյուղում՝ աղքատ զինագործի ընտանիքում[1]: Ուսեցել է դառը մանկություն: Սովորել է Շուշիի, ապա Երևանի թեմական դպրոցներում: 14 տարեկանում ընդունվել է ՀՅԴ շարքերը և մինչև կյանքի վերջը ծառայել հարազատ կուսակցությանն ու ժողովրդին:

Բաքվում, Գանձակում, Կարսում, Խոյում և մի շարք այլ վայրերում գործունեություն ծավալելուց հետո 1905 թ. Արամը մտնում է Վան: Շնորհիվ իր խոհեմ և զուսպ վարվելաձևի՝ նա այստեղ կարողանում է շահել տեղացիների սերն ու համակրանքը և քայլ առ քայլ իրականացնել իր առջև դրված խնդիրները: Հարազատ ժողովրդի կողմից փաշա տիտղոսին արժանացած Արամը ստեղծում է մարտական խմբեր, երկիր ներկրում զգալի քանակությամբ զենք, հիմնադրում կրթօջախներ և իրավական օգնություն ցուցաբերում ժողովրդին: Զգալիորեն բարելավում է հայ-քրդական հարաբերությունները՝ ձգտելով հասնել քրդերի չեզոքությանը, համերաշխություն ստեղծում Վանում գործող Արմենական-Ռամկավար և Հնչակյան կուսակցությունների հետ և այլն:

Դավոյի հայտնի դավաճանության հետևանքով ձերբակալված և 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման արդյունքում ազատված Արամը միայն կարճ ժամանակ ոգևորվեց երիտթուրքական սահմանադրության հռչակմամբ, սակայն շատ արագ հասկացավ և ճիշտ ըմբռնեց նրա էությունը: Նա հրաժարվեց խորհրդարանի պատգամավոր դառնալուց և գերադասեց մնալ ժողովրդի մեջ՝ այն համոզումով, որ **«այդպես աւելի օգտակար կը լինէր ժողովուրդին, քան խորհրդարանում նստած և բոցաշունչ ճառեր ասելով»**[2] և ընկերակցելով նույն խորհրդարանում բազմած թուրք երևելիներին, **«որոնցմէ շատերու ձեռքերը հաւանաբար մաքուր չէին հայերու արիւնէն ու արցունքէն»**[3]:

Վստահորեն կարելի է պնդել, որ եթե հայ ազգային-ազատագրական պայքարի բոլոր գործիչները 1908 թվականից հետո Արամի նման մտածեին և, խորհրդարանական գործունեությամբ չոգևորվելով, ձեռնամուխ լինեին արևմտահայությանն արագորեն զինելու աշխատանքին, հայությունն այդքան դաժանորեն չէր ճաշակի ցեղասպանության սարսափները: Շնորհիվ մի շարք գործոնների և հենց այդ խոհեմ

գործելակերպի՝ Վանի բնակչությունը փրկվեց 1915 թ. եղեռնից:

Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռուսական ուժերի անբավարարության բացը լրացնելու նպատակով (և ոչ արևմտահայության փրկության, ինչպես մատուցում էին ռուսական քարոզիչները)՝ ռուսական իշխանությունների թույլտվությամբ ու հովանավորությամբ սկսվեց կամավորական շարժումը, ինչն Արամը «թրքահայ ժողովրդի համար կորստաբեր կը համարէր... և մանավանդ գործոն մասնակցութիւնը»[4]: Արամի մտավախությունն անհիմն չէր: Հատկապես ռուսական բանակի շարքերում հայերի կռվելու հանգամանքը հարմար առիթ էր թուրքական կառավարության համար՝ իրականացնելու իր հրեշավոր ծրագիրը:

Դեպքերը Վանում կտրուկ կերպով սկսում են զարգանալ 1915 թ. ապրիլի սկզբներից: Վանի նորանշանակ կուսակալ Ջևդեթ բեյը հրամայում է քաղաքի հայկական թաղամասերը՝ Այգեստանն ու քաղաքամեջը զորքերով շրջապատել և սպառնում հաշվեհարդար տեսնել Վանի հայության հետ, եթե նրանք շարունակեն չենթարկվել ու չկատարեն իր բոլոր հրամանները: Հայերը հույսեր էին փայփայում, որ կհաջողվի խուսափել բախումից: Նրանք փորձեցին ամերիկյան միսիոներների միջնորդությամբ բանակցելով լուծել հակասությունները, սակայն հաջողություն չունեցան: Սպառելով բոլոր միջոցները և մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնությունները՝ վանեցիները որոշում են համախմբվել և դիմել ինքնապաշտպանության:

Ապրիլի 5-ին ստեղծվում է Վանի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին, որի մեջ մտնում են ռամկավար Ա. Եկարյանը (ռազմական ղեկավար), Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան), Բուլղարացի Գրիգորը (երկուսն էլ դաշնակցական), որոնց մի փոքր ուշ միացան Փանոս Թերլեմեզյանը և Արամ Մանուկյանը: Զինվորական մարմնին կից ստեղծվում են նաև այլ ստորաբաժանումներ, որոնք կոչված էին ապահովելու հայության ինքնապաշտպանությունը:

Այգեստանը բաժանվում է յոթ ինքնապաշտպանական շրջանների՝ 79 դիրքով: Հայ մարտիկների թիվը 1053 էր, իսկ զենքի քանակը 505 հրացան և 549 ատրճանակ: Հակառակորդի ուժերը մոտ 12000 զինվոր էր, գումարած թուրք խուժանն ու քուրդ հրոսակները[5]:

Ապրիլի 5-ին զինվորական մարմինը հատուկ շրջաբերականով հայտնում է, որ իրենց կռիվը պաշտպանողական է և բոլորը պարտավոր են ենթարկվել կառույցի հրահանգներին: Պաշտպանության ամբողջ ընթացքում ընդունվեցին մի շարք այլ շրջաբերականներ ևս, որոնցով, փաստորեն, զինվորական մարմինն իրականացնում էր օրենսդիր ու գործադիր իշխանության գործառույթներ:

1915 թ. Վանի հերոսական ինքնապաշտպանության մասին առկա են տարաբնույթ և իրարամերժ գնահատականներ, որոնցով լի են հատկապես կուսակցական հուշագիրների ու պատմագիրների երկերը: Սակայն հստակ է մի բան, որն ընդունում են բոլորը. ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունն իրականացրել է Արամ Մանուկյանը, նրան օժանդակել են բոլորը՝ կուսակցական հավակնությունը տեղի է տվել համերաշխության: Պաշտպանությունն իրականացվել է գրեթե անթերի, որի արդյունքում իրական ոչնչացումից փրկվել է Վան-Վասպուրականի հայության ճնշող մեծամասնությունը: Արամն ու իր զինակիցները եղան ինքնապաշտպանության հիմնական կազմակերպիչներն ու ոգեշնչողները, ինչի մասին կան բազմաթիվ վկայություններ: Վանի հերոսամարտը տևել է 1915 թ. ապրիլի 6-ից մինչև մայիսի 3-ը, երբ Ջևդեթը դիմեց փախուստի և Վան մտան հայ կամավորները:

Արձանագրենք.

• 1915 թ. Վանի ապրիլյան հերոսամարտը, ինչպես նաև Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանությունը, եզակի կռիվներից էին, որոնք տվեցին ցանկալի արդյունք՝ ոչնչացման իրական վտանգից փրկվեց հայության մի հատվածը:

• 1915 թ. Վանի ինքնապաշտպանությունն ուներ 1896 թ. հերոսամարտի ուսանելի և խիստ հուսադրող ու ոգևորող փորձը: 1896 թ. շատ մասնակիցներ կռվում ու քաջալերում էին նաև 1915 թ. պաշտպանության ժամանակ:

• Վանի պաշտպաններն ապավինեցին սեփական ուժին, թեև ակնկալվում էր նաև ռուսական բանակի օգնությունը: Ինքնապաշտպանության ընթացքում Վանում առկա էր կուսակցական իրատեսական համերաշխություն, բացակայում էր կուսակցամոլությունն ու դրա անցանկանալի ազդեցությունը:

• Ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր Արամ Մանուկյանը, որի նկարագիրը մեծ դերակատարություն ունեցավ հաղթանակը կռելու գործում:

Վանի բերդը

Լինելով արևելահայ, Արամ Մանուկյանը շատ շուտ ըմբռնեց արևմտահայության ցավը և ամենագլխավոր խնդիրը՝ ինքնապաշտպանության դիմել ֆիզիկական գոյությունը պահպանելու և ազատություն նվաճելու համար: Նա հասկացավ, որ պետք չէ վստահել մեծ տերությունների տված խոստումներին, այլ անհրաժեշտ է ապավինել սեփական բազկին, կրթել, զինավարժել ժողովրդին: Կողմնակից լինելով խաղաղ պայմաններում թուրքերի հետ խաղաղ գոյակցությանը՝ նա միաժամանակ պահանջում էր աչալուրջ լինել: Արամը դեմ էր կամավորական շարժմանը: Նրա կարծիքով՝ դա գազազեցնում էր թուրքերին, որոնք, նախապես մշակված ծրագիր ունենալով, առիթ էին փնտրում ջարդերի միջոցով մեկընդմիշտ փակելու հայկական հարցը: Վճռական պահերին Արամը հեռու մնաց կուսակցամոլությունից: Զինվորական մարմինը ղեկավարում էր փառապանծ ու վեհանձն Արմենակ Եկարյանը, ով ռամկավար էր: Ինքնապաշտպանության ղեկավար մարմնում ևս մեծ թիվ էին կազմում ոչ դաշնակցականները, որոնք կարևոր ֆունկցիաներ էին կատարում: Սակայն դա ամենևին չէր խանգարում, որ նրանք համատեղ ու միակամ պայքարեն անարգ թշնամու դեմ: Այս ամենի արդյունքում՝ ժողովուրդն ու շարքերը ներդաշնակ համերաշխությամբ և իրենց հերոսական քաջագործություններով միահամուռ կռեցին բաղձալի հաղթանակը:

Այստեղ ցանկանում ենք մի կարևոր հանգամանք ընդգծել: Մեր օրերի ազատությունը հնարավորություն է ընձեռում գրել ամեն ինչի ու բոլորի մասին: Չկան արգելված թեմաներ: Սակայն երբեմն գրվում են նախադասություններ, օգտագործվում են մակդիրներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը: Կամ մեծարվում, փառաբանվում են որոշ գործիչներ, իսկ նրանց կողքին ոչ պակաս հերոսացած նվիրյալներ մոռացության են մատնվում: Կարծում ենք՝ ժամանակն է բոլորի նկատմամբ ուշադիր լինել և տուրք չտալ կուսակցականությանը: Համոզված ենք նաև, որ սա այն դեպքն է, երբ ով էլ գրիչ վերցնի Արամի մասին գրելու, մեծարանքի, գնահատանքի ու փառաբանման խոսքերից բացի ոչինչ չի գրի: Իսկապես, լավ է ասված. **«Արամը, օժտված ի վերուստ, ամբողջ ժողովրդի մը համար ստեղծեց նոր պատմութիւն եւ կեանքի կոչեց ու իրականացուց մեր հայրենիքի աւերակներուն վրայ 500 տարիներէ ի վեր թափառական ու անհանգիստ երազը: Արամը կրցավ առարկայացնել ահա այդ մեծ երազը եւ այդ մեծ առարկայացումին մէջ է, որ կը մեծնայ Արամը եւ կը գերազանցէ իր եւ իրմէ ետք եկող ժամանակներու բոլոր մեծութիւնները, քանի որ, ամէն բանէ առաջ, Արամը կերտեց Ազատ եւ Անկախ Հայաստանը»[6]:**

Վանի Այգեստան թաղամասի համայնապատկերը



Վանի Սուրբ Թովմաս եկեղեցին

Ծանոթագրություններ

1. Պատմագիտական գրականության մեջ և հուշագրություններում այս հարցի վերաբերյալ կան տարակարծություններ առաջնության դափնին միմյանցից խլելով՝ կենսագիրները մի դեպքում Արամ Մանուկյանի ծննդավայր են հայտարարում Շուշին, իսկ մյուս դեպքում՝ Զեյվան: Մանրամասների պարզաբանումը մեր խնդիրը չենք համարում, այդ հարցին կանդրադառնանք մեկ այլ առիթով:
2. «Յուշեր Արմենակ Եկարեանի», խմբագրեց՝ Լ. Աճեմեան, Պէյրութ, 1985, էջ 161:
3. Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Աղեքսանդրիա 1922, էջ 147:
4. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890 էն 1940, Երևան, 2003, էջ 159:
5. Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան. 2005. էջ 193:
6. Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 129:

ՎԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ



ՎԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ



ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐԻ ԳԱՂԹԸ



ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐԻ ԳԱՂԹԸ

Արամ Մանուկյանի գործունեությունը Սարդարապատի հերոսամարտի օրերին

1918 թ. հունվարին, օգտվելով ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատից ռուսական բանակի հեռացումից, թուրքական բանակը գեներալ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ անցավ հարձակման: Հաղթահարելով նոր կազմավորվող հայկական զորամասերի դիմադրությունը՝ թուրքերը կարճ ժամանակում նվաճեցին Արևմտյան Հայաստանը և ներխուժեցին Արևելյան Հայաստան: 1918 թ. մայիսի 15-ին նրանք գրավեցին Ալեքսանդրապոլը և շարժվեցին դեպի Երևան[1]: Մայիսի 20-ին թշնամին գրավեց Սարդարապատից 10 կմ հեռու գտնվող Արաքս կայարանը: Թուրքական ներխուժման վտանգն անմիջականորեն կախվեց Էջմիածնի և Երևանի վրա: Թուրքերի նախընթաց վայրենաբարո վարքագիծը վկայում էր, որ նրանք փորձելու են ավարտին հասցնել հայոց արմատական բնաջնջման ծրագիրը. մինչդեռ հայկական զորքի զգալի մասը կազմալուծվել էր, իսկ բնակչությունը խուճապահար գաղթում էր դեպի Երևան:

Ճակատագրական այդ օրերին թշնամուն հակահարված կազմակերպելու աներեր կամք և մեծագույն եռանդ դրսևորեց 1917 թ. դեկտեմբերից Երևանի Հայոց Ազգային խորհրդի աշխատանքները գլխավորող, իսկ 1918 թ. մարտին Երևանի դիկտատոր ընտրված և իշխանական բացառիկ լիազորություններով օժտված Արամ Մանուկյանը, որն ամիսներ առաջ առաջադրել էր թշնամու դեմ պայքարում ազգային ուժերին ապավինելու քաղաքական ուղեգիծ: Նա, իրավացիորեն նկատում է Ա. Մելքոնյանը, իր վրա վերցրեց «հայրենիքի պաշտպանության գործը»[2]: Դեռևս Ալեքսանդրապոլի անկումից առաջ Արամը նշել էր. **«Եթէ երբէք մեր ճակատի վրա թիւրքերը սկսեցին յառաջխաղացումը, մենք անպայման պետք է դիմադրենք զէնքով, թնդանօթով, ոչ թէ ստրկօրէն անձնատուր ըլլանք և կոտորուինք»[3]:**

1918 թ. մայիսի 19-ի առավոտյան Արամը Երևանի շրջանում գործող հայկական երկրորդ դիվիզիայի հրամանատար զոր. Մովսես Սիլիկյանի հետ ունեցած հեռախոսազրույցում, անկարելի համարելով զորքերի հետագա նահանջը և Երևանն էլ ավելի մեծ վտանգի ենթարկելը, վերջինիս հանձնարարեց վերջ տալ հետագա նահանջին, պահպանել դիրքերը և Արարատյան դաշտում թշնամուն հակահարված հասցնելու վերաբերյալ նախօրոք դրված խնդիրն իրագործելու համար վստահեցրեց, որ երկու օրվա ընթացքում զորավարին կտրամադրվի այդ բանի համար անհրաժեշտ ամեն ինչ՝ մարդկային ուժ, զենք-զինամթերք և թիկունքի ոգևորությունը[4]: Թշնամուն վճռական հակահարված հասցնելու վերաբերյալ որոշումն ընդունվել էր այդ օրերին զորահրամանատարության մասնակցությամբ Երևանում գումարված խորհրդակցության ժամանակ՝ այն բանից հետո, երբ Արամը վճռականորեն հայտնել էր բանակի կարիքները կատարելապես բավարարելու պատրաստակամության մասին[5]:

Մ. Սիլիկյանի հետ խոսակցությունից հետո Արամը հրավիրեց բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների ժողով՝ նրանց պարզելով իրողությունը: Մինչ ժողովականները կորոշեին հարցի քննարկումը թողնել երեկոյան գումարվելիք նոր ժողովին, Արամը՝ գիտակից պահի կարևորությանը, լծվեց աշխատանքի: Հայ ժողովրդի համար ծայրահեղ բարդ իրավիճակում նա ի հայտ բերեց իր ողջ ներուժը՝ արդարացնելու համար, մի կողմից՝ իր վրա դրված հույսերը, մյուս կողմից՝ ամիսներ առաջ որդեգրված ուղղու ճշմարտացիությունը: Նա իր համախոհներին հրահանգեց անհապաղ՝ մինչև երեկո, առանց տարիքի ու դիրքի խտրության ռազմաճակատ ուղարկել բոլոր զինապարտներին: Խստագույնս արգելվեց քաղաքից հեռանալը: Կանայք պետք է տներից փամփուշտ հավաքեին և ջուր հասցնեին ճակատում գտնվող զինվորներին: Արամը, որը նախընտրում էր ամեն ինչին անձամբ հետևել, կրկնապատկել էր եռանդը. նա **«իբրեւ շարժական ոգի, ամեն տեղ էր՝ հրապարակներում, շուկայում, տներում, եկեղեցիներում և կ՝ոգեւորեր իր խօսքերով ու կը ներշնչէր ամէնքին»[7]:**

Մայիսի 19-ի երեկոյան գումարված Ազգային խորհրդի նիստում հարց բարձրացվեց Երևանը թշնամուն հանձնելու մասին: Հերթական անգամ Արամն ամենայն վճռականությամբ բացառեց անձնատվությունը՝ նշելով. **«... ոչ մի նահանջ ոչ մի գծի վրա: Նահանջ Երևանից՝ կնշանակէ խաչ քաշել մեր ամբողջ գործունեության եւ մեր ապագա քաղաքական մուրազներուն վրա, բոլորդ պիտի մնաք եւ մեռնիք»[8]**: Արամի վճռական կեցվածքն Ազգային խորհրդի անխախտ վճիռն էր: Ազգային խորհրդի որոշումը թշնամուն ճակատամարտ տալու

մասին հանձնվեց հրամանատարության ի կատար ածելու[9]:

Վերջ տրվեց նաև ազգաբնակչության շրջանում տիրող խուճապին: Մայիսի 21-ի երեկոյան քաղաքային խորհրդարանի ամառային շենքի հրապարակում (Սկետինգրինգում) կայացած հանրահավաքում, որում սկզբնապես տիրում էր հուսահատության մթնոլորտ, Արամը հանդես եկավ հակիրճ, բայց զանգվածի զգայուն թելերին դիպչող ելույթով: Նա նշեց. **«կրկնութիւններ անելու այժմ տրամադիր չեմ և ժամանակ էլ չկայ ճառերով զբաղուելու: Ես եկել եմ յայտնելու ձեզ, որ թշնամին գրաւել է Սարդարապատը և շարժւում է դեպի Էջմիածին: Մեզ մնում է մի բան, կամ զենք վերցնել ու դուրս գալ թշնամու առաջ և կամ կոտորուել ոչխարի պես... Ով ուզում է ապրել, առանց րոպէ կորցնելու, թող վերցնի զէնքը, վերցնի նաև երեք օրւայ պաշար ու իսկոյն և եթ դիմէ ուսուցչական սեմինարիայի շէնքը՝ ցուցակագրուելու և այնտեղից էլ ճակատ ուղարկուելու համար: Ես իմ ասելիքս վերջացրի, այժմ ձեզ է մնում անելիքը»[10]:**

Ժողովուրդը համակվեց ոգևորությամբ և մարտական տրամադրությամբ: Սարդարապատի հերոսամարտի մասնակից Մ. Մանասիրյանը «Սկետռինգի» հավաքի կապակցությամբ 1968 թ. վերհիշել է, որ Արամը, գրող Դ. Դեմիրճյանը և այլոք ոգեշնչում էին ժողովրդին և կոչ անում անկախ տարիքային ու սոցիալական խտրության, քաղաքական համոզմունքների զենք ստանալ ու մեկնել ճակատ, իսկ վերջինս՝ արձագանքելով իրեն ուղղված հորդորներին, բացականչում էր, թե ավելի լավ է ճակատում զոհվել, քան սեփական օջախներում մորթոտվել[11]:

Հայրենիքի համար այդ ծանր պահին անգամ կային ուժեր, որոնք ըմբոստանում էին իշխանությունների դեմ: Սարդարապատի մոտ թեթևակի նահանջից հետո Երևանում ծագել էր խռովություն, որի մասնակիցները մտադրվել էին ձերբակալել Արամին՝[12] նրան հաշվեհարդարի ենթարկելու համար, և հանձնվել թշնամուն[13]: Վտանգավոր դրությունը հարթվեց Արամի վճռականության շնորհիվ: Ազգային խորհրդում նա նշեց. **«Այս միջոցին, երբ Սարդարապատի մէջ հայոց համար կեանքի եւ մահուան հարց է դրուած, ուր հայ արիւնը հոսում է, անթոյլատրելի է, որ մի դասալիք խայտառակութիւններ անի...»[14]**: Նրա հրամանով խռովարարների պարագլուխները գնդակահարվեցին, իսկ դասալիքներն ուղարկվեցին ռազմաճակատ:

Այդ օրերին Երևանում տիրում էր նախադեպը չունեցող աշխատանքային մթնոլորտ: Աշխատանքի էին լծվել ամենքը՝ անկախ սեռից, տարիքից ու դիրքից[15]:

Ժամանակակիցների վկայությամբ Արամը ոգի էր ու եռանդ: Ա. Աստվածատրյանը գրել է. Արամը **«շարունակ ոտքի վրայ էր: Հանգիստն ինչ է՝ մոռացել էր: Ռազմաճակատը նրա մտահոգության միակ առարկան էր... Անընդհատ յարաբերութեան մէջ էր գլխաւոր շտաբի հետ, որ նստած էր Վաղարշապատում: Արամը իր շնչով վարակում էր ամենքին: Ոչ ոք չէր խնայում հնարաւորը»[16]**: Հ. Կոսոյանի բնորոշմամբ Արամը **«կը մղէր, ընթացք կուտար, թէ քաղաքի ներքին ինքնապաշտպանութեան, թէ ճակատներ կամաւորներու առաքման, մէկ խօսքով, բոլոր կենսական հարցերն ու խնդիրները նրա դատողութեան և կամքի բովէն կանցնէին»[17]**: Արամի ու նրա գործակիցների եռանդուն և, որ չափազանց կարևոր էր, հետևողական քայլերը տվեցին ցանկալի արդյունքը, մարտական ոգին, հոգեբանական շաղափը, գիտակցական կարգապահությունը ձևավորված էր: Ոգևորությամբ համակված ժողովրդական զանգվածները թե Երևանից և թե գավառներից կամավորական խմբեր կազմած մեկնում էին ռազմաճակատ: Երևանի բանուկ վայրերում կամավորներ էին ցուցակագրվում և զորամասեր ուղարկվում. **«Գալիս էին գյուղացիներ, ինտելիգենտներ, բանվորներ իրենց զենքերով ու պարենով ու ցուցակագրվում: Իմ վաշտը եկան 70 հոգի՝ բոլորն էլ զինված հայրենիքը պաշտպանելու վճռականությամբ»**,- գրել է Մ. Մանասիրյանը[18]:

Ձեռնարկված արդյունավետ քայլերի առթիվ զոր. Սիլիկյանն իր գոհունակությունը և, միաժամանակ, հարձակման անցնելու մտադրությունը հայտնեց Արամին:

Թշնամուն հակահարված հասցնելը դժվարին գործ էր: Տարբեր տվյալներով 5500-7000 զինվորներ ունեցող հայկական զորքի դեմ Սարդարապատում թշնամին կենտրոնացրել էր 6000-9000 կանոնավոր զինվորներ և 1500-3000 քուրդ հեծյալներ[19]:

1918 թ. մայիսի 21-ին զոր. Մ. Սիլիկյանն ու փոխգնդապետ Ս. Վեքիլյանը մշակեցին թշնամուն վճռական հակահարված հասցնելու պլան: Ակտիվ գործողությունների դիմելուց առաջ, երևանյան զորամասին արևմուտքից սպառնացող թուրքական հարձակման վտանգը չեզոքացնելու նկատառումով, Մ. Սիլիկյանը Սուրմալուի ճակատում գտնվող Դրոյի փոքրաթիվ զորամասին հրահանգեց անցնել Արաքսի ձախ ափը՝ պայթեցնելով գետանցումն ապահովող Կարակալայի ու Մարգարայի կամուրջները: Մայիսի 22-ին՝ Ալեքսանդրապոլ-Համամլու-Բաշ-Ապարան գծով առաջացող թշնամու կողմից Երևանին սպառնացող վտանգը կասեցնելու համար Դրոն փոքրաթիվ ուժերով գործուղվեց Բաշ-Ապարանի ճակատ: Երևանյան զորամասի հիմնական ուժերը Դանիել Բեկ-Փիրումյանի անմիջական ղեկավարությամբ պետք է գործեին Սարդարապատի ճակատում[20]: Շարուր-Նախիջևանից սպառնացող վտանգը դիմագրավելու նպատակով Մ. Սիլիկյանն այդ հատվածում տեղաբաշխեց գնդապետ Բաղդասարյանի ուժերը[21]:

Արամն անմասն չէր ռազմական ձեռնարկներից: Բաշ-Ապարանի ուղղությամբ թուրքական հարձակումից առաջ, նա և երևանյան զորամասի հրամանատարությունը իրենց ջոկատներով այստեղ էին գործուղել դաշնակցական գործիչներ Ս. Ջալալյանին և Ա. Տեր-Պողոսյանին, որոնք ստեղծեցին ինքնապաշտպանական խմբեր և ընդգրկվեցին Դրոյի զորամասի մեջ[22]:

1918 թ. մայիսի 22-ին հայկական զորքը, որը տակտիկական նկատառումներով մայիսի 21-ին նահանջել էր Սարդարապատ գյուղից ու կայարանից, Սարդարապատի ճակատում անցավ հարձակման և երկօրյա մարտերի ընթացքում թշնամուց ազատագրեց Ղամշլու (Եղեգնուտ), Ուշան, Բաշ-Խորաբ, Կոշ, Մոլլա-Բայազետ, Սարդարապատ գյուղերն ու Սարդարապատ կայարանը[23]: Թուրքական զորքերը կրելով լուրջ կորուստներ (սպանվել ու վիրավորվել էր մոտ 500 թուրք զինվոր) նահանջեցին և ամրացան Արաքս կայարանում և նրան

մերձակա Թուլքի-թափա և Չիմնի-ղրոռ բարձունքներում:

Հայկական զորքերի հաջողությունները բեկումնային նշանակություն ունեցան Երևանին սպառնացող թուրքական վտանգի չեզոքացման և հայոց մեջ մինչ այդ տիրող բարոյահոգեբանական վիճակի փոփոխման առումով: Այն բուռն ոգևորություն առաջացրեց և՛ զինվորականության, և՛ ազգաբնակչության շրջանում: Հայկական զորամասերն արագորեն համալրվում էին, բանակի շարքերն էին վերադառնում անգամ դասալիքները: Ընդհանուր զորակոչ հայտարարելու օրից ցուցակագրվել էին 950 հոգի[24]: Հայ ազգաբնակչությունը՝ անկախ սեռից, տարիքից ու սոցիալական դիրքից, Երևանում և Էջմիածնում ամեն ինչ զոհաբերում էր հօգուտ ռազմաճակատի կարիքների և հայրենիքի փրկության[25]:

Մայիսի 24-26-ը Թուլքի-թափա և Չիմնի-ղրոռ բարձունքների մոտ ծավալված դաժան մարտերից հետո, որը կողմերից ոչ մեկին հաջողություն չբերեց, հայկական հրամանատարությունը մշակեց թշնամուն հակահարված հասցնելու նոր պլան, որի էությունը միաժամանակյա ճակատային ու թևային հարձակման միջոցով թշնամուն շրջափակելն ու ջախջախելն էր: Մայիսի 27-ի առավոտյան հայկական զորքն անցավ գրոհի: Արաքս կայարանի մոտ հաջողությամբ թշնամու թիկունքն անցած գնդապետ Հասան-Փաշայանի «Խզնաուզի» ջոկատի, Դանիել Բեկ-Փիրումյանի անմիջական հրամանատարության ներքո գործող Սարդարապատի զորամասի հիմնական ուժերի ճակատային, ինչպես նաև աջ թևից Պանդուխտի պարտիզանական ջոկատի ձեռնարկած միաժամանակյա շեշտակի հարձակման հետևանքով թուրքական ուժերը խուճապի մատնվեցին և նահանջեցին[28]: Հայկական զորամասերը գրավեցին Թուլքի-թափա բարձունքը, Արաքս կայարանը և շարունակեցին գրոհն ամբողջ ճակատով[29]: Մինչև մայիսի 29-ը տևած ռազմական գործողությունների արդյունքում լիակատար պարտություն կրած թուրքերը նահանջեցին Ալեքսանդրապոլի ուղղությամբ:

Բաշ-Ապարանի ճակատում Դրոյի գլխավորությամբ գործող զորամասերը մայիսի 28-ին Ղազնաֆար-Ղարաքիլիսա գծից անցան հակահարձակման և թեժ մարտերի ընթացքում ջարդելով թուրքերին՝ ազատագրեցին Ալի-Քուչակն ու Բաշ-Ապարանը: Թուրքերը մայիսի 29-ին հեռացան Համամլուից:

Ոգևորությունն այնքան մեծ էր, որ զոր. Սիլիկյանը մայիսի 29-ին պատրաստվում էր ազատագրել Ալեքսանդրապոլը:

Մայիսյան հերոսամարտերի բաղկացուցիչն էր նաև Ղարաքիլիսայի ճակատամարտը: Մայիսի 24-28-ը զոր. Նազարբեկյանի ընդհանուր հրամանատարության ներքո գործող մոտ 7000-ոց հայկական բանակային և աշխարհազորային ջոկատները ծանր հարված հասցրեցին թուրքական 10000-ոց բանակին՝ նրանց վրա գործելով մեծ ու զսպիչ ազդեցություն[30]:

Մայիսյան հերոսամարտերը, որոնց կերտմանն իր մեծագույն մասնակցությունն ունեցավ Արամ Մանուկյանը, բացառիկ նշանակություն ունեցան հայ Ժողովրդի համար: Փրկելով հայ ժողովրդին վերջնական բնաջնջումից՝ հերոսամարտերը, միաժամանակ, հնարավոր դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը: Մինչև հերոսամարտերը թուրքերը դեմ էին ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարին[31]:

Արամի գործունեությանն առանձնահատուկ բարձր գնահատական են տվել նրա բազմաթիվ ժամանակակիցներ, իսկ ավելի ուշ նաև պատմագիտության ներկայացուցիչները: Գնդապետ Ս. Արարատյանը, տալով 1918 թ. սկզբներից Երևանի նահանգում կատարված իրադարձությունների, այդ թվում՝ Երևանյան զորամասի կազմավորման, Սարդարապատի և Բաշ-Ապարանի հերոսամարտերի նկարագիրը, 1919 թ. փետրվարին գրել է. **«Երևանի շրջանում այն ժամանակ ամբողջ իշխանությունը հաստատուն կերպով գտնվում էր Արամի ձեռքում...Երևանի շրջանի ռազմական հզորության, տնտեսական և մնացյալ կարգի կազմակերպման Արամի փայլուն ընդունակությունը հայերին հնարավորություն տվեց զենքը ձեռքներին պահպանել փոքրիկ հողակտորը, միակ քաղաք Երևանը և Սուրբ Էջմիածնի եկեղեցին և, եթե հայերիս հետ հաշվի էին նստում այն ժամանակ և հաշվի են նստում այժմ, ապա դա կարող եմ վերագրել բացառապես երեք անձանց՝ Արամին, գեներալ Սիլիկովին և Դրոյին»**[32]:

Արամին անկախ Հայաստանի հիմնադիր կամ հեղինակ են անվանել Ն. Աղբալյանը՝ ՀՅԴ Արևելյան բյուրոյի անունից նրան ձոնած դամբանականում, Ա. Շահխաթունին, Օն. Մխիթարյանը, Գ. Լազյանը, Ս. Վրացյանը, սփյուռքահայ պատմաբաններ Ռ. Հովհաննիսյանը, Անահիտ Տեր-Մինասյանը, հայրենի պատմաբաններ Ա. Հակոբյանը, Ա. Մելքոնյանը և շատ ուրիշներ[33]:

Տասնամյակների պարտադրված լռությունից հետո, 1960-ական թթ. խորհրդահայ պատմագրությունը ևս անդրադարձավ 1918 թ. մայիսյան հերոսամարտերին: Եթե հերոսամարտերի դերը հայ ժողովրդի ճակատագրում շեշտվեց ըստ արժանվույն, ապա դրանք դարբնած ուժերին հիմնականում տրվեցին անընդունելի գնահատականներ: Պատճառը խորհրդային վարչակարգի հարուցած քաղաքական-գաղափարական արգելքներն էին, հեղինակների կանխակալ, դեպի ՀՅԴ գործունեությունն ունեցած մերժողական վերաբերմունքը: Արամն այն եզակի գործիչներից է, որը թեև խորհրդահայ պատմագրության կողմից հրապարակայնորեն չգնահատվեց ի հարկին, բայց և զերծ մնաց փնովվելուց: Մասնավորապես, 1965 թ. հրատարակվեց մեզանում Սարդարապատի հերոսամարտի ուսումնասիրմանը նվիրված առաջին աշխատությունը՝ Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» մենագրությունը[34]: Մ. Կարապետյանի դիպուկ բնորոշմամբ **«հեղինակի ընդգծված հակադաշնակցական վերաբերմունքն ուղղակի ավերածություններ է առաջացրել շարադրանքում»**[35]: Այդ ավերածությունն առկա է նաև Արամի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքում: Հ. Թուրշյանը Սարդարապատը համարել է հայ ժողովրդի գոյության կռիվ, մատնանշել նրա բոլոր դասերի և կուսակցությունների միասնական պայքարը թշնամու դեմ: Սակայն ՀՅԴ և նրա գործիչների գործունեությունը նսեմացնելու անթաքույց ձգտումը նրան թույլ չեն տվել անաչառ և ճշմարիտ գնահատականներ տալ այդ գործիչներին: Մասնավորապես,

Սարդարապատի մոտ հայոց առաջին հաղթանակի կապակցությամբ Հ. Թուրշյանը, մեղանչելով ճշմարտության դեմ, նշում է, թե Արամն օժտված չէր վճռականությամբ, չէր կարողանում ձևավորել իր հոսանքը, այլ միայն կարողանում էր տարերայնորեն սկսվածով ոգևորվել ու ղեկավարել այն և ավելացնում է, որ նա «այդ օրը նշանակալից քայլեր կատարեց»[36]: Ամփոփելով խնդրի առթիվ իր մտքերը՝ Հ. Թուրշյանը գրել է. «...Սարդարապատի կրիտիկական օրերին Արամ Մանուկյանը, անտարակույս, շոշափելի ծառայություններ է մատուցել հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործին: Բայց և այնպես, դիկտատոր և ինքնապաշտպանության գործի կազմակերպիչ չի եղել»[37]: Այս բնորոշումները կիսաճշմարտություններ են, քանզի նա և՛ դիկտատոր էր, և՛ հերոսամարտի կազմակերպիչ, և՛ նշանակալի քայլեր կատարեց հերոսամարտի ողջ ընթացքում:

Այսպիսով, Հ. Թուրշյանի մոտ ակնհայտ է հակասական վերաբերմունքը Արամի հանդեպ, նրա մեծությունը քողարկված ձևով ընդունելու ձգտումը: Կարծում ենք այն ժամանակ տիրող պայմաններում հրապարակայնորեն ավելին ասել հնարավոր չէր:

Հ. Թուրշյանը Սարդարապատի հերոսամարտի օրերին Արամի կատարած դերին բարձր գնահատական է տվել 1964 թ. գրած անտիպ հոդվածում: Նա գրել է. **«Քանի գոյատևի և հարատևի մեր ժողովուրդը, նա այնքան ավելի հստակորեն կտեսնի ու այնքան ավելի բարձր կգնահատի Սարդարապատի հերոսամարտը, որտեղ մենք, վերջապես, բռնեցինք անկախության իրավունքի քննությունը, և այդ հերոսամարտի հաղթանակի ապահովման հետ սերտորեն միաձուլված Արամ Մանուկյանին»**[38]:

Արմեն Ասրյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծանոթագրություններ

1. Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 174-175: Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918), Երևան, 1991, էջ 33-34:
2. Մելքոնյան Ա., Հայոց պատմություն: Դասախոսությունների ձեռնարկ, Երևան, 1998, էջ 193:
3. Կոսոյեան Հ., Հայկական Թերմոպիլէ, «Դրօշակ», Փարիզ, 1928, մայիս, N 5, էջ 137:
4. Շահխաթունի Ա., Արամը. յիշողութիւններ, «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, հունվարի 30, (N 670.249): Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), գիրք ե, Երևան, 1999, կազմեց Ս.Բեհբուդյան, էջ 62:
5. Շահխաթունի Ա., Հանդիպում սպարապետ Նազարբէկեանի հետ (Իմ յուշերից), «Հայրենիք», 1959, յունիս, N 6, էջ 98:
7. «Ճակատամարտ», 1921, յունուարի 30, N (670.249): Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ե, էջ 63:
8. «Ճակատամարտ», 1921, յունուարի 30, N (670.249):
9. Բժ. Յովակիմ Մելիքեան, Արեան ճանապարհով, «Հայրենիք», 1925, մայիս, N 7, էջ 74:
10. «Հորիզոն», 1918, սեպտեմբերի 6, N 178:
11. Մանասիրյան Մ., Հիշողություններ Սարդարապատի հերոսամարտից, ՀՀ ՊՊԹ, Նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդ, բաժնի մատյան 960, մայր մատյան 12441, թ. 6:
12. Շահխաթունի Ա., Սարդարապատի հերոսամարտը եւ մահափորձը Արամ փաշայի դէմ (Իմ յուշերից), «Հայրենիք», 1959, օգոստոս, N 8, էջ 27-30:
13. Ահարոնյան Ա., Ավարայրի ոգեկոչումը: Անդրանիկ, Երևան, 1991, էջ 12:
14. Շահխաթունի Ա., նշվ. հոդվածը, «Հայրենիք», 1959, օգոստոս, N 8, էջ 28:
15. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ե, էջ 63:
16. Աստվածատրեան Ա., Արամը, «Հայրենիք», 1964, յուլիս, N 7, էջ 77; «Արամը», Երևան, 1991, էջ 129-130:
17. Կոսոյեան Հ., նշվ. հոդվածը, «Դրօշակ», Փարիզ, 1928, մայիս, N 5, էջ 138:
18. Մանասիրյան Մ., նշվ. հուշերը, ՀՀ ՊՊԹ, Նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդ, բ. մ. 960. մ.մ. 12441, թ. 5-6:
19. Աֆանասյան Ս., նշվ. աշխ., էջ 37-38: Փափազեան Վ., Սարդարապատի հերոսամարտը, Դրօշակ, Աթենք, 1988, N 3-4, 25 մայիս–8 հունիս, էջ 51: Սանասիրյան Մ., նշվ. հուշերը, ՀՀ ՊՊԹ, Նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդ, բ.մ. 960, մ.մ. 12441, թ. 2-3:
20. Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998, էջ 94-95:
21. Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 177:
22. Գևորգյան Հ., Դրո, Երևան, 1991, էջ 92-94:
23. ՀՀ ՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5: Աֆանասյան Ս., նշվ. աշխ., էջ 44: Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 95–96: Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գ. Բ, Երևան, 1996, էջ 142-143:
24. «Զանգ», 1918, մայիսի 28 (15), N 37:
25. ՀՀ ՊԱ, ֆ. 289, ց. 1, գ. 8, թ. 6:
27. Նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 82, թ. 16: Մարտիրոսյան Մ., Սարդարապատի ճակատամարտը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, N 1, էջ 159:
28. Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 178-179:
29. ՀՀ ՊԱ. ֆ. 121, ց. 2, գ. 82, թ. 5:
30. Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914-1918), Երևան, 1964, էջ 450:
31. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний В. Микаелян, Ереван, 1995, с. 508.
32. ՀՀ ՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 6: Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 224:
33. «Աշխատանք»-ի բացառիկ, 1919, 12 փետրուար, N 4: «Ճակատամարտ», 1921, յունուարի 30: «Հայրենիք», 1923, յունիս, N 8, էջ 38, 42: Լազեան Գ., Յեղափոխական դէմքեր (Մտաւորականներ եւ հայդուկներ), Գահիրէ, 1945, էջ 201, Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Ե. Բեյրութ, 1966, էջ 50, Hovannisian R., The Republic of Armenia, vol. I, The First Year, 1918-1919, Berkeley-Los Angeles-London, 1974, p. 147, Ter Minassian A., La Republique d'Armenie (1918-1920). La memoire du slecle, Bruxelles, 1989, p. 74, Հակոբյան Ս., Հայաստանի հանրապետություն (1918-1920 թթ.), Երևան, 1992, էջ 6, Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 197:
34. Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1965:
35. Կարապետյան Մ.Ս., Հայաստանը 1912-1920 թվականներին: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2003, էջ 211:
36. Թուրշյան Հ., նշվ աշխ., էջ 144-145:
37. Նույն տեղում, էջ 230:
38. Թուրշյան Հ., Հուշեր նվիրված Վանի 1915 թ. ինքնապաշտպանության հերոս Արամ Մանուկյանին, ՀՀ ՊՊԹ Նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդ, բ. մ. 941, մ.մ. 11844, թ. 39:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ, ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ, ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ



ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ, ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ, ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

Արամ Մանուկյանը՝ ժողովրդական դիկտատոր

Ռազմաճակատի քայքայումը եւ նահանջն ազդում էր երկրի ներքին դրության եւ զինվորական կարգապահության վրա: Դասալքությունը ահռելի չափերի էր հասել:

Երեւանի Ազգային խորհրդի անդամ, բժիշկ Հովակիմ Մելիքյանի վկայությամբ՝ «գյուղերում ու քաղաքներում վխտում էին հազարավոր դասալիք զինվորներ»:

Իշխանությունը փորձում էր նրանց հավաքել եւ ուղարկել ռազմաճակատ, սակայն շատերը զորամասերում զենք ու հանդերձանք ստանալուց հետո լքում էին դիրքերը եւ հայտնվում թիկունքում:

«Յուրաքանչյուր գյուղում ու քաղաքում բուն էին դրել ավազակային խմբեր, որոնք ազատ ու անվախ պարապում էին դրամաշորթությամբ ու թալանչիությամբ: Շատերը մաուզերներով զինված՝ սպառնական նամակներ էին գրում սրան ու նրան եւ փող պահանջում: Ոչ մի մարդ իրեն ապահով չէր զգում: Վերացվել էր իսպառ կյանքի ու գույքի ապահովությունը, իսկ երկրի իշխանությունը, անուժ էր դրա դեմ կռվելու: Յուրաքանչյուր օր, կառավարության կողմից ազդագրեր ու սպառնալիքներ էին տպագրվում, պատերին փակցվում, ազգաբնակչության մեջ տարածվում, սակայն սպառնալիքները մնում էին անկատար եւ ոչ մի ազդեցություն չէին անում» (Հովակիմ Մելիքյան, Արյան ճանապարհով, Հայրենիք, թիվ 4, 1925թ., Բոստոն):

«Լրագիրներից եւ նամակներից կտեսնեք, որ Կովկասը ահաբեկված եւ խուճապի է մատնված. սրա պատճառը փնտրելու եք ոչ թե թշնամու գերազանց ուժերի մեջ, այլ մեր ներքին կացության. զորքը անբարոյականացել է. տուն փախչողների փսիխոզը հասել է ծայրահեղության: Սրա դեմ վերջերս միջոցների դիմեցինք՝ կիրարկելով մահվան պատիժը, եւ աջ-ձախ սկսել ենք զարկել. առաջին տպավորությունը լավ է: Այս լքվածությունը մեծապես ազդեց ճակատների վրա» (Հատված Արամ Մանուկյանի նամակից, 6 մարտի, 1918թ., Երեւան: Աղբյուր՝ Արամ Մանուկյան, Հուշեր, Երեւան, 1990թ.):

Այս ամենի դեմ վճռական պայքար է սկսում Արամ Մանուկյանը: Նա իր մոտ է կանչում հայտնի խմբապետ Դալի Ղազարին եւ հրամայում ամենակարճ ժամանակամիջոցում գնալ ռազմաճակատ: Արամի հրամանն անմիջապես կատարվում է, եւ Դալի Ղազարը «Հայ Կանանց Միության կողմից կարված թավշյա դրոշակով, որի վրան մակագրված էր «Մահ կամ Ազատություն» մեկնում է առաջնագիծ»: Սակայն բոլոր խմբերի հրամանատարները չէին, որ ցանկանում էին ենթարկվել կարգուկանոնին:

«Ղազարի խմբի մեկնելուց հետո, իր սխրագործություններով հայտնի մաուզերիստ Չոլախ Գեւորգը, շուրջն է հավաքում մնացած մաուզերիստներին եւ սկսում շարունակել իր «մաուզերիստական» գործողությունները: Արամ փաշայի հրամանով սկսեցին խիստ հալածանքներ, գանակոծություններ ու բանտարկություններ մաուզերիստների շարքերում: Այս ընթացքից վրդովված Չոլախ Գեւորգը մտնում է Ազգային խորհուրդ՝ Արամի գրասենյակը, սկսում է հանդգնաբար խոսել Արամի հետ եւ սպառնալիքներ կարդալ մաուզերիստներին հալածողների հասցեին: Արամը զայրանալով դուրս է տանում նրան գրասենյակից եւ կարգադրում գնդակահարել նրան» (Հովակիմ Մելիքյան, Արյան ճանապարհով, Հայրենիք, թիվ 4, 1925թ., Բոստոն):

Շուտով Երեւանի Ազգային խորհրդի որոշումով ստեղծվում է արտակարգ դատարան՝ «Հեղափոխական Տրիբունալ» անունով՝ իրավաբան Գիգա Պետրոսյանի նախագահությամբ, որը հետագայում դարձավ Հայաստանի Հանրապետության արդարադատության առաջին նախարարը:

«Իբրեւ դատախազ հրավիրվեց իրավաբան Լեւոն Մուշեղյանը, որ հետո ուղարկվեց Նախիջեւան՝ թուրքերի մոտ, որպես հաշտարար պատգամավոր, ուր եւ տմարդորեն սպանվեց: Ազգային խորհրդի ներկայացուցիչը ես էի: Տրիբունալն իր կարճատեւ կյանքում, որոշ դեր խաղաց կարգ ու կանոն երկրի մեջ մտցնելու գործում» (Հովակիմ Մելիքյան, Արյան ճանապարհով, Հայրենիք, թիվ 4, 1925թ., Բոստոն):

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՐԸ

Անիշխանության, ավելի ճիշտ՝ բազմաթիվ իշխանությունների առկայության պայմաններում անհրաժեշտ էր Երեւանի նահանգում ստեղծել միասնական գործադիր

իշխանություն, որն իր վրա կվերցներ կարգուկանոն հաստատելու պատասխանատվությունը, կունենար վճռականություն, կվայելեր ժողովրդի վստահությունը եւ կկարողանար կասեցնել թուրքական զորքերի մահաբեր առաջխաղացումը: Այդ իշխանությունը Երեւանի Ազգային խորհուրդն էր, որի գլխավոր դերակատարը Արամ Մանուկյանն էր:

1918 թ. մարտի սկզբին Երեւանում մի խումբ զինվորականներ որոշում են, որ պարտությունները կանգնեցնելու եւ իրադրությունը փրկելու համար անհրաժեշտ է դիկտատոր ընտրել, եւ ամառային ակումբում զինվորական ժողով են հրավիրում: Այնտեղ սպաներից մեկն ասում է. **«Այսպիսի միմյանց չհասկացող ու միմյանց հակասող իշխանությունները չեն կարող երկիրը փրկել անկումից: Հարկավոր է ունենալ մեկ դիկտատոր, որին պիտի ենթարկվեն բոլոր տեսակի իշխանությունները»**: Ելույթ են ունենում նաեւ այլ մասնակիցներ եւ առաջարկում տարբեր զինվորականների թեկնածությունը՝ Սիլիկյանի, Դանիել Բեկ-Փիրումյանի եւ այլն: Այնուհետեւ ելույթ է ունենում Երեւանի պարետ Շահխաթունին.

«Այս ծանր պայմաններում պիտի ընտրել մեկին, որը ունենա լայն ժողովրդականություն, ուժեղ կամք, վճռականություն եւ երկրի դրությունն ըմբռնող մի անձնավորություն: Այդպիսի մարդ կարող է լինել եւ ոչ զինվորական: Այդպիսի մի անձնավորության ես ճանաչում եմ հանձին Արամ փաշայի, որի վրա պետք է դնենք այդ ծանր պարտականությունը եւ որը կարող է արդարացնել մեր հույսերը: ...Արամ փաշան է մեր դիկտատորը. գնանք դեպի նա եւ այս ծանր լուծը դնենք նրա շլինքին: Կեցցե Արամ փաշան» (Հովակիմ Մելիքյան, Արյան ճանապարհով, Հայրենիք, թիվ 4, 1925թ., Բոստոն):

«ԵՍ ԱՎԵԼԻ ԱՆՈՂՈՔ ԿԼԻՆԵՄ»

Ոգեւորված բազմությունը շարժվում է դեպի Արամի տուն, որն Ազատության փողոցում էր՝ Քալանթարյանների բնակարանում: Ներկայացուցիչները մտնում են ներս եւ Արամին հայտնում ժողովի որոշումը: Ժողովուրդն Արամին ձեռքերի վրա է առնում եւ տանում Ազգային խորհրդի շենքի մոտ, որտեղ նա ելույթ է ունենում:

«ՀՐԱՊԱՐԱԿԱՎ ՀԱՅՏՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ԵՍ ԵՄ ԽՓԵԼ ՏՎԵԼ ՋՈԼԱԽ ԳԵՎՈՐԳԻՆ, ՈՐ ՄԱՀ ՈՒ ԹԱԼԱՆ ԷՐ ՍՓՈՌՈՒՄ ԻՐ ՇՈՒՐՋԸ»

«Շատ շնորհակալ եմ ձեր ցույց տված պատվի համար: Ես եկել եմ այստեղ ծառայելու իմ հայրենիքին եւ ազգին: Կծառայեմ, որքան իմ ուժերը կներեն: Այդ ծանր պարտականությունը, որ դնում եք ինձ վրա, հաճույքով ընդունում եմ, զգալով, որ այդ պաշտոնն էլ մի միջոց է հայրենիքիս ծառայելու: Բայց գիտցեք, որ ես դրանով ավելի անողոք կլինիմ նրանց հանդեպ, ովքեր կթերանան հայրենիքի հանդեպ կատարելու իրենց պարտականությունը:

Հրապարակավ հայտնում եմ, որ ես եմ խփել տվել Չոլախ Գեւորգին՝ այն Գեւորգին, որ մահ ու թալան էր սփռում իր շուրջը: Նման դեպքեր կանեմ նրանց հանդեպ, օրինավոր ճանապարհով, որոնք այս ծանր ճգնաժամին կխանգարեն մեր գործը եւ կվրդովեն հասարակության խաղաղությունը: Ես կանեմ եւ կպահանջեմ յուրաքանչյուրից, ինչ որ պահանջում է մեր արյունաթաթախ հայրենիքը» (Հովակիմ Մելիքյան, Արյան ճանապարհով, Հայրենիք, թիվ 4, 1925թ., Բոստոն):

ՎԱՀԱՆՈՎԴ ԿԱՄ ՎԱՀԱՆԻԴ ՎՐԱ

Նույն օրերին, երբ Արամ փաշային դիկտատոր էին հռչակում, «Աշխատանք» թերթը (հրատարակիչ խմբագիրներից մեկը Արամ Մանուկյանն էր) դիմում է ժողովրդին՝ կոչ անելով զինվորագրվել հայկական բանակին եւ զենքով պաշտպանել հայրենիքը:

«Աշխատանք», 3 մարտի, 1918 թ., Երեւան.

«Թող համոզվին ու ըմբռնեն ազգերու դեմոկրատիաները, ինքնորոշման սկզբունք հայտարարողներն ու ընկերվարական տեսականեն ճառողները՝ թե տակավին սուրն է միմիայն այս երկրի վրա իրավունք որոշողը:

Թող յուրաքանչյուր հայ դուրս գա զեն ի ձեռքին, դիմե ռազմաբեմը, իսկ վախկոտներն ու դասալիքները թող չի կնճռոտին հայրենիքը պաշտպանողներու անբիծ ճակատը:

Շարժվիր, հայ ժողովուրդ, դու որոշած ես չի չքանալ այս աշխարհեն, դիմիր դեպի քու փառքդ ու անկումդ որոշող մարտադաշտը, բայց այս անգամ՝ ՎԱՀԱՆՈՎԴ՝ ԿԱՄ ՎԱՀԱՆԻԴ ՎՐԱ»:

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ԱՐԱՄԸ

Երեւանում ծավալվող իրադարձություններից ընդամենը երեք տարի առաջ Արամ Մանուկյանը Վանում էր. նա հերոսամարտի խորհրդանիշն էր: 1915 թվականի մայիսի 7-ին նշանակվել էր Վանի ժամանակավոր նահանգապետ ու չորս ամիս, մինչ ռուսական զորքի անակնկալ հեռանալը, ղեկավարում էր Վանը:

Արամ Մանուկյանը ծնվել է 1879թ. Չեյվա գյուղում (այժմ՝ Սյունիքի մարզ, գյուղ Դավիթ Բեկ): Առաջին անգամ Վան էր մեկնել 1904թ. աշնանը, որտեղ մեծ սեր ու հեղինակություն էր վայելել՝ ստանալով Վանի Արամ անունը: Առաջին աշխարհամարտի սկսվելուն պես կազմակերպել ու ղեկավարել էր Վանի ինքնապաշտպանական մարտերը: Արամ Մանուկյանը Վանի նահանգապետության անկման եւ ռուսական զորքերի անակնկալ նահանջի ժամանակ կազմակերպել էր Վասպուրականի հայության գաղթն Արեւելյան Հայաստան, ինչի շնորհիվ փրկվել էր շուրջ 200 հազար մարդ:

Միքայել Յալանուզյան, Մարի Թարյան, Լուսինե Ղարիբյան, Աստղիկ Հակոբյան

Իրադրությունը ՀՀ-ում Մայիսյան հերոսամարտերից հետո. Արամ Մանուկյանը Վարիչների մարմնի նախագահ

Անի Մելքոնյան

1918 թ. մայիսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում հայությունը սեփական ուժերով դիմադրեց իրեն ռազմապես գերազանցող թուրքական բանակին և հաղթանակ տարավ: «Սարդարապատի, Բաշ-Աբարանի եւ Ղարաքիլիսայի յաղթանակներու դարբնողները,- գրել է «Ազատ խօսք» օրաթերթը,- կը մնան Վասպուրականի ԱՐԱՄԸ՝ իւր պողպատեայ կամքով, ԴՐՕՆ՝ իւր շեշտակի խոյանքով ու սպարապետ ՆԱՀԱՐԵԿԵԱՆ եւ զօր. ՍԻԼԻԿԵԱՆ՝ ռազմավարի հանճարով»:

Մայիսյան հերոսամարտերը, որոնց կազմակերպմանն Արամ Մանուկյանն ունեցավ առաջնակարգ մասնակցություն, բացառիկ նշանակություն ունեցան հայության համար: Դրանք ոչ միայն վերջինիս փրկեցին բնաջնջումից, այլև հնարավոր դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը՝ ծնունդ տալով Հայաստանի առաջին հանրապետությանը:

Մայիսի 28-ին ձևավորվեց և թուրքերի հետ առանձին բանակցություններ վարելու համար Բաթում ուղարկվեց Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը:

Անկախության մասին հայտարարությունը Ն. Աղբալյանի մշակմամբ հրապարակվեց մայիսի 30-ին:

1918 թ. հունիսի 4-ին Հայաստանի համար չափազանց ծանր պայմաններով կնքվեց Բաթումի հաշտության պայմանագիրը, ինչը դժգոհությունների տեղիք տվեց: Զորքն ու ժողովուրդը պահանջում էին չեղյալ հայտարարել այն, զորքի հրամանատարությունը հանձնել գեներալ Մ. Սիլիկյանին և շարունակել պատերազմը:

Փոթորկահույզ այդ օրերին ժողովրդական զանգվածները դարձյալ հայացքներն ուղղեցին դեպի Արամը: Իսկ նա, որ ամենից քաջատեղյակն էր իրական վիճակին, «որոշ ժամանակ լռություն պահպանելուց, ըստ երևույթին իրադրությունը համակողմանի վերլուծելուց հետո կողմ արտահայտվեց հաշտությանը»: Արամը խոսեց սահմանների, պարենավորման ու մարտունակության իրական պատկերի մասին և նշեց, «որ առկա իրավիճակում Թիֆլիսի Ազգային խորհուրդն այլ ելք չուներ և ստիպված էր հաշտություն կնքել թշնամու հետ»:

Օգտագործելով այս փաստը՝ ոմանք Արամին մեղադրել և այսօր էլ երբեմն մեղադրում են, որ դեմ չգնաց Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին և ընդունեց Բաթումի պայմանագիրը: Բայց մեկդարյա հեռավորությունից այսօր կարող ենք միանշանակ արձանագրել, որ թե՛ Արամը, թե՛ Բաթումում և Թիֆլիսում գտնվող հայ գործիչները, պարտադրված հաշտությունից զատ, այլ ելք չունեին: Հետագայում այլ առիթով Խալիլ փաշային Արամի արած մի խոստովանությունից պետք է պարզ դառնար, որ պատերազմը շարունակելու համար Երևանյան զորախմբի տրամադրության տակ չնչին քանակությամբ փամփուշտ էր մնացել, և թուրքական ևս մեկ հարձակման դեպքում հայկական կողմի համար իրադարձություններն անկանխատեսելի ընթացք կարող էին ունենալ: Ժողովուրդն այդ մասին չգիտեր: Առանց այն էլ ծանր վիճակում գտնվող ժողովրդի շրջանում խուճապ չառաջացնելու համար Արամը գերադասեց լռել և սպասել լավ օրերի:

Ըստ էության, Արամը շրջահայաց գտնվեց՝ արտահայտվելով Բաթումի պայմանագրի օգտին: Նա քաջ գիտակցում էր, որ շատ առումներով անցանկալի և չափազանց ծանր այդ պայմանագիրը տվյալ

ժամանակաշրջանում այն առավելագույնն էր, որին կարելի էր հասնել, հատկապես որ ամենակարևոր խնդիրը՝ հայ ժողովրդի նվազագույն անվտանգությունը և հայոց պետականության ստեղծումը, այլևս կատարված փաստ էր:

Արամի այդ դիրքորոշումն ավելի ընկալելի է դառնում, եթե հաշվի ենք առնում նաև այն հանգամանքը, որ այդ օրերին Հայաստանը գտնվում էր գերծանր կացության մեջ՝ զուրկ արտաքին դաշնակիցներից, լցված գաղթականներով ու սովահար որբերով, դարձած թուրքական հարձակումների մշտական թիրախ:

Ի հավելումն վերը շարադրվածի՝ նաև արձանագրենք, որ փաստացի 1918 թ. հունվարից մինչև հունիսը Կովկասյան ռազմաճակատում թուրքերին դիմադրում էր միայն մեկ ռազմական ուժ՝ հայկականը: Հարևան թաթարները Թուրքիայի դաշնակիցն էին, իսկ վրացիները ստացել էին Գերմանիայի հովանավորությունը: Միայն հայ ժողովուրդն էր, որ առանց արտաքին դաշնակցի ու դրսից ստացված որևէ օգնության կանգնել էր թշնամու գերակշիռ ուժերի դեմ:

Բաթումի պայմանագիրը ստորագրելու պատասխանատվությունը ստանձնած հայ գործիչներին մեղադրելուց առաջ չպետք է մոռանալ այն փաստը, որ եթե **«Չլիներ մեր ժողովրդի միակամ պոռթկումն ընդդեմ թշնամու, չլինեին մայիսյան ճակատամարտերը, չէր լինի նույնիսկ այդ ծանր պայմանագիրը և նրանով ճանաչվող անկախ Հայաստանը:**

Մինչ մայիսյան հերոսամարտերը թուրքերը դեմ էին ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարի»:

Բաթումի պայմանագրից դժգոհ էր մնացել նաև զորավար Անդրանիկը: Վերջինս որոշել էր հեռանալ նորանկախ Հայաստանի տարածքից և հունիսի 25-ին իր հայկական առանձին հարվածային զորամասով արդեն հասել էր Խոյ, թեև թշնամու գերակշիռ ուժերի ճնշման ներքո ստիպված էր նահանջել և մինչև 1919 թ. գարուն հանգրվանել Զանգեզուրում: Հատկապես խորհրդային շրջանում այս փաստն օգտագործվել է Արամին և ՀՀ մյուս ղեկավարներին վարկաբեկելու համար:

Երևանի քաղաքային ակումբի շենքը, որի դահլիճում 1918 թ. օգոստոսի 1-ին բացվեց Հայաստանի Հանրապետության խորհրդի 1-ին նիստը

ՀՀ տարածքից Անդրանիկի հեռանալը փորձել են կապել նրա դեմ հայ-թուրքական ենթադրյալ համագործակցության հետ: Այդ նպատակով 1965 թ. շրջանառության մեջ է դրվել Թուրքիայի ռազմական նախարար Էնվերին ուղղված և 1918 թ. հունիսի 17-ով թվագրված մի կեղծ հեռագիր, որում ՀՀ ղեկավար գործիչները իբր գրել են, որ Անդրանիկը «մտադիր է ուժեղ բանակ կազմել, ստեղծել սեպարատ պետություն և հարձակվել ձեր վրա: Խնդրում ենք միջոցներ ձեռք առնել նրան վերջնականապես ջախջախելու համար»: Այդ հեռագիրը ստորագրել էին՝ «կառավարության նախագահ՝ Հ. Քաջազնունի», «զինվորական մինիստր՝ Արամ փաշա Մանուկյան» և «կառավարության խորհրդի նախագահ՝ Սահակյան»:

Այն, որ այս «հեռագիրը» ամբողջությամբ կեղծ է, երևում է թե՛ ամսաթվից, թե՛ ստորագրություններից: Ինչպես իրավացիորեն նկատել է Ա. Ասրյանը, 1918 թ. հունիսի 17-ին Արամը, Հ. Քաջազնունին և Ա. Սահակյանը միաժամանակ չեն գտնվել ոչ Երևանում, որտեղից իբր թե ուղարկվել է հեռագիրը, և ոչ էլ մեկ այլ վայրում: Քաջազնունու կառավարությունը, ինչպես կտեսնենք, Երևան է ժամանել միայն հուլիսի 19-ին: Ակնհայտ կեղծիքի մասին է խոսում նաև այն փաստը, որ Արամի անվան դիմաց գրված է «զինվորական մինիստր»: Մինչդեռ, ինչպես գիտենք, Արամը եղել է ներքին գործերի նախարար, իսկ Ա. Սահակյանն էլ ոչ թե կառավարության խորհրդի, այլ Հայաստանի առաջիկա օրերին բացվելիք խորհրդի նախագահն էր:

Վերը շարադրվածին մնում է հավելել, որ ինքը՝ Անդրանիկը, Հայաստանից իր հեռանալու պատճառների թվում երբեք չի նշել իր դեմ կազմակերպված հայ-թուրքական գործակցությունը: Մասնավորապես այդ մասին որևէ ակնարկ անգամ չկա 1921 թ. հրատարակված «Զօր. Անդրանիկ կը խօսի» գրքույկում, որում նա տարատեսակ մեղադրանքներ է ներկայացրել հանրապետության կառավարությանը և ՀՅԴ-ին: Նման պատճառ չի մատնանշվում նաև Անդրանիկի մերձավորների, կենսագիրների և հուշագիրների կողմից: Ի դեպ, այդպիսի վավերագիր չի պահպանվել նաև ՀՀ արխիվներում (ներառյալ Անդրանիկի ֆոնդը):

Եվս մեկ նկատառում: Ժամանակակիցների վկայությամբ՝ Արամը տանել չէր կարողանում, երբ իրեն «փաշա» էին կոչում: Ուստի քիչ հավանական է, որ նա որևէ փաստաթղթի տակ դներ «Արամ փաշա» ստորագրությունը: Բացի այդ՝ ՀՀ կառավարության գլխավոր հոգսը հայկական տարածքները թուրքական

ներխուժումից զերծ պահելն էր: Հետևաբար, ըստ տրամաբանության, նրա համար թեկուզև իր գոյությունը չճանաչող Անդրանիկի ներկայությունը հայկական որևէ տարածքում, լինի դա Զանգեզուրում, Արցախում կամ Նախիջևանում, ավելի օգտակար կլիներ: Չմոռանանք, որ Անդրանիկը Արամից կամ Քաջազնունուց պակաս հեղինակություն չէր վայելում: Ուստի բնական հարց է ծագում. Հայաստանի կառավարությունը ակնհայտ առճակատման կգնա՞ր արդյոք ժողովրդական հերոսի հետ՝ առանց այդ էլ մահվան ճիրաններում գալարվող երկիրը տանելով եղբայրասպան պատերազմի:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք վերը բերված «հեռագրում» առկա աչքի զարնող սխալներից, այդ փաստաթուղթը կեղծ էր և ընդհանուր ոչինչ չուներ իրականության հետ: Այն ստեղծվել և շրջանառության մեջ է դրվել ակնհայտ նպատակով՝ վարկաբեկել Առաջին հանրապետության ղեկավարներին և ՀՅԴ-ին:

Արամի կառավարությունը երկրում ներքին կայունություն, հանրային համերաշխություն ապահովելու և ցնցումներից զերծ մնալու համար հունիսի վերջերին որոշակի վերահսկողություն սահմանեց հրապարակային ելույթների վրա, ինչը դժգոհություն առաջ բերեց: Որոշ շրջանակներ Արամին մեղադրում էին խոսքի ազատությունը սահմանափակելու մեջ: Մասնավորապես սոցիալ-դեմոկրատ մենշևիկ (հետագայում բոլշևիկ) հայկ Ազատյանը Երևանի և Թիֆլիսի Ազգային խորհուրդներին բողոքում էր, որ ինքը ցանկացել է դասախոսություն կարդալ, բայց տպարանները մերժել են առանց միլիցիայի պետի թույլտվության տպագրել դրա վերաբերյալ ազդագրերը: Հայկ Ազատյանի կարծիքով՝ «դա խօսքի ազատութեան բռնադատումն է, որը պէտք է այսօր և եթ վերացւի»: Հարցի վերաբերյալ իր կարծիքն է հայտնել նաև Արամը՝ շեշտելով, որ «.իւրաքանչիւր դասախօս պարտաւոր է յայտնել միլիցիապետին թէ որտեղ, որ ժամին և ինչի մասին պիտի խօսի»: Կարծում ենք՝ 1918 թ. բախտորոշ օրերին նման հարցադրումը միանգամայն տրամաբանական և օրինական էր:

Հայկական պատվիրակության՝ Բաթումից Թիֆլիս վերադառնալուն պես ձևավորվեց ՀՀ առաջին կառավարությունը՝ Հ. Քաջազնունու վարչապետությամբ: Բայց, ինչպես վկայում է Ա. Աստվածատրյանը, **«Մինչեւ Քաջազնունու Թիֆլիսում կազմած կառավարութեան Երեւան գալը, Երեւանում գործում էր Արամի նախագահութեամբ ու գլխավորութեամբ կազմուած կառավարութիւնը՝ Վարիչների մարմինը, որ ուժեղացրած կազմով փոխարինել էր Յատուկ Կոմիտէին»**:

Ստանձնելով Վարիչների մարմնի նախագահի պաշտոնը՝ Արամը, նկատի ունենալով իր մեծ ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև հատկապես սպայական վերնախավի շրջանում դժգոհություններ չառաջացնելու նպատակով հրաժարվում է զինվորական վարիչի պաշտոնից: Նրա այդ առաջարկը սկզբնապես չի ընդունվում, քանի որ ընտրություն կատարողները քաջ գիտակցում էին, «որ այն պայմաններում ոչ ոք կարող էր փոխարինել նրան և կատարել նրա գործը»:

Այնուհանդերձ, կարճ ժամանակ անց Արամը «Հ.Յ.Դ. Երեւանի Կ. Կոմիտէում նորից բարձրացրեց զինուորական վարիչի պաշտօնը զինուորականի յանձնելու հարցը...»: Այդ պաշտոնում Արամի կողմից դիտարկվում էր գեներալ Մ. Սիլիկյանի թեկնածությունը: Վերջինս, իր հերթին շնորհակալաբար հրաժարվելով առաջարկված պաշտոնից և տեղեկանալով Արամի հրաժարվելու պատճառների մասին, ասաց. **«Դժգոհողները չեն ճանաչում Արամին: Երբ ճանաչեն, կը համոզուեն, որ ներկայումս նա միակ կարող մարդն է այդ պաշտօնի համար: Ես ինչո՞ւ եմ հրաժարւում. որովհետեւ մէկ է՝ ես ինքս առանց Արամի ոչինչ չեմ անելու: Ես այժմ էլ առանց Արամի հետ խորհրդակցելու՝ ոչ մի կարեւոր քայլ չեմ առնում, իսկ վարիչի պաշտօնը յանձն առնելու պարագային, գրասենեակս տեղափոխելու եմ նրա մօտ: Ո՛չ մի զինուորական վերարկու ոչ ոքի չի տայ այն, ինչ որ ունի Արամը: Նրանից յարմար վարիչ մեզ համար չէք գտնի: Ես ինքս անձամբ կը խնդրեմ, որ նա չթողնի այդ պաշտօնը»:**

Հանձն առնելով զինվորական վարիչի պաշտոնը՝ Արամը, Ռուբենի վկայությամբ, «վարում էր զինուորական գործերը իր յատուկ ձեւով, առանց կապուելու ընդհանրապէս ընդունուած զինուորական օրէնքներով եւ կանոններով»: Առհասարակ գործի հաջողության համար Արամը կառչած չէր մնում ընդունված ձևականություններից և երբեմն կարող էր շրջանցել դրանք: Նրա «կիրառած ժողովրդական-զինուորական ձեւերի շնորհիւ, առանց նիւթական եւ դրամական միջոցների, մի պատկառելի զինուորական ոյժ էր կազմակերպուած թուրքերի դիմաց, որից կ՛ակնածէին նոքա»:

Այսպիսով, մինչ կառավարության՝ Երևան ժամանելը փաստացի իշխանությունը գտնվում էր Վարիչների մարմնի ձեռքում: Անցումային այդ ժամանակահատվածը և այդ օրերին Արամի դերակատարությունն ահա թե ինչպես է բնութագրում Ռիչարդ Հովհաննիսյանը. «Մինչ այդ Հայաստանն անկախ էր՝ համենայն դեպս անվանապես, մեկ ամբողջ ամիս, սակայն վարչության միակ նմանությունը Երևանի շրջակայքում մնում էր ժողովրդական դիկտատուրան: Այն գլխավորում էին Արամ Մանուկյանը՝ Վանի 1915 թ. ինքնապաշտպանության և Երևանի նահանգի 1918 թ. մայիսի դիմադրության առաջնորդը, և Դրոն (Դրաստամատ Կանայան)՝ փառաբանված պարտիզանական հրամանատարը: Երկու ղեկավարները, որոնք շատ ժամանակակիցների գնահատմամբ դիտվում էին որպես հանրապետության իսկական հիմնադիրներ, չազատվեցին իրենց պարտականություններից անգամ Ազգային խորհրդի կողմից Քաջազնունու կառավարության հաստատումից հետո, որովհետև պաշտոնական կառավարությունը դեռևս մնում էր Թիֆլիսում»:

Թե՛ Վարիչների մարմնի և թե՛ անձամբ Արամի գերխնդիրը երկիրը թշնամու ոտնձգություններից պաշտպանելն էր: Ճիշտ է, «Երևանում ձգտում էին հաշտության, բայց կապիտուլյացվելու մտադրություն չունեին»:Մինչդեռ թուրքական ներխուժման վտանգը, գոնե մինչև 1918 թ. նոյեմբերը, դամոկլյան սրի պես կախված էր նորանկախ Հայաստանի գլխին: Այդ պատճառով,

ռազմական պատրաստություններին զուգընթաց, Արամը նաև բանակցում էր թուրքերի հետ՝ փորձելով հասնել այն բանին, որ թուրքերը կատարեն Բաթումի պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Երբ հունիսի 17-ին Վեհիբ փաշան առաջարկեց մինչև հայ-վրացական սահմանի որոշումը թուրքական զորքեր թողնել Ալեքսանդրապոլ-Սադախլու երկաթգծի ուղղությամբ, Արամը դեմ արտահայտվեց դրան: Նա գտնում էր, որ հարկավոր է թուրքական ուժերը հեռացնել Ղարաքիլիսայի գծից և Վրաստանի հետ սահմանը պահպանել սեփական ուժերով:

Երկիրը ծանր կացության մեջ էր. հարյուր հազարավոր փախստականներ, փլուզված տնտեսություն, սննդամթերքի և նյութական այլ միջոցների բացակայություն: Նման պայմաններում Վարիչների մարմնի առջև ծառացած մյուս դժվարին խնդիրը պարենային ճգնաժամի մեղմումն էր: Այդ նպատակով Ազգային խորհուրդը 1918 թ. հուլիսի 9-ին սահմանեց հացի պետական մենաշնորհ և հսկողության տակ վերցրեց հացահատիկի բերքը:

Նյութական խնդիրներից բացի՝ Վարիչների մարմնի կարևոր խնդիրներից էր նաև երկրում կարգ ու կանոնի հաստատումը: Ա. Աստվածատրյանի վկայությամբ՝ **««Երեւանի կառավարութեան» ի վերջո յաջողուեց մաքրել ռազմական նշանակութիւն ունեցող գլխաւոր ճանապարհները, խռովութիւնների բոյն ծառայող թրքաբնակ վայրերը... եւ որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակայ շրջաններում»**: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, գործադրված գերմարդկային ջանքերով և կատարված տիտանական աշխատանքի գնով. **«Արամի գլխավորությամբ գործող Վարիչների մարմինը, մինչև Հ. Քաջազնունու կառավարության գործի անցնելը, կարողացավ ապահովել երկրի տարբեր ոլորտների կենսագործունեությունը և համեմատական կայունությունը՝ որոշ չափով դյուրացնելով վերջինիս գործը»**:

Անդրադառնալով 1918 թ. ամռանը Արամի ծավալած գործունեությանը՝ Վահան Նավասարդյանը հիշում է, որ այդ օրերին արտաքին աշխարհից մեկուսացված, իր անվերջանալի խնդիրներով «Արարատեան փոքրիկ Հայաստանը, Արամի հզօր ու արթուն հսկողութեան տակ, ապրում էր իր անստոյգ ճակատագրի մռայլ օրերը:

Մի բացառիկ երկիր էր այդ, օղակաձեւ շղթայով շրջապատուած իր չորս կողմերից, զուրկ արտաքին աշխարհի հետ կապուելու, նրան լուր տալու եւ այնտեղից լուր առնելու գրեթէ բոլոր հնարավորութիւններից»: Այդ մռայլ երկրում ժողովրդի հայացքն ուղղված էր դեպի այն տունը, «ուր օր ու գիշեր տքնում էր Արամը, փրկութեան ելք փնտռելով հայկական ահաւոր դժոխքից»:

Այսպիսով, 1917 թ. դեկտեմբերի վերջերից Արամ Մանուկյանը, ապա 1918 թ. հունվարից նրան միացած Դրոն ու Մ. Սիլիկյանը մի քանի ամսվա ընթացքում կարողացան նախապատրաստել և նվաճել հայ ժողովրդի նորագույն պատմության առաջին հաղթանակները: «Նրանք միասնաբար ստեղծեցին անկախ պետականության շենքը, լռեցրին երկրի ներքին թշնամուն, բարոյալքված զանգվածներից կերտեցին մարտունակ, ազգային ազատագրության գաղափարներով տոգորված ժողովուրդ և մայիսի վերջին պատմության անդունդից դուրս բերեցին ու Արարատի շուքի տակ շունչ հաղորդեցին հայոց պետականությանը»:

Ամփոփելով կարող ենք ասել, որ 1917 թ. դեկտեմբերից, երբ Ազգային խորհրդի կողմից Արամն ուղարկվեց Երևանի նահանգ, մինչև 1918 թ. հուլիսը, ինչպես վկայում է Սարգիս Արարատյանը, «Երևանի շրջանում... ամբողջ իշխանությունը հաստատուն կերպով գտնվում էր Արամի ձեռքում, որ լիակատար համերաշխությամբ գործում էր գեներալ Սիլիկյանի և զորքին ու ժողովրդին ոգևորող Դրոյի հետ: Երևանի շրջանի ռազմական հզորության, տնտեսական և մնացյալ կարգի կազմակերպման Արամի փայլուն ընդունակությունը հայերին հնարավորություն տվեց զենքը ձեռքներին պահպանել փոքրիկ հողակտորը՝ միակ քաղաք Երևանը և Սուրբ Էջմիածնի եկեղեցին: Եվ եթե հայերիս հետ հաշվի էին նստում այն ժամանակ, և հաշվի են նստում այժմ, ապա դա կարող է վերագրվել բացառապես երեք անձանց՝ Արամին, գեներալ Սիլիկովին և Դրոյին»:

Հ. Քաջազնունու կառավարությունը 1918 թ. հուլիսի 17-ին Թիֆլիսից գնացքով ուղևորվեց և հուլիսի 19-ի ուշ երեկոյան հասավ Երևան: Բայց անգամ կառավարության ժամանումից հետո Արամի դերը երկրում չնվազեց: Քաջազնունու կառավարությունում ստանձնելով ներքին գործերի նախարարի պաշտոնը՝ Արամ Մանուկյանը մնաց պետության առանցքային դեմքը՝ շարունակելով իր պետականաստեղծ գործունեությունը:

Օգտագործված աղբյուրների եւգրականության ցանկ

1.Արամը. մահուան յիսնամեակին առթիւ, Եր., 1991, 549 էջ:
2.Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2008, 267 էջ:
3.Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (Հոդվածների ժողովածու), Եր., 2010, 119 էջ:
4.Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, հ. I, Եր., 2005, 570 էջ:
5.Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Թեհրան, 1982, 363 էջ:

Մամուլ

1.«Ազատ խօսք» օրաթերթ, Սոֆիա, մայիս 1936, N 24, յունիս 1936 (բացառիկ հրատարակութիւն):
2. Վեմ համահայկական հանդես թիվ 4., Եր., 2018

Համացանցային նյութեր

1. https://old.arfd.am/?p=21143
«Դրօշակ», թիվ 6 (1640), հունիս, 2020 թ.

Արամ Մանուկյանի պետական գործունեությունը

(հատված Էդիկ Մինասյանի համանուն հոդվածից)

20-րդ դարը տվել է հայոց ազատամարտի այնպիսի նվիրյալներ, որոնք հայ ժողովրդի գոյամարտի օրհասական պահերին ցուցաբերել են ազգային-քաղաքական ու պետական գործիչներին բնորոշ աներևակայելի կազմակերպչական տաղանդ, նախաձեռնողականություն, երկաթյա կամք ու վճռականություն, բացառիկ հետևողականություն և շրջահայացություն: Նման ազգային ու պետական մտածողության տեր գործիչներից էր Արամ Մանուկյանը: Նրա պետական գործունեության ուսումնասիրությունը արդիական է նաև մեր օրերի համար, երբ կայանում է Հայաստանի երրորդ Հանրապետությունը: Արամ Մանուկյանի գործունեության փորձի ուսումնասիրությունը պետք է ոչ միայն հայոց անկախ պետականության ամրապնդման համար ձեռնարկվող միջոցառումները ճիշտ պատկերացնելու, այլև այսօր հայ-թուրքական բանակցությունների, քննարկումների ընթացքն ու հեռանկարները հասկանալու առումով:

Էդիկ Մինասյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արամ Մանուկյանի պետական գործունեությունը կարելի է բաժանել երեք փուլի: Առաջին փուլն ընդգրկում է 1915-1916 թվականները, երկրորդը 1917-1918 թվականներ, իսկ երրորդը 1918-1919 թվականները:

1917 թ. ռուսական փետրվարյան հեղափոխության, առավելապես հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով ռուսական կովկասյան ռազմաճակատի քայքայումը, թուրքական ներխուժման սպառնալիքի տակ դրեց Արևելյան Հայաստանը, ուր ապաստան էր գտել ցեղասպանությունից փրկված արևմտահայության նշանակալի մասը: Հայության առջև հրամայաբար ծառացել էին հայոց արևելյան հատվածի զգալի մասը զբաղեցնող Երևանի նահանգում ուժեղ իշխանություն ստեղծելու, հայկական կորպուսը ձևավորելու նպատակով նահանգում կազմակերպված զորահավաք իրականացնելու և այլ հրատապ խնդիրներ: Հայ ժողովրդի համար ճակատագրական այդ պահին Թիֆլիսի հայոց կենտրոնական ազգային խորհրդի լիազոր ներկայացուցչի կարգավիճակով Երևան ժամանեց Արամը: Այդ ժամանակվանից սկսվեց նրա պետական գործունեության երկրորդ շրջանը, որն ընդգրկում է 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. հուլիս ժամանակահատվածը: 1917 թ. վերջերից հայ իրականության մեկ այլ ազդեցիկ կառույց հանդիսացող հայ զինվորական խորհուրդը Արամին էր վստահել դասալքության դեմ պայքարի ղեկավարությունը:

Հենց Երևանում էլ ստանձնելով դիկտատորի, Վարիչների մարմնի ղեկավարի պաշտոնները՝ Արամը ցուցաբերեց կազմակերպչական բացառիկ տաղանդ և ազգային-պետական մտածողություն: Գիտակցելով հայ ժողովրդի համար տարածաշրջանում զարգացող ռազմաքաղաքական իրադարձությունների վտանգավոր հետևանքները՝ Երևան հասնելուն պես Արամը նախատեսեց հայ ժողովրդի պաշտպանության իրատեսական ուղենիշ, ըստ որի հայ ժողովուրդը սեփական ուժերով պետք է լուծեր իր առջև ծառացած խնդիրները: Ցուցաբերելով կազմակերպչի մեծ ընդունակություններ, վճռականություն, հետևողականություն և շրջահայացություն՝ նա կարողացավ ժողովրդի մեջ արթնացնել հավատը սեփական ուժերի նկատմամբ, որի արդյունքում կազմակերպվեց Սարդարապատի հաղթանակը: Արամը ոչ միայն ոգևորեց և համարձակ ելույթներով ներշնչեց օրհասական պահին սեփական հողը պաշտպանելու ժողովրդի պատրաստակամությունը, այլև ապահովեց այն մեծ հաղթանակը, որն արևելահայությանը փրկեց նոր ցեղասպանությունից: Հենց այդ տարիներին Արամի վճռականության շնորհիվ հնարավոր եղավ թուրք-քրդական ավազակախմբերի դեմ պայքարի ընթացքում՝ 1918 թ. առաջին եռամսյակում հնազանդեցնել

50-ից ավելի թաթարաբնակ գյուղեր, որոնք թուրքական հարձակման պայմաններում թիկունքից հարձակվող ուժեր էին, որ օգնում էին թուրքերին: Արամի գործունեությունը չէր սահմանափակվում միայն թուրքական գյուղերի հնազանդեցմամբ, այլ նա վարում էր երկիրն այդ թշնամական տարրերից մաքրագործելու քաղաքականությունը: Միաժամանակ սանձահարում էր հայ անիշխանական տարրերին, որոնք հայտնի էին մաուզերիստներ անունով: Այսպես, օրինակ. ՀՅԴ հայտնի խմբապետ Դալի Ղազարի խմբի տղաների մի մասը (մաուզերիստներ էին և վնասական գործունեություն էին ծավալել երկրում): Իր մոտ կանչելով Դալի Ղազարին Արամը կարգադրեց հավաքել խումբը և մեկնել ճակատ[1]: Այն բանից հետո, երբ իր չարագործություններով բնակչության մեջ հայտնի մաուզերիստների պարագլուխ Չոլախ Գևորգը՝ Դալի Ղազարի նախկին մարտիկներից մեկը, բազմաթիվ նախազգուշացումներից հետո ոչ միայն չուղղվեց, այլ, ընդհակառակը, ըմբոստացավ իշխանությունների դեմ, Արամը կարգադրեց գնդակահարել նրան՝ անհանդուրժելի համարելով նրա գործունեությունը: Դա վճռական նշանակություն ունեցավ նահանգում կարգ ու կանոնի ապահովման համար:

Ինչպես Վան-Վասպուրականում, այնպես էլ Երևանում գործելով բացառիկ պայմաններում, Արամը շատ արագ դարձավ կենտրոնական դեմք: Իր ուժեղ ու նախաձեռնող բնավորության, նրբամիտ կեցվածքի, գործող անձանց ու կազմակերպությունների նկատմամբ իր հավասարակշիռ մոտեցումների և ապակուսակցական ոգու շնորհիվ նա հասավ հասարակության հետ միասնության ապահովմանը: Այդ է պատճառը, որ հռչակվեց Երևանի դիկտատոր՝ օժտվելով միանձնյա իշխանությամբ, այլև դարձավ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրներից մեկը: Մշտապես հասկանալով իրականացվող քայլերի հրատապությունը, շեշտելով ժողովրդի ու ռազմաքաղաքական ուժերի նկատմամբ իր մոտեցումները, առանձնահատուկ հարգանքը՝ նա կարողացավ ներգործել ժողովրդի վրա՝ տանելով նրան հաղթանակների, ապահովելով հայ ժողովրդի գոյությունը և անկախ պետականության վերականգնումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1-ին շենքը

1918 թ. մայիսին Հայաստանի Հանրապետության ստեղծմանը մեծապես պարտական ենք Արամին և ամենևին պատահական չէ, որ միայն նա է արժանացել Հայաստանի Հանրապետության հիմնադրի կոչմանը: Նա դրան հասավ ողջ ժողովրդի և բազմաթիվ գործիչների գերմարդկային ջանքերի շնորհիվ, որոնց կարողացավ միավորել և նրանց գործունեությունը ծառայեցնել մեկ նվիրական նպատակի:

Նորանկախ հանրապետության իշխանության մարմինների ստեղծումով սկսվեց Արամի պետական գործունեության երրորդ փուլը (1918 թ. հուլիսից 1919 թ. հունվար): Չնայած Արամը չզբաղեցրեց վարչապետի պաշտոնը, բայց իրականում ՀՀ անդրանիկ կառավարության մեջ նա ուներ բացառիկ դիրք՝ նրան էր վստահված միաժամանակ ներքին գործերի, լուսավորության, հաղորդակցության, պարենավորման, խնամատարության նախարարի պաշտոնը (նաև տարածքային կառավարման նախարարի լիազորությունները): Առաջնորդվելով ազգային-պետական մտածողությամբ, բանիմացությամբ, անձնական անշահախնդրությամբ, ցուցաբերելով բացառիկ կազմակերպչական տաղանդ, նախաձեռնողականություն ու հետևողականություն՝ իր արդյունավետ գործունեությամբ նա կարողացավ ապահովել երկրի հայացման, նրանում իրավակարգի հաստատման, վարչական մարմինների, հատկապես, ՆԳ նախարարության ամրապնդմանը և այդ կերպ մեծապես նպաստեց նորաստեղծ պետականության ամրապնդման գործին:

Տարբեր գործիչներին աշխատանքի մեջ ներգրավելու գործում Արամի մոտեցումների յուրահատուկ ձևը, անկախ նրանց կուսակցական պատկանելությունից, պետական ու սոցիալական դիրքից, ինչպես նաև իր համեստ կենցաղը, անշահախնդրությունը, արդարամտությունը, անկաշառությունը, հայրենասիրությունը որպես պետական գործիչ նրան բնութագրող հատկանիշներն են: Արամ Մանուկյանի պետական գործունեության այդ գծերը մեծապես օգնեցին իշխանությունների հանդեպ ժողովրդական վստահության ամրապնդմանը:

Ծանոթագրություն

1. Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 173:

Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայրերը. Արամ Մանուկյան և Ռոստոմ



Գևորգ Խուդինյան
Պատմական գիտությունների դոկտոր

1918 թվականին սկզբնավորված նոր ժամանակների Հայոց պետականության պատմությունը մեկ ամբողջություն է՝ ինչպես նրա քաղաքական կենսագրության անընդհատության, այնպես էլ միջազգայնորեն ճանաչված իրավունքների անժամանցելիության առումով: Առաջինի ապացույցը 1918 թվականից մինչ օրս Հայաստանում պետական ինստիտուտների գոյության փաստն է: Դրանք մեզանում առկա էին անգամ խորհրդային վարչակարգին բնորոշ սահմանափակումների պայմաններում: Իսկ ահա երկրորդի վկայությունը միջազգային պայմանագրերով Հայաստանի առաջին անկախ հանրապետությանը պատկանող տարածքների հանդեպ Հայաստանի երրորդ հանրապետության 1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագրում առկա՝ իրավունքների անժամանցելիության սկզբունքի ամրագրումը:

Ու քանի որ Հայաստանի Հանրապետության հիմնադրումը 1918 թվականից սկիզբ առած նոր ժամանակների Հայոց պետականության քաղաքական կենսագրության սկիզբն է, ապա նրա հիմնադիրները ոչ միայն Հայաստանի առաջին հանրապետության, այլ նաև ներկա Հայոց պետականության հիմնադիր հայրերն են:

Անկախ ու ժողովրդավարական պետություն կառուցող ազգերից և ոչ մեկը սեփական պետության հիմնադիր հայրերին տրվող գնահատականը չի պայմանավորում քաղաքական վարչակարգերի ու նրանց բնորոշ գաղափարախոսությունների հանդեպ դրական կամ բացասական վերաբերմունքով: Այսպես՝ անկախ նրանից՝ հանրապետականնե՞րը, թե՞ դեմոկրատներն են իշխում Միացյալ Նահանգներում, նրանց առաջնորդներն իբրև այդ երկրի նախագահներ, հավասարապես խոնարհվում են ԱՄՆ հիմնադիր հայրերի Ջորջ Վաշինգտոնի, Թոմաս Ջեֆերսոնի և այլոց գերեզմանների առջև: Պետականության գաղափարը քաղաքական ռեժիմի հետ նույնացնելու միտումը բնորոշ է միայն գաղափարախոսականացված պատկերացումներ ունեցող ամբողջատիրական (տոտալիտար) վարչակարգերին: Ուստի, եթե Հայաստանի երրորդ հանրապետությունն իրեն համարում է անկախ և ժողովրդավարական պետություն, ապա չի կարող առաջնորդվել մինչ օրս մեզանում համառորեն տարածվող այն թյուր պատկերացմամբ, որ 1918 թ. Հայոց պետականությունը հիմնած քաղաքական գործիչները սոսկ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրներն էին: Այս պատկերացումը հարցականի տակ է դնում Հայաստանի երրորդ հանրապետության անկախ ու ժողովրդավարական պետություն լինելու իրողությունը և, դրանով պայմանավորված, ազգային-պետական շահերի ամբողջականության շրջանակներում լայն բազմակարծության ապահովման սկզբունքը:

Այդ պատճառով 1918 թվականին նոր ժամանակների Հայոց պետականությունը հիմնած Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայրերի քաղաքական ժառանգության մնայուն ու անընդհատ հարստացվող շերտի բացահայտումը ազգի պետական կեցության անընդհատության ու հարատևության ապահովման կարևոր նախապայմանն է:

Առկա սկզբնաղբյուրների ու հարուստ գրականության խորքային քննությունը մեզ բերում է այն եզրակացությանը, որ ներկա պետական-քաղաքական իրողությունների պայմաններում պարտավոր ենք ձերբազատվել ժամանակի հուշագիրների ու հետագա պատմաբանների կողմից Հայոց պետականության ձևավորման գործընթացը. ա) առարկայական (օբյեկտիվ) նախադրյալների հասունացման սահուն ընթացք, կամ էլ ընդհակառակը՝ բ) պատմական դեպքերի պատահական զուգադիպություն դիտարկող՝ միակողմանի ու խիստ պարզունակ հայեցակարգերից: Այս մակերեսային, ինչպես նաև

բևեռացված գնահատականների շրջանակներում, որոնք մինչ օրս իշխել են հայ պատմագրության մեջ, հնարավոր չէ բացահայտել 1918 թվականին Հայաստանի Հանրապետության ձևավորման պատճառները: Ռուսաստանյան կայսրության ողջ պատմության մեջ տեղի ունեցած մեծագույն աղետից՝ 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից և Կովկասյան ճակատի փլուզումից հետո, 1918 թ. սկզբներին լիովին խաթարվել էր Հայոց պետականության ձևավորման առարկայական նախադրյալների հասունացման գործընթացը: Ստեղծվել էր մի կացություն, երբ անխուսափելի էր թվում ոչ թե Հայոց պետականության ձևավորումը, այլ Եղեռնից հետո Արևելյան Հայաստանում հաստատված արևմտահայության մնացորդացի, ինչպես նաև արևելահայության ոչնչացումը:

Ուրեմն օրինաչափության կամ պատահականության մասին նախորդ հեղինակների հարցադրումներն իրականում հիմնվում են կամ նախքան 1917 թ. հոկտեմբերն առկա կացության, կամ էլ՝ ընդհակառակը, Օսմանյան Թուրքիայի կողմից 1918 թ. իբր թե մեզ մատուցված 11 հազար քառակուսի կիլոմետրանոց «նվերի» մասին անհիմն վարկածի վրա:

Մինչդեռ իրականությունն այն է, որ իր ծննդյան իսկ պահից «Հայաստանի Հանրապետություն» անունը ստացած հրաշամանուկի ձևավորումը և ապա պաշտպանությունը սեփական դառը ճակատագրի հանդեպ հայ ժողովրդի հաղթանակի վկայությունն էր: 1918 թվականի սկզբներին Արևելյան Հայաստանի շուրջը ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը բացառում էր ինչպես շուտափույթ արտաքին օգնության, այնպես էլ արտաքին թշնամու «գթասրտության» հնարավորությունները: Հայ ժողովրդին մնացել էր միայն մեկ տարբերակ՝ հաղթանակ տանել իր դառը ճակատագրի հանդեպ կամ ոչնչանալ: Եվ հաղթանակի փաստն ինքնին «ճակատագիր» հասկացությունը տարանջատում է ճակատագրապաշտությունից (ֆատալիզմից) ու հարկադրում է փնտրել և գտնել այն իրական պատճառները, որոնք հնարավոր դարձրին ոչ միայն հայության մնացորդացի փրկությունը, այլև Հայաստանի Հանրապետության ձևավորումն ու պաշտպանությունը՝ ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը: Իսկ դրանք թաքնված են ոչ թե արտաքին, այլ ներքին կամային ենթակայական գործոնների, այդ թվում՝ օրվա քաղաքական առաջնորդների ճշգրիտ հաշվարկի մեջ:

Բազմիցս արձանագրվել է, որ պատմության մեջ լինում են այնպիսի պահեր, երբ այս կամ այն ազգի վերապրելու հնարավորությունն ավելի շատ կախված է լինում ոչ թե առարկայական, այլ ենթակայական գործոններից, որոնք թույլ են տալիս իրերի ու իրադարձությունների տեսականորեն հնարավոր ամենաանբարենպաստ դասավորությունից անգամ ելքեր գտնել: 1918 թ. ծանրագույն պայմաններում հնարավոր եղավ հաղթել ու վերապրել ոչ թե համաժողովրդական ընդվզման, այլ Հայոց պատմությունից որպես ժառանգություն մնացած հայության քաղաքակրթական ներուժի թերևս միակ կենսունակ միջուկի՝ նրա առանձին, բացառիկ զավակների վառ անհատականության շնորհիվ: Հայ մարդու վառ անհատականությունն է միջնադարից նոր ժամանակները փոխանցված մեր քաղաքակրթական ներուժի չցամաքած աղբյուրը, որը 1918 թվականին մասնակիորեն սրբագրեց այն 100 տոկոսանոց պարտված դիրքը, որը մենք ստացանք Առաջին աշխարհամարտի ավարտից ուղիղ մեկ տարի առաջ՝ 1917 թվականի աշնանը: Ընդհանուր քաոսի ու հուսալքության պայմաններում այդ անհատականությունը դրսևորվեց իբրև մարտնչող փոքրամասնության միտք, կամք և ինքնազոհություն:

Կովկասյան ճակատի փլուզման նախօրյակին 1917 թ. դեկտեմբերի 2-ին, երբ Հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած քաոսը ակնհայտ էր դարձրել Արևմտյան Հայաստանը ռազմակալած ռուսական բանակի հեռանալու վտանգը, Ստոկհոլմից շտապ կերպով Պետրոգրադ, իսկ այնտեղից Կովկաս վերադարձող ՀՅԴ հիմնադիրներից Ռոստոմը (Ստեփան Զորյան) գրում էր. **«Շուարած եմ մնացել: Հոսանքը մեզ քշում է, եւ դեռ քշելու է: Աշխատենք՝ ժայռերի չզարնուել»[1]:** Նույնիսկ սեփական ուժերի ամենամեծ լարման պարագայում ժամանակի դերակատար ուժերն ու անհատները չէին կարող կանխել այդ «հոսանքը»: Դա կանխորոշված էր մի կողմից Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի ղեկավարության «անբացատրելի» զիջողականության, իսկ մյուս կողմից՝ Օսմանյան Թուրքիայի միանգամայն բացատրելի ռևանշիզմի խորքում առկա բրիտանական գաղտնի դիվանագիտության քողարկված ռեժիսուրայով: Ռուսաստանի՝ Անդրկովկաս վերադարձի բացառման բրիտանական ստվերային քաղաքականությունն էր, որը 1918 թ. ընթացքում իրար լծորդեց կոմունիստական, իսկ իրականում՝ լրտեսական ինտերնացիոնալի վերածված բոլշևիկյան պարտվողականության և թուրքական վիրավոր գազանի համաթուրանական զառանցանքի համատեղման խնդիրը: Թուրքական ագրեսիան դեպի Արևելք հունավորելու հարցում 1918 թ. ձևավորվել էր թերևս ոչ մի տեղ չձևակերպված, բայց փաստացի կերպով գործող դաշինք Կարմիր բանակի ղեկավարության (Տրոցկի), Պարսկաստանում հայտնված բրիտանական զորքերի հրամանատարության (Դենստերվիլ) և, իհարկե, թուրք-գերմանական խմբավորման միջև: Իսկ վերջինիս ներսում առանձին թիրախներ (Ղարաբիլիսա, Բաքու և այլն) վերահսկելու հարցում տարածաշրջանային մակարդակի վրա առկա տարաձայնությունները կայզերական Գերմանիայի կողմից շարունակաբար ստորադասվում էին համաշխարհային պատերազմին թուրքական դիվիզիաների մինչև վերջ մասնակցության խնդրին: Այսինքն՝ Այսրկովկասում շահեր և հնարավորություններ ունեցող արտաքին խաղացողներից և ոչ մեկը շահագրգռված չէր խորտակվող հայության փրկությամբ:

Արդյունքում ակնհայտ էր, որ 1918 թ. սպասվող անբարենպաստ կացության միակ ճշգրիտ գնահատականը 1917 թվականի դեկտեմբերի վերջերին Երևանի Ազգային խորհրդի հիմքի վրա ստեղծված Հատուկ կոմիտեի գլուխ անցած Ռոստոմի աշակերտի՝ Արամ Մանուկյանի **«Մենակ ենք եւ պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին թէ՛ ճակատը պաշտպանելու եւ թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»[2]** բանաձևն էր և նրանից բխող քաղաքական հաշվարկը:

Այն հիմնվում էր Հայկական կորպուսի հուսահատ դիմադրությունը և Երևանի ազգային խորհրդի ժամանակ ձգելու քաղաքականությունը, Թիֆլիսի (Կենտրոնական) ազգային խորհրդի՝ թուրք-գերմանական խմբավորման հանդեպ հաշտվողական և Բաքվի ազգային խորհրդի անզիջում քաղաքականության զույգ նժարներով հավասարակշռելու մտադրության վրա: Այդ պատճառով, Արևմտյան ու Հարավարևմտյան ռազմաճակատներից վերադարձող ու Բաքվում կուտակվող հայ զինվորականության միջոցով Հայկական երկրորդ ճակատը բացելու ռիսկային, բայց այլընտրանք չունեցող հաշվարկը քիչ անց ստիպում էր Արամ Մանուկյանին, բոլշևիկ Պ. Մակինցյանին մի երկտող տալով, ուղարկել Թիֆլիս՝ Ռուբենի (Մ. Տեր-Մինասյան) մոտ, որպեսզի նրան անցկացնի Ռուսաստան խորհրդային իշխանությունների հետ կապվելու համար. **«Պէտք է մենք ամէն կերպ միանանք Ռոստոմին (Բագուին): ...Մեր մէջքը թէ ամուր չլինի, կը կրկնուի 1915 թիւը»**[3], - գրում էր Արամ Մանուկյանը:

Այս պայմաններում Արամի դիկտատուրան Երևանում 1917 թ. դեկտեմբերից և Պետրոգրադից Ցարիցինի վրայով Բաքու ժամանած ու 1918 թ. մարտի 3-ից հայկական երկրորդ ճակատի ձևավորման գործը սկսած Ռոստոմի ներկայությունը Բաքվում՝ այն առանցքային քաղաքական իրողություններն էին, որոնց շուրջը 1918 թ. համախմբվեցին ազգի լավագույն զավակները: Դրանք և անհատական, և կուսակցական դիկտատուրաներ էին, որոնք քողարկվում էին Երևանի ազգային խորհրդի բացահայտ և Բաքվի ազգային խորհրդի բոլշևիկյան Կոմունայով միջնորդավորված իշխանությամբ: Իսկ ամենախորքում դա ՀՅԴ մարտական ուժերի և հայ զինվորականության միջին ու ստորին օղակների վրա հենվող երկու անհատների՝ Արամ Մանուկյանի ու Ռոստոմի, օրհասական դրության պատճառով որևէ մեկի կողմից չվիճարկվող ոչ թե իրավունքների, այլ պատասխանատվության արտահայտությունն էր:

Թուրքական բանակի 1918 թ. փետրվարից սկսած հարձակման պայմաններում, երբ հակառակորդը կիրառում էր պարբերաբար զինադադարի արձանագրություններ ստորագրելու և դրանք նույն պարբերականությամբ խախտելու՝ Երզնկայով ու Էրզրումով սկսված և Կարսով ու Ալեքսանդրապոլով շարունակված «հաջորդական ցատկերի» մարտավարությունը, իսկ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը դադարել էր լինել միասնական ու հստակ քաղաքական կամքի կենտրոն, ոչ միայն Հայաստանի անկախության, այլև հայ ժողովրդի գոյության հարցը իրականում վճռվեց Երևանի, ապա Բաքվի ազգային խորհուրդները վերահսկող այս երկու վառ անհատականությունների գլխավորած 1918 թ. փետրվար-մայիսյան և ապա հունիս-սեպտեմբերյան երկու գոյամարտերի միջոցով:

Դրանցից առաջինը Մայիսյան հերոսամարտերը, իսկ իրականում իրար հետ փոխկապակցված Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի ճակատների միասնական դիմադրությունը կամ գոյամարտը ոչ թե 1918 թ. մայիսի վերջերին տեղի ունեցած «համաժողովրդական ընդվզում» էր, այլ հայ զինվորականության առանձին վառ անհատականությունների գիտակցված ինքնազոհության գնով «մեկ ցատկով» Երևանն ու նրա նահանգը գրավելու Թուրքիայի մտադրության ձախողում: Այդ գիտակցված ինքնազոհությանը գնացած անհատները (Սարդարապատում 5-րդ գնդի Մահապարտները, Բաշ-Ապարանի ճակատում, Քուչակ գյուղի մոտ Ձեմլյակը (Նանումյան) ու մայիս 28-ի առավոտյան խելահեղ գրոհով անհուսալի դրությունը փրկած նրա հեծելագունդը, Ղարաքիլիսայում Գուրգեն Տեր-Մովսիսյանն ու նրա օրինակին հետևած սպաները մարմնավորում էին սեփական կյանքի գնով ճակատագրի հանդեպ հաղթանակ արձանագրած հայի վառ անհատականությունը: Արամ Մանուկյանի քաղաքական, Մովսես Սիլիկյանի, Դրաստամատ Կանայանի և գնդապետներ Ն. Ղորդանյանի ու Ս. Սամարցյանի զինվորական ղեկավարությամբ նրանց կատարած իրական սխրանքների պատմությունը ոչ միայն դեռևս չի գրվել, այլև Հայաստանի երրորդ Հանրապետության օրոք ևս շարունակում է կեղծվել «համաժողովրդական ընդվզման» մասին մտակաղապարի, կամ էլ Ապարանի գյուղացիության սխրանքների մասին ժողովրդական բանահյուսության վրա հիմնվող շինծու տոնախմբությունների կազմակերպման միջոցով:

Մինչդեռ Մայիսյան գոյամարտն իրականում մարտավարական հաղթանակների (Սարդարապատ, Բաշ-Ապարան) և մարտավարական պարտությունների (Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա) շարք էր, որը պայմանավորեց սոսկ իր հաջորդ «ցատկին» նախապատրաստվելու համար Թուրքիայի ստորագրած 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրի ծնունդը: Ակնհայտ էր, որ այն կրկին թղթի կտորի է վերածվելու, քանզի դրանից հետո Բաթումի պայմանագրի համաձայն Երևանի մատույցներում՝ Նորագավիթում, հաստատված թուրքական զորքերը չէին հրաժարվել Երևանը գրավելու իրենց մտադրությունից: Ու մինչ Արամի խոսքերով «մեր վերջին ամրոցները» հանդիսացող Ուչ-Թափալարի (ներկայումս Եռաբլուր) վրա կանգնած հայկական կորպուսի ուժերի դիմաց հակառակորդը շարունակում էր իր զորքերի կուտակումը՝ հասկացնելով, որ Բաթումի պայմանագիրը նույնպես ոչինչ է իր համար, 1918 թ. մայիս-հունիս ամիսներին դե-յուրե Բաքվի կոմունայի բանակին, իսկ դե-ֆակտո Բաքվի Հայոց ազգային խորհրդին և անձամբ Ռոստոմին ենթարկվող 15 հազարանոց հայկական զինուժն իր հերթին ճնշել էր Գանձակի մուսավաթականներին, գրավել Բաքվի նահանգի գրեթե ողջ տարածքն ու մոտենում էր Եվլախ կայարանի մատույցներին: Ստացվում էր, որ Մայիսյան գոյամարտի ու Բաքվի հայկական զինուժի մայիս-հունիսյան առաջխաղացման արդյունքում ձևավորվում է ուժերի մի նոր դասավորություն, որի ռեալ հարաբերակցությունը, վերջիվերջո, հանգեցնելու էր նրան, որ Կոմունայի միջոցով Ռուսաստանից որոշակի քանակությամբ զենք ու զինամթերք ստացող հայկական ուժերը տիրանալու էին ոչ միայն Բաքվին, այլև Գանձակին ու Ղարաբաղին, իսկ ահա թուրքերը աքցանի մեջ հայտնված Երևանին ու նրա շրջակա գավառներին: Հենց սա էր այն ակնհայտ սպառնալիք-մարտահրավերը, որը համաթուրանական ծրագրերով

տարված Թալեաթին հարկադրեց ժամանակավորապես հաշտվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման փաստի հետ և դժվարությամբ կոտրելով Երևանի վրա նոր գրոհի կողմնակից էնվերի դիմադրությունը օգնություն ուղարկել Իրանի վրայով Գանձակ հասած Նուրի փաշային: Ինչպես այդ ճանապարհով (Արաքսի վարարման պատճառով թուրքական զորքի նշանակալի մասը մնացել էր Սուրմալուի գավառում), այնպես էլ Ղարաքիլիսա-Դիլիջան գծով թուրքական հրամանատարությունը հունիսից սկսել էր իր հիմնական ուժերը կենտրոնացնել Բաքվի դեմ: Եվ առաջին անհաջողություններից հետո՝ 1918 թ. հուլիսին, թուրքական հրամանատարությունը ստիպված էր հրաժարվել Բաթումի պայմանագիրը նույնպես խախտելու և Երևանը գրավելու իր ակնհայտ մտադրությունից: Նման պայմաններում Արարատյան դաշտավայրի հարավով ու Գյումրի-Ղարաքիլիսա-Դիլիջան ուղղություններով վիշապի նման Երևանի շուրջը փաթաթված թուրքական բանակի արշավանքը ղեպի Գանձակ ու Եվլախ իր վերջնանպատակում նախատեսում էր Երևանի վրա գրոհը հետաձգել մինչև Բաքվի գրավման պահը:

Դրանից բխող եզրակացությունն ակնհայտ է՝ Հայաստանի Հանրապետության ծնունդն ու փրկությունը ոչ առարկայական գործոնների բարենպաստ դասավորության արդյունք էր և ոչ էլ հակառակորդի նվերը, այլ ուժերի ռեալ հարաբերակցությանը և ստեղծված նոր իրավիճակը հաշվի առնելու միջոցով անհավասար գոյամարտերի կազմակերպումը երկու ձեռքով խաղի հետ զուգորդելու «Երևան-Բաքու» կամ «Արամ-Ռոստոմ» դերաբաշխումների արդյունքը:

Պայմանագրեր ստորագրելու, բայց դրանք չհարգելու թուրքական դաժան իրապաշտությունը չեզոքացրած այս քաղաքական հնարքն իր արդիականությունը պահպանում է նաև մեր օրերում, ուստի արժանի է ավելի մանրամասն քննության: Մինչ օրս ուսումնասիրողներից որևէ մեկը չի կարողացել բացատրել, թե ինչո՞ւ Երևանի շուրջը կենտրոնացած Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանի օրագրում 1918 թ. հուլիսի 10-ին ռուսերենով կատարված «Թուրքերը բացահայտորեն ասում են, որ նրանք, չնայած հաշտությանը, գրավելու են էրիվանը»[4] գրառումը 1918 թ. հուլիսի երկրորդ կեսին Բաքվի ուղղությամբ թուրքական բանակի լայնածավալ հարձակման պայմաններում փոխարինվեց ՀՀ մայրաքաղաքի շուրջը ռազմաքաղաքական իրավիճակի լիցքաթափման մասին հուսադրող տեղեկություններով:

Պատճառն այն է, որ հարձակման անցած Բաքվի հայկական զինուժը հակառակորդին պարտադրել էր իր վրա կենտրոնացնել թուրքական բանակի հիմնական խմբավորումները: Բայց դրանից հետո էլ իր ռազմավարական մտածողության ողջ ուժով գիտակցելով, որ Երևանին սպառնացող վտանգը կանխելու միակ տարբերակը Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության ստանձնած Բաքվից հայկական զինուժը դուրս բերելու պարտավորությունը կատարելուց հրաժարվելն է. Բաքվի հերոսամարտի առաջնորդ Ռոստոմը ՀՅԴ Բաքվի շրջանային ժողովում անցկացրեց կռիվը մինչև վերջ շարունակելու որոշումը: Այսինքն Ռոստոմը (ի հակադրություն Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահ, նույնպես դաշնակցական Աբրահամ Գյուլխանդանյանի, որը միամտաբար պնդում էր, թե քանի որ հայերն ինքնորոշվել են Երևանում, ուրեմն նույնն անելու հնարավորություն պետք է տալ ադրբեջանցիներին Բաքվում) շարունակում էր թուրքական ուխտադրուժ քաղաքականությունը կասեցնելու միակ տարբերակը Արամի հետ «երկու ձեռքով» խաղալու մարտավարությունը: Այսպիսով Երևանում գտնվող և առերևույթ Բաթումի պայմանագիրը հարգող Արամը և Բաքվում գտնվող, սակայն քաղաքից հայկական ուժերի դուրսբերման Բաթումի պայմանագրով նախատեսվող ՀՀ պարտավորության կատարումից հրաժարվող Ռոստոմը, ձևով հակադրվելով իրար, բովանդակությամբ նույն խաղն էին առաջ տանում: Նրանք գիտակցում էին, որ որքան ձգձգվի Բաքվի դիմադրությունը, այնքան կհետաձգվի Երևանի վրա թուրքական բանակի գրոհը: Բաքվի ՀՅԴ կազմակերպության շրջանային ժողովում Ռոստոմը հայտարարում էր. **«Վաղը հենց որ բացուեն Բագուի դռները Ադրբէյջանի բանակի առջեւ եւ տաճիկները տեղաւորուեն Բագւում, Խան-Խոյսկու ամբոխը եւ տաճկական բանակը, ձեռք ձեռքի տուած, պիտի սրբեն նաեւ Բագուի եւ Գանձակի հայութիւնը, ապա պիտի բարձրանան Ղարաբաղ, պիտի իջնեն Զանգեզուր եւ Երեւանը ոտնատակ պիտի տան»**[5]: Հետագա իրադարձություններն ընթացան Ռոստոմի մատնանշած, բայց արդեն բավականին ուշացած սցենարով, քանի որ 1918 թ. հուլիսի 31-օգոստոսի 5-ի վեցօրյա անհավասար ճակատամարտում Բաքվի հայկական զինուժը պարտության մատնեց թուրքական բանակին՝ մինչև սեպտեմբերի 15-ը հետաձգելով քաղաքի գրավումը:

Այս ճակատամարտում վճռական դեր խաղաց մինչ այդ Բաքու քաղաքի հյուսիս-արևելքը գրաված և Բիբիէյբաթից քաղաքամեջ Բայիլով ներխուժած թշնամու թիկունքը մահապարտներ նետելու և երկու կողմից մահապարտ զինվորների ու հայ սպաների փոխհամաձայնեցված հակագրոհ կազմակերպելու հնարքը, որը վերածվեց թշնամուն հասցված «դաշույնային» (ռուսերեն կինժալնի) հարվածի: Միայն Ռոստոմի անձնական հրամանին ենթարկվելով ինքնազոհության գնացած ու թշնամու թիկունքն անցած Թադևոս Ամիրյանի (Գիժ Թադոս) 31 հոգանոց մահապարտների հեծյալ ջոկատի և հերոս սպաներ Դովլաթյանի, Խոջաեյնաթյանի, Ստեփանյանի և այլոց անձնական սխրանքը թույլ տվեց հաղթել 1918 թ. հուլիսի 31-օգոստոսի 5-ի վեցօրյա ճակատամարտում և շահել մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը մնացած այդքան թանկագին ժամանակը:

Դա էր պատճառը, որ անգլիացիների ժամանելուց և ապա հեռանալուց հետո անխուսափելի դարձած Բաքվի պաշտպանական համակարգի փլուզումից ու սեպտեմբերի 15-ին քաղաքը թշնամու ձեռքն անցնելուց տառացիորեն մեկ շաբաթ անց՝ սեպտեմբերի 20-ին, Աղդամում հաստատված թուրքական առաջին դիվիզիայի հրամանատար Ջեմիլ Ջեհիդ բեյը Աղդամի ու Շուշիի միջև ընկած հայկական գյուղերից պահանջեց զինաթափվել ու ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:

Թուրքական բանակն այս հատվածում (հիմնականում հոկտեմբեր ամսին) հասցրեց զինաթափել ռազմավարական նշանակություն ունեցող 24 հայկական գյուղեր՝ խլելով 715 մոսին և 406 բերդան հրացաններ[6], հանգամանք, որը հետագայում՝ 1920 թ. գարնանը, ճակատագրական դեր խաղաց Ասկերանի կիրճը պաշտպանող Դալի Ղազարի (Բաղալբյոխվյան) գլխավորած գրեթե անզեն ուժերի անհաջողության և վերջինիս հերոսական նահատակության մեջ:

Բայց Ղարաբաղի տարածքի մի մասի մասնակի ու ժամանակավոր ռազմակալումից հետո Ռոստոմի մատնանշած հաջորդ թիրախը Զանգեզուրը և իհարկե, թուրքական բանակի վերջնանպատակ Երևանն այլևս հնարավոր չէր գրավել: Անտանտի զորքերի և նրանց առաջին շարքերում մարտնչող Արևելյան (Հայկական) լեգեոնի հարվածներից սեպտեմբերի վերջին տասնօրյակում փլուզվեց թուրքական բանակի Պաղեստինի ճակատը, իսկ հոկտեմբերին Թուրքիան ճանաչեց Առաջին համաշխարհային պատերազմում կրած իր պարտությունը: Այդ պատճառով 1918 թ. նոյեմբերին Զանգեզուրի վրա հարձակվեցին արդեն ոչ թե թուրքական բանակի կանոնավոր դիվիզիաները, այլ սոսկ թուրք սպաներով համալրված, Ռոստոմի բնորոշմամբ «Խան-Խոյսկու ամբոխը»:

Այսպիսով Արամ-Ռոստոմ տանդեմը համապատասխանաբար Երևանում ու Բաքվում, արտաքուստ հակադրվելով իրար, հրաշալի կերպով գիտակցեց ու փայլուն կերպով կանխեց թղթի վրա հաշտության արձանագրություններ ստորագրելու և ապա «հաջորդ ցատկը» կատարելու Թուրքիայի ավանդական (և այսօր էլ շարունակվող) քաղաքականության էությունն ու նպատակները: Գիտակցեց ու կանխեց թուրք-ադրբեջանական աքցանի մեջ Հայաստանը խեղդելու այն ծրագիրը, որը բացահայտվեց միայն Բաքուն գրավելուց հետո՝ 1918 թ. սեպտեմբերին թուրքական «Ենի գյուն» թերթում տպագրված «Միացյալ» կամ «Մեծ Ադրբեջանի» քարտեզի տեսքով[7]:

Դրանով իսկ այս երկու վառ անհատականությունները Արամ Մանուկյանը և Ստեփան Զորյանը (Ռոստոմը) հայոց պետականության հիմնադրման(1918 թ. փետրվար-մայիս) և պաշտպանության (1918 թ. հունիս-սեպտեմբեր) համար երկու անհավասար գոյամարտերի ղեկավարման միջոցով դարձան Արևելյան Հայաստանը ոչնչացնելու նպատակադրումով առաջնորդվող Թուրքիայի «հաջորդական ցատկերի» քաղաքականությունը չեզոքացրած ռազմական ու դիվանագիտական քայլերի կազմակերպիչներն ու համադրողները ավերակներից ու մոխրից ծնունդ առած Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայրերը:

Խորհրդանշական է, որ Բաքվի անկումից հետո էլ Իրանից ուղարկվող հայկական ուժերի միջոցով թուրքական բանակին կասպիականի ափերին կաշկանդող գործողությունների կազմակերպմամբ զբաղված Ռոստոմն այդպես էլ չհասցրեց սեփական աչքերով տեսնել անկախ Հայաստանի մայրաքաղաք Երևանը, որի անունը որպես նվիրական նպատակ, դարձավ Բաքվի վրայով Թիֆլիս վերադարձից առաջ գրած իր կյանքում վերջին նամակի վերջին բառը. «...Բագու-Թիֆլիս-Երեւան»[8]:

Հատկանշական է նաև, որ 1919 թ. հունվարին Երևանում բծավոր տիֆով վարակված նրա աշակերտը՝ Արամ Մանուկյանը, կյանքին հրաժեշտի խոսքերում համառորեն իր շորերն էր պահանջում, որպեսզի հագնվի արդեն Թիֆլիս հասած Ռոստոմին հանդիպելու համար, մինչդեռ Ռոստոմն այլևս չկար... Վերջինս, նույն հիվանդությամբ վարակված, շուտով նաև թոքերի բորբոքում էր ստացել, որովհետև վատառողջ վիճակում շարունակել էր այցելել Թիֆլիսում գտնվող և այնտեղից Փարիզ խաղաղության խորհրդաժողովին մեկնող ՀՀ պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանի մոտ կազմակերպվող ժողովներին:

1919 թ. հունվարին (ընդամենը 11 օրվա տարբերությամբ), Թիֆլիսում Ռոստոմի և Երևանում Արամի նման վառ անհատականությունների կորուստը ճակատագրական դեր խաղաց Հայաստանի առաջին հանրապետության համար, քանզի նրանց նման հզոր կամքի, ռազմավարական մտածողության, ահռելի հեղինակության ու մեծ հմայքի տեր անհատականություններ ղեկավարության մեջ հետագայում այդպես էլ չգտնվեցին:

Կարծում ենք, պետական ու քաղաքական գործիչների ներկա սերնդի համար որպես պատգամ են հնչում ոչ միայն Արամի «Մենակ ենք» հայտնի եզրահանգումը, այլև Ռոստոմի համառ պնդումն այն մասին, որ **չկա առանձին վերցրած Թուրքիայի կամ Ադրբեջանի քաղաքականություն, կա միայն ու միայն թուրքական քաղաքականություն, քանզի «Ադրբէյջանի կառավարութեան թիկունքում կանգնած է Տաճկաստանը: Նա է, որ գծում է ադրբէյջանցիների անելիքը, իսկ Տաճկաստանի նպատակը մեր ազգային հարցի տեսակէտից պարզ է»[9]:**

Ծանոթագրություններ

1. «Ռոստոմ մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, 1979. էջ 190:
2. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1964, N 4, էջ 70:
3. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է. Պէյրութ, 1979, էջ 143:
4. Հայկական կորպուսը թուրքական զորքի դեմ 1917-1918 թթ.: Գեներալ Ֆ. Նազարբեկովի հուշերը. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, N 3, էջ 150:
5. Ալչուջեան Ա., Ռոստոմը Բագւում. «Ռոստոմ մահուան վաթսունամեակին առթիւ», էջ 326:
6. Տե՛ս «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու». Երևան, 2003, էջ 189-190:
7. Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 30 հոկտեմբերի 1918, N 222, տես նաև Խուդինյան Գ., մի ուշագրավ քարտեզ, «Երևանի համալսարան» գիտահանրամատչելի հանդես, 1989, N 3, էջ 37-38:
8. «Ռոստոմ. նամականի, մահուան ութսունամեակին առթիւ», Պէյրութ, 1999, էջ 650:
9. Ալչուջեան Ա., նշփ աշխ., էջ 325:

Արամ Մանուկեանը՝ ՀՅ ներքին գործերի առաջին նախարար (1918-1919 թթ.)

1918 թ. մայիսեան հերոսամարտերը հնարաւոր դարձրեցին հայ ժողովրդի բազմաթիւ սերունդների երազանքը՝ Հայաստանի անկախութեան վերականգնումը: 1918 թ. յունիսի 4-ին Բաթումում կնքուած պայմանագրով Թուրքիան, որը մինչ մայիսեան ճակատամարտերը մերժում էր ինքնիշխան Հայաստանի ցանկացած գաղափար, հայկական կողմին պարտադրելով հանդերձ խիստ ծանր պայմաններ, հարկադրուած էր գոնէ ժամանակաւորապէս հաշտուել անկախ Հայաստանի գոյութեան փաստի հետ:

Նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնը գտնուում էր չափազանց ծանր կացութեան մէջ: Թշնամին հաստատուել էր մայրաքաղաք Երեւանի մատոյցներում: Բարեբեր տարածքներից զրկուած փոքրիկ երկիրը շրջապատուած էր թշնամական օղակով, զուրկ արտաքին աշխարհի հետ կանոնաւոր հաղորդակցութեան ճանապարհներից: Այստեղ խմբուել էին հարիւր հազարաւոր անօթեւան եւ ապրուստի տարրական միջոցներից զուրկ հայ փախստականներ: Զգացւում էր բնակարանների, սննդամթերքի եւ դեղօրայքի սուր պակաս: Դարձեալ գլուխ էին բարձրացնում ինչպէս տեղաբնակ թուրքերը, այնպէս էլ հայ անիշխանական տարրերը:

Երկրի ծանր իրավիճակի յաղթահարման եւ պետականութեան հիմքերի հաստատման դժուարին գործը բաժին ընկաւ Յ. Քաջազնունու գլխաւորած Հ.Հ. անդրանիկ կառավարութեանը, որի կազմը հրապարակուեց 1918 թ. յուլիսի 24-ին Երեւանում:[1]

Յ. Քաջազնունու կառավարութեան մէջ բացառիկ դեր վստահուեց Արամ Մանուկեանին (1879-1919 թթ.): Նա նշանակուեց ներքին գործերի նախարարի խիստ պատասխանատու պաշտօնում: Միաժամանակ, Արամի ենթակայութեան ներքոյ էին կենտրոնացուել նաեւ լուսաւորութեան, հաղորդակցութեան, պարէնաւորման ու խնամատարութեան նախարարութիւնները, ինչպէս նաեւ յանձնարարուել տեղական իշխանութեան խնդիրները:

Ս. Վրացեանը նկատել է, որ Արամը միակն էր, որ «այդ խառնակ օրերին ընդունակ էր կարգ ու անդորրութիւն պահել երկրում եւ պետական շինարարութիւն սկսել»:[2]

Անկասկած, Արամի նշանակումը այդ բարձր պաշտօնում եւ Ս. Վրացեանի վերոյիշեալ գնահատականը հետեւանք էին նրա փորձաշատ անցեալի եւ կազմակերպչական ունակութիւնների գնահատման: Արամը 1890-ականների երկրորդ կէսերին անդամագրուել էր թուրքական բռնապետութեան դէմ ծաւալուած ազգային ազատագրական շարժման առաջատար ուժ Հ. Յ. Դաշնակցութեանը: 1905 թ. անցնելով Արեւմտեան Հայաստան՝ նա մինչեւ 1915 թ. եղել էր Հ.Յ.Դ. Վանի կազմակերպութեան ղեկավար դէմքերից մէկը, առաջնակարգ դեր էր կատարել Վանի 1915 թ. յաղթական հերոսամարտի կազմակերպման ու ղեկավարման գործում՝ լինելով նրա ոգին, այնուհետեւ ռուսական կովկասեան բանակի հրամանատարութեան կողմից նշանակուել էր Վան-Վասպուրականի նահանգապետ եւ աչքի ընկել ազգային ու պետական գործչին բնորոշ յատկանիշներով: Վերջապէս, 1917 թ. դեկտեմբերին իբրեւ Թիֆլիսի Հայոց Կ. Ազգային Խորհրդի լիազօր ներկայացուցիչ հաստատուելով Երեւանում՝ նա մինչեւ 1919 թ. յուլիս, այսինքն՝ մինչեւ Հ.Հ. կառավարութեան հաստատումը Երեւանում, եղել էր Երեւանի նահանգի փաստացի ղեկավարը եւ, զինուորական ու քաղաքական տաղանդաւոր գործիչների հետ գործակցելով, յաջողութեամբ առաջ տարել հայրենիքի պաշտպանութեան եւ ազատութեան գործը, մեծագոյն մասնակցութիւն էր ունեցել Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի հերոսամարտերի կազմակերպմանը, դրանով իսկ՝ նախ անկախ պետականութեան վերականգնմանը՝ իրաւամբ արժանանալով Հ.Հ. հիմնադրի բացառիկ կոչմանը:

Նոր պաշտօնում եւ նոր պայմաններում Արամի ազգային-պետական մտածողութիւնն ու գործելակերպը նոր շունչ եւ որակական նոր դրսեւորումներ ստացան: Նա միշտ հանդէս եկաւ նախաձեռնողի, իրադարձութիւններին ընթացք տուողի դերում, որոնք կարեւորագոյն

գծեր են իւրաքանչիւր ազգային գործչի համար, յատկապէս նման բախտորոշ ժամանակաշրջանում:

1918 թ. օգոստոսի 1-ին տօնական մթնոլորտում իր աշխատանքն սկսեց Հայաստանի անդրանիկ օրէնսդիր մարմինը՝ Խորհուրդը: Խորհրդի երկրորդ նիստում՝ օգոստոսի 3-ին, Յ. Քաջազնունին հրապարակեց կառավարութեան ծրագիրը, որով նախատեսւում էր երկրում կասեցնել քայքայման գործընթացը եւ պայմաններ ստեղծել պետական շինարարութեան համար: Ներքին քաղաքականութեան ոլորտում նախատեսւում էր երկրում իրաւակարգի, կեանքի եւ գոյքի ապահովութեան հաստատում, հաղորդակցութեան ճանապարհների բացում, պարէնային ճգնաժամի յաղթահարում, հոգածութիւն փախստականութեան ու գաղթականութեան նկատմամբ, ներքին ու արտաքին փոստ-հեռագրական կապի վերահաստատում, բանակի վերակազմաւորում, տնտեսական կեանքի վերականգնում եւ այլն: Արտաքին քաղաքականութեան ասպարէզում նպատակ էր դրւում բարի-դրացիական յարաբերութիւններ հաստատել հարեւանների հետ եւ երկիրը զերծ պահել վտանգներից:

Յուլիսի 26-ին, ստանձնելով Ն.Գ. նախարարութեան ղեկավարութիւնը, Արամը մեծագոյն եռանդով իր մասնակցութիւնը բերեց կառավարութեան հետապնդած ծրագրի իրականացմանը:[3]

Հ.Հ. իշխանութիւնների, յատկապէս Ն.Գ. նախարարութեան առաջնակարգ խնդիրներից մէկը երկրում կեանքի եւ գոյքի ապահովութեան, իրաւակարգի, ամուր իշխանութեան հաստատումն էր: Անկախութեան սկզբնական շրջանում երկրում դեռեւս շարունակւում էին յանցագործութիւնները, այդ թւում եւ սպանութիւնները, սպանում էին անգամ մէկ պարկ ալիւրի, ցորենի կամ ոչխարի համար: Ահաւոր վտանգ էր դարձել մաուզերիզմը: Մաուզերիստների խժդժութիւնների զոհ էին դառնում բազմաթիւ քաղաքացիներ: Անտանելի իրավիճակ էր տիրում գաւառներում: Նոր Բայազետի գաւառի մի շարք գիւղերում՝ Նորադուզ, Թազաքենդ եւ այլն, բնակչութիւնը խուսափում էր հարկերի վճարումից եւ իշխանութեան ներկայացուցիչներին դիմաւորում զենքով: Օգոստոսի 25-ին Նոր Բայազետ քաղաքում մեծ ընդհարում էր տեղի ունեցել ոստիկանների (միլիցիոներների) եւ բնակիչների միջեւ, որը աւարտուել էր մարդկային զոհերով:[4] Յարձակումներ ու սպանութիւններ էին կատարւում նոյնիսկ հանրապետութեան գլխաւոր ճանապարհներին:

Առաջադրուած խնդրի իրագործման կարեւորագոյն միջոց նկատուեց բնակչութեան մօտ առկայ զէնք-զինամթերքի առգրաւումը: Այդ նպատակով 1918 թ. օգոստոսի 21-ին Արամը կառավարութեան քննարկմանը ներկայացրեց մասնաւոր զէնք-զինամթերքի պետականացման վերաբերեալ օրինագիծ, որը հաւանութեան արժանանալուց յետոյ ներկայացուեց խորհրդարանի դատին:[5] Հիմնաւորելով օրինագիծը՝ Արամը նշում էր, որ երկրում ոչ մի իշխանութիւն չի կարելի հաստատել, քանի որ կառավարութեան կարգադրութիւնները չեն կատարւում, իսկ հարկադրանքի դեպքում հանդիպում են զինուած դիմադրութեան:[6] Նա իրաւացիօրէն համարում էր, որ եթէ ժամանակին ժողովրդին զինելն անհրաժեշտութիւն էր եւ ունէր ինքնապաշտպանական նպատակներ, ապա տուեալ պահին անձի անձեռնմխելիութիւնը, ունեցուածքի եւ այլ իրաւունքների պաշտպանութիւնը պետական իշխանութեան պարտականութիւնն է:[7]

1918-ի օգոստոսի 29-ին Հայաստանի Խորհուրդն ընդունեց «Մասնաւոր սեփականութիւն կազմող զէնքերի եւ զինամթերքների պետականացման մասին» օրէնքը, որը նախատեսում էր պետականացնել մասնաւոր հրազէնն ու զինամթերքը, բացի որսորդական եւ անպահանջական տեսակներից: Զէնքը կամովին չյանձնելու դէպքում այն գրաւուելու էր հարկադրաբար, իսկ օրինազանցները Ն.Գ. նախարարի որոշմամբ ենթարկուելու էին պատժի մինչեւ երեք ամիս բանտարկութեան կամ էլ մինչեւ 3000 ռուբլի տուգանքի: Ներքին գործերի նախարարին էին վերապահւում զէնք-զինամթերք հաւաքագրող յանձնաժողովների կազմակերպման, մասնաւոր անձանց ու կազմակերպութիւնների կողմից զէնք-զինամթերք ձեռք բերելու, դրանք կրելու արտօնութիւն տրամադրելու եւ այլ հարցեր: Վտանգուած գիւղերի ինքնապաշտպանութեանը չվնասելու նպատակով նախատեսւում էր այդ գիւղերից գրաւուած զէնքի մի մասը թողնել տեղում յատուկ մարդկանց պահպանութեան ներքոյ:[8]

Դեռեւս օգոստոսի 27-ին Արամը Երեւանի ոստիկանապետին հրահանգել էր ձեռնարկել եռանդուն քայլեր քաղաքում հրաձգութիւնը դադարեցնելու եւ ապօրինի հրազէն կրող քաղաքացիների զէնքերն առգրաւելու ուղղութեամբ: Նա պատուիրել էր նաեւ օրինախախտներին պատասխանատուութեան ենթարկելիս կազմել արձանագրութիւններ, իսկ առգրաւուած զէնքի քանակի մասին զեկուցել իրեն:[9]

Զէնք-զինամթերքի առգրաւման ընթացքում թիւրիմացութիւններից խուսափելու համար, սեպտեմբերի 27-ին, Արամը զինագրաւող յանձնաժողովին կարգադրեց խուզարկութիւններ կատարել միայն տուեալների առկայութեան դէպքում եւ յարգալից վերաբերուել բնակչութեանը. բնակարանատիրոջը կամ նրան փոխարինող անձին ներկայացնել իր ստորագրութեամբ լիազօրագիր՝ խուզարկութիւն կատարելու մասին: Նա նաեւ յանձնաժողովին պարտաւորեցնում էր զէնք-զինամթերք գտնելու դէպքում կազմել առանձին արձանագրութիւն, որը պէտք է ստորագրուէր յանձնաժողովի անդամների, բնակարանատիրոջ կամ նրան փոխարինող անձի եւ վկաների կողմից: Նախարարների եւ խորհրդարանի անդամների բնակարաններն արգելւում էր խուզարկել:

Ծաւալուել էր հետեւողական պայքար օրինազանցութիւնների դէմ: 1918 թ. հոկտեմբերի 8-ին, ընթացք տալով Երեւանի գաւառային կոմիսարի դիմումին՝ Արամը երեք ամսով կալանքի ենթարկեց զինագրաւման մասին օրէնքը խախտած Գ. Աւանեսովին եւ Հ. Օրդուեւին[10]: Սեպտեմբերի 30-ին ձերբակալուեցին Երեւանի գաւառի Աւան գիւղի երկու բնակիչներ, որոնք գիւղի այլ բնակիչների հետ ստեղծել էին աւազակախումբ եւ զբաղւում էին խաղաղ բնակչութեան թալանով:[11]

Ն.Գ. նախարարութեան հետապնդած այլեւայլ խնդիրների յաջող կենսագործումը ենթադրում էր սեփական շարքերի մաքրում անյուսալի, օրինազանց եւ անկարգապահ աշխատակիցներից, ինչը եւ կատա-

ռում էր Արամը: Սեպտեմբերի 13-ին նա Նոր Բայազետի գաւառային կոմիսարին յանձնարարեց ձերբակալել հարկահաւաքի ժամանակ չարաշահումներ կատարած տեղամասային կոմիսարներ Ռ. Թարումեանցին ու Ն. Աթոլեանցին[12]: Հոկտեմբերի 12-ին Արամը պարէնաւորման բաժանմունքի վարիչին հրահանգեց նոյն բաժանմունքի պաշտօնեայ, Բաշ-Ապարանի հերոսներից Արսէն Տէր-Պօղոսեանին ժամանակաւորապէս՝ մինչեւ քննութեան աւարտը, ազատել աշխատանքից՝ հիմք ունենալով գնդապետ Բէք-Մամիկոնեանի կատարած հետաքննութեան ընթացքում նրան ներկայացուած մեղադրանքները:[13]

Արամը փորձում էր վերացնել նաեւ յանցագործութիւններին նպաստող պայմանները: Այսպէս, Հայաստանի Խորհրդի նախագահի եւ քարտուղարի անուններով կեղծ վկայագիր կազմելու եւ դրանով հացահատիկ հաւաքելու համար, 1918 թ. սեպտեմբերի 26-ին, ձերբակալուել էր Ե. Լուսիկեանը: Սեպտեմբերի 27-ին Արամը գործն ուղարկել էր Երեւանի շրջանային դատարանի դատախազին՝ մեղադրեալին քրէական պատասխանատուութեան ենթարկելու նպատակով: Այստեղ էականն այն է, որ ելնելով այդ դէպքից՝ նա գաւառային եւ տեղամասային կոմիսարներին յանձնարարում է, նմանօրինակ թիւրիմացութիւններից խուսափելու համար, լինել զգօն, գործել իրենց պարտականութիւնների շրջանակներում, իսկ օրէնքով չնախատեսուած դեպքերում գործել միայն վերադասի արտօնութեամբ:[14]

Ն.Գ. նախարարի Արամի աշխատանքային գործառոյթում տեղ էր գտել այնպիսի կարեւոր սկզբունք, ինչպիսին էր սահմանուած վարչական պատժաչափի կրճատումը, եթէ դա կարող էր աւելի ծանր հետեւանքների յանգեցնել, քան գործուած յանցանքն էր, կամ էլ եթէ պարզուէր, որ պատժի համար բաւարար հիմքեր չեն եղել: Օրինակ, հաշուի առնելով հոկտեմբերի 12-ին իր կողմից 1,5 ամսով կալանուած Խ. Բակլաչեանի անառողջ վիճակը, հոկտեմբերի 22-ին Արամը նրան վաղաժամկետ ազատեց[15]: Նոյեմբերի 9-ին նա միջնորդեց հայկական Դիւիզիայի պետին՝ Քարվանսարայի մի խումբ ձերբակալուած բնակիչներին կալանքից ազատելու համար՝ ըստ Ն.Գ. նախարարին կից իրաւախորհրդատուի եզրակացութեան, համաձայն որի՝ գործում բացակայում էին յանցանշանները:[16]

Արամը պաշտպանում է ազգաբնակչութեան շահերը ամէն տեսակ ապօրինութիւններից: Օգոստոսի 5-ին նա զինուորական նախարարին առաջարկեց միջոցներ ձեռնարկել զինուորների կողմից դաւալուցիներից խլուած անասնահօտը վերադարձնելու եւ առաջիկայում կանխել նման դէպքերը[17]: Հոկտեմբերի 7-ին Արամը Նոր Բայազետի գաւառային կոմիսարին յանձնարարեց անյապաղ քայլեր ձեռնարկել Նոր Ախտայի բնակիչների գլխին պատուհաս դարձած ոմն խմբապետ Շմաւոնի եւ նրա խմբի շահատակութիւնները կանխելու համար եւ կատարածի մասին հաղորդել իրեն[18]:

Նշուեց, որ Արամի տնօրինութեանն էին յանձնուել նաեւ տեղական իշխանութեան խնդիրները: Նա էր նշանակում եւ ազատում տեղական վարչական պաշտօնեաներին, ներառեալ գաւառային ու գաւառամասային կոմիսարներին: Ն.Գ.Ն. ղեկավարը ամէն ինչ անում էր իր ենթակայութեան ներքոյ գտնուող պետական ծառայողներին զգաստացնելու, նրանց մէջ՝ վստահուած գործի հանդէպ՝ առաւելագոյն պատասխանատուութեան զգացում սերմանելու համար: 1918 թ. սեպտեմբերի 8-ի շրջաբերականով Արամը, ի գիտութիւն գաւառային պաշտօնեաների, յայտարարեց, որ եթէ իրենց նկատմամբ լրագրերում հրապարակուած մեղադրանքները կարճ ժամանակում հիմնաւորուած չհերքուեն, ապա նրանք կը հեռացուեն աշխատանքից եւ դատի կը տրուեն[19]:

Արամն անշեղօրէն ձգտում էր վարչական հաստատութիւնների գործունէութեան արդիւնաւէտութեան բարձրացմանը՝ փորձելով այդ գործին մասնակից դարձնել նաեւ տեղական ղեկավարներին: Դեկտեմբերի 8-ին նա գաւառային կոմիսարներին առաջարկեց ներկայացնել իրենց տեսակէտներն այն մասին, թէ որքանո՞վ են վարչական մարմինների համար նախատեսուած հաստիքները համապատասխան իրենց գաւառներում: Կոմիսարներին առաջարկւում էր իրենց տեսակէտներում չլինել մերկախօս, այլ ելնել պետական գանձարանի ծախսերը խնայելու անհրաժեշտութիւնից եւ որոշուած նորմերի աւելացման անհրաժեշտութեան առաջարկի դէպքում ներկայացնել անհերքելի հիմնաւորում[20]: Ի պատասխան Արամի դիմումի, Ղարաքիլիսայի գաւառային կոմիսարը դեկտեմբերի 31-ին գրութիւն յղեց նախարարութիւն, որում պարզաբանում էր իր նկատառումները հարցի վերաբերեալ:[21]

Արամը, անշուշտ, կառավարութեան օժանդակութեամբ որոշակի քայլեր ձեռնարկեց ներքին գործերի համակարգն ուժեղացնելու, նրանում յստակութիւն մտցնելու ուղղութեամբ: Այսպէս, եթէ Դարալագեազի գաւառային ոստիկանութիւնը 1918 թ. յուլիսին ունէր 13 ոստիկան, ապա նոյեմբերին՝ 37: Եթէ նոյն թուականի օգոստոսին Ն.Գ.Ն. կենտրոնական աշխատակազմն ունէր 26 ծառայող,[22] ապա նոյեմբերին՝ 41, եւ իրենից ներկայացնում էր բաւական կազմակերպուած կառոյց: Նրանում կային յատուկ յանձնարարութիւնների գծով երկու կոմիսար, իրաւախորհրդատու, նախարարի գրասենեակի կառավարիչ՝ իր ենթականերով, նախարարին կից Հայաստանի տարածքի վարչակազմի եւ ոստիկանութեան կոմիսար եւ այլն[23]:

1918 թ. հոկտեմբերի կէսերից Թուրքիան, որի կապիտուլեացիան համաշխարհային պատերազմում օրերի հարց էր, սկսեց իր զօրքերը հեռացնել Կովկասից, այդ թւում եւ գրաւեալ հայկական տարածքներից: Դրան զուգահեռ, հայկական զինուժն զբաղեցնում էր ազատուող հայկական տարածքները: Մասնաւորապէս, հոկտեմբերի 18-21-ը, հայկական ուժերը հաստատուեցին Լոռի-Փամբակում[24]: Հայաստանի կառավարութիւնը Արամի գործուն մասնակցութեամբ քայլ առ քայլ վերականգնում էր իշխանութեան մարմինները ազատագրուող տարածքներում: Նա, փորձելով արագացնել թուրքերի կողմից ազատուելիք տարածքներում (Նախիջեւան, Սուրմալու եւ այլն) իշխանութեան վերականգնումը, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին դրանց վարչական ղեկավարման համար կատարեց մի շարք նշանակումներ[25]: Դեկտեմբերի 8-ին նա Երեւանի գաւառային կոմիսարին

յանձնարարեց մեկնել Ղամարլուի եւ Դաւալուի շրջաններ ու վերականգնել իշխանութիւնը տեղերում, իսկ անհրաժեշտութեան դէպքում դիմել տեղի զինուորականութեան առաջակցութեանը[26]:

Մինչեւ Հ.Հ. երկրորդ կոալիցիոն կառավարութեան ստեղծումը (նոյեմբերի 4), երբ Ն.Գ.Ն.-ից զատուեցին պարէնաւորման եւ լուսաւորութեան նախարարութիւնները, Արամն իր ներդրումն ունեցաւ նաեւ պարէնային ճգնաժամի մեղմացման գործում: Դա դժուարին գործ էր, քանզի երկրի պաշարները (ռեսուրսները) սահմանափակ էին, իսկ հաղորդակցութիւնն արտաքին աշխարհի հետ գրեթէ բացակայում էր: Օգոստոս ամսից մի կողմից պարէնային ծանր կացութիւնը մեղմելու, միւս կողմից՝ պետութեան գանձարանը լցնելու համար, ի լրումն հացի պետականացման, պետական մենաշնորհ հաստատուեց նաեւ գետնախնձորի, բամբակի, խմիչքների, աղի, կարտոֆիլի նկատմամբ: Վերջինի պետականացման վերաբերալ օրինագիծը սեպտեմբերին կառավարութեանն էր ներկայացրել Արամը: Կարճ ժամանակում պարենամթերքի պետականացման ուղղութեամբ կատարուեց մեծ աշխատանք: Սեպտեմբերի 16-ի դրութեամբ Ն.Գ.Ն. պարէնաւորման բաժանմունքը հաւաքել էր 180 հազար փութ հացահատիկ[27]:

Ձեռնարկուեցին քայլեր հանրապետութեան տարածք մթերքների պետական ներկրում կազմակերպելու եւ քաղաքացիների կողմից դրանց ներմուծումը դիւրացնելու ուղղությամբ: 1918 թ. օգոստոսի վերջերին Ն.Գ.Ն.-ին կից պարէնաւորման բաժանմունքի կողմից Թիֆլիս ուղարկուեց Ս. Վրացեանը՝ այնտեղից պարէնային եւ այլ ապրանքներ գնելու համար: Գործը դիւրացնելու նպատակով պարենաւորման բաժանմունքը հայցեց արտաքին գործերի նախարարութեան օժանդակութիւնը[28]: Օգոստոսին Արամի կարգադրութեամբ ապրանքների ներմուծումը յայտարարուեց ազատ, իսկ անհրաժեշտ մթերքների արտահանումն արգելուեց եւ պէտք է կատարուէր միայն յատուկ թոյլտուութեամբ[29]: Նոյեմբերի 28-ին Արամը ֆինանսների նախարարին խնդրեց մաքսային հաստատութիւնների վարչութեանը կարգադրել արտօնելու պարէնամթերքի անարգել ներկրումը հանրապետութիւն: Գաղթականներին թոյլատրուեց 10-15 փութ հաց բերել դրսից: Կազմակերպուել էր հացի բաշխումը ազգաբնակչութեանը: Հոկտեմբերին Երեւանում հաց էին ստանում 36.000 գաղթական եւ տեղացի[30]:

Արամը որոշակի՝ հանրապետութեան ֆինանսատնտեսական ներուժին համարժէք քայլեր ձեռնարկեց խճուղիների պահպանման, հեռագրակապը վերականգնելու, ռադիոցանց ստեղծելու, ինքնաշարժների շարժակազմը նորոգելու ուղղութեամբ:

Նա որոշակիօրէն մասնակցեց նաեւ գաւառներից մայրաքաղաքին սպառնացող համաճարակների կանխարգելման գործին: Յուլիսի 27-ին Ազգային խորհրդին կից Սանիտարական նախագահ Ձ. Անդրիասովից տեղեկանալով, որ Երեւանի մի շարք շրջաններ աղտոտուած են, Արամը, նկատի ունենալով բնակչութեան առողջութեանը սպառնացող վտանգը, քաղաքագլխին առաջարկեց ձեռնարկել միջոցներ քաղաքի հակասանիտարական վիճակում գտնուող վայրերը մաքրելու համար: Ի հարկին քաղաքագլխի տրամադրութեան տակ էին դրուելու աշխատունակ փախստականները, ինչպէս նաեւ զօրամաս[31]:

Օգոստոսի 21-ին Հայաստանի խորհուրդը երկիրը հայտարարեց վտանգուած: Անհատների եւ կազմակերպութիւնների յանցաւոր անտարբերութիւնը կանխելու նպատակով, Արամը սեպտեմբերի սկզբներին արտայայտուեց՝ խոլերայի դեմ պայքարի գլխաւոր մարմին բժշկասանիտարական յանձնաժողովին չենթարկուողներին երեք ամսով բանտարկելու կամ 3000 ռուբլի տուգանելու առաջարկով[32]:

Երկրի ծանր դրութիւնը հնարաւորութիւն չընձեռեց նկատելի քայլեր կատարել լուսաւորութեան ոլորտում: Դրանք հիմնականում յանգում էին դպրոցական շէնքերը զինուորականներից, գաղթականներից եւ որբերից ազատելուն ու բուն նպատակին յատկացնելուն: Նոյեմբերի 6-ին Հայաստանի խորհրդի նիստում Արամը յայտնեց, որ դպրոցների մի մասը բացուած է, միւս մասը բացուելու վրայ է: Այն դպրոցները, որտեղ զօրք կար, շուտով ազատուելու էին, եւ դրանցում եւս դասերն սկսուելու էին[33]:

Արամը երկրում կատարուող գրագրութիւնների հայացման նախանձախնդիր էր: Հ.Հ. կառավարութեան սեպտեմբերի 14-ի նիստում նա, շեշտելով երկրի տարածքում հեռագրերի ընդունման եւ առաքման հայացման անհրաժեշտութիւնը, առաջարկեց Մորզէի ապարատի համար իր իսկ կողմից մշակուած հայկական տառաշարը: Կառավարութիւնը հաւանութիւն տուեց նրա առաջարկին եւ յանձնարարեց միջոցներ ձեռնարկել նոյեմբերի 1-ից երկրում հեռագրերը թէ՛ ռուսերէն եւ թէ հայերէն լեզուներով հաղորդելու համար»[34]: «Ձանգ»-ի սեպտեմբերի 28-ի հաղորդման համաձայն, Արամը հեռախօսային գործերի կառավարչին յայտնել էր, որ այդ հաստատութեան ծառայողները պարտաւոր են իմանալ հայերէն: Ձեռնարկուած քայլերի հետեւանքով գրագրութիւնները, որոնք նախկինում արւում էին ռուսերէն, աստիճանաբար հայանում էին:

Հանրապետութեան իշխանութիւնների, անձամբ Ն.Գ. նախարար Արամի ուշադրութեան կենտրոնում էր գտնուում հարիւր հազարաւոր գաղթականութեան եւ որբերի հոգածութեան հարցը: Նրանց օգնելու համար յատկացուեցին մեծ գումարներ, եւ ընդունուեցին մի շարք օրէնքներ:

Արամի նախանձախնդրութիւնն ու սրտացաւութիւնն ակնյայտ էին առանձնապէս որբերի ճակատագրի հարցում: Քաջ գիտակցելով, որ բաւարար միջոցների բացակայութեան պայմաններում միայն համաժողովրդական մօտեցման դէպքում հնարաւոր կը լինի որբերին փրկել մահուան ճիրաններից՝ Արամը հոկտեմբերի 8-ին դիմեց ժողովրդին: Տեղեկացնելով, որ կառավարութիւնն իր խնամքի տակ է վերցրել 4000 որբերի եւ մտադիր է նրանց թիւը հասցնել 10.000-ի, Արամն աւելացնում էր, որ կառավարութիւնն իր սուղ միջոցներով ի վիճակի չէ օգնել 50.000-ի հասնող բոլոր որբերին: Ժողովրդի աջակցութիւնն ստանալու համար Արամը դիմում էր նրա գիտակցութեանն ու բնազդին՝ հետեւեալ հոգեցունց խօսքերով. **«Թառամում է խոշորագոյն մասը մեր մատաղ սերնդի, մեռնում է ապագան մեր**

հայրենիքի, որի համար ցեղի լաւագոյն մարդիկը պայքարեցին, տառապեցին եւ նահատակուեցին»: Յայտնելով, որ կարիքը մեծ է, միջոցներն ու ժամանակը՝ քիչ, Արամը աւելացնում էր. «Օգնութեան եկէք ձեր կառավարութեանը, փրկեցէք անկումից վաղուայ յոյսը մեր հայրենիքի, խնամոտ ձեռք կարկառեցէք մայթերի ու ճանապարհների վրայ մռմռացող անուժ որբերին, որոնց սովատանջ հայեացքը աղերսում է թէկուզ փշրանքը ձեր սեղանների»: Նա ժողովրդին կոչ էր անում օգնել որբերին եւ յոյս յայտնում, որ փոխադարձ ջանքերով կարելի կը լինի փրկել նրանց[35]:

Հայաստանի ռազմաքաղաքական փխրուն կացութիւնը կառավարութեանը թելադրում էր շարունակել հայոց Կ. ազգային Խորհրդի կողմից Թուրքիայի եւ նրա դաշնակիցների հետ սկսուած բանակցութիւնները: Հայկական պատուիրակութիւնները Բեռլինում Հ. Օհանջանեանի եւ Կոստանդնուպոլսում Ա. Ահարոնեանի գլխաւորութեամբ ծաւալել էին եռանդուն գործունէութիւն:[36] Թուրքերի հետ բանակցութիւններ, թէեւ ոչ մեծ տարողութեամբ, ընթացան նաեւ Երեւանում, որին մասնակցեց նաեւ Արամը: Որպէս պետական գործիչ եւ իրավիճակին քաջատեղեակ անձնաւորութիւն, նա, որքան էլ նրա համար դժուար էր համակերպուել հայ ժողովրդին պարտադրուած թուրքական ծանր պայմաններին, ըմբռնում էր վերջիններիս հետ բանակցելու անհրաժեշտութիւնը: Նրա գլխաւորութեամբ կազմակերպուեց պատշաճ ընդունելութիւն 1918 թ. օգոստոսի 31 ին Երեւան ժամանած թուրք զօրահրամանատար Խալիլին[37]:

Արշ. Ջամալեանի վկայութեամբ, Խալիլի հետ «պաշտօնական խօսակցութիւնը», այսինքն՝ հայ-թուրքական բանակցութիւնն ընթացաւ Արամի բնակարանում[38]: Փորձելով օգտուել Խալիլի հետ վաղեմի ծանօթութիւնից՝ Արամն առաջ քաշեց հանրապետութեան տարածքի ընդարձակման հարցը, սակայն թուրք գործիչն առաջարկեց անընդունելի պայմաններ, այն է՝ Մեղրին փոխանակել Ադրբեջանի իշխանութեան ներքոյ գտնուող Զիվանշիրի եւ Վարանդայի շրջանների հետ: Խալիլ-Արամ անձնական կապի շնորհիւ սովի ճիրաններում գտնուող Հայաստանը Խալիլից ստացաւ 25,000 փութ ցորեն: Բացի այդ, թուրք գործիչը հրահանգեց Բաշ-Գառնիի շրջանի Միլլի ձորի թաթարներին հեռանալ թուրքական տարածք՝ այն հայ գաղթականութեանը զիջելու նպատակով[39]: Թէեւ, ինչպէս սպասելի էր, թաթարները չանսացին Խալիլի ձայնին, որի անկեղծութիւնը յոյժ կասկածելի էր, այնուամենայնիւ, այդքանն էլ բաւական էր, որ հայկական ուժերը նշուած տարածքը մաքրէին այդ թշնամական տարրերից: Իսկ հայկական տարածքներից թաթարների հեռացումը հրամայական անհրաժեշտութիւն էր մի կողմից երկրի անվտանգութիւնն ապահովելու, միւս կողմից՝ անօթեւան հայ տասնեակ հազարաւոր փախստականութեանը տեղաւորելու համար: Այդ ուղու նախանձախնդիրներից էին Արամը, Ռուբէնը եւ ազատագրական շարժման այլ գործիչներ: 1918 թ. ամռան վերջերից արեւմտահայկական ուժերը խմբապետ Մուշեղի եւ ուրիշների գլխաւորութեամբ թշնամուց ազատագրեցին Ճղնի ձորը, Միլիտերէն (Զանգեզուր տանող ճանապարհին), Բաշ-Գառնին եւ այլ տարածքներ: Ազատագրական այդ գործողութիւնների համար անհրաժեշտ զէնք-զինամթերքը, որպիսիք արգելուած էր դուրս տանել Երեւանից, հայկական ուժերը ստացան Արամի արտօնագրով[40]:

1918 թ. սեպտեմբերի 18-ին Արամը Նոր Բայազետի գաւառային կոմիսարին յանձնարարեց կանխել գաւառի Բասարգեչարի շրջանի նկատմամբ Ադրբեջանի իշխանութեան հաստատմանը ձգտող ոմն Չայխորսկու գործողութիւնները եւ թաթարներին յայտարարել, որ նրանք պարտաւոր են կատարել Հ.Հ. կառավարութեան օրինական պահանջները[41]:

Երկիրը թշնամական տարրերից ազատագրելու գործողութիւններին Արամի մասնակցութեան որոշակի օրինակներն այնքան էլ շատ չեն: Սակայն կայ մի վկայութիւն, որը լիովին բացայայտում է նրա դիրքորոշումն այդ հարցում: Հ.Հ. ռազմական նախարար զօր Հ. Հախվերդեանը 1931 թ. նկատել է, որ Արամը **«Հայաստանի թաթարական բնակչութեան նկատմամբ վարում էր նեղ ազգային եւ պետական առումով վնասակար քաղաքականութիւն՝ արտաքսելով կամ, աւելի ճիշտ, ուղղակի քշելով թաթարներին իրենց բնակավայրերից, որոնք ենթադրւում էր բնակեցնել հայ փախստականներով: Այդ քաղաքականութիւնը, իմ խորին համոզմամբ, վարում էր ինքնուրոյն, լռակեաց, հաշուի չնստելով նախարարի խորհրդի կարծիքի հետ, եւ ասելով մի բան, կատարելով այլ, հաւանաբար, գտնելով դա օգտակար հայ ժողովրդի շահերի համար»**[42]: Անշուշտ, քննադատութեան չի դիմանում եւ անընդունելի է զօր. Հախվերդեանի այն գնահատականը, թէ Արամի այդ գործելակերպը պետական առումով վնասակար էր: Ընդհակառակը, պետական շահը պահանջում էր խիստ մօտեցում հայոց պատմական տարածքներում նստած թաթարների հանդէպ, որովհետեւ նրանք տասնամեակներ շարունակ, յատկապէս 1905-1906 թթ. որդեգրել էին ծայրայեղ հակահայկական կեցուածք: Այդ էր պատճառը, որ Արամն իրականացրեց երկիրը նրանցից «մաքրել-սրբելու» քաղաքականութիւն: Որ Արամը վարում էր ոչ թէ նեղ ազգային, այլ ազգային-պետական շահերից բխող գործունէութիւն, հաստատւում է այն հանգամանքով, որ նա, գնահատելով եզդիների եւ նրանց առաջնորդ Ջհանգիր աղայի օրինապահ դիրքը պետութեան հանդէպ, 1918 թ. օգոստոսի 27-ին վերջինիս նշանակեց Հայաստանի տարածքում փախստական եզդիների գործերի վարիչ եւ պաշտպանեց նրանց շահերը բազմաբնոյթ օրինախախտումներից:

Արխիւային փաստաթղթերի վերլուծութիւնից երեւում է, որ Արամը կառավարութեան մէջ ունէր բացառիկ դիրք, եւ իզուր չէ, որ պատմագրութեան մէջ նրան անուանում են Հայաստանի փաստական կառավարիչ: Այսպէս, ելնելով թուրքական կողմի հետ կայացած համաձայնութիւնից՝ 1918 թ. յուլիսի վերջերին Արամը ենթասպայ Խայեցեանին նշանակեց կառավարութեան ներկայացուցիչ Ալեքսանդրապոլում, որը պէտք է կարգաւորէր գաղթա-

կանական եւ այլ հարցերը[43]: Յուլիսի 30-ին նա Երեւանի նահանգային վարչութեան բժշկական բաժանմունքը ժողովրդական առողջապահութեան տնօրինութիւնից հանեց եւ ընդգրկեց Ն.Գ.Ն.-ի ենթակայութեան ներքոյ: Այս քայլերը վկայում են, որ Արամի հեղինակութիւնը եւ լիազորութիւնների շրջանակը շատ աւելի լայն էին, քան Ն.Գ. նախարարինը:

Արամի առանձնակի դերը երեւում է եւ այն բանից, որ երբեմն նրան էին դիմում նաեւ ոչ իրեն վերապահուած հարցերի վերաբերեալ, որոնց նա ընթացք էր տալիս: 1918 թ. նոյեմբերի 25-ին արդարադատութեան նախարար Ս. Յարութիւնեանը հարցնում էր նրա կարծիքն այն մասին, թէ արդեո՞ք ժամանակին եւ նպատակայարմար չէր լուծարել Էջմիածնի Հայ-լուսաւորչական սինոդին կից դատախազի պաշտօնը: Արամի պատասխանն այդ հարցմանը դրական էր[44]: Հիմք ընդունելով Ղարաքիլիսայի ռազմական օկրուգի պետի՝ իրեն ուղղուած հաղորդումը, որ քննչական իշխանութեան չգոյութեան պատճառով տեղում կուտակուել էին մեծ թուով քննչական գործեր, դեկտեմբերի 18-ին Արամն արդարադատութեան նախարարութեան առաջ հարց յարուցեց նշուած տեղամասում փութով նշանակել քննիչ եւ այդ մասին տեղեկացնել իրեն[45]: Արամի հրամանով նոյեմբերի 16-ին կրթութեան նախարարութեան գործը Ն.Գ.Ն.-ի ենթակայութիւնից վերցուեց եւ փոխանցուեց կրթութեան նորանշանակ նախարարին:

Հայրենիքի հանդէպ ունեցած պատասխանատուութիւնը, ժողովրդասիրութիւնը, համեստութիւնը, հետապնդուող խնդիրների նկատմամբ ցուցաբերած նախանձախնդրութիւնն Արամին ապահովում էին բարձր հեղինակութիւն: Ասուածի խօսուն վկայութիւնն է Ղարաքիլիսայի ազատագրումից յետոյ՝ հոկտեմբերի 20-ին, ղարաքիլիսացիների յղած հեռագիրը զօր. Սիլիկեանին եւ Արամին, որում ասւում էր. «Ուրախ ենք, որ հայկական զօրքի եւ երկրի ներքին գործերի կառավարութեան գլուխ կանգնած էք դուք, որ հայկական կեանքի ամենածանր շրջանում չլքեցիք ձեր ժողովրդին եւ ցաւակից եղաք նրան: Հաւատում ենք, որ ձեր աշխատութեամբ եւ եռանդի շնորհիւ կը կազմուի ուժեղ բանակ եւ հաստատուն իշխանութիւն, որը վերջ կը դնի մեր ժողովրդի տանջանքներին»[46]:

Ելնելով ժողովրդի եւ ընդհանուր գործի շահերից՝ Արամը երբեմն անտեսում էր օրէնքն ու գործող կարգը: Այսպէս, ելնելով բազմահազար որբերի պատսպարման, հետեւաբար նրանց անխուսափելի զրկանքներից եւ կործանումից փրկելու նպատակից՝ Արամն արդարացնում էր Երեւանի դպրոցներից մէկը նրանց տրամադրելու մասին Ռուբէնի ապօրինի արարքը եւ դրանով իսկ հաւանութիւն տալիս վերջինիս այն մտքին, թէ «ողջ եւ ապահով երեխաների ուսման հարցը աւելի կարեւոր չէ, քան փողոցներում թափուածների ու քաղցի ճիրաններում գալարուողների կեանքը»: Նա իրաւացիօրէն համարում էր, որ «կան դէպքեր... երբ օրէնքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցաւորներ կը դառնանք, մանաւանդ այնպիսի ծանր ու անբնական ժամանակներում, երբ դեպքերը տեղի են ունենում գահավէժ արագութեամբ եւ ստեղծում դրութիւններ, որոնք օրէնքը չէր կարող նախատեսել»[47]: Մէկ այլ անգամ, տեսնելով որ փող կը տրուէր միայն ներկայացուող պահանջաթերթիկի հիման վրայ, նա Նոր Բայազետի գաւառային կոմիսարին յղեց նրա աշխատակիցների աշխատավարձը՝ զգուշացնելով, որ հետագայում գումարները փոխանցուելու են միայն ըստ կարգի[48]:

Ժամանակակիցները վկայում են, որ Արամի արարքները զերծ էին անձնական շահախնդրութիւնից: Հ.Հ. առաջին կառավարութեան մէջ արդարադատութեան նախարար Գ. Պետրոսեանն Արամի մահուանից մեկ տարի անց նշում էր, որ նրա ձեռնարկները զուրկ էին անձնական միտումներից եւ բխում էին բացառապէս հասարակութեան շահերից[49]:

Զօր. Հախվերդեանը, որի մէջ ակնյայտ է հակակրանքը Արամի հանդէպ, յիշատակուած գրութեան մէջ նշում է, որ նա «անձնապէս ձեւամոլ եւ հարստութեան տենչող մարդ չէր»[50]: Յիրաւի, նա աչքի էր ընկել անկաշառ վարքով, ապրել համեստ կենցաղով, խուսափել մեծամտութիւնից եւ մարդկանց հետ յարաբերութիւններում դրսեւորել համեստութիւն ու փափկանկատութիւն: Ա. Աստուածատրեանի վկայութեամբ, նա մինչեւ իր ընտանիքի Երեւան տեղափոխուելն ապրում էր մի սենեակում, որը զուրկ էր յարմարութիւններից, ունէր «մի անշուք մահճակալ, երկու հասարակ սեղան եւ մի երեք-չորս նոյնպէս հասարակ աթոռ... Մի անկիւնում հին արկղի վրայ յարմարեցուած էր թիթեղեայ վառարան...»: Նա նաեւ աւելացնում է, որ Արամը սնւում էր ինչպէս հասարակ երեւանցին, անգամ պատահում էր, որ ճաշի ժամանակ հաց չէր ունենում[51]: Գործ ունենալով հսկայական գումարների հետ եւ օժտուած լինելով մեծ իշխանութեամբ՝ նա երբեք դրանք չծառայեցրեց իր անձնական հարստացմանը:

Դժբախտաբար, Արամին վիճակուած չէր երկար ապրել, շարունակել ազգօգուտ գործունէութիւնը եւ հայրենիքի կայունութիւնը դնել առաւել ամուր հիմքերի վրայ: 1918 թ. դեկտեմբերին նա վարակուեց երկրում մոլեգնող բծաւոր տիֆով: 1918 թ. դեկտեմբերի 28-ին Արամը, ամենայն հաւանականութեամբ, վերջին անգամ մասնակցեց կառավարութեան նիստին, իսկ դեկտեմբերի 30-ին վերջին անգամ իր ստորագրութիւնը դրեց փաստաթղթի ներքոյ: 1919 թ. յունուարի 3-ին Հ.Հ. վարչապետ Քաջազնունու կարգադրութեամբ, Արամի հիւանդութեան պատճառով, Ն.Գ. նախարարի պաշտօնը ժամանակաւորապէս յանձնուեց խնամատարութեան նախարար Ալ. Խատիսեանին[52]:

Արամը վախճանուեց 1919 թ. յունուարի 29-ին, ցերեկուայ ժամը 14:30-ին: Նրա մահը ծանր հարուած էր դեռեւս խանձարուրում գտնուող հայոց պետականութեան եւ բազմաչարչար հայ ժողովրդի համար: Արամի մահը ցնցեց հայ ժողովրդին, պետական, հասարակական ու կուսակցական գործիչներին: Հ.Հ. կառավարութիւնը, Հ.Յ.Դ. Հայաստանի եւ Արեւելեան Բիւրօները, Խորհրդարանի եւ քաղաքային դումայի ֆրակցիաները, արեւմտահայ եւ տեղական կոմիտէները եւ այլ մարմիններ անհուն վշտով ազդարարեցին Արամի մահը: Երկրի տարբեր կողմից ուղարկուեցին բազմաթիւ ցաւակցական հեռագրեր, որոնք նաեւ ձօն էին Արամի յիշատակին:

Արամի գործունէութիւնը բարձր են գնահատել շատ ու շատ ժամա-

նակակիցներ: Նրանցից էր նաեւ Ռուբէն Տէր-Մինասեանը: Վերլուծելով 1918-1920 թթ. Հ.Հ. Ն.Գ. նախարարութեան գործունէութիւնը՝ նա նշել է. **«Արամի ժամանակ, ներքին գործոց նախարարութիւն ասելով պէտք էր հասկանալ պետութեան ֆիզիքական ուժը եւ նրա կառավարական վարչամեքենան, մարմնացումը պետական եւ կուսակցական բարոյական հասկացողութեանց, օրէնքների գործադրման եւ պարտադրման միակ խողովակն ու միջոցը, կեդրոնը՝ որտեղ ամփոփւում էին Հայաստանը կազմակերպելու բոլոր ձգտումներն ու ճիգերը: Արամի ատեն, ներքին գործոց նախարարութիւնը կը ներկայացնէր ամէն ինչ...»**[53]: Ցաւօք, նրա մահից յետոյ Ն.Գ. նախարարութիւնը կորցրեց նախկին ուժը, որը, անշուշտ, մեծապէս նպաստեց երկրի ներքին կայունութեան խախտմանը:

Այսպիսով՝ Արամը, առաջնորդուելով ազգային-պետական մտածողութեամբ, դրսեւորելով կազակերպչական տաղանդ, բանիմացութիւն, նախաձեռնողականութիւն եւ հետեւողականութիւն, նպատակային գործունէութիւն ծաւալեց երկրում իրաւակարգի հաստատման, վարչական մարմինների, յատկապէս Ն.Գ. նախարարութեան ամրապնդման եւ այլ ուղղութիւններում՝ մեծապէս նպաստելով նորաստեղծ պետականութեան ամրապնդմանը:

Արմեն Ասրյան
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ծանոթագրություններ

1. Հ.Ա.Ա., ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 2: Արամը Ն.Գ. նախարարի պաշտօնը զբաղեցրեց նաեւ 1918 թ. նոյեմբերի 4-ին ձեւաւորուած Հ.Հ. երկրորդ կոալիցիոն կառավարութեան մէջ, տես՝ Հ.Ա.Ա., ֆ. 201, ց. 2, գ. 1, թ. 151; ֆ. 206, ց. 1, գ. 3, թ. 1:
2. «Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան. 1890-1950», Պատրաստեց Ս. Վրացեան, Բոստոն, 1950, էջ 467:
3. Հ.Ա.Ա., ֆ. 201, ց. 2, գ. 10, թ. 2:
4. Հ.Ա.Ա., ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 53:
5. Նոյն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 2:
6. «Հորիզոն», 1918 սեպտեմբերի 11, թիւ 182:
7. «Ձանգ» 1918 օգոստոսի 28, թիւ 49:
8. Հ.Ա.Ա., ֆ. 199, ց. 1, գ. 4, թ. 1: «Հայաստանի Հանրապետութեան պառլամենտի օրէնքները (1918-1920 թթ.)», Երեւան, 1998, էջ 2-3:
9. Հ.Ա.Ա., ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 52:
10. Հ.Ա.Ա., ֆ. 201, ց. 1, գ. 16, թ. 121:
11. Նոյն տեղում, գ. 15, թ. 121:
12. Նոյն տեղում, թ. 78:
13. Նոյն տեղում, ց. 2, գ. 1, թ. 122:
14. Նոյն տեղում, ց. 1, գ. 18, թ. 39:
15. Հ.Ա.Ա., ֆ. 201, ց. 1, գ. 16, թ. 47:
16. Նոյն տեղում, գ. 18, թ. 92:
17. Նոյն տեղում, գ. 15, թ. 44:
18. Նոյն տեղում, գ. 15, թ. 158-159:
19. Նոյն տեղում, գ. 1, թ. 79, 80, 81, 82:
20. Նոյն տեղում, ց. 2, գ. 47, թ. 120:
21. Նոյն տեղում, թ. 214:
22. Հ.Ա.Ա., ֆ. 2001, ց. 2, գ. 3, թ. 65-67:
23. Նոյն տեղում, թ. 123-124:
24. «Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան, 1991, թիւ 3, էջ 43: Վրացեան Ս., «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 203:
25. Հ.Ա.Ա., ֆ. 201, ց. 2, գ. 47, թ. 69, 124, 131, 147; գ. 60, թ. 1:
26. Նոյն տեղում, ց. 1, գ. 15, թ. 203:
27. Նոյն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 26:
28. Հ.Ա.Ա., ֆ. 200, ց. 1, գ. 115, թ. 5, 6: «Ձանգ», 1918 օգոստոսի 25, թիւ 48:
29. «Ձանգ», 1918 օգոստոսի 10, թիւ 44:
30. Նոյն տեղում, հոկտեմբերի 12, թիւ 61:
31. Հ.Ա.Ա., ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 39-41:
32. «Ձանգ», 1918 սեպտեմբերի 10, թիւ 52:
33. «Ձանգ», 1918 նոյեմբերի 21, թիւ 72: «Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան, 1991, թիւ 3, էջ 50:
34. .Հ.Ա.Ա., ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 25:
35. Նոյն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 38 (I մաս), թ. 53-54:
36. Աւետիսեան Հ., «Հայկական հարցը 1918 թուականին», Երեւան, 1997, էջ 258-281:
37. Հ.Ա.Ա., ֆ. 3701, ց. 3, գ. 19, թ. 55: Նաւասարդեան Վ., «Արամի կեանքից», «Հայրենիք», 1925, նոյեմբեր, թիւ 1, էջ 75-79:
38. Հ.Ա.Ա., ֆ. 370, ց. 3, գ. 19, թ. 56:
39. Ռուբէն, հ. 7, էջ 145-146:
40. Նոյն տեղում, էջ 111:
41. Հ.Ա.Ա., ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 102:
42. Հ.Ա.Ա., ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 44:
43. Նոյն տեղում, ֆ. 201, ց. 2, գ. 1, թ. 42:
44. Նոյն տեղում, թ. 146-147:
45. Նոյն տեղում, թ. 174:
46. «Ձանգ», 1918 հոկտեմբերի 27, թիւ 65:
47. Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Երեւան, 1990, հ. 7, 139-140:
48. Հ.Ա.Ա., ֆ. 201, ց. 2, գ. 47, թ. 6:
49. «Արամը», Մահուան հիսնամեակի առթիւ, Երեւան, 1991, էջ 124:
50. Հ.Ա.Ա., ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 44:
51. Աստուածատրեան Ա., «Արամ», «Հայրենիք», 1964, ապրիլ, թիւ 4, էջ 75 : «Արամը», էջ 97-98:
52. Հ.Ա.Ա., ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 50:
53. Ռուբէն, հ. 7, էջ 312-313:

Հովհաննես Քաջազնունու և Արամ Մանուկյանի հանդիպումը Խալիլ փաշայի հետ Երևանում. 1918-ի օգոստոս

1918թ. հունիսին Հայաստանի Հանրապետությունը ծնունդ առավ 12 հազար քառակուսի կիլոմետր տարածքով: Չնայած ներքին ընդվզմանն ու զայրույթին՝ 1918թ. հունիս-նոյեմբեր ամիսներին կառավարությունը տարավ այդ պարտադրանք-հարկադրանքը: Շատերը հայհոյում ու դավաճանական էին համարում թուրքերի հետ կնքած Բաթումի պայմանագիրը, բայց հակադրվելով հասարակական կարծիքին՝ առաջին վարչապետ Քաջազնունին համոզված էր, որ Հայաստանը պետք է կատարի այդ պայմանագրի դրույթները և միջպետական հարաբերություններ պահպանի Օսմանյան կառավարության հետ:

Օգոստոսի 1-ին Երևանի քաղաքային ակումբի դահլիճում բացվեց նորաստեղծ հանրապետության օրենսդիր մարմնի՝ Հայաստանի Խորհրդի անդրանիկ նիստը, որին ներկա էին Գերմանիայի, Ավստրիա-Հունգարիայի, Օսմանյան Կայսրության ներկայացուցիչները, պարսից հյուպատոսը և ռուս ու մահմեդական ազգային խորհուրդների ներկայացուցիչները: Խորին լռության մեջ, ինչպես գրում է Վրացյանը, բեմ ելավ Քաջազնունին և արտասանեց բացման ճառը, որը թարգմանվեց ռուսերեն ու թուրքերեն:

Հայաստանի Խորհրդի երկրորդ նիստում, օգոստոսի 3-ին, Քաջազնունին կարդաց կառավարության հայտարարությունը. **«Ամրացնել օսմանյան կառավարության հետ հաշտությունը և բարիդրացիական հարաբերություններ հաստատել նրա հետ: Խստիվ կատարել այն բոլոր պարտականությունները, որ մենք հանձն ենք առել Օսմանյան կայսրության հանդեպ ու հետևել, որ օսմանյան կառավարությունը իր կողմից անի նույնը մեր վերաբերմամբ: Մասնավորապես, լուծել օսմանյան զորքերի՝ մեր երկրից դուրս բերելու հարցը և գաղթականների վերադարձը»**:

1919թ. հունվարին Փարիզում սպասվող Խաղաղության վեհաժողովի նախօրեին Քաջազնունին գոհանում էր համեստ սահմաններով՝ համաձայնելով ծովային ելք էլ չունենալ: Ժողովրդականները պնդում էին ծովից ծով Հայաստանի գաղափարի վրա՝ Տրապիզոնի ու Ալեքսանդրետի ելքերով: Դաշնակցականների մեջ էլ քիչ չէին ծովից ծով Հայաստանի կողմնակիցները, բայց մեծ մասը կանգնած էր միայն Սև ծով ելք ունենալու տեսակետի վրա:

Իշխող ՀՅԴ կուսակցության շարքերում կային գործիչներ, ովքեր ներքուստ համոզված էին, որ թուրքերը կարող են խորտակել Հայաստանի անկախությունը: Արտաշես Բաբալյանի խոսքերով՝ թուրքերի գլխավոր ուժերը ուղղված էին Բաքվի դեմ և այդ էր մասամբ պատճառը, որ փոքրիկ ու թույլ Հայաստանը հանգիստ մնաց մինչև 1918թ. հոկտեմբերի 30-ին կնքված և Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունն ազդարարող, հայերի համար փրկարար զինադադարը: **Այդ ամիսներին «գլխավոր դերը ընկած էր Արամ Մանուկյանի վրա: Նա էր վարում ներքին գործերը, խնամատարության և գյուղատնտեսության բաժինները: Նրան էր վիճակված նաև Օսմանյան կայսրության ներկայացուցչի՝ Մեհմեդ Ալի փաշայի հետ հարաբերվելը: Բաքվի անկումից հետո, սեպտեմբերին, թուրքերի ձեռքերը ազատվեցին, և նրանք կարող էին խեղդել հանրապետությունը և իսպառ վերջ տալ հայ ժողովրդի գոյությանը, սակայն այդ չարին՝ մտահոգված լինելով տեղացող հարվածներից Սիրիայում ու Պաղեստինում: Համենայն դեպս, թուրքական կառավարությունը կարևորություն չտվեց Հայաստանին, գուցե և կամենում էր նրա անկախ գոյությունը պահպանել»**:

ԽԱԼԻԼ (ԿՈՒՏ) ՓԱՇԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Նորանկախ Հայաստանի ղեկավարությունը ի սկզբանե փորձում էր ընդարձակել հանրապետության



Հովհաննես Քաջազնունի

Արամ Մանուկյան

Խալիլ փաշա

սահմանները: Քանի դեռ չէր ավարտվել Առաջին աշխարհամարտը, հայ ղեկավարները այդ նպատակով բանակցում էին հենց թուրքերի հետ, քանի որ փաստացի նրանք էին իշխում Ադրբեջանում և Անդրկովկասի նորանկախ պետությունների միջև վիճելի տարածքներում: Գերմանացիները տեղավորվել էին Վրաստանում, իսկ Հայաստանի նեղ սահմանների քթի տակ կանգնած էին թուրքական զորամասերը:

Հայկական պատվիրակությունը 1918թ. հունիսի կեսերին Հայաստանի սահմաններն ընդարձակելու նպատակով մեկնել էր Պոլիս՝ բանակցելու Օսմանյան կառավարության՝ Երիտթուրքերի կուսակցության առաջնորդների հետ, իսկ Հայաստանում Արամ Մանուկյանը նույն նպատակով օգտագործում էր թուրք զինվորականների հետ ունեցած իր հին՝ մինչև 1915թ. Օսմանյան կայսրությունում իր գործունեության տարիներից եկող կապերը:

ՀՅԴ առաջնորդներից Ռուբենը (Տեր-Մինասյան) գրում է. «Արամը, իր նախկին ընկեր՝ հաղթական Խալիլ փաշայից, ով եկել էր Երևան, պահանջում էր սահմանների ընդարձակում և ապրելու հնարարավորություն: Խալիլ փաշան սկզբունքորեն չէր մերժում Հայաստանի հողերի ընդարձակման պահանջը: Նա կանխավ առաջարկում էր, որ հայերը դատարկեն Զանգեզուրի Մեղրի գավառակը, որպեսզի իրենք անմիջապես կապվեն Բաքվի հետ: Դրա փոխարեն պատրաստ էր Ադրբեջանի հաշվին ընդարձակել Հայաստանի սահմանները դեպի Ջևանշիր ու Վարանդա: Նա առաջարկում էր զինվորական դաշինք կնքել դաշնակիցների դեմ: Այս խոսակցությունները ոչինչ չտվեցին: Միակ օգուտը եղավ այն, որ Արամի անձնական կապի շնորհիվ Խալիլ փաշան Հայաստանին շնորհեց 25 հազար փութ ցորեն գաղթականների համար և հրահանգ տվեց Բաշ-Գառնիի շրջանի Միլլի ձորի թաթարներին հեռանալ՝ հայ գաղթականների համար տեղ բացելու նպատակով: Եկած ցորենը բաժանվեց սովահարներին, իսկ Միլլի ձորը դատարկվեց թաթարներից»:

Խալիլ փաշան՝ Կովկասյան ճակատի թուրքական զորքերի գերագույն հրամանատարը, Ալեքսանդրապոլից Երևան գալու և Արամ Մանուկյանի հետ հանդիպելու ցանկություն էր հայտնել հուլիսի վերջերին: Նրան ընկերանալու և միաժամանակ Հայաստան առաջին այցը տալու համար որոշեցին Թիֆլիսից Երևան մեկնել նաև Գերմանիայի ու Ավստրիա-Հունգարիայի ներկայացուցիչները՝ Ֆրիդրիխ Կրես ֆոն Կրեսենշտեյնը և Ֆանկելշտեյնը: Թիֆլիսի «Հորիզոն» թերթի խմբագրապետ Վահան Նավասարդյանը, ով եղել է նույն գնացքում, գրում է. «Այս երեքին ուղեկցելու համար Թիֆլիսից Երևան պիտի գնար նաև Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանում՝ Արշակ Ջամալյանը: Գնացքը կանգ պիտի առներ Ալեքսանդրապոլում, որտեղ գտնվում էր Խալիլը, և մեկ օր մնալուց հետո հաղթական երկրների այս երեք ներկայացուցիչները պիտի մեկնեին Երևան»:

Ալեքսանդրապոլում գնացքը կանգ է առնում: Ի պատիվ Գերմանիայի ու Ավստրիա-Հունգարիայի ներկայացուցիչների՝ Ալեքսանդրապոլում ճաշ է տալիս Խալիլ փաշան: Նրանց միանում է նաև Ջամալյանը:

Նավասարդյանը շարունակում է. «Այդ օրը գիշերեցինք կայարանում՝ գնացքի մեջ, և հետևյալ առավոտը գնացքը հաղթական Խալիլին առնելով՝ շարժվեց դեպի Երևան: Խալիլի այցի մասին Երևանում գիտեին: Արամը գիտեր և այն, որ գերմանական ներկայացուցչությունից անպաշտոն ձևով փափագ էր հայտնվել, որ լավ կլինի, եթե Արամը, հանուն իր ժողովրդի փրկության, ինքն անձամբ կայարան գա Խալիլին դիմավորելու: Գերմանիայի ներկայացուցիչը գտնում էր, որ թուրքական գազանությունները եթե կարելի է մեղմել ու կանխել, ապա հնարավոր է անել միմիայն

հաղթական զորավարի գութը հայցելով՝ նրան ապավինելով և նրա սիրտը սիրաշահելով»:

Վերջապես գնացքը հասնում է Ուլուխանլու (Մասիս), որտեղից սկսվում էր Հայաստանի Հանրապետությունը: Մի դաժան զուգադիպությամբ նույն ժամին Ուլուխանլու է հասնում և այն գնացքը, որ Շիրակի դաշտից 1918թ. գարնանը օսմանյան զորքերի կողմից դեպի Կարին (Էրզրում) քշված հայ երիտասարդների անդրանիկ քարավանն էր բերում Կարսից Երևան: «Տարագրվածների թիվը մոտ 13 հազար մի քանի հարյուր էր, կոտորվել էին ամենքը և «կենդանի» էին մնացել միայն մի քանի հարյուր հոգի, որոնց ահա վերադարձնում էին Հայաստան՝ «հավատարիմ» մնալով այդ ժամանակ Պոլիս գտնվող մեր պատվիրակներին տրված խոստման: Այդ գերիները՝ կենդանի դիակների մի սոսկալի բազմություն, մերկ ու բոկոտն, այլանդակված ու փքված մարմիններով և սարսափահար աչքերով, փռված էին գետնին»:

Քսան րոպեից գնացքը հասնում է Երևան: Հայկական զինվորական երաժշտախումբը սկսում է նվագել: Կայարանի մայթի վրա, քիչ ներս քաշված, կանգնած էր զորավար Սիլիկյանը՝ իր հետևում ունենալով շքախումբն ու պատվո պահակը: Դեպի ձախ կանգնած էր քաղաքի պարետը՝ դերասան Արշավիր Շահխաթունին: Այդ ամբողջ խմբից բոլորովին առանձնացված ու առաջ եկած, շքախմբի ճիշտ կենտրոնում, փառահեղ կեցվածքով ու սև հագուստի մեջ, թուխ ակնոցները աչքերին, թիկնեղ մարմնի վրա գլուխը քիչ դեպի վեր թեքած, կանգնած էր Արամը:

«Ինչպե՞ս պիտի հանդիպեն այս երկու ոխերիմ ախոյանները, որոնցից մեկը, իր հաղթ կամքին ու կուռ հավատքին ապավինած, ոչինչ չխնայեց հայության երազը կերտելու, իսկ մյուսը ամեն ինչ արեց՝ այդ երազը խորտակելու համար: Եվ ահա, երբ գնացքը կանգ առավ, Արամը իր հայացքը նետեց դեպի աջ ու ձախ և գնացքի առաջ ձգված ծայրի վագոնում նշմարեց Խալիլի դեմքը: Խալիլը, նկատելով Արամին, դյուրաշարժ երիտասարդի նման անմիջապես ցատկեց վագոնից, ընդառաջ եկավ նրան և երկուսն էլ ժպտադեմ, ջերմորեն ու բարեկամաբար իրար ձեռք թոթվեցին և համբուրվեցին»,- շարունակում է Նավասարդյանը:

Կայարանից մինչև քաղաքի կենտրոն ճանապարհը Նավասարդյանը նկարագրում է այսպես. «Մեր մի քանի կտոր իրերը դրինք եզներ լծած սայլի վրա ու ոտքով մեկնեցինք քաղաք: Մարդկայնորեն անհնար էր այս սարսափի երկրում պահել հավասարակշռությունն ու չցնցվել: Հայաստանն ապրում էր ահավոր սովի օրերը, երբ մարդիկ սկսել էին արդեն դիակներ հոշոտել: Պատերի տակ ցցված էին անկենդան ստվերները սովահարների: Նրանք մարում էին առանց մուրալու: Մարում էին անտրտունջ, անձայն ու անաղմուկ»:

Կայարանում Խալիլին և մյուս հյուրերին ցույց տրված ընդունելությունից հետո երեկոյան ճաշկերույթ է տալիս քաղաքագլուխը: Հաջորդ օրը նրանք այցելում են վարչապետին ու Հայաստանի խորհրդի նախագահին, ապա մեկնում Էջմիածին՝ տեսնվելու կաթողիկոսի հետ: Հյուրերին Մայր Աթոռ են ուղեկցում Արամը և պարետ Շահխաթունին:

Շահխաթունին գրում է. «Բարձրացանք Վեհափառի մոտ: Փառահեղ դեմքով բազկաթոռի մեջ նստած էր Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Հինգերորդը: Նախապես մոտեցավ և ներկայացավ գերմանացի զորավարը: Նրան հետևեց Խալիլը: Ես նայում էի կաթողիկոսի դեմքին և զարմանում, թե ինչպես նրա աչքի բարձր հայացքը փոխվեց ու արտահայտեց դառնություն ու բարկություն»:

Վեհափառը հյուրերին առաջարկում է մնալ ճաշի, իսկ մինչև ճաշը, եթե նրանք ցանկանում են, կարող են այցելել Էջմիածնի Մայր Տաճարը և թանգարանը: Երբ այցելեցին լճի ափը, չորս կողմը՝ ծառերի տակ սարսափելի տեսքով ահագին թվով հայ գաղթականներ էին:

Շահխաթունին շարունակում է. «Նրանք ոչ մի ուշադրություն չէին դարձնում մեզ վրա: Վերադարձանք վեհարան»: Ճաշասենյակի մեջ սեղանապետը հրավիրեց յուրաքանչյուրին գրավել իր տեղը: Կաթողիկոսը նստած էր ճակատին: Նրա աջ թևի վրա տեղ գրավեց գերմանացի զորավարը, նրա մոտ ավստրիական զորքերի ներկայացուցիչը, ձախ կողմը Խալիլը և նրա կողքին՝ Արամը: Ճաշը լավ անցավ, և Խալիլն ու գերման զորավարը հիացած էին ափսեների ու սեղանի սպասքեղենի վրա: Դրանց վրա դրոշմված էր Սուրբ Էջմիածնի նկարը և գրված. «Նորին կայսերական մեծություն Նիկոլայ Բ-ից ընծա Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին»: Կաթողիկոսը հարցնում է Խալիլին. «Ինչպե՞ս Ձեզ դուր եկավ Էջմիածնի շրջակայքը, մանավանդ լճի տեսարանը: Տեսա՞ք անթիվ հայ գաղթականներին, որոնք ձեր քաղաքացիներն են եղել: Շնորհակալ եմ, որ գոնե այսքանն էլ մնացել է»: Խալիլ փաշան շատ հուզված էր: Որպեսզի փոխեր խոսակցությունը, ասաց. «Ձեր կենացն եմ խմում, Վեհափառ Տեր, հրաշալի գինի է»:

Նույն օրը օտարազգի բանագնացները վերադառնում են Էջմիածնից, իսկ երեկոյան Հայաստանի խորհրդի նախագահի ու վարչապետի հետ երկար խոսակցություն ունենում հայկական գործերի մասին: Կառավարությունը ճաշկերույթ է տալիս ի պատիվ հյուրերի, որին ներկա էին նաև Երևանում գտնվող այլ թուրք սպաներ: Գիշերը Կրեսենշտեյնը մեկնում է Թիֆլիս, իսկ Ֆանկելշտեյնը մնում է՝ ներկա գտնվելու Հայաստանի Խորհրդի բացմանը: Առաջին դիվանագիտական ընդունելությունն էր Հայաստանի հողի վրա:

Շահխաթունին գրում է, որ առաջին այցից որոշ ժամանակ անց՝ 1918-ի հոկտեմբերին, Խալիլ փաշան գաղտնի հեռագիր է ուղարկում Արամ Մանուկյանին և նրանից գաղտնի հանդիպում խնդրում: Խալիլը ինքնաշարժով հասնում է Երևանի կայարանից մոտ կես ժամ հեռու մի ամայի վայր: Հանդիպմանը երկուսից բացի ներկա էր նաև Շահխաթունին: Խալիլը համբուրում է Արամին և հուզված ու նյարդայնացած խնդրում, որպեսզի մի

քանի հայեր նրան օգնեն՝ Ալեքսանդրապոլից տեղափոխվելու Կարին (Էրզրում): Խալիլը պատմում է, որ թուրքական ու գերմանական բանակները պարտվում են և հաշտություն են խնդրելու. **«Մենք որոշել ենք այս ճակատից բոլորովին հեռանալ և Էրզրում քաշվել: Թերևս Էրզրում ևս ստիպված լինենք թողնել ձեզ: Այս գաղտնիքները ձեզ տալիս եմ իբրև հին բարեկամ: Մենք պետք է փախչենք: Վախենում եմ, որ մեր փախուստի ժամանակ հայերը մեր կռնակից մեզ սպանեն»**: «Հայերը փախչող զինվորին կռնակից չեն սպանի»,- պատասխանում է Արամը: Նա խոստանում է օգնել Խալիլի անվտանգ Կարին անցնելը, եթե թուրք զորավարը Կարսում պահվող փամփուշտները փոխանցի հայերին: Երբ Խալիլի միջնորդությամբ հայերը ստանում են պահանջված ռազմամթերքը, Արամը իր չորս զինվորներին կարգադրում է Խալիլին անվտանգ հասցնել Կարին:

Նոյեմբերի կեսերին Հայաստանի զինվորական նախարարը Երևանի թուրքական ներկայացուցիչ Մեհմեդ Ալի փաշայից ստանում է հետևյալ գրությունը. **«Օսմանյան կայսրության գլխավոր սպայակույտի պետը հրամայում է ինձ հաղորդել, որ Բրեստ-Լիտովսկի սահմաններից դուրս մնացող և թուրք զորքերի կողմից գրավված հողամասերը պետք է դատարկվեն վեց շաբաթվա ընթացքում՝ հաշվելով հոկտեմբերի 24-ից»**: Հայաստանի կառավարությունը Դիլիջան-Լոռիի զորամասի պետ Դրոյին կարգադրում է բռնել հեռացող թուրք զորքերի տեղը:

Հետզհետե սկսվում է թուրքերի նահանջը, որի գլխավոր պատճառը մյուս ճակատներում օսմանյան բանակների պարտությունն էր: Նոյեմբերի 18-ին հայկական զորքերը մտնում են Ղարաքիլիսա: Վրացյանը գրում է. **«Գավառը ավերված ու կողոպտված էր, թուրքերն ամեն ինչ տարել էին՝ տավարը, երկրագործական գործիքները, սայլերը, կահ կարասին: Ղարաքիլիսայի ու Ղշլաղի միջև նետված էին 400 դիակներ, Ղշլաղի մոտ՝ Մեծ կիրճում մարդիկ հաշվել էին 500 դիակ: Հազարավոր դիակներ, գանգեր ու մարդկային ոսկորներ թափված էին Ալթուն Թախտում ու Վանանց ձորում: Երկաթուղին քարուքանդ էր արված: Նոյեմբերի 22-ից թուրքերն սկսեցին դատարկել Ալեքսանդրապոլը: Թուրքերը տարել էին ամեն ինչ, որ կարելի էր շարժել: Քաղաքն ու շրջակա գյուղերը կողոպտված էին մինչև վերջին ասեղը: Անհատակ թշվառություն էր տիրում ամեն կողմ»**:

Նոյեմբերին թուրքական զորքերը սկսեցին նահանջել Երևանի նահանգից, դեկտեմբերի սկզբին նրանք թողեցին Երևան-Ալեքսանդրապոլ երկաթուղին և Ալեքսանդրապոլի բերդը: Այսպիսով, Օսմանյան կայսրությունը հանձնեց Երևանի նահանգի շուրջ 15 հազար քառակուսի կիլոմետր տարածք: Հայ զինվորների առաջխաղացմանը զուգընթաց պարզ դարձավ 19-րդ դարում Վիկտոր Հյուգոյի բանաձևած «այստեղով թուրքն է անցել» որակման դառը իմաստը: Տուժած հայերի խոսքերը անթիվ-անհամար էջեր լցրեցին, բայց բառերը, որքան էլ իմաստալի, չէին կարող հաղորդել սարսափի ու ավերածության չափերը Հայաստանի Հանրապետության վերադարձված հողում:

Հատված «Հայերը և թուրքերը» գրքից



Երևան, 1920 թ.

ՄԱՐԴ, ՀՈՒՇԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ էր կատարվում Արամ Մանուկյանի հուղարկավորության ժամանակ Երևանում

Թերթելով պատմության էջերը, հասկանալով անցյալի մեր բնավորությունն ու դրա ներկայի դրսևորումները՝ հասկանալի է դառնում, որ հայ ժողովուրդը քիչ անգամներ է իր առաջնորդների հետևից սգացել: Դա միգուցե պայմանավորված է մեր ժողովրդի վերաբերմունքով: Գուցե դա կախված է նաև նրանից, որ մեզ քիչ անգամներ է բախտ վիճակվել ունենալ լավ առաջնորդ: Սակայն այստեղ էլ առաջնորդի, պետական գործչի լավի ու վատի ընկալման հարց կա:

Մյուս կողմից՝ պետք է փաստել, որ դառն ու դժվար ժամանակներում, երբ մեզ փորձում էին խեղդամահ անելով՝ մի կողմ նետել պատմության ընթացքից, այդ ժամանակ կարողանում էինք համախմբվել մեր լավ կամ վատ առաջնորդի շուրջ ու պայքարել: Պայքարից հետո՝ մեծարել նրան, ու սգալ նրա մահը: Այստեղ ճիշտ պահն է հիշելու Աղասի Խանջյանի հուղարկավորությունը, որի ժամանակ խորհրդային իշխանություններն ամեն ինչ արեցին, որպեսզի լռեցնեն ժողովրդին, սակայն ջրով և մտրակներով ծեծված ժողովուրդը շտապում էր վերջին հրաժեշտը տալու Աղասի Խանջյանին:

Արամ Մանուկյանը հուղարկավորվել է այժմյան Կոմիտասի անվան պանթեոնի տեղում գտնված գերեզմանատանը: Խորհրդային տարիներին նրա աճյունը տեղափոխվել է Կոզեռնի գերեզմանատուն: Այժմ մեծ հայրենասերը հանգչում է Երևանի Քաղաքային պանթեոնում:

Շտապում էին, քանի որ Խանջյանին սիրում էին, իսկ այդ սերը միակողմանի չէր: 20-րդ դարասկզբին երևի բախտավոր էինք, քանի որ Առաջին Հանրապետությունից սկսած՝ մեզ բախտ վիճակվեց շփվելու, տեսնելու ու զգալու պետությունը ղեկավարող մարդկանց մեծությունն ու միտքը: Մի կողմ դնենք այդ մարդկանց կատարած վատ ու անհասկանալի գործերն ու խոսենք ուղիղ, որ 1918-19 թվականներին, երբ մենք գտնվում էինք շատ ծանր վիճակում, այդ մարդիկ կարողացան ամեն ինչ անել, ծեծել գերտերությունների դռներն ու մեր ժողովրդին կերակրել, պայքարել Երևանի փողոցներում մնացած որբ երեխաների համար:

Եվ այդ աշխատանքն ու նվիրումը չէր կարող չգնահատվել: Ու պատմության խորքից եկած այն միտքը, որ ժամանակն ու ժողովուրդն են սահմանում հերոսների գոյությունը, այդ շրջանում դարձավ իրական: Երևի թե սիմվոլիկ էր, որ Առաջին Հանրապետության հիմնադիրներից Արամ Մանուկյանը մահացավ բծավոր տիֆից: Մահացավ իր իսկ ժողովրդին սպանող հիվանդությունից:

1919 թվականի հունվարի 29-ին մահացավ Արամ Մանուկյանը: Արամի մահը ցնցեց ամբողջ Երևանը, Հայաստանն ու սփյուռքը: Նրա հուղարկավորությանն ամբողջ քաղաքն էր ոտքի կանգնել: Բոլորն էին ցանկանում վերջին հրաժեշտը տալ մեծ գործչին: Արամի հուղարկավորության մասին բացառիկ տեղեկություններ կան թաքնված 1919-ականների մամուլում: «Զանգ» թերթում կա պահպանված մի բացառիկ հոդված, որում ներկայացվում է Արամի հուղարկավորության կարգը, մարդկանց հոսքն ու քաղաքում տիրող ողբերգությունը:

«Փետրվարի 1-ին Երևանում փակված էին բոլոր պետական հիմնարկություններն ու պաշտոնական տները, որովհետև այդ օրը հայ ժողովրդի մեծ զավակներից մեկի՝ ներքին գործոց մինիստր Արամ Մանուկյանի աճյունը պետք է հանձնվեր հողին: Պատարագն սկսելուց դեռ առաջ

Պողոս-Պետրոս եկեղեցու դիմաց, Աստաֆյան փողոցի երկայնքով, շղթա էր կազմել միլիցիոներների խումբը, բազմության առջևում կանգնել էր ձիավոր զորքը, մեջտեղում՝ ծաղկե պսակներով զարդարուն սև դիատար օթոմոբիլը, որի վրա ծածանվում էր Դաշնակցության սևազարդ դրոշը, իսկ օթոմոբիլի շուրջը տեղավորված էր հետիոտն զորքը, վերջում թնդանոթաձիգների խումբն իրենց թնդանոթներով: Խուռն հասարակությունը կանգնած էր Աստաֆյանի երկարությամբ, լեփ-լեցուն էր եկեղեցու թե գավիթը, և թե ներսը:

Բազմահազար ժողովրդի ներկայությունը թաղման սգերթին՝ վկան էր Արամի մեծ ժողովրդականությանը: Զանգակների տխուր ղողանջը սգավոր բազմությանը հայտնեց դագաղի եկեղեցուց դուրս բերելու և զինվորական նվագախմբի մահերգը շարժեց բազմությանը դեպի առաջ: Սգերթի առաջից գնում էր ձիավոր զորքը, դագաղի երկու կողմից շղթա էր կազմել միլիցիոներների խումբը, դագաղի առջևից գնում էին աշակերտներն ու որբերի խմբերը, իրենց դասատուների առաջնորդությամբ, ապա բազմաթիվ դրոշակներ էին տարվում, որոնց մեջ աչքի էր ընկնում Հ. Յ. Դաշնակցության և վանեցի կանանց ասեղնագործ դրոշը:

Դագաղին հետևում էին պաշտոնակիցների և հարգողների խմբերը, ապա հետիոտն զորքը, ժողովրդական բազմությունը, իսկ վերջից թնդանոթները: Խուռն բազմությունը բռնում էր դագաղն իր ուսերի վրա կրելու համար, և կարգապահները հազիվ հնարավորություն ունեին սգերթի կարգը պահելու և իրոք, չէ՞ որ Արամն իր ամբողջ կյանքում կրել էր իր կարող ուսերի վրա հայ ժողովրդի ճակատագրական դառնությունների ամբողջ ծանրությունը: Թափորը կանգ առավ Աստաֆյան փողոցում Դաշնակցության տան առաջ, որի պատշգամբից հարգանքի խոսքեր ասացին Նիկոլ Աղբալյանը, Յ.Մխիթարյանը, Դավիթ Մել-Դադայանը և Հայկ Սարգսյանը:

Ապա թափորը Բազարնայա, Արխիտեկտորսկայա փողոցներով հասավ Մոլոկանսկայա փողոցը և բռնեց Միլեր հանգստարանի ճամփան: Բազմահազար ժողովուրդը չնայելով ցրտին, շարունակում էր ուղեկցել հանգուցյալի դագաղը՝ ցավը մեծ էր ու ընդհանրական: Հանգստարանում ծիսակատարությունը վերջանալուց առաջ վերջին մնաս բարևի խոսքն ասաց ընկ. Հ. Քաջազնունին, որ շեշտեց, թե որքան ցանկություններ անկատար թողած՝ Արամն անժամանակ հեռանում է մեզանից դեպի հավիտենություն, խոր կսկծի մեջ թողնելով մեզ բոլորիս: Արամի դագաղի վրա դրված էին պսակներ տարբեր մակագրություններով»: («Զանգ» թերթ, 1919 թվական, փետրվարի 9)

Այս պատմությունն ավելի ցավալի է դառնում, երբ հիմա նայում ենք մեր շուրջբոլորն ու տեսնում, որ այլևս չկա Պողոս-Պետրոս եկեղեցին, չկան քաղաքի մարդու երանգն ու մտահոգությունը: Կա միայն Արամի փողոցը, որի եզրին գործչի կիսաքանդ տունն է՝ լքված, անտեր ու մենակ:

Զ. Շուշեցի

Արամ Մանուկյանի դին իր բնակարանում

Երևանի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին, որտեղ դրվել էր Արամ Մանուկյանի աճյունը

Հին Երևանի նշանավոր եկեղեցիներից է, դասվում էր 5-6-րդ դարերում Հայաստանում տարածված եռանավ խոշոր բազիլիկ եկեղեցիների տիպին: Հիմնադրվել է 5-րդ դարում, ենթարկվել վերանորոգումների և վերականգնումների 7-րդ դարում, 12-րդ դարում, հիմնովին վերանորոգվել է 19-րդ դարում: Երևան քաղաքի սրտում կարևորագույն նշանակություն է ունեցել, նաև կառույցի ամրությամբ՝ միաժամանակ կարևոր դեր ունենալով հարևանությամբ գտնվող մյուս եկեղեցիների հետ, քաղաքի քրիստոնեական կերպարի համար: 1933-36 թթ., հակառակ հայ ճարտարապետներ Ալեքսանդր Թամանյանի և Աշխարհբեկ Քալանթարի ընդդիմանալուն, քանդվել է, նրա տեղում կառուցվել է «Մոսկվա» կինոթատրոնի շենքը:

Սուրբ Պողոս-Պետրոսը քաղաքի միակ եկեղեցին չի եղել: Այդ մասին է վկայում հետևյալ իրադարձությունը. 607 թ. նորընտիր Աբրահամ կաթողիկոսի կողմից Հայաստանի՝ Բյուզանդիային անցած վայրերի հոգևորականների մասնակցությամբ Դվինում հրավիրված ժողովին, որտեղ ժողովականները որոշում ընդունեցին հաստատուն մնալ հայկական դավանանքին, ի թիվս սակավաթիվ հոգևորականների, Երևանից մասնակցել է երկու վաներեց: Սա նշանակում է, որ այդ ժամանակ Երևանն ունեցել է առնվազն երկու մեծ եկեղեցի, որոնցից մեկը սբ Պողոս-Պետրոսն է եղել, իսկ մյուսը՝ հավանաբար այժմ հետադարյան վերակառուցումներով մեզ ծանոթ եկեղեցիներից մեկը, բայց հայտնի չէ, թե որը: 17-րդ դարում Երևան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենն իր Հին Երևանի նկարագրության մեջ նույնպես նշում է, որ Երևանում կային շատ եկեղեցիներ: Նա, սակայն, չի հիշատակում Պողոս-Պետրոս անունով եկեղեցի:

Երևանի համար 1679 թ. աղետալի երկրաշարժի ժամանակ մի շարք եկեղեցիների նման ավերվում է նաև սբ Պողոս-Պետրոսը: Այդ երկրաշարժից հետո նրա մնացորդների վրա, որոնք պահպանվել էին արևելյան մասում, իր նախկին տեսքով կառուցվում է նույնանուն մի եկեղեցի: Ցավոք, վերաշինության վերաբերյալ ստույգ գրավոր հիշատակություն չի պահպանվել: Ամենայն հավանականությամբ դա կատարվել է 17-րդ դարի վերջին, քանզի եկեղեցու արևելյան և հարավային պատերի մեջ ագուցված խաչքարերից մի երկուսի վրա, Կարո Ղաֆադարյանի կատարած ուսումնասիրությունների ժամանակ, պարզ կարդացվել են 1691 և 1692 թվականները, իսկ վիմական երկու արձանագրությունները վկայել են, որ եկեղեցու վերանորոգումները կատարվել են 1778 և 1820 թթ.:

Նիկոլ Աղբալյանի դամբանական խոսքը Արամ Մանուկյանի հուղարկավորության ժամանակ

Հայ ժողովուրդ

Հ. Յ. Դաշնակցութեան Արևելեան Բիւրօյի կողմէ յանձնարարուած է ինծի, հետևելով ընդունուած սովորութեան, խօսք ըսել երկար ժամանակ Բիւրօյի անդամ եղած և Հ. Յ. Դաշնակցութեան ամենակարկառուն դէմքի - Արամի մասին:

Կշռելով բոլոր այն խօսքերը, զոր ես պիտի ըսեմ, ես կը յայտնեմ, որ մենք այսօր պիտի թաղենք մեծ մարդը, զոր հայ ժողովուրդը տուած է մեծ պատերազմի ընթացքին: Ի՞նչ է մեծ մարդը. - Մեծ մարդը ան է, որ գիտէ ըմբռնել ժամանակի հարցը և որո՞նք էին այս վերջին շրջանի այն մեծ հարցերը, որ համայն հայ ժողովուրդին կը պատկանէին - հայ ժողովուրդի պաշտպանութեան և ազատութեան հարցերն էին ատոնք:

Թէ Վանը և թէ Երևանը վկայ են, որ Արամը, այն մարդն էր, որ ուղիղ վճռեց և սպառելով լուծեց այդ երկու խնդիրները:

Վանը բոլորի յիշողութեան մէջն է, հոն Արամը հանդիսացաւ հայու հերոսական ոգին, փրկելով անոր ռազմական պատիւը:

Երևանը վկայ էր այն հզօր ուժին, որ կար և կապրէր անոր մէջ, որ կազմակերպեց դիմադրութեան ուժը և այդ դիմադրութեան շնորհիւ կարողացաւ հիմք դնել Հայաստանի Հանրապետութեան, հայ ժողովրդի ազատագրութեան:

Մեծ խնդիրներ կը պատրաստուին տակաւ առ տակաւ, ճկուն խելքով և համբերատար ոգիով, ան ունէր կազմակերպչական անօրինակ և անսովոր կարողութիւն, որուն վկաներն են Վանն ու Երևանը:

Արամը ընդունակ էր իր պայծառ միտքը օգտագործել և գիտէր շտապ կերպով, յախուռն բոլոր կենսունակ ուժերը համախմբել մեծ նպատակի շուրջը: Յանկարծակի կերպով կը լուսափայլէր անոր մէջ լայն յանդուգն ծրագիրը և դէմ կը հանէր թշնամու կազմակերպուած կամքին և այն տեղ, այդ թշնամու հնազանդ ու կարգապահ մեծ ուժերը չը կարողացան դիմադրել իր ուժերուն:

Արամի գործը կարող ենք նկատել Դաշնակցական անհատի մը ծառայութիւն հայ ժողովրդին և Դաշնակցութեան ծառայութիւն հայ ժողովրդին: Այդ գործը ոչ միայն Դաշնակցութեան պատմութեան գործն է, այլ հայոց վերջին պատմութեան գործը, և հոն ան կարձանանայ իր մեծագոյն դէմքով:

Ըմբոստ էր ան ու ազատասէր, փոքր ուժերով իր ազատութիւնը պաշտպանող, յանդուգն և յաջող և իր մեծագոյն գործերը Վանի ու Երևանի մէջ պսակուեր են յաջող:

Մենք կը թաղենք մեծ հերոսի, ժողովրդական հերոսի, մշտապատրաստ անձնուիրութիւն, և ո՞վ է հերոսը, եթէ ոչ ան, որ ունի հոգիի բարձր կոչումը, նոյնքան բարձր ամբոխէն, որքան լեռներու հսկողը: Լեռներու հովին ու բարձրութեան չեն հասնիր ճահճուտի ցեխը, անախորժ բոյրը, շատերը եղան, որոնք ցանկացան ցեխ շպրտել այդ բարձրութեան, բայց ցեխը չէր հասներ բարձրութեան ու կիյնար իրեն նետողներուն վրայ:



Պէտք է հայ ժողովուրդ զգայ և պարծենայ այդ բարձրութեամբ, իսկ եթէ ան այնքան անզգայ ու ստորաքարշ կը մնայ, ապա ուրեմն անով կը պարծենան ուրիշները - յետնորդները: Վաղը կուգայ պատմութիւնը այս անստուեր հերոսի և այն տեղ մարդիկ կըլլան, որոնք նորէն կանմահանան իրենց գործերով, ինչպէս Նազովրեցի Յիսուս մատնող Յուդան և Սոկրատը սպաննող մատնիչները, կը մնայ այդպիսիներու յիշատակը, սակայն սև մուրով օծուած:

Երբ գիշեր գայ, մտէք ձեր հոգիի սենեակը և խօսեցէք ձեր խղճի հետ և ըսէք արդեօք աշխատե՞ր էք հայ ժողովրդի համար, ինչպէս Արամը, եղե՞ր էք այնքան անձնազոհ, որքան Արամը, տե՞ր էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովուրդին, ինչպէս Արամը...

Ձեզ կը դիմեմ Դաշնակցականներ, ան կը հանդիսանայ այն գերագոյն խորհրդանիշը, որուն կը պատկանէ ան, փշէ պսակով զարդարուած է Դաշնակցութեան գլուխը և իր հերոսներու արիւնով թրջուած է անոր ճակատը:

Կուսակցական ընկերներ այս մեծ հանգուցեալի, ջերմօրէն պահպանեցէք անոր յիշատակը, պահեցէք անոր անեղծ ոգին, անոր ոգին ուրիշ բան չէ, եթէ ոչ անձնուիրութիւն ժողովրդական շահերու, և հանգիստ եղէք այն բոլոր դատապարտութեանց ու պարսաւի առաջ, որոնք երբէք չեն կարող կասեցնել մեր կուսակցութեան ընթացքը, որ վճռեր է ժողովուրդը տանել դէպի լուսապայծառ ապագան:

Դուն, հայ ժողովուրդ, հազարամեա նահատակ, դուն նոյնպէս փշէ պսակ ունիս ճակտիդ, դուն նոյնպէս չարախօսուած, բամբասուած, բայց և այնպէս դուն ալ ասոր նման կը հաւատաս, որ պէտք է յաղթանակէ ճշմարտութիւնը:

Իսկ նոր սերունդը այս մարդու կեանքին մէջ կը գտնէ ամենադաստիարակիչ դասը, որու համար ան կը սորվի բարձրանալ վեր, խոյանալ դէպի մտքի բարձունքը հայ ժողովուրդի հաւատարիմ ծառայութեան ու անձնուիրութեան համար, որովհետև մեզ ուրիշ բան չի մնար ընելու, այլ՝ ապրեցնել հայ ժողովուրդը:

ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈԱԼԲՈՄԸ

Ձախից աջ՝ **Գողպեցի Տիգրան, Վանա Իշխան, Արամ Մանուկյան, Մալխաս, Համազասպ և Վանա Սարգիս, Վան**

Արամ Մանուկյան

Արամ Մանուկյանը (ներքևի շարքում, ձախից երրորդը) **իր ընկերների հետ**

1. Արամ փաշա, 2. Զօր. Նիգօլայէվ, 3. Խմբապետ Վարդան, 4. Դրօ, 5. Պարոյր Լեւոնեան, 6. Խմբապետ Խեչո, 7. Կոստիա Համբարձումեան, Արամ Մանուկեան (սեւ գլխարկով կեդրոնը), աջին՝ **զօրավար Նիկոլաեւ**

Արամ Մանուկյան,
Օրդու դպրոց, 1902 թ.

Արամ Մանուկյան

ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈԱԼԲՈՄԸ

Հայ ֆիդայիներ և
ընկերներ Իշխան և Արամ

Արամ Մանուկյանը և գաղափարակից
ընկերները, Վան, 1915 թ., Տիգրան,
Իշխան, Համազասպ Բաղէշցեան,
Արամ Մանուկեան,
Սարգիս Բարսեղեան, Մալխաս

Արամի և այլ
հեղափոխականների
ձերբակալությունը

Արամ Մանուկյան

Մակու Մեսրոպը, Հարություն, Արամ Մանուկյանը, Իշխանը և Ախալցխայի Սողոն
(Լուսանկարը՝ ՀՅԴ արխիվ)

Արամ Մանուկյան, Մովսիսյան ազգային երկսեռ հայկական դպրոցի շրջանավարտներ, Օրդու, 1912 թ.

Իշխանը, Շահպազն ու Արամը

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Արամ և Ռոստոմ



Արամ Մանուկյան

Ռոստոմ (Ստեփան Զորյան)

Հայաստանի նորանկախ հանրապետության համար առանձնապես ծանր անցավ 1919 թ. ձմեռը, երբ սովի ու համաճարակի ճիրաններում գալարվող երկրում մինչև գարուն մահացան ավելի քան 180.000 մարդ: 1919 թ. հունվարին հայոց պետականությունը մեծ հարված ստացավ. հունվարի 18-ի լույս 19-ի գիշերը Թիֆլիսում բծավոր տիֆից և թոքախտից մահացավ ՀՅԴ հիմնադիր, ականավոր քաղաքական և պետական գործիչ Ռոստոմը (Ստեփան Զորյան): Երկար և դաժան փորձություններով լի ճանապարհ էր անցել Ռոստոմը՝ սկսած 1890-ականներից, ղեկավարելով նաև հայոց եկեղեցու գույքը բռնագրավելու և հայկական դպրոցները փակելու քաղաքականություն վարող ցարական կառավարության դեմ պայքարն ու 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվներում հայության ինքնապաշտպանությունը, նվիրվելով և եռանդուն մասնակցելով 1914 թ. հայկական կամավորական շարժմանը: Ռոստոմի մասին կարելի է անվերջ խոսել, անվերջ թվարկել նրա ազգանպաստ գործերը, սակայն կանդրադառնանք միայն հայ ժողովրդի համար ամենաճակատագրական օրերին, մասնավորապես՝ 1918 թ., երբ Ռոստոմը Բաքվում էր և դարձել էր տեղի հայերի ինքնապաշտպանության ոգին. «Բագուում Ռոստոմը կամ Խորհրդի հետ էր, կամ հրամանատարութեան եւ կամ Կ. Կոմիտէի մօտ մասնակցում էր բոլոր կարեւոր նիստերին եւ գործերին: Իրազեկ էր ամբողջ անցուդարձին: Զարմանալիօրէն շարժուն եւ եռանդուն էր Ռոստոմը: Յաճախ ոտքով էր գնում հրամանատարութեան մօտ, ոտքով էր վերադառնում: Ինքնաշարժ պահանջել ու սպասել չէր կարողանում. այդքան համբերութիւն չուներ....»:

Բաքվում Ռոստոմը գլուխ էր բերում Դաշնակցություն-բոլշևիկ համագործակցությունը, ինչն այդ պահին բխում էր ոչ միայն Բաքվի հայության, այլ նաև Հայաստանի Հանրապետության շահերից, քանզի Ռոստոմը քաջ գիտակցում էր, որ «Վաղը հենց որ բացուեն Բագուի դռները Ազերբէյջանի բանակի առջև, և տաճիկները տեղաւորուեն Բագուում, Խան-Խոյսկու ամբոխը և տաճկական բանակը, ձեռք ձեռքի տուած, պիտի սրբեն նաև Գանձակի հայութիւնը, ապա պիտի բարձրանան Ղարաբաղ, պիտի իջնեն Զանգեզուր և Երևանը ոտնատակ պիտի տան»:

Այսպիսով՝ Բաքվի ինքնապաշտպանական ուժերի ղեկավար Ռոստոմն իրավացիորեն գտնում էր, որ որքան երկար կարողանան թուրքերին գամված պահել Բաքվի շրջակայքում, այնքան Հայաստանի Հանրապետությունը հեռու կպահեն թուրքական վերահաս հարձակման վտանգից՝ ժամանակ շահելով մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ իրատեսական էր Ռոստոմի՝ «Արամի հետ «երկու ձեռքով» խաղալու մարտավարությունը», իսկ այդ մարտավարության էությունն այն էր, որ «Երևանում գտնվող և առերևույթ Բաթումի պայմանագիրը հարգող Արամը և Բաքվում գտնվող, սակայն քաղաքից հայկական ուժերի դուրսբերման՝ Բաթումի պայմանագրով նախատեսված ՀՀ պարտավորության կատարումից հրաժարվող Ռոստոմը, ձևով հակադրվելով իրար, բովանդակությամբ նույն խաղն էին առաջ տանում: Նրանք գիտակցում էին, որ որքան ձգձգվի Բաքվի դիմադրությունը, այնքան կհետաձգվի Երևանի վրա թուրքական բանակի գրոհը»: Ռոստոմի գլխավորած Բաքվի ինքնապաշտպանության գլխավոր արդյունքը, հազարավոր հայերի ֆիզիկական փրկությունից զատ, նաև Հայաստանի՝ փոքրիկ և արտաքին աշխարհի հետ գրեթե կապ չունեցող հանրապետության գոյության պահպանումն էր, մի փաստ, որի համար, Բաքվի պաշտպաններից բացի, պետք է արժանին մատուցել ժամանակի երկու մեծագույն գործիչներին՝ Ռոստոմին և Արամին: Ռոստոմի գործունեությունը սակայն, ինչպես չէր սկսվել Բաքվում, այնպես էլ չավարտվեց Բաքվում: Բաքվի անկումից հետո Ռոստոմը հանձնեց Բաքվի իր դիրքն ու հեռացավ Թիֆլիս՝ այնտեղից Հայաստանի Հանրապետություն

անցնելու նպատակով: Նա մինչև առողջական վիճակի վատթարացումը Թիֆլիսում բանակցում էր Վրաստանի կառավարության ղեկավարների հետ՝ ձգտելով հարթել հայ-վրացական հարաբերությունները: Ռոստոմը կենցաղում պարզ էր, հեռու ամեն պերճանքից, ցրտին, անձրևին ու ձյան ժամանակ շարունակ վազվզում էր ծակ կոշիկներով ու քրքրված վերարկուով: Շարունակական պայքարն ու դեգերումներն ի վերջո արեցին իրենց սև գործը:

Ռոստոմը թոքախտով հիվանդ էր, ինչը երկար տարիներ հյուծում էր նրա մարմինը: Նա երազում էր վերջապես հանգրվան գտնել ու գործել նորանկախ Հայաստանում: Սակայն վրա հասավ պատուհասը՝ մոլեգնող բծավոր տիֆը, ինչն էլ նրան գամեց անկողնուն և խլեց նրա կյանքը: 1919 թ. հունվարի 18-ի լույս 19-ի գիշերը՝ իր ծննդյան 52-րդ տարեդարձի օրը, Ռոստոմը մահացավ:

Նրա կյանքի սկզբունքն ու հավատամքն էր. «Հեղափոխությունը նախ գործ է, հետո՝ գաղափար,- այս է ճշմարտությունը:

Ավելի ճիշտ՝ հեղափոխությունը գործ է գաղափարի համար»: Եվ որքան լավ կլիներ, եթե այսօր իրենց հեղափոխական հռչակածներից շատերը ծանոթ լինեին Ռոստոմի այս սկզբունքին և մի փոքր էլ ուսումնասիրած լինեին Ռոստոմ հեղափոխականին, պետական, քաղաքական, ռազմական գործչին ու Ռոստոմ հային. չէ՞ որ պատահական չէ, որ ազգային-ազատագրական պայքարի օրերին Ռոստոմին համարում էին Դաշնակցության կամքը, իսկ հետագայում իր գործով նա վաստակեց նաև «Դաշնակցության հաստաբուն կաղնի» պատվանունը: Այսօր՝ Ռոստոմի մահվանից 102 տարի անց, նրա կյանքը, գործունեությունն ու գաղափարները մեզ համար ուսանելի դաս և օրինակ կարող են լինել. պարտավոր ենք և պետք է սովորենք Ռոստոմից:

Հայոց պետականության համար մեծագույն հարվածը, սակայն, Հայաստանի Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի մահն էր: Արամ Մանուկյանը հայոց նորագույն պատմության մեծագույն գործիչներից մեկն է, եթե ոչ մեծագույնը, քանի որ պատմության մեջ միշտ բացառիկ դեր են ունենում պետականության հիմնադիր գործիչները, հատկապես այնպիսի պայմաններում, որոնցում գտնվում էր հայ ժողովուրդը 1918 թ.: Արամի ղեկավարած հերոսամարտերի մասին այս անգամ չենք խոսի, քանի որ դրանց մասին շատ է խոսվել, կխոսենք Արամ Մանուկյան անհատի մասին, որովհետև նրա անձը մեր հասարակությանը գրեթե անծանոթ է: Կանդրադառնանք Արամի ապրելակերպին ու կենցաղին, որոնց ներկայիս հանրապետության նախկին և օրվա ղեկավարները ցանկալի կլիներ, որ հետևեին: «Այն մարդը, որն ուներ անսահմանափակ իշխանություն, որի տնօրինության տակ էին վիթխարի միջոցներ, իր երկրի ու ժողովրդի համար բախտորոշ և ծանրագույն օրերին ապրեց պարզ ու համեստ կենցաղով՝ մինչև վերջ մնալով իր ժողովրդի մեջ, նրա կողքին՝ կիսելով նրան բաժին հասած փորձություններն ու աղետները: Հիրավի մեծ դաս երրորդ հանրապետության անցյալ, նորօրյա և ապագա պետական գործիչներին»: 1917 թ. դեկտեմբերի վերջերից սկսած՝ Արամն ի պաշտոնե տնօրինում էր երկրում առկա ու երկիր ուղարկված բոլոր միջոցները, բայց «գործ ունենալով հսկայական գումարների հետ և օժտված լինելով մեծ իշխանությամբ՝ նա երբեք դրանք չծառայեցրեց իր անձնական հարստացմանը»: Արամի բնութագիրը լավագույնս տվել է Ս.Վրացյանը.«Ունենալով ամէն յարմարութիւն Կովկասին մէջ անձնական բարեկեցիկ վիճակ ստեղծելու՝ անիկա հրաժարեցաւ կեանքի բոլոր վայելքներէն եւ ինքզինքը նուիրեց ժողովրդի մը, որ, անսահմանօրէն հարստահարուած ըլլալով մէկտեղ, իր բոլոր ուժովը կըփափաքէր ազատ օր տեսնել եւ ազատ օդ շնչել հայրենի երկնքին տակ…»:

Արամն անմնացորդ նվիրվեց իր ժողովրդի ազատագրման գործին ու հենց ժողովրդի կողմից էլ օժտվեց անսահմանափակ իշխանությամբ: Լիներ Վանի նահանգապետ թե Հայոց ազգային խորհրդի լիազոր ներկայացուցիչ, Երևանի դիկտատոր թե ՀՀ ներքին գործերի նախարար, Արամը, Ա. Աստվածատրյանի բնութագրմամբ, «….նոյն սովորական մարդն էր, մատչելի ամէնքին, գրեթէ ճգնաւորի իր կեանքի եղանակով, ոչ մի քայլ՝ իր դիրքը ընդգծելու, ուշադրութիւն գրաւելու, իրեն ցուցադրելու: Իր անձը գոյութիւն չունէր: Իր անձնական կեանքը զրկանքների անվերջ շարան կը լիներ, եթէ շրջապատողները հոգ չտանէին նրա մասին»:

Կատարելով մեկ մարդու ուժից վեր հսկայական աշխատանք՝ Երևանի դիկտատոր ընտրված Արամը, Ա. Աստվածատրյանի վկայությամբ, «….իր մասին մտածել չգիտէր: Որտե՞ղ ապրել, ի՞նչ ուտել, ի՞նչ հագնել,- հարցեր էին, որոնք քիչ էին զբաղեցնում նրան»: «Մի կերպ կ՚ապրենք, չենք մեռնի». այս էր նրա սովորական խոսքը:

Արամի ապրելակերպին ծանոթանալու առումով հետաքրքրական են նաև Ա. Աստվածատրյանի նկարագրած պայմանները, որոնցում ապրում էր ՀՀ հիմնադիրը. «Մինչեւ իր ընտանիքի՝ Երեւան տեղափոխուելը նա ապրում էր Աբովեան եւ Դոկտորսկայա փողոցների անկիւնում՝ մի հասարակ տան մէջ. յարմարութիւնների տեսակէտից սենեակը ողորմելի էր: Մի անշուք մահճակալ, երկու հասարակ սեղան եւ մի երեք-չորս նոյնպէս հասարակ աթոռ,- ահա սենեակի կահաւորութիւնը»: Ժամանակակիցների վկայությամբ՝ Արամի մասին հոգ էր տանում վանեցիների մի գաղթական ընտանիք, որի կյանքը նույնպես լի էր զրկանքներով:

Արամ Մանուկյան գործչի բնութագիրն ամբողջացնելու համար անդրադառնանք նրան տրված «փաշա» տիտղոսին.«Արամին մօտից ճանաչելուց յետոյ մարդ տարակուսում է, թէ ով է նրան փաշա տիտղոսը տուել: Մի կատարեալ թիւրիմացութիւն է գոնէ արեւելահայերիս հասկացողութեամբ, որովհետեւ նրա բնաւորութեան մէջ փաշայական ոչինչ չկար: Եւ ինքը ինչպէ՞ս էր խորշում այդ տիտղոսից»: Իսկ «փաշա» տիտղոսը նրան տվել է հայ ժողովուրդը՝ աչքի առաջ ունենալով մարդկանց վերևից չնայելու, իր դիրքը զգացնել չտալու, իշխանությունը միայն ու միայն ի շահ ժողովրդի ծառայեցնելու նրա հատկությունը: Արամը միգուցե այն օրերի համար տիպական փաշայի կերպարին չէր համապատասխանում, բայց վեց դար պետականությունից զուրկ և սեփական ղեկավարի մասին երազող ժողովուրդը, ի դեմս Արամի, գտավ իր իշխանին, իր ղեկավարին: Արամը շարունակ գաղթականների միջավայրում էր, ժողովրդի հետ սերտ շփումների մեջ և այս հարցում ևս կիսեց նրա ճակատագիրը:

1918 թ. դեկտեմբերի 28-ին Արամը վերջին անգամ մասնակցեց կառավարության նիստին, իսկ դեկտեմբերի 30-ին վերջին անգամ փաստաթուղթ ստորագրեց: Երկարատև հիվանդությունից հետո՝ 1919 թ. հունվարի 29-ին՝ ժամը 14:30-ին, Արամ Մանուկյանը մահացավ: Նա մահացավ իր մեծ ուսուցչի՝ Ռոստոմի անունը շուրթերին. «….կյանքին հրաժեշտի խոսքերում համառորեն շորերն էր պահանջում, որպեսզի հագնվի Թիֆլիս հասած Ռոստոմին հանդիպելու համար»: Ս. Վրացյանը վկայում է. «Վերջին օրերի զառանցանքների մէջ նա յաճախ յիշում էր Ռոստոմի անունը, որ արդէն հեռացել էր այս աշխարհից….»: Ռոստոմը նրանից տասն օր առաջ՝ հունվարի 19-ին էր մահացել: Եթե Արամը կորցրել էր իր ուսուցչին, ապա «….Արամի մահով հայ ժողովուրդը և հայ հանրապետութիւնը կը կորսնցնէ իր եռանդուն և անձնուրաց գործիչը, իսկ Վասպուրականը, մասնաւորապէս, իր սիրելի ղեկավարը, իր առաջնորդը, իր վարպետը, իր «Արամ Փաշան»»: Ս. Վրացյանն այսպես է նկարագրում Արամի մահվան լուրը ստանալու պահը. «….Դրոյի բնակարանում նստած էինք ճաշի: Յանկարծ դրան զանգը հնչեց, եւ Դրոյի կինը՝ Արփենիկը, ներս բերաւ սարսափահար աչքերով մի երիտասարդ: «Արամը մեռաւ»,-ասաց նա: Դրոյի ձեռքից վար ընկաւ ապուրի գդալը: Առանց մի խօսք արտասանելու՝

նա դուրս թռաւ սենեակից»:

Արամի մահը համազգային դժբախտություն էր, մեծ հարված հայ ժողովրդի և Հայաստանի մանուկ հանրապետության համար, որն այնքան ուներ Արամի խնամքի ու հոգատարության կարիքը: ՀՀ հիմնադրի՝ փետրվարի 1-ին տեղի ունեցած հուղարկավորությունը «համաժողովրդական սուգի օր էր»: Արամ Մանուկյանն այնքան համեստ էր ապրում, որ անգամ նրա «թաղման ծախսը...՝ընդամենը յոթ հազար երեք հարյուր ութսուն ռուբլի վաթսուն կոպեկ, հոգաց պետությունը»:

ՀՀ հիմնադրի՝ հայոց պետականության ջահակրի մարմինը հողին հանձնվեց Երևանի կենտրոնական գերեզմանատանը՝ ՀՅԴ պանթեոնի տարածքում: «Ամենայն Հայոց Կաթողիկոսը աղոթքով հրամայել է, որ ազգի մեծ որդու գերեզմանն անշարժ մնա»: Բայց հետագայում օրվա տերեր դարձան ազգային դիմագծից ու պետականության գաղափարից զուրկ մարդիկ, որոնք քանդեցին ՀՅԴ հերոսների պանթեոնը: Նրանց հարկադրանքով Արամի մասունքները երկու անգամ տեղափոխվել են: 1930-ականների սկզբին, պայմանավորված Երևանի քաղաքային խորհրդի՝ կենտրոնական գերեզմանատունը զբոսայգու վերածելու որոշմամբ, Արամի աճյունը նրա կնոջ՝ Կատերինե Չալյանի և աղջկա՝ Սեդա Մանուկյանի կողմից տեղափոխվեց «Կոզեռն» կոչվող գերեզմանատուն: Մի քանի տարի անց այդ տարածքում ժամացույցի գործարան և դպրոցի շենք կառուցելու պատճառով Արամի աճյունը տեղափոխվեց «Թոխմախ լճի» գերեզմանատուն, որտեղ գտնվում է առ այսօր:

Խորհրդային իշխանությունները ամեն ինչ արեցին Արամի շիրիմի տեղը մոռացության մատնելու, ժողովրդի աչքից հեռու պահելու համար: Բայց սեփական պատմությունը գնահատող և ազգային պետականության կարևորությունը գիտակցող մի խումբ հայրենասեր հայեր 1979 թ. ճշտել են Արամի թաղման վայրը, ապա՝ որոշել նրա գերեզմանին խաչքար կանգնեցնել: Խիստ գաղտնիության պայմաններում 1982թ. օգոստոսի 11-ին այդ խաչքարը հասցվել է Թոխմախի գերեզմանոց և առանց տեխնիկայի օգտագործման տեղադրվել Արամ Մանուկյանի գերեզմանին:

Արամի մահը ծանր հարված էր ոչ միայն նրա կուսակցության, հայ ժողովրդի, այլ նաև հայոց պետականության համար:

Հայաստանի ներկայիս հանրապետությունը ժառանգորդն է Հայաստանի առաջին հանրապետության: Քանի որ Հայաստանի Հանրապետության հիմնադրումը 1918 թվականից սկիզբ առած հայոց նորագույն պետականության կենսագրության սկիզբն է, ուստի նրա հիմնադիրները ոչ միայն Առաջին հանրապետության, այլև հայոց նորագույն պետականության հիմնադիր հայրերն են, որոնց փաղանգը գլխավորում է առ այսօր արժանվոյնս չգնահատված մեծերից ամենամեծը՝ Արամ Մանուկյանը, որին մոռացության մատնելու, նաև վարկաբեկելու համար տասնամյակներ շարունակ արվեց ամեն ինչ:

Խորհրդային գաղափարախոսությունը, միջոցների մեջ խտրություն չդնելով, փորձեց սևացնել, նսեմացնել ՀՅ-ն, նրա հիմնադիր Արամ Մանուկյանին, Ռոստոմին և Դաշնակցությանն ընդհանրապես, բայց **«Լեռներու հովին ու բարձրութեան չեն հասնիր ճահճուտի ցեխը, անախորժ բոյրը, շատերը եղան, որոնք ցանկացան ցեխ շպրտել այդ բարձրութեան, բայց ցեխը չէր հասներ բարձրութեան և կիյնար իրեն նետողներուն վրայ»**: Արամի մասին այս խոսքերը Ն. Աղբալյանինն են: Դրանց ճշմարտացիությունը փաստեց ամենազոր պատմությունը, որն արժանին մատուցեց յուրաքանչյուրին և անկաշառ վճռով շատ կուռքերի պատվանդաններից ցած գլորեց, իսկ Արամին, Ռոստոմին..., որոնց շուրջ մոռացության շղարշ էր հյուսվել, վերադարձրեց հայ ժողովրդին՝ փաստելով, որ վարչակարգերը, տարատեսակ բռնաճնշումներն ու քաղաքական շահերն անզոր են հայ ժողովրդի պատմական հիշողության դեմ, այն հիշողության, որի ծալքերում անգամ պետականության բացակայության պայմաններում մեր ժողովուրդը սրբորեն պահել է Հայկ Նահապետին, Տիգրան Մեծին, Մեսրոպ Մաշտոցին, որոնց կողքին դրեց Արամին, Ռոստոմին ու Հայաստանի Հանրապետությունը կերտած մյուս մեծերին...

Իրենց կերպարով ու գործունեությամբ Արամն ու Ռոստոմը հայ ժողովրդի և նրա նորօրյա ղեկավարների համար օրինակ են՝ որպես իրատես, շրջահայաց, արդարամիտ, անշահախնդիր, համեստ, տաղանդավոր, անձնազոհ և իրենց ժողովրդի ճակատագրի նկատմամբ մեծագույն պատասխանատվություն ունեցող պետական գործիչների տիպար: Մեկդարյա հեռավորությունից նրանք նորօրյա Հայաստանի ղեկավարներին պատգամում են բոլոր միջոցներն ու հնարավորությունները ծառայեցնել մեկ նպատակի՝ հայոց պետականության ամրապնդմանը, հայ ժողովրդի ազատությանն ու բարեկեցությանը: Իսկ հայ ժողովրդին ավելի քան մեկդարյա հեռավորությունից Ռոստոմը պատգամում ու զգուշացնում էր լինել շրջահայաց, չընկնել ամբոխավարների ծուղակը: Կարծում ենք՝ մեր օրերի, ինչու չէ, նաև ապագայի համար ուսուցողական են Ռոստոմի խոսքերը. **«Վնասակար են այդ սողունները, երբ փքուն խօսքեր փչելով ու փարիսեցիական ձեւեր բանեցնելով՝ շահագործում են ամբոխի դիւրահաւատութիւնն ու տգիտութիւնը»**: Իսկ հայոց պետականության հիմնադիր Արամը պատգամում էր. **«....Մենակ ենք եւ պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ ճակատը պաշտպանելու եւ թէ երկրի ներսը կարգ հաստատելու համար»**: Սա կրկնելու ենք այնքան, մինչև այն դառնա հայ ժողովրդի հավատամքը:

Անի Մելքոնյան
4.02.2021 թ.

Օգտագործված աղբյուրների եվ գրականության ցանկ

ա) Աղբյուրներ
1. Արամը, մահուան յիսնամեակին առթիւ, Եր., 1991:
2. Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (քառահատոր շարք. 1918-1992), հատ. Դ, 1995:
բ) Գրականություն
1. Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (Հոդվածների ժողովածու), Եր., 2010:
2. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2008:
3. Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950, խմբ.՝ Վրացեան Ս., Բոստոն, 1950:
4. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատ. Ե, Պէյրութ, 1966:
5. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:
գ) Մամուլ
1. «Աշխատանք» օրաթերթ, 12 փետրվարի 1919, N4:
դ) Համացանցային նյութեր
1. https://old.arfd.am/?=21143
2. «Դոշակ», թիվ 1 (1647), հունվար, 2021 թ.

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Արամ Մանուկյանը Ռուբենի հուշերում

Խաչատուր Ստեփանյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

XX դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարը, Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունը, ի թիվս այլոց, անխզելիորեն կապված են երկու պայծառ անհատականությունների՝ Արամ Մանուկյանի և Ռուբեն Տեր-Մինասյանի անունների հետ: Արևելյան Հայաստանի երկու չքնաղ երկրամասերում՝ Արցախում և Ջավախքում ծնված այս գործիչները, իրենց ընդամենը 20-ամյակը դեռ նոր բոլորած, ինքնակամ նվիրվեցին Արևմտահայաստանի ազատագրության սուրբ գործին:

Ռուբենն Արամի հետ ծանոթացել է Կարսում, «որուն յեղափոխական հնոցին մէջ նորելուկ դաշնակցականները կարող էին եփուիլ եւ դուրս գալ թրծուած եւ յղկուած...»[1]: Նախքան Ռուբենի Կարս մեկնելը այստեղ էր եկել Արամ Մանուկյանը, որն անհրաժեշտ փորձառություն ձեռք բերելուց հետո պետք է անցներ Արևմտյան Հայաստան: «Կարսի հնոցում» Արամն իրեն այնքան լավ էր դրսևորել, որ ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեն վերջինիս պահել էր տեղում՝ Երկիր անցնելու ցանկություն ունեցող դաշնակցականներին համապատասխան ձևով կրթելու համար: Արամը Կարսում զբաղված էր ոչ միայն գործիչներ պատրաստելով, այլև կազմակերպչական-քարոզչական աշխատանքներով:

Ծանոթության առաջին իսկ օրվանից Ռուբենն Արամի մեջ տեսնում է խստապահանջ գործի մարդուն և նվիրված, կատակասեր ընկերոջը: Ռուբենի տպավորությամբ՝ Արամն «այդտեղ (իմա՝ «Կարսի հնոցում» - Խ. Ս.) հաւաքուածներուն մէջ ամենէն սիրելին, ամենէն յարգուածն էր»[2]:

Իր հուշերում նկարագրելով «Կարսի հնոցի» գործիչներին՝ Ռուբենը Արամին բնորոշում է նաև որպես ուղղամիտ մարդու, «որուն համար կըսէին, թէ կոշտ ու կոպիտ է, բայց «քեասա» բան կըսէ, ջանին՝ ջան կըսէ, չոռին՝ չոռ կըսէ»[3]:

Արամ Մանուկյանը Կարսում այնպիսի հեղինակություն ուներ, որ անգամ ցարական պաշտոնյաներն էին ակնածանքով վերաբերվում նրան: Բավական է նշել այն փաստը, որ այստեղ բնակչության թվին հավասար զորք էր տեղակայված: Եվ նույնիսկ այս պայմաններում ռուս պաշտոնյաները խիստ հարգալից էին Արամի նկատմամբ: Այս կապակցությամբ Ռուբենը գրում է. **«Երբ Սերգեյը[4] կանցներ փողոցներով, ոստիկան եւ նոյնիսկ ոստիկանապետ բարեւ կուտային, առանց անոր հետ ծանօթ լինելու: Կարծես, թէ նահանգապետի կողքին ան էր անպաշտօն, բուն նահանգապետը»**[5]:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Արամը Կարսում համապատասխան փորձառություն անցնելուց հետո մտադիր էր գնալ Տարոն, իսկ Ռուբենը՝ Վան: Սակայն դեպքերն այնպես են դասավորվում, որ Արամը՝ որպես գործիչ, աշխատում է Վանում, իսկ, Արամի բնորոշմամբ, «թունդ վանեան» Ռուբենը գնում է Մաշ[6]:

Ռուբենի՝ Կարսից մեկնելուց առաջ Արամը հյուրընկալվում է Ռուբենի տանը[7], որտեղ երկուսով հետաքրքիր քննարկումներ են անցկացնում Հայաստանի ծայրագավառների և կենտրոնական նահանգների նշանակության մասին: Եթե Ռուբենը գտնում էր, որ Հայաստանի հզորությունը ծայրագավառների՝ Շուշիի, Սպերի, Խարբերդի մեջ է, ապա, Արամի պնդմամբ, առանց Տարոնի և Բարձր Հայքի հզորության ծայրագավառները շատ թույլ կլինեն: Այստեղ հետաքրքիր է նաև այն, որ Ռուբենը Արամի, ինչպես նաև Նիկոլ Դումանի և մի շարք այլ ղարաբաղցիների արիությունը պայմանավորում է Շուշիի հաղորդած ոգով:

Հետաքրքիր է նաև Ռուբենի ակնածանքով լի վերաբերմունքը Արամի հանդեպ: Կարսում նախապատրաստական շրջան անցնելուց հետո Արամը Ռուբենին ուղարկում է Երևան՝ առանց հայտնելու, թե ինչ նպատակով է դա անում, իսկ Ռուբենը, թեև ուզում էր մի քանի օր էլ Կարսում մնալ, լռում է և ենթարկվում Արամին: Այդ ժամանակ նրանց հարաբերություններն այնպիսին էին, որ Ռուբենն առանց քաշվելու կարող էր հարցնել Արամին իր Երևան գնալու նպատակի մասին, բայց այդ բանը նա չի անում: Ռուբենի նման պահվածքը պայմանավորված էր ոչ միայն Հ.Յ.Դաշնակցության մեջ տիրող ղեկավար ընկերոջ կողմից շարքային ընկերոջն առանց բացատրության կարգադրություն անելու ավանդույթով, այլև Արամի հանդեպ ունեցած մեծագույն հարգանքով:



Արամ Մանուկյան



Ռուբեն Տեր-Մինասյան

Կարսից հետո Ռուբենը և Արամը բախտ են ունենում միասին գործելու նաև Վան-Վասպուրականում: Հուշերում Ռուբենը նկատում է, որ Վասպուրականում ազգային-ազատագրական շարժման ղեկավարների մեջ մեծ թիվ են կազմել դարաբաղցիները՝ հնչակյան գործիչ Մարտիկը (Մարտիրոս Սարուխանյան), դաշնակցականներ Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), Իշխանը (Նիկոլ Պողոսյան), որոնց շարքը լրացնում է նաև Արամը: Ռուբենը գրում է, որ 1905 թ. Վանի ՀՅԴ կազմակերպության (Շամ) կենտրոնական դեմքը Արամն էր[8]: Մինչև Արամի և Իշխանի Վասպուրական գնալը տեղի ժողովուրդն այնքան սեր չուներ զենքի նկատմամբ, ինչքան սասունցիները կամ հարևան քրդերը: Մինչդեռ վերջիններս ոչ միայն զարկ են տալիս համատարած զինման գործին, այլև ժողովրդին վարժեցնում են զենքի գործածության և կռվի փորձառության մեջ: Ի դեպ, Արամը Վանում մեծ աշխատանք է տարել նաև արմենականներին Հ.Յ.Դաշնակցության մեջ ընդգրկելու և դրանով ազգային-ազատագրական պայքարն ավելի միասնական դարձնելու գործում: Այս կապակցությամբ Ռուբենը գրում է. «Արմենական ուժերը կուսակցութեան մէջ մտնելով, կարելի է ըսել, որ Դաշնակցութեան մէջ, Արամի ժամանակ, կը կատարուի նոր յեղափոխութիւն մը»[9]:

1905-1907 թթ. գործելով Վանում՝ Արամը մեծ ծավալի աշխատանք կատարեց Վանի նահանգի տարածքում ՀՅԴ կառույցի տարածման և հզորացման ուղղությամբ: Վանում ևս Արամը մեծ հեղինակություն էր վայելում, որի կապակցությամբ Ռուբենը գրում է. «Արամը Վանի կուռքն էր, անոր ուժի, կամքի մարմնացումը»[10]: Նրա անմիջական ջանքերով մեծապես բարձրացավ ժողովրդի պաշտպանվածության աստիճանը, որն էլ, ի դեպ, հիմքեր ստեղծեց ավելի կազմակերպված դիմադրելու թշնամուն: Դրա պտուղներն ակնառու դարձան հատկապես 1915 թ., երբ վանեցիները կարողացան կազմակերպված դիմադրություն ցույց տալ թուրքերին և փրկվել անխուսափելի կոտորածից[11]: Վանում գործելու տարիներին Արամ Մանուկյանը հանգել էր այն մտքին, որ արևմտահայության փրկության համար պետք էր վերջ տալ տեղային պայքարին և համընդհանուր ապստամբության նախապատրաստվել: Այս առումով նա, փաստորեն, հանդիսանում էր Հրայր Դժոխքի գաղափարների կրողը: Ավելին, Արամը կարծում էր, որ Օսմանյան Թուրքիայում պետք էր համապետական ապստամբություն իրականացնել և տապալել սուլթանական կառավարությունը:

1907 թ. մայիսին Արամ Մանուկյանը Վանում ձերբակալվում է[12] և բանտից ազատվում միայն մեկ տարի անց՝ օսմանյան սահմանադրության հռչակումից հետո:

Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո Ռուբեն Տեր-Մինասյանը Վանում հանդիպում է թուրքական ոստիկանության պաշտոնյա Մեհմեդ էֆենդու հետ: Վերջինս Ռուբենին պատմելով Արամի ձերբակալության մասին, նշում է, որ նա գործել է թուրքական կառավարության դեմ և արժանի էր բանտարկվելուն, սակայն, այնուամենայնիվ, ավելացնում է. «Բայց Արամ բոլորիս համար կը մնայ յարգանքի եւ պատուի առարկայ»[13]: Սա ոչ թե թուրքական պաշտոնյայի կողմից օսմանյան սահմանադրության բերած «մեղրամսին» բնորոշ հավուր պատշաճի խոսք էր, այլ հայ ազգային-ազատագրական շարժման գործչի հանդեպ ունեցած զգացողության և վերաբերմունքի մասին ակամա խոստովանություն: Ի դեպ, հանդիպման ժամանակ Մեհմեդ էֆենդին Ռուբենին հայտնում է իր մտավախությունը, որ Արամը կարող է հետ պահանջել ոստիկանների կողմից ժամանակին բռնագրավված զենքերը:

Հետաքրքիր զուգադիպությամբ Ռուբենը և Արամը 1909 թ. միասին ՀՅԴ Բյուրոյի անդամ Ռոստոմից հեղափոխական գործերից արձակուրդ են վերցնում: Ռուբենը մեկնում է Եվրոպա՝ ուսումը շարունակելու, իսկ Արամը Օրդու՝ ուսուցչություն անելու[14]:

Արամ Մանուկյանի և Ռուբենի համագործակցությունը շարունակվում է նաև Հայաստանի անկախության ձեռքբերման և պետականության կայացման շրջանում: Հայտնի է, որ սկսած 1917 թվականից Ռուբեն Տեր-Մինասյանը լրջորեն զբաղվել է արևմտահայ գաղթականությանը Արևելյան Հայաստանում տեղավորելու և Հայաստանի Հանրապետության

տարածքում թուրք-թաթարական խռովություններն ու անջատական գործողությունները ճնշելու գործով:

Քառասային այս ժամանակաշրջանում Ռուբեն Տեր-Մինասյանին շատ քչերն են աջակցել: Ավելին, նույնիսկ տարբեր պատճառաբանություններով փորձել են խոչընդոտել: Գաղթականների վերաբնակեցման հարցում Ռուբենի ամենաջերմ աջակիցն ու գաղափարակիցը եղել է Արամ Մանուկյանը (նաև՝ Նիկոլ Աղբալյանը)[15]: Արամի քաջալերմամբ Ռուբենի իրականացրած գործողությունների արդյունքում ոչ միայն հնարավոր եղավ տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականներին ապահովել կացարաններով, այլև վերացվեց Երևանի գլխին կախված թուրք-թաթարական շրջափակման վտանգը[16]:

Հուշերում Ռուբենը կարևորում է Հայաստանի Հանրապետության կայացման գործում Արամի կատարած անգնահատելի դերը: Անդրկովկասում իշխանությունը ազգային խորհուրդներին տալուց հետո Արամը հսկայական աշխատանք կատարեց Երևանի նահանգում՝ Երևանի Հայոց ազգային խորհրդի աշխատանքը կարգավորելու ուղղությամբ: **«Այս ներկայացուցիչների (Հայոց ազգային խորհուրդների - Խ. Ս.) մէջ կեդրոնական անձը եղաւ Արամը, որ Երեւանի շրջանի լիազօրն էր. նա Երեւանը դարձրեց այն կորիզը, որի շուրջը պիտի հաւաքուէին մնացած գաւառների Ազգային Խորհուրդները»**,- գրում է Ռուբենը[17]: Անուրանալի է Արամ Մանուկյանի դերը 1918 թ. մայիսյան հերոսամարտերում տարած հաղթանակներում: Արամը կարողացավ Երևանում կազմակերպել ժողովրդին, հիմքեր ստեղծել պետականության տարրերի արմատավորման համար: **«Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից առաջ Արամը Երեւանի նահանգի դիկտատորն էր ընտրուած եւ յանձին նրան՝ փաստական հայկական իշխանութիւն էր ստեղծուած դեռ 1917-ից: 1918-ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան Քաջազնունու դահլիճն էր կազմուած, փաստօրեն կառավարութիւնը մնում էր Արամը. թէեւ նա ներքին գործոց նախարարն էր միայն: Նրա ձեռքին էին այն ժամանակները եւ լուսաւորութեան, եւ խնամատարութեան, եւ պարենաւորման, եւ հաղորդակցութեան բաժինները, որոնք հետագային բաժանուեցին առանձին նախարարութիւնների»**,- գրում է Ռուբենը[18]:

Ռուբենը հիշատակում է Արամին առնչվող մի կարևոր հանգամանք ևս: Արամն այն փոքրաթիվ գործիչներից էր, ովքեր 1917-1918 թթ. ձգտում էին համագործակցել ռուս բոլշևիկների հետ: Հեռատես քաղաքական գործիչը համոզված էր, որ բոլշևիկների և հայության շահերի համադրումով միայն կարելի կլինի խուսափել 1915 թ. կրկնությունից: Պատահական չէ, որ երբ ՀՅԴ ներկայացուցիչներ Ռուբեն Տեր-Մինասյանը և Հակոբ Չավրյանը Ստեփան Շահումյանի հետ Թիֆլիսում քննարկում էին երկու կուսակցությունների համագործակցության նախագիծը, իրենց ձեռքի տակ ունեին Արամի գրավոր կարծիքը[19]: Ավելին, Թիֆլիսի բանակցություններից հետո Արամը Երևանում գտնվող բոլշևիկ Պ. Մակինցյանին հատուկ հանձնարարությամբ ուղարկում է Մոսկվա:

Ռուբենի հուշերից կարելի է եզրակացնել, որ, հաշվի առնելով բոլշևիկների հետ համագործակցելու Արամի տրամադրվածությունը, ինչպես նաև Հայաստանի արևմտյան սահմանների հարցում նրա առավել չափավոր մոտեցումները, Հայաստանի Հանրապետության այսօրվա սահմաններն ավելի ընդարձակ կլինեին, իսկ պետության անվտանգությունը՝ առավել քիչ խոցելի, եթե Արամն անժամանակ չհեռանար կյանքից:

Արամ Մանուկյանը, անշուշտ, դեռ շատ անելիքներ ուներ Հայաստանի Հանրապետության հզորացման գործում, և Ռուբենը դեռ շատ բաներ պետք է գրեր նրա մասին: Սակայն 1919 թ. հունվարին այդ ժամանակ Հայաստանում մեծ ծավալների հասած բծավոր տիֆը գերեզման տարավ մեծանուն հայորդուն, հայ ժողովրդի և հայոց պետականության անկրկնելի նվիրյալին:

Ծանոթագրություններ

1. Ռուբէն. Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Թեհրան, 1982, էջ 40:
2. Նույն տեղում, էջ 41:
3. Նույն տեղում, էջ 87:
4. Արամ Մանուկյանի իսկական անուն ազգանունը Սերգեյ (Սարգիս) Հովհաննիսյան է:
5. Ռուբէն, նշվ. աշխ., էջ 89:
6. «Արամը: Մահուան յիսնամեակին առթիւ». Երևան, 1991, էջ 154:
7. Այդ ժամանակ Ռուբեն Տեր-Մինասյանի ընտանիքը Ախալքալաքից տեղափոխվել էր Կարս:
8. Ռուբէն. նշվ. աշխ., հ. 2, Թէհրան, 1982, էջ 155:
9. Նույն տեղում, էջ 169:
10. Նույն տեղում, էջ 189:
11. Վանի հայության փրկվելուն մեծապես նպաստեց նաև հայ կամավորների և ռուսական բանակի ժամանակին տեղ հասնելը:
12. Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Ա, Պոսթըն, 1950, էջ 535:
13. Ռուբէն, նշվ. աշխ., հ. 5, Թեհրան, 1982, էջ 269:
14. Ռուբէն. նշվ. աշխ., հ. 7. Թեհրան. 1982, էջ 25:
15. Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը). Երևան, 2008, էջ 80:
16. Երևանը, շրջապատված լինելով թուրք-թաթարներով բնակեցված շրջաններով, երբեմն կտրվում էր հարակից հայկական բնակավայրերից: Միաժամանակ հայկական հակահետախուզականը ստույգ տվյալներ ուներ այդ թաթարաբնակ շրջաններում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող հակահայ գործունեության վերաբերյալ:
17. Ռուբէն, նշվ. աշխ., հ. 7, էջ 135:
18. Նույն տեղում, էջ 312:
19. Նույն տեղում, էջ 142:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Արամ

Այս օրերուն, երբ ես կը գրեմ այս տողերը, կը լրանայ Արամի եղերական մահուան չորսամեակը. իսկ մինչեւ իմ այս գրութիւնը հասնի «Հայրենիք»-ին, կը լրանայ նաեւ Վասպուրականի գոյամարտի ութնամեակը, - գոյամարտ մը, որ Արամի յեղափոխական անմահ ստեղծագործութիւնը եղաւ եւ հայութեան արիւնոտ պատմութեան ամենէն հոյակապ ու պայծառ մէկ դրուագը: Ասոր համար ահա, երախտապարտ աշակերտի իմ պարտքս կը համարեմ, երկու խօսքով եւ իմ թոյլ ուժերով, բնորոշել իմ Մեծ Ուսուցիչի եւ Հայութեան Մեծ Չաւակի անձն ու գործը, իր ընդհանուր գիծերով:

Ասկէ չորս տարի առաջ, 1919-ի յունուարի 29-ին, աւելի քան տասը հազար սգաւորներ, աննախընթաց եւ տրտմաշուք թափօր կազմած, Արամի անշունչ դիակը ուսամբարձ կը տանէին դէպի Երեւանի գերեզմանատունը: Մահուան թափօրը կանգ առաւ երկու նուիրական հիմնարկութիւններու՝ Հ. Յ. Դաշնակցութեան եւ Հայաստանի Խորհրդարանի շէնքերու առջեւ, որովհետեւ Արամը Դաշնակցութեան ոգին էր եւ Անկախ Հայաստանի հիմնադիրը:

Դժուարին է պատկերացնել Հայութեան եւ Դաշնակցութեան այդ հոյակապ զաւակի անձն ու գործը, որովհետեւ բառերը անզօր են, վերյիշումները անձնական ու անցողական, իսկ թուագրումները անհնարին, որովհետեւ անհնարին է թուագրել 20 տարուայ կեանք մը, որ բառիս իսկական առումով այդ 20 տարուայ իւրաքանչիւր օրը եւ իւրաքանչիւր ժամը ստեղծագործեր է՝ ստեղծագործելով քաղաքական-յեղափոխական-հասարակական լայն մարզերուն մէջ:

Կը մնայ միայն տալ ընդհանուր գիծերը Արամի անձնական նկարագրին, Արամի գործին եւ Արամի պատմական առաքելութեանը, - առաքելութիւն մը, որ մեր կուսակցութեան եւ ժողովուրդի ուրիշ հզօր զաւակներէն ոչ ոքի վիճակուեցաւ, եթէ ոչ նորէն իրեն, Արամին:

Արամը Դաշնակցութեան զաւակն էր, անշուշտ, ամենէն առաջ: Դաշնակցութեան իտէալներով լուսաւորուած, Դաշնակցութեան յայտարարած յեղափոխական–ազատագրական կռուի դրօշակով զինուած եւ Դաշնակցութեան յեղափոխական ոգին լրիւ ընդգրկած: Բայց Արամը յաճախ կը հագնէր հայ ժողովուրդի արիւնոտ ծիրանին եւ դաշնակցականը անոր մէջ կը վերածուէր անցեալ, ներկայ եւ ապագայ դարերու հայ հարազատ ու համայնապարփակ տիպարին: Այդ ժամանակ ահա Արամը իր գործովն ու նկարագրովը աւելի կ՚ընդարձակէր, աւելի կը խորացնէր եւ աւելի կը շքեղացնէր իր մէջ ապրող դաշնակցականը եւ կը դառնար ոչ թէ սովորական անհատ դաշնակցական, ինչպէս մենք բոլորս ենք, այլ ոգի՝ Դաշնակցութեան ոգին: Այնպէս որ Արամը եթէ իր գործովն ու նկարագրովը Դաշնակցութեան զաւակն էր, զաւակն էր ու սեփականութիւնը նաեւ հայ դարաւոր ժողովուրդին, ճիշդ այնպէս, ինչպէս Դաշնակցութիւնը, իբրեւ բարոյական հսկայ ուժ մը, ամենէն առաջ հայութեան զաւակն է եւ անոր անվիճելի սեփականութիւնը: Այստեղ է ահա, որ Արամը, թէեւ Դաշնակցութեան հոյակապ հիմնադիրներ Քրիստափորէն, Չաւարեանէն եւ Ռոստոմէն յետոյ եկած, բայց կը գտնուէր անոնց անհաս բարձրութեան աստիճաններուն վրայ եւ, ըստ իս, արդէն հաւասարած էր անոնց: Ասկէ ետք կարելի է եզրակացնել, թէ ի՞նչ էր Արամը Դաշնակցութեան մէջ եւ Դաշնակցութեան համար:

Արամը ծնաւ հայ լեռնաշխարհին մէջ եւ իբրեւ այդ լեռներու ոգին, անոր բովանդակ շունչովը, առնական կորովովն ու հպարտութեամբը գօտեպինդ, իջաւ այդ իսկ լեռներուն մէջ ծուարած հայ հիւղակները, իբրեւ լոյսի եւ ազատութեան սերմնացան: Տակաւին խարտեաշ պատանի՝ գրկեց պայքարի դրօշակը. հզօր, անհաւասար ու իր բարոյական արժէքին մէջ միշտ յաղթական պայքար մը, որ իրմէ առաջ սկսուած էր արդէն եւ որ ինք տարաւ մինչեւ սպիտակ կատարները, ստեղծելով վերջապէս Ազատ ու Անկախ Հայրենիք մը եւ կերտելով Հայ Անդրանիկ Հանրապետութիւն մը:

Կարծես ճակատագրօրէն սահմանուած էր, որ Արամը, քսաներորդ դարու առաջին քառորդին, ղեկավարէ մեր պատմութիւնը, անձամբ: Հերոսական, զանազան եւ բազմադէմ դրուագներով այդ պատմութիւնը, իր բոլոր գեղեցիկ մանրամասնութիւններուն մէջ, երեք հիմնական հանգոյց դրաւ մեր ժողովուրդի առջեւ, եւ Արամը լուծեց այդ երեք հանգոյցները իր անձնական եւ անմիջական ղեկավարութեամբ:

Առաջին անգամ, 1902–1903-ին, ռուսական բռնութիւնը փորձեց յափշտակել հայ ազգային դարաւոր արժէքները եւ մեր ժողովուրդի հոգեւոր ստեղծագործութեան գանձերը, եւ Արամը, դեռ պատանի, առաջինը եղաւ, որ ըմբոստացման դրօշակը պարզեց ռուսացման եւ ռուսական վտանգի դէմ:

Եւ ըմբոստացման այդ դրօշակի բարձրացումը առաջին գիտակցական ճիչը եղաւ հայ ժողովուրդի կողմէ ռուսական վիթխարի նուաճողականութեանը դէմ, — ճիչ մը, որ այսօր արդէն հզօր աղաղակի եւ կռուի շեփորի է փոխուեր:

Երկրորդ անգամ, 1915-ին, թրքական ոճրագար բռնութիւնը փորձեց խախտել մեր ցեղի դարաւոր գոյութիւնը, կոտորելով մեզ միլիոններով եւ մինչեւ վերջին արու ժառանգը: Այդ համատարած անզօրութեան մէջ Արամը եղաւ առաջինը, որ դարբնեց Վասպուրականի Ապրիլեան դիւթական գոյամարտը եւ փրկելով

հայութեան ռազմական պատիւը, առաջին անգամ հայ հողի վրայ խարսխեց հայ ցեղի անկախութեան յաղթական նշանատախտակը:

Երրորդ անգամ, 1918-ին, երբ նորէն դրուած էր մեր ցեղի գոյութեան հարցականը եւ կը բաւէր 24 ժամ, կամ ռումբի շեշտակի հարուած մը, կամ յուսալքման թոյնի կաթիլ մը, որպէսզի մեր ցեղը իրո՛ք սրբուէր աշխարհի եւ պատմութեան երեսէն, Արամը եղաւ առաջինը եւ միակը, որ հռչակուեցաւ դիկտատոր եւ յուսալքուած ամբոխները, իր հոգու սրբազան կրակով առաջնորդելով դէպի կենաց եւ մահու կռիւը, ոչ միայն փշրեց անագորոյն վտանգին թեւերը Սարդարապատի մարտադաշտին վրայ, այլեւ ստիպեց, որ նոյն թշնամին գլխարկ հանէ մարտնչող եւ ապրիլ գիտցող ժողովուրդի մը առջեւ եւ ճանչնայ անոր ազատ ու անկախ ապրելու գերագոյն իրաւունքը:

Այդ նուիրական 24 ժամուան մէջ էր ահա, որ Արամը ստեղծեց մեր նոր Պատմութիւնը, որ այլեւս միայն յեղափոխութեանը կամ յեղափո-խական կուսակցութեան մը չէ, այլ մեր ամբողջ ժողովուրդին եւ մեր ժողովուրդի ազատ ու անկախ պետականութեան գաղափարին:

Անչուշտ այդ գերագոյն հարցականները մեր ցեղի եւ Արամի առջեւ պատմութիւնն էր գրած. պատմութիւնն էր, որ դասաւորած էր դէպքերը, եւ պատմութիւնն էր, որ Արամին կը դաշնակցէր եւ, մանաւանդ, հայութեան եւ Դաշնակցութեան կենսունակ ուժերն էին, որ զօրավիգ էին Արամին: Բայց այդ բոլորով հանդերձ եւ այդ բոլորին մէջ Արամն էր, որ դիկտատոր էր, Արամն էր որ կը ղեկավարէր եւ հայութիւնն ու Դաշնակցութիւնը Արամին էին որ կը վստահէին իրենց բախտն ու ճակատագիրը:

Այսպիսով, Արամը, իրաւամբ, մեր ազգային յեղափոխական ազատագրութեան պատմութեան մէջ չի մնար սոսկ անհատ, այլ հերոս ու հանճար, իր բոլոր հզօր ստորոգելիներով: Որովհետեւ Արամը, օժտուած ի վերուստ, ամբողջ ժողովուրդի մը համար ստեղծեց նոր պատմութիւն եւ կեանքի կոչեց ու իրականացուց մեր հայրենիքի աւերակներուն վրայ 500 տարիներէ ի վեր թափառական ու անհանգիստ երազը: Արամը կրցաւ առարկայացնել ահա այդ մեծ երազը եւ այդ մեծ առարկայացումին մէջ է, որ կը մեծնայ Արամը եւ կը գերազանցէ իր եւ իրմէ ետք եկող ժամանակներու բոլոր մեծութիւնները, քանի որ, ամէն բանէ առաջ, Արամը կերտեց ազատ և անկախ Հայաստանը:

Արամի անձնական նկարագիրը շատ բարդ է, շատ խորը եւ շատ բազմաբովանդակ, որպէսզի կարելի ըլլալ ուրուագծել, այն այլ իմ համեստ ուժերով եւ այսպէս հապճեպ:

Բազմազան էին Արամի հոգիի տարրերը, բայց հոն ամենէն տիրապետողը սրբազան կիրքն էր, - կիրք մը վերծուած հզօր կամքի մը՝ անվերջ պայքարով եւ անվերջ ստեղծագործութեամբ: Կամք մը, որ իր տիրական ուժին տակ կը պահէր ամբոխներու բազմութիւններ եւ կազմակերպուած հաւաքականութիւններ, միշտ դառնալով անոնց հարազատ ու պատկերաւոր արտայայտութիւնը եւ միշտ մնալով անոնց վարիչն ու պատասխանատուն:

Արամի կիրքը կարելի է համեմատել դինամիտի հետ, որ իւրաքանչիւր փոքրիկ չափմամբ կարող է պայթել եւ դղրդացնել ամբողջ շրջապատը եւ համեմատել ելեկտրական կոճակի մը հետ, որ թեթեւապէս սեղմուելով կարող է լուսաւորել անվերջ տարածութիւններ:

Այդ կիրքը եւս, անշուշտ, անիկա ժառանգած էի իր ցեղէն եւ կուսակցութենէն, բայց ոչ ոք այնքան առատօրէն ու արժանաբար ժառանգած էր, որքան Արամը եւ ոչ ոք այնքան փարթամ ու ճոխ գիտէր բաշխել իր շրջապատին, որքան կրկին Արամը:

Կազմակերպչական տաղանդը զայն միշտ բարձր ու բացառիկ կը պահէր մեր իրականութեան մէջ: Կազմակերպչական տաղանդ մը, որ միշտ ինքնատիպ էր, հրապուրիչ ու ստեղծագործող եւ որ հրապարակ կու գար ամենահասարակ աշխատանքներու մէջ. օրինակ, թաղականական ընտրական պայքարէ մը, մինչեւ ամենապատասխանատուն, օրինակ՝ ամբողջ ցեղի մը պաշտպանութեանը մէջ:

Արամը այդպիսով գիտէր ստեղծել սերունդներ, գիտէր մարդկանց հրամայել, որպէսզի երթան մեռնին եւ գիտէր մարդկանց խընդրել, որպէսզի այլեւս չսպանեն:

Արամի կազմակերպչական ուժը այնքան տիրական էր, որ ոչ ոք կարող էր ընդդիմանալ: Երբ անիկա կը խնդրէր, կարծես կը հրամայէր, երբ անիկա կը բանաձեւէր, կարծես անյեղլի օրէնքներ կը գծէր, երբ անիկա որեւէ բան կը ծրագրէր, կարծես ոչ թէ ծրագիր էր այդ այլեւս, այլ արդէն վաղուց գործադրուած իրողութիւն:

Աշխատանքի բաժանման գաղափարը Արամի մօտ գոյութիւն չունէր. ուր որ լինէր այլեւս նա էր: Ոեւէ մարմնի նախագահը, քարտուղարը, գանձապահը եւ շրջաբերականներ պտտցնողը ինքն էր: Արամը կայ, եւ բաւական կը համարուէր, որ մարդիկ եւ գործիչներ հանգիստ եւ ապահով նստէին: Եւ այդպէս՝ բոլոր պատասխանատու աշխատանքներու թէ երկրորդական ձեռնարկներու մէջ, սկսած դպրոցական մանրիկ խնդիրներէն մինչեւ ցեղի գոյութեան հարցականը:

Երբ Արամը հազիւ 25 տարու երիտասարդ, Վան եկաւ եւ իր գլուխը գնահատուած էր օսմանեան կառավարութեան կողմէ, յեղափոխական ստորերկրեայ այդ ծանր վիճակին մէջ անգամ կրցաւ փաստօրէն, Ինքնավար Հայաստան մը ստեղծել, փակել տալով օսմ. դատարանի դուռները եւ ինքը անձամբ դատաւոր հանդիսանալով հայ ու քիւրտ ամենափոքր կամ ամենամեծ վէճերու համար: Իսկ Սահմանադրական համեմատաբար ազատ օրերուն, Արամը կրցաւ հարիւրաւոր գիւղական դպրոցներ կառուցանել եւ վարել Վասպուրականի հայութեան քաղաքական, ազգային, հասարակական բոլոր պատասխանատու աշխատանքները:

Ոչ մէկ գործ անոր համար երկրորդական չէր եւ անիկա ամէն գործին ժամանակ կը գտնէր հասնելու: Անիկա գիտէր, օրինակ, մոմը ձեռքին, տիրացուի մը հետ, եկեղեցիի մը մէջ, ծխական դպրոցի մը համար պնակ պտտցնել եւ նոյն օրը, իրիկուան, զէնքի տակ կանչել ամբողջ ժողովուրդ մը և ապստամբեցնել Օսմ. Պետութեան դէմ:

Երբ անիկա ներքին գործերու նախարար էր, իր նախարարական գրասենեակը, կարելի է ըսել, իր գրպանն էր, որովհետեւ նա միշտ կը շտապէր ամէն գործի անձամբ հասնիլ եւ ամէն գործ դրականապէս լուծել եւ, իրօք, նա միշտ կը հասնէր ամէն գործի եւ միշտ դրականապէս կը լուծէր ամէն գործ:

Արամի օգնութիւնը ամէնուն կը հասնէր անխտիր, բարեկամի, ընկերոջ թէ թշնամու: Կը յիշեմ, անիկա երեք անգամ իր կեանքը վտանգի տակ դրաւ, որպէսզի թրքական բանտէն ազատէ հնչակեան գործիչներ, որոնք իրենց բանտարկուելէն քանի մը ամիս առաջ չէին քաշուած Արամի կեանքին

դէմ դաւ նիւթել: Այնքան հայրական էր ան ու բոլորանուէր, որ յաճախ մարդիկ կու գային անոր մօտ ոչ թէ խնդրելու, այլ հրամայելու եւ անիկա այնքան բարութեամբ եւ համեստօրէն պատրաստ էր այդ յետին գիւղացու եւ յետին զինուորի հրամանները կատարելու:

Անսահմանօրէն անկեղծ էր դէպի բարեկամն ու դէպի թշնամին: Անկեղծութիւնը Արամի յաղթութեանց ու պարտութեանց պատճառն ու հետեւանքն էր միաժամանակ:

Հաւատքի անհուն բոցերով էր, որ կը լուսաւորէր իր գործը եւ իր ժողովուրդի ապագան:

Այդ անկեղծութեան ու հաւատքի հետ նաեւ այնքան միամիտ էր, որ յաճախ կը հասնէր մանկականութեան:

Բարութիւնը Արամի հոգիի ամենամեծ անկիւնաքարն էր եւ այդ բարութեամբ անիկա ընդունակ էր իր գեղեցիկ եւ հոյակապ գլուխը դնելու ամէն տեսակ վտանգի տակ՝ ամենապարզ եւ առօրեայ արժէքի համար:

Իբրեւ իր ցեղի ի վերուստ օժտուած զաւակ, Արամը իր կանխատես հոգիի աչքերով գիտէր տեսնել եւ կարդալ ապագան եւ գիտէր մանաւանդ պատրաստուիլ այդ ապագայի համար, որ միշտ փոթորկոտ էր եւ եզերական: Թէ 1902-ի, թէ 1915-ի եւ թէ 1918-ի անագորոյն վտանգներու փշրումը եւ թե այդ թուականներու ամենահզօր պայքարներու կազմակերպութիւնը կը պարտինք Արամի կանխատես, մարգարէական հոգիին եւ անոր Մովսիսեան դերին, երբ անիկա իրօք առաջնորդեց մեր ցեղը բոլոր Կարմիր Ծովերէն...

Եւ յետոյ, Արամի ոգեւորութեան սրբազան կրակը, որ հաւասարաբար ի յայտ կու գար անոր իւրաքանչիւր գործի եւ մանաւանդ խօսքի մէջ:

Անիկա պատրաստուած հռետոր չէր, բայց երբ կը խօսէր, չէր լսուեր այլեւս ոչ մէկ առարկութիւն: Այդ խօսքի մէջ անկեղծութեան, հաւատքի եւ տրամաբանութեան այնպիսի որակ եւ քանակ կար, որով նա կարող էր կատաղած ամբոխները զսպել եւ յուսալքուած բազմութիւնները կատղեցնել:

Նա կարող էր մարդկանց խաչել ցանկացող կատաղած ամբոխի կիրքերը մտրակելով խաղաղեցնել, իսկ դասալիք զինուորներու բազմութիւնները, որոնք իրենց տրեխներու եւ գլխարկներու հոգսերով յուսաբեկուած փախած էին կռուէն, Արամի դիւթական խօսքի կախարդումով այս անգամ գօտեպինդ՝ ինքզինքին հայհոյելով ետ կը վերադառնային դէպի արիւնի մարտերը, այս անգամ չխնայելով իրենց կեանքը...

Ոգեւորութեան ու հաւատքի այդ սրբազան կրակը կարծես Արամի հոգիի մէջ դրուած էր մեր հեթանոսական անցեալէն եւ անոր ոգեւորութեան բազմաթիւ դէպքերուն զինք ուշադիր դիտողը կարծես կեցած էր մեր հին աստուածներէն մէկն ու մէկի առջեւ...

Արամի հանդէպ սովորական տրամադրութիւններ ու միջակ համակրութիւններ չկային: Կամ կը պաշտէին եւ կամ կ'ուզէին սպաննել զայն: Ատիկա թերեւս անոր մեծութեան ամենամեծ ստորոգելին է: Միւս կողմէ՝ Արամի բախտի անիւը, ինչպէս մեր ժողովուրդին ու կուսակցութեանը, շարունակ շուռ կու գար, կ'իյնար ու կը բարձրանար: Անիկա մերթ կը բարձրանար իր փառքի եօթներորդ երկինքը եւ մերթ կը գահավիժէր ցած, մինչեւ անյատակ անդունդները... Երբ անիկա հազիւ 25 տարու երիտասարդ էր, թուրք ու քիւրտ ժողովուրդը Փաշա կը կանչէր զայն, որովհետեւ իրօք ան փաշա էր, այսինքն՝ ամենամեծ մարդը ամբողջ Վասպուրականի մէջ:

Արամը յեղափոխական ստորերկրեայ կեանքին մէջ ամբողջ Վասուրականում գրեթէ աստուածացուած մարդն էր, բայց օր մը ալ անոր մազերէն բռնած ջրհորէն դուրս քաշեցին եւ գանակոծելով, հայհոյելով ու թքնելով մինչեւ թրքական բանտը տարին, ուր կը սպասուէր անոր կախաղանի դժխեմ ձողի բարձրացումը, բայց քանի մը ամիսներ ետք, նոյն թքնողներն ու հայհոյողները, հազարներով կու գային համբուրելու անոր ձեռքերը...

Իր բովանդակ մեծութիւնը կը պարտադրէ խուսափիլ բառերէ ու ածականներէ՝ զինք բնորոշելու համար: Իր ծանօթներէն, ընկերներէն ու երկրպագողներէն ոչ ոք կարող է ուրուագծել անոր անսպառ գործը, որ իր մահէն ետք տակաւին կը շարունակուի. վերլուծել անոր խորունկ հոգին, որ դեռ կենդանի ու անքննելի կը մնայ եւ մարմնաւորել անոր հրաշագեղ անհատականութիւնը, որ միշտ կը զատորոշուի սովորականէն, մասնաւորէն ու մահկանացուէն: Վասնզի մինչդեռ ամէն մեռնող մարդու ետեւէն, առաւել կամ նուազ չափով, կը թափուին արցունքներ, կը լսուին ափսոսանքի խօսքեր ու կ'արտասանուին մեծ կամ պզտիկ բառեր, բայց Արամը կը պարտադրէ մեզ ոչ մէկ անգամ չհաշտուիլ իր մահուան հետ, վասնզի անիկա սովորական անհատէն վեր՝ մերն էր, մեր ցեղի ոգին, եւ ոչ ոք կարող է հաշտուիլ իր սեփական ոգու կորուստին հետ:

Չորս տարի է անցած իր եղերական մահէն եւ որքան սակայն կոյր ու ճակատագրական ժամանակը երկարի, որքան բաժնէ ու աւելի հեռացնէ զայն մեզմէ, այնքան աւելի Արամը կը մերձենայ մեր հոգիներուն, այնքան աւելի Արամը կը մեծնայ ու մեր սէրը դէպի իր զօրեղ անհատականութիւնն ու աստուածային գործը կը ծաւալի, կը խորունկնայ ու կը վերածուի երկիւղած պաշտամունքի:

Այսօր կրօնական երկիւղածութեամբ մը կ'արտասանուի իր անունը, վասնզի անիկա մեր օրերու Մովսէսը եղաւ, որ առաջնորդեց մեզ բոլորս Կարմիր Ծովերէն եւ Երեւանի Ազգային Խորհրդարանի վրայ կախեց մեր ցեղի Անկախութեան եւ Ազատութեան նուիրական նշանատախտակը: Եւ, հիմա, երբ իր նիւթեղէն գոյութիւնը կը քայքայուի Երեւանի խոնաւ գերեզմանատան մէջ եւ կը տարրալուծուի ու կը միախառնուի Մեծ Բնութեան, իր Ոգին կենդանի կը մնայ, կ'ի՛շխէ մեր հոգիներուն եւ նորէն ու նորէն կ'առաջնորդէ մեզ դէպի իր եւ մեր միակ պաշտելին՝ Հայ ժողովուրդը...

Եվ հազիւ կրցայ տալ Արամի հոգիի եւ գործի քանի մը մանրամասնութիւնները: Բայց, ամէն պարագայի տակ, Արամը տուաւ այն ամենանուիրական արժէքը, որ մեր ցեղը երբեւիցէ երազած է եւ որ մէկը երբեւիցէ կարող էր տալ: Արամը տուած է մեզ մեր Անկախութիւնը արդէն առարկայացած, արդէն փաստ, արդէն արձանացած մեր ցեղի պատմութեան մէջ եւ սեփականութիւնը իւրաքանչիւր հարազատ հայի կամ դաշնակցականի:

Կրկին ու կրկին կը խոնարհենք մեր գլուխը այդ սրբազան արժէքի՝ Անկախ Հայաստանի եւ անոր մեծ հիմնադիր՝ Արամի առջեւ...

Օննիկ Մխիթարյան

Արշավիր Շահխաթունու հուշերից

Մեկ այլ հուշագրության հեղինակը Երևանի զինվորական պարետ Արշավիր Շահխաթունին է: Այն կրում է «Սարդարաբադի հերոսամարտը եւ մահափորձ Արամ փաշայի դէմ» խորագիրը: Հուշերը գրվել են թարմ տպավորությունների ներքո: Այդ օրերին Երևանի Հայոց ազգային և Զինվորական խորհուրդների Հատուկ կոմիտեի հրամանով Երևան քաղաքի պահպանությունը հանձնվել է պարետ Ա. Շահխաթունուն[1]:

Հուշերում արձանագրվել են Արամի հետ համատեղ գործունեության ընթացքում տեղի ունեցած դեպքերն ու փաստերը: 1918 թ. մայիսին Ալեքսանդրապոլ-Սարդարապատ-Երևան ուղղությամբ հարձակվող թուրքական ուժերը ներխուժել են Արարատյան դաշտ: Վտանգ էր սպառնում Էջմիածնին և Երևանին:

Հուշերը սկսվում են թուրքական ներխուժման նկարագրությամբ: Ա. Շահխաթունին ներկայացնում է իր և զորավար Մ. Սիլիկյանի հեռախոսազրույցը. «Չունեմ որևէ պահեստի զինվոր՝ թշնամուն դիմադրելու համար... Հայտնեցեք Արամ փաշային՝ գաղտնապես, թե պիտի աշխատեմ նահանջել դեպի Ղարխունի ճահիճները և ամրանալ Թոզ-Թեփելերի վրա: Դուք ամրացրեք Երևանը: Տեղի մի՛ տվեք շփոթության և իրարանցումի»[2]:

Այդ բախտորոշ օրերին դրսևորվել է Ա. Մանուկյանի՝ թշնամուն հակահարված հասցնելու աներեր վճռականությունը: Նրա վճիռները համարձակ էին և խելացի: Ա. Շահխաթունու հուշերում Արամը գտնվում է գործողությունների կիզակետում, կարողացել է բոլորին համախմբել մեկ նպատակի շուրջ. «Այստեղ պետք է ավելացնեմ, որ Արամը այդ օրերին աներևակայելի եռանդ էր ցույց տալիս բանակի կազմակերպման և ինքնապաշտպանության համար՝ ամեն կողմ երիտասարդ ուժեր ուղարկելով՝ քարոզելու, թե հայ ժողովրդի համար ստեղծված է «լինել, թե չլինելու» հարց: Գիշերները նա չէր քնում, մինչև առավոտյան ժամը 3-ը ոտքի վրա էր: Ամեն հարցի մեջ մտնում էր, որպեսզի ամեն ինչ իր կարգադրությամբ լիներ: Հույս էր տալիս բոլորին, և նրա այդ ընթացքը ապահովություն էր ներշնչում ժողովրդին»: Ա. Մանուկյանն ամենաօրհասական պահին անգամ չէր կորցնում մարտական ոգին: Նրան չհուսահատեցրեց նույնիսկ Ալեքսանդրապոլի անկման լուրը: «Արամի դեմքը չայլայլվեց, բայց երևի իմ դեմքը փոխվել էր, որ նա ինձ ասաց. «Ի՞նչ է

պատահել: Ձեզնդ մի կողմ: Դեպի գործ և աշխատանք: Հաղթողը մենք ենք լինելու»[3]:

Այնուհետև Արամին տեսնում ենք Երևանի մերձակայքում՝ Ուչ-թեփելերիում (Երեք բլուրներ), որոնք ամրացվել էին Երևանի պաշտպանության համար: Արամը, դիտելով այդ բլուրները, ասել է. «Սրանք մեր վերջին ամրոցներն են: Բայց քաջահույս եմ, որ մինչև այդտեղ թշնամին չպիտի հասնի...»[4]:

Նշենք, որ Արամի և Խալիլ փաշայի հանդիպմանը անդրադարձել է նաև Ա. Շահխաթունին: 1918 թ. ամռան վերջին Արամը Երևանում ընդունում է Խալիլ փաշային: Խալիլի ցանկությամբ Արամը նրան ուղեկցում է Թ.Նազարբեկյանի մոտ, այնուհետև՝ Սբ Էջմիածին՝ կաթողիկոսի հետ հանդիպելու: Նա խոստանում է կատարել Խալիլի ևս մեկ ցանկություն՝ հայերի օգնությամբ ապահով հասնել Էրզրում՝ դրա փոխարեն պահանջելով թուրքերի ձեռքում գտնվող Կարսի զինապահեստներից փամփուշտ ստանալ հայոց բանակի կարիքների համար: Նրա համար հայրենիքի սահմանների պաշտպանությունը կարևորագույն խնդիրներից էր: Զուգահեռներ անցկացնելով հայաստանում ստեղծված այսօրվա օրհասական դեպքերի հետ՝ կարող ենք հետևություն անել. եթե Արամի նման հայրենանվեր շատ գործիչներ ունենայինք և մեր բանակը համալրեինք ժամանակակից տեխնիկայով, Արցախյան երկրորդ պատերազմն այլ ելք կունենար:

Ծանոթագրություններ

1. ՀԱԱ ֆ. 289, ց. 1, գ. 4, թ. 6:
2. Շահխաթունի 1959, 21:
3. Շահխաթունի 1959, 21-22:
4. Շահխաթունի 1959, 21-22:

Արշալույս Աստվածատրյանի հուշերից

«Արդարապատի պատմաշինությունը և այլ երկեր» գրքում Արշալույս Աստվածատրյանը[1] հանգամանորեն ներկայացրել է Արամ Մանուկյանի անձնական կյանքի շատ դրվագներ[2]: Դրանք ոչ միայն հուշեր են, «այլ նաև անոր կյանքին ու գործին ամբողջ պատմությունը, անոր լուսաշող դիմագծի վերլուծությունն ու արդար արժեքավորումը»[3]:

Ա. Աստվածատրյանը Արամին առաջին անգամ հանդիպել է 1901 թ. Երևանի թեմական դպրոցում: Նա աշակերտական մի հավաքույթում ծանոթացել է Արամի հետ: Վերջինս «պնդակազմ էր ու խոշոր, անունը՝ Սարգիս»: Հետագա շարադրանքում հուշագիրը խոստովանում է, որ մինչև 1918 թ. ինքը չի իմացել, որ Ղարաբաղի թեմականից Երևան տեղափոխված Սարգիսն ու Արամը նույն մարդու անուններն են: Շարունակելով պատմությունը՝ նա նշում է, որ 1917 թ. մի օր Արամի հետ կառքով տեղ են գնացել: Ճանապարհին նկատել է, որ Արամի դիմագծերը իրեն հիշեցրել են 17 տարի առաջ Երևանում տեսած Սարգսին: Ա.Աստվածատրյանը չի զլանում նկարագրել նրա արտաքինը՝ «բաց մոխրագույն մահուդից բլուզ, սև կաշվից լայն գոտի, սև մահուդից տաբատ, խիտ, ըմբոստ մազեր, վատառողջ աչքեր, իր տարիքին չսազող լուրջ դեմք»[4]: Հետագայում, Արամի հետ շփվելով, հուշագիրն ամեն անգամ ստացել է այն տպավորությունը, որ Արամը լուրջ ու լռակյաց, ինքնամփոփ մարդ է և աչքի չի ընկնում իր կարողություններով. «Հռետոր չէր, արտասանությունն ուներ ինչ-որ փոքրիկ թերություն, որ վնասում էր խոսքի արտաքին տպավորությունը, մանավանդ անսովոր ականջի համար: Չուներ նաև հստակ սահուն ոճ, որի ազատ կարկաչյունն այնքան անհրաժեշտ է միտինգային հռետորի համար»[5]: Նրա արձանագրած փաստերը, թվում է, թե նսեմացնում են մեծ գործչի մարդկային նկարագիրը, բայց երբ ավարտում է միտքը, պարզ է դառնում, որ ցանկացել է նրա կերպարը համակողմանիորեն ներկայացնել. «Զուրկ հռետորական շնորհքից՝ Արամը, սակայն, ուներ զարմանալի բովանդակալից ու հարուստ միտք, և երբ ականջդ սովորում էր նրա լեզվին ու խոսքին, միշտ հաճույքով էիր լսում նրան: Ճկուն ու հնարագետ էր նրա միտքը: Չեմ հիշում մի դեպք, երբ կարկտի նման տեղացող ժողովներում, նիստերում ու խորհրդակցություններում ստեղծված լիներ ծանր ու անելանելի կացություն՝ փակուղի, և Արամը փրկած

չլիներ դրությունը»[6]: «Նա շնորհալի զեկուցող էր: Նրա զեկուցումների մեջ չկար ոչինչ ավելորդ, ոչ մի միտք հոգնեցնող մանրամասնություն: Խնդիրները դնում էր իրենց մերկությամբ, լուսաբանում էր պարզ ու կարճ, երբեմն, կարիք եղած դեպքում զեկուցումն ամփոփում էր երկու խոսքով և ապա տալիս եզրակացություններ: Ախտաճանաչության զարմանալի ընդունակություն ուներ, դեպքերն արժևորում էր ճշտությամբ և այնուհետև գալիքը նախատեսում էր հատուկ կերպով»[7]:

Ա. Աստվածատրյանին հիացմունք են պատճառել Ա. Մանուկյանի բնավորության գծերը՝ հաստատակամություն, սկզբունքայնություն: Խորությամբ ճանաչել է հեղափոխական գործչի, պարզապես հայ մարդու անհատական հատկանիշները: Ա. Մանուկյանին դիկտատոր[8] ընտրելու հաջորդ օրը, երբ նա տուն է վերադառնում, տան մուտքի երկու կողմում տեսնում է պահակ-զինվորների, իսկ բնակարանի մուտքին՝ «Արամ փաշա» ցուցանակը, նա գրպանից հանում է գրչահատն ու մաքրում այդ բառը, երկու օր անց էլ՝ նաև հսկողներին: 1917 թ. վերջերին Արամը Թիֆլիսից ժամանում է Երևան և տեղի Հայոց ազգային խորհրդի նիստում (դեկտեմբերի 24) հանդես գալիս զեկուցումով՝ ներկայացնելով քաղաքական իրավիճակը: Երևանի ազգային խորհրդի կողմից Արամի՝ հայկական կազմակերպությունների առջև ծառացած խնդիրների վերաբերյալ արած առաջարկություններն

արժանանում են հավանության: Ընտրվում է արտակարգ լիազորություններով օժտված մի մարմին՝ Հատուկ կոմիտե, որը դարձել է Երևանի նահանգի փաստական իշխանությունը, իսկ ուղղություն տվողն ու ոգեշնչողն Արամ Մանուկյանն էր:

Ա. Աստվածատրյանը ուշագրավ մանրամասներ է պատմում նաև Արամի կենցաղավարության մասին: Արամը երբեք հոգ չի տարել իր մասին: Որտե՞ղ ապրել, ի՞նչ ուտել, ի՞նչ հագնել. այս հարցերը քիչ են հուզել նրան: «Մի կերպ կապրենք, չենք մեռնի» – այս է եղել Արամի տեսակետը»: Ըստ հուշագրի՝ Արամը որևէ տեղից աշխատավարձ չի ստացել և ապրել է զրկանքներով ու գրեթե կիսաքաղց: Մինչև ընտանիքի՝ Երևան տեղափոխվելը նա ապրում էր Աբովյան և Դոկտորսկայա փողոցների անկյունում գտնվող հասարակ տան մեջ: Սենյակը չուներ տարրական հարմարություններ և կահավորանք. «մի անշուք մահճակալ, երկու հասարակ սեղան և մի երեք-չորս հասարակ աթոռ»: Սենյակի մի անկյունում դրված էր թիթեղյա վառարանը, որի խողովակները հաճախ դուրս էին ընկնում իրար միջից՝ սենյակը լցնելով ծխով: Ա. Աստվածատրյանի և Արամ Մանուկյանի տներն իրար մոտ էին, և նրանք հաճախ էին ճաշում միասին: Արամի ճաշի մասին հոգ էր տանում նույն տանն ապրող վանեցի մի ընտանիք, որն ապրում էր զրկանքներով: Երբեմն ընկերները ճաշում էին առանց հացի: Վանեցի քույրիկը, ճնշվելով ու ամաչելով, ասում էր, որ տանը հաց չկա, Արամը, բարի ժպիտը դեմքին, հանգստացնում էր. «Արշալույսը օտար մարդ չէ, վնաս չունի»[9] Հուշագիրը նշում է, որ Արամը շրջապատում իրեն պահում էր սովորական մարդու նման, և բոլորն էլ կարող էին նրան մոտենալ որևէ հարցով: Բնակչության կողմից նա հաճախ էր դիմումներ ստանում, դրանց լուծում տալիս, միայն երբեմն կատակել է՝ ասելով. «Կարծում եմ՝ ամուսնալուծության համար էլ շուտով ինձ են դիմելու»: Հատուկ կոմիտեն Արամի համար կառք էր գնել, որպեսզի ժամանակը խնայի, բայց երկու շաբաթից այն վաճառվում է, որովհետև նա գրեթե չէր օգտվում դրանից, իսկ Թիֆլիսից ուղարկած ինքնաշարժն էլ ուղարկել էր Ազգային խորհրդի ավտոկայանատեղի՝ ընդհանուր կարիքներին ծառայելու համար:

Սարգիս Օհանջանեանի /Ֆարհատի/ հուշերից

Ստեր կուսակցութեան մէջ ոչ ոք Արամի աստղը չունի: Եւ ինչպէս հոյակապ փայլում է այդ աստղը: Լաւ լսիր, թէ ինչ եմ ասում քեզ: Հեռուից թէ մօտից ուշադիր հետեւել եմ ու հետեւում եմ իր գործերին: Մեծ մարդկանց յատուկ քայլերով, թռիչքներով է առաջանում: Արդէն Վանի հերոսամարտը կազմակերպելով ու վարելով՝ Արամը դուրս եկաւ մեր կուսակցութեան սահմաններից ու դարձաւ ազգային դէմք՝ Վասպուրականի հերոսը: Արամն է, որ լուսաւորում է բոլորիս ճամբան: Իսկ այժմ մեր այս ծանր, անհնարին պայմաններում, մեր աչքերի առջեւ՝ տես ինչեր է անում: Քեզ բան եմ ասում,- մարդ չէ, հրաշք է...: Արամն է, որ լուսաւորում է բոլորիս ճամբան, եւ քանի նա կայ, կասկած չունեմ, որ յաջողելու ենք եւ լոյս աշխարհ ենք դուրս գալու այս... խոր վիրապից: Լավ լսիր, Արամն էլ միայն մերը չէ, միայն Դաշնակցութեան չէ, նա բոլորինն է: Մի տես, ինչպես է գերել, իր ու գործին հետ կապել ժողովրդականներին, այն ժողովրդականներին՝ որ Դաշնակցութեան համար լաւ խօսք չունէին պահած: Մազերս ճերմակել են Դաշնակցութեան մէջ, բայց նման բան լսած ու տեսած չկամ: Արամի աստղին հաւատում ենք ոչ միայն մենք՝ Դաշնակցականներս, այլեւ նրանք՝ ժողովրդականները ու բոլորը:

Ծանոթագրություններ

1. Արշալույս Աստվածատրյան (1883-1973) հեղափոխական գործիչ, Երևանի Հատուկ կոմիտեի անդամ:
2. Աստվածատրյան 2007:
3. Արամը մահուան յիսնամեակին առթիւ 1991, 7-8:
4. Աստվածատրյան 1927, 300:
5. Աստվածատրյան 1927, 300:
6. Աստվածատրյան 1927, 300:
7. Աստվածատրյան 1927, 301:
8. 1918 թ. մարտի 24-ին Երևանի բնակչությունը, զորքը և Հայոց ազգային խորհուրդը Արամին ընտրեցին Երևանի նահանգի դիկտատոր: Հմմտ. Ասրյան 2009, 58:
9. Աստվածատրյան 1927, 303:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Զորավար Մովսես Սիլիկյան

Դժգոհները չեն ճանաչում Արամին: Երբ ճանաչեն, կհամոզվեն, որ ներկայումս նա ՄԻԱԿ կարող մարդն է այդ պաշտոնի (զինվորական վարիչի) համար:
Եվ ինչո՞ւ եմ հրաժարվում. որովհետև մեկ է՝ ես ինքս առանց Արամի ոչինչ չեմ անելու: Ես այժմ էլ առանց Արամի հետ խորհրդակցելու ոչ մի կարևոր քայլ չեմ առնում, իսկ վարիչի պաշտոնը հանձն առնելու պարագային, գրասենյակս տեղափոխելու եմ նրա մոտ:

Գարեգին Նժդեհ

Կար ահավոր վտանգը, որ ճակատած Վանի դեմ, գլխովին ոչնչացմամբ կսպառնար Վասպուրականի հայության: Սակայն, փառք բախտին, կար և պիտի հայտնվեր Արամը: Եվ, առաջնորդի իմաստությունը, միացած վասպուրականցիի հերոսականության՝ հրեղեն պատնեշ պիտի կանգներ Վանի շուրջը:

Ան պիտի հեգներ մոլեգնած թշնամիի երեսնօրյա գրոհները՝ խրոխտալով...

Արամն ու Վանը եկան վկայելու աշխարհին, թե, այո՛, հայությունը կարելի է ջարդել, երբ ան անզեն է, անհամերաշխ և անղեկավար, բայց ո՛չ պարտության մատնել, ո՛չ ալ կասեցնել ընթացքը հայ արիության, երբ ան կը ղեկավարվի Ցեղի Ոգիեն:

Շահան Նաթալի

Վանը վկայական մըն էր միայն: Եվ Արամ անգամ մըն ալ Երևանով եկավ ապացուցանելու, թե բախտը չէր, որ զինքը օրվան մարդ կը դարձներ, այլ ինքն էր, որ բախտը կը կառավարեր կռվելու և հաղթելու համար:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հատված Դավիթ Գասպարյանի «Գուրգեն Մահարի. կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունից

«Այրվող այգեստաններ»–ը գեղարվեստի տոն դառնալու և Մահարուն պետական մրցանակի արժանացնելու փոխարեն՝ ենթարկվեց քննադատության, իսկ հեղինակը՝ հալածանքների: Հեռախոսային զանգերով ու գրություններով ահաբեկում էին գրողին, սպառնալիքը հասավ ծայրահեղ աստիճանի: Մահարու գիրքն այրում էին: Այս դաժան հարձակմանը միացան և՛ գրողներ, և՛ քննադատներ, և՛ վանեցի «ազգային»–ներ: Տարբեր նամակներում Մահարին խորագույն դառնությամբ ու ցավով է գրում իր դեմ ուղղված հալածանքի մասին՝ պարզ ասելով, որ դրա պատճառը դուրս է գրական շարժառիթներից: Նա թեև ուներ բարեկամներ՝ Հ. Սահյան, Վ. Դավթյան, Հ. Մաթևոսյան, բայց դժգոհ էր նաև նրանց կրավորական կեցվածքից: «Մի՞թե ես այդպես կվարվեի <...>: Մի՞թե ես կլռեի, եթե նրանցից մեկն ու մեկի մասին լույս տեսներ «քարտուղարության կարծիքը»,— դառնությամբ ավելացնում է նա և ամփոփում. «Մարդն է, որ չկա կամ անհետանում է: Մարդը»:

Դավիթ Գասպարյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Ինձ հայտնի է և այն, թե ով գլորեց այդ սև... ձնագնդակը...», «մի շարք անվանի անուններ իմ գիրքն այրում են», «Ահա <...> հիմա էլ մի նամակ են սարքել թուրքերեն և տարածում են ձեռքից ձեռք, ուր շնորհակալություն է հայտնում թուրքը... իմ վեպի համար», «Գրողների միության ղեկավարության օրհնությամբ ինձ բզկտում են, վարկաբեկում և չունեմ ոչ մի պաշտպան» (Գ, 2002, թիվ 1, էջ 44-51):

Ահա թե ինչ է գրում այդ օրերի մասին անմիջական վկան՝ Մահարու կինը.

«ԳԻՐՔԸ ՊԱՏՈՌՈՒՄ ԷԻՆ, ՅՈՒՅԱԴՐԱԲԱՐ ԽԱՐՈՒՅԿ ՆԵՏՈՒՄ: ԱՅԴ ԱՄԵՆԻՑ ԲԱՎԱԿԱՆԱԲԱՐ ԱՆՄԱՍՆ ՁՄՆԱՑԻՆՔ ՄԵՆՔ՝ ՔԱՐԵՐ ԷԻՆ ՆԵՏՈՒՄ ՄԵՐ ՊԱՏՇԳԱՄԲԸ, ՀԵՌԱՁԱՅՆԵԼՈՎ ԱՆՊԱՏՎՈՒՄ ՈՒ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԻՆ, ՍՏԱՆՈՒՄ ԷԻՆՔ ԱՆՍՏՈՐԱԳԻՐ ՆԱՄԱԿՆԵՐ ՈՒ ՁԱՆԱՁԱՆ ՀԱՅՀՈՅԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»:

Հալածանքները չեն դադարել նաև Մահարու մահից հետո՝ մտել են նրա տուն, անարգել հիշատակը, հայհոյել կնոջը (Անտոնինա Մահարի, «Ինձ երևի կհասկանան, բայց ես արդեն չեմ լինի», ԳԹ, 1991, թիվ 18, 24 մայիս): Մեկ այլ առիթով կինը նաև ավելացնում է, որ «Այրվող այգեստաններ»–ով Մահարին «նույնիսկ հպարտանում էր » (ՍԳ, 1983, թիվ 8, էջ 100):

Այս մտքերն այլ շարադրանքով առկա են նաև Անտոնինա Մահարու «Իմ ոդիսականը» գրքում, քանի որ նրբերանգները ևս կարևոր են, մեջ ենք բերում նաև գրքի այդ հատվածը. «Համենայնդեպս Գուրգենը հասցրեց գրել իր դասական գործը, որը հետո փոթորիկ պիտի բարձրացներ: «Այրվող այգեստաններ»–ը Գուրգենին հսկայական դառնություն, վիրավորանք, իսկ ընկերներին հիասթափություն պատճառեց: Լուրջ գրական երկը կոխկռտվեց ցեխոտ ոտքերի տակ: Հիվանդ գրողի դեմ մի այնպիսի վայրենի արշավանք կազմակերպվեց, որ նկարագրելն անհնար է: Գիրքը պատռում էին, վառում: Մեր պատշգամբն էին նետում քարեր, ձմերուկի կճեպներ, ամեն տեսակի գարշանք: Հեղինակին վիրավորող հեռախոսազանգեր, անանուն նամակներ և երկտողեր...» (ԻՈ, 153): Անտոնինան փորձել է ինչ–որ բան թաքցնել Մահարուց, բայց վերջինս պահանջել է ոչինչ չթաքցնել. «Ես պետք է իմանամ, թե ինչի են ընդունակ իմ թանկագին եղբայրները»:

Պալանգայում եղած ժամանակ նրան Երևանից ահաբեկել են. «Անիծյալ թուրք, չփորձես վերադառնալ: Մեկ է, սպանելու ենք քեզ»: Գուրգենը վախենում էր վերադառնալ, բայց ես ստիպեցի ու համոզեցի: Նրա աչքերում անսահման ցավ ու վիրավորանք կար: Մենք վերադարձանք Երևան, նա փակվեց իր աշխատասենյակում և փողոց դուրս չէր գալիս» (ԻՈ, 154):

Իսկ վեպի գրության ընթացքը այսպես է մտաբերում. ««Այրվող այգեստաններ»–ը գրելու ժամանակ Մահարին ապրում էր հիշողություններով ու այնտեղ էր... Գիշերը մղձավանջները տանջում էին նրան, երազում տեսնում էր ջարդի սարսափները: Այս սարսափելի հիշողություններից սրվեց նրա խոցը: Ցավից ճչում էր՝ մայրիկ ջան, ես մեռնում եմ» (նույն տեղը):

Այս իրադրության մեջ ամենևին պատահական չէ, որ տպագրության ժամանակ կազմատնից հանկարծ կորչում են 10–24–րդ մամուլները: Ուրեմն մի չար ձեռք այստեղ ևս հետապնդել է նրան:

Մահարու և նրա վեպի դեմ արշավանքն սկսեց գրողների միությունը: 1967 թ. մայիսին հարցը քննարկվեց քարտուղարության նիստում («ՀՍԳ միության քարտուղարությունում», ԳԹ, 1967, թիվ 21, 19 մայիս): Ըստ այդմ՝ իբր ՀԳՄ քարտուղարությունը, գրական պարբերականների խմբագրությունները «բազմաթիվ նամակներ, հոդվածներ և գրախոսություններ են ստացել Մահարու «Այրվող այգեստաններ» վեպի մասին»: Քննարկելով դրանք՝ քարտուղարությունը հայտնում է իր կարծիքը, ըստ որի՝ Մահարին «մոռացության է մատնել» հայ–թուրք հարաբերության «պատմական» իրողությունները: Իբր, ըստ Մահարու, Վանի եղեմական «անդորրը խախտվեց դրսից եկող արևելահայ գործիչների պատճառով»: Այս ասելու հետ մեկտեղ մարքսիստական քարտուղարությունը նաև ավելացնում է. «Այդ պայքարի ընթացքին վնասեց հատկապես դաշնակցության արկածախնդրային գործունեությունը»: Այս հարցում քարտուղարությունը, ըստ էության, կրկնում է Մահարու տեսակետը այդ «արկածախնդրային գործունեության» վերաբերյալ: Իբր Մահարին «չհասկանալով պատմական իրադարձությունների իմաստն ու ժողովրդական ինքնուրույն պայքարի նշանակությունը, հանգել է անընդունելի, հակապատմական ընդհանրացումների, որ իբր հայ ժողովրդի մեծ ողբերգության պատճառը «բզեզների բունը անտեղի կերպով խառնելն է...»: Այս պատկերով Մահարին ուզում էր ասել, որ ազգային–ազատագրական պայքարը լավ չի կազմակերպված, հակառակ դեպքում չէինք կորցնի մեր պատմական հայրենիքը: Այնուհետև՝ տարվելով «կենցաղային մանրուքներով՝ <...> բացասական, ոչ բնորոշ հատկություններով է օժտել վեպի կերպարներին, դրանով իսկ վիրավորելով հայ ժողովրդի արժանապատվությունը: Հաջորդում է հակասությունը. «Այսպիսի կերպարները, իհարկե, չէին կարող կազմակերպել Վանի հերոսամարտը, հերոսամարտ, որ հայ ժողովրդի պատմության լուսավոր էջերից մեկն է և, ըստ էության, դուրս է մնացել վեպից»: Եթե այդ հերոսները չէին կարող կազմակերպել Վանի հերոսամարտը, հապա ինչպե՞ս այն կազմակերպվեց և դարձավ «պատմության լուսավոր էջ»: Իբր վեպում առկա հերոսները «կերպարներ չեն դարձել», պատմական դեպքերը «ենթարկվել են կամայական, անբարեխիղճ մեկնաբանությունների»: Իբր «վեպում առատ տեղ են գտել անհաշիվ բամբասանքներ ու երազներ. անպատշաճ սրամտություններ, չարդարացվող զավեշտ»: Այսինքն, ըստ քարտուղարության՝ գեղարվեստական վեպը պետք է լիներ կամ պատմագիտության, կամ իրավագիտության ձեռնարկ... Վերջում քարտուղարությունը վստահություն է հայտնում, որ գրողը «լրջորեն կվերանայի իր գրական այս անհաջողությունը և ճիշտ եզրակացություններ կհանի իր հետագա ստեղծագործական աշխատանքի համար»:

Մահարին քարտուղարության կարծիքը համարել է «անարդար, սողացող...», «մուլթ, մուլթ, մուլթ», Նաիրի Զարյանի «կնիքով կնքված»» (ԱԱ, 629–630):

Մահարու վեպի դեմ ուղղվեց Նաիրի Զարյանի «Ասք էության» պոեմը, որ 1967–ին տպագրվեց «Գրական թերթ»–ի նույն համարում (թիվ 21, 19 մայիս), ուր ՀԳՄ վարչության քարտուղարության կարծիքն էր: Ահա մի քանի տող այդ ասքից.

Բայց կան մարդիկ այս աշխարհում,
Որոնք անմեղ զոհերին են մեղադրում,
Հիմքեր հնարելով
Դահիճին չքմեղելու համար:
Անգամ հեքիաթ են հորինում
ցնորական,
Ու մեսրոպյան լեզվով
փաստաբանում,
Թե մեղավորը մենք էինք,
Որ մեզ կոտորեցին:
Մեղուն հանգիստ քնած էր իր բնում:
Մենք ձեռք տվինք նրա մեղվանոցին:

Քարտուղարության նիստի շարադրանքն ամենայն հավանականությամբ անցել է նաև ՀԳՄ քարտուղար Պարույր Սևակի ձեռքով, որովհետև «Այրվող այգեստաններ»–ի իր սեփական օրինակի վրա նա արել է նույն դիտողությունները:

Պարույր Սևակը, ով խորապես (բայց իզուր) նեղացած էր «Մարդը ափի մեջ» (1963) գրքի առթիվ Մահարու հեղինակած «Մնայուն հաղթանակներ և ժամանակավոր պարտություններ» գրախոսականից (տես ԳԹ, 1964, թիվ 4, 24 հունվար, ամբողջական տարբերակը՝ «Նոր դար», 2004, թիվ 1), սատարեց

հակամահարիական ուժերին, իսկ գրավոր նշումները թողեց Մահարու «Այրվող այգեստաններ» վեպի իր օրինակի վրա[1]: Սևակի նշումներից պարզվում է, որ Մահարին թույլ է տվել պատմական իրողությունների խեղաթյուրում, չի հասկացել ազգային–ազատագրական շարժման իմաստը. 1915–ի ազգային ողբերգության դրդապատճառը համարում է հայ գործիչների քաղաքականությունը, հեղինակային դիրքորոշումը նույնանում է թուրքերի տեսակետին, ճիշտ չի ներկայացված Վանի պաշտպանությունը, Օհանես աղայի սեռական կապը հանգուցյալ եղբոր կնոջ հետ հակաբարոյական է և, ի վերջո, շատ դեպքերում փոխանակ Մահարին ողբա, ծաղրում է:

Լևոն Հախվերդյանը պարզ և հստակ գրում է. «... ինչ–ինչ մարդիկ վեպի օրինակներն այրեցին գրողի ապրած տան շքամուտքում: Հետո էլ կայացավ Հայաստանի գրողների միության քարտուղարության նիստը, և վեպը դատապարտող որոշումը, որ հրապարակվեց «Գրական թերթում» (դրա նախաձեռնությունը պատկանում էր Պարույր Սևակին՝ միության քարտուղարներից մեկին, որ մերժելով մերժում էր վեպն իրեն հատուկ անզիջում կրքով» («Մահարու գրական դրաման», ԳԹ, 1993, թիվ 16, 12 նոյեմբեր):

ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԻՆ 1967 Թ. ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ՀԵՏԵՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ՝ ՈՉ ՄԻԱՅՆ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ, ԱՅԼԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ: ԱՅՍՏԵՂ ԱՐԴԵՆ ԳԼԽԱՎՈՐ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԸ ԶԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆՆ ԷՐ:

Քննարկմանը մասնակցել և ելույթ է ունեցել Ռաֆայել Արամյանը, Էդվարդ Ջրբաշյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Հրանտ Թամրազյանը, Կարլեն Դանիելյանը, Մկրտիչ Մկրյանը, Աբաս Իսահակյանը, Հ. Դարբինյանը, Ա. Սոլախյանը[2]: Ընդհանուր վերաբերմունքն այն էր, որ, իբր, «Մահարին վարկաբեկել է հայ ժողովրդին...»:

Ըստ Անանյանի՝ «մահարիական երգիծանքը չափի բացակայության պատճառով չարաչար շահարկվել էր և հարություն էր տվել «հրեշավոր անցյալին»: Դրանով էլ բացատրում է «զայրույթի պոռթկումը», ինչն ըստ նրա՝ «համաժողովրդական էր, երբեմն անզուսպ ու ոչ քաղաքակիրթ»:

Անանյանը Օհանես աղայի կերպարի մեջ տեսնում է «հայ ժողովրդի կենսասիրությունը»: «Կերպարի այս յուրահատկությամբ Օհանես աղան կարող էր մեր գրականության մնայուն տիպերի շարքը լրացնել», — ավելացնում է նա: Մահարուն անմրցակից է համարում «միջավայրի կոլորիտ» ստեղծելու հարցում: Չարենցի «Երկիր Նաիրի» և Մահարու վեպերի միջև զուգահեռներ է տեսնում՝ Կռկե Տիգրան–Կլուբի մեյմուն, Հակոբ Կանդոյան–Տելեֆոն Սեթո, «իսկ Վանի բերդի նկարագրությունը կարծես «Երկիր Նաիրի»-ից է առնված»:

Այսքանից հետո ազգային կուսակցությունների ծնունդը համարելով «պատմության օրինաչափ արտահայտություն», ավելացնում է, եթե անգամ «հնարավոր լիներ լիովին բացառել ազատագրական շարժումները, կուսակցությունների ծնունդն ու գործունեությունը, միևնույնն է 1914–16 թթ. եղեռնը անխուսափելիորեն իրականացվելու էր»:

Անանյանն աստիճանաբար խորացնում է իր այս մտայնությունը. «...թուրքական պաշտոնական շրջաններում մշակվեց ու տարածվեց այն տեսակետը, թե, իբր, հայերն ու թուրքերը եղբայրաբար էին ապրում մինչև կուսակցությունների ծնունդը և որ, իբր, վերջիններս իրենց անմիտ գործողություններով թուրքերին մղեցին վճռական գործողությունների»: ««Այրվող այգեստաններ»–ում նա մերժում է հայ ժողովրդի ազատագրական պայքարի առաջադիմական բնույթը և վեպի սկզբից մինչև վերջ անցկացնում թուրքական պատմագրության այն տեսակետը, թե մեծ եղեռնը ազգային կուսակցությունների արկածախնդրական գործունեության հետևանք է»: Իբր Մահարին «թունոտ ատելություն է տածել» ազգային կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության հանդեպ, դիմել «աններելի ծայրահեղությունների» հասնող մերկացումների: Մահարին զարգացնում է «ինքնասպանության տեսակետը՝ իբր թե ներքին երկպառակությունների հետևանքով հայերն իրենք ոչնչացրին իրենց»: «Ըստ ամենայնի խեղաթյուրելով նկարագրվող ժամանակաշրջանի քաղաքական հարաբերությունների, հայ–թուրք հակասությունների իրական բնույթը, Մահարին կամա թե ակամա ստանձնել է թուրք ջարդարարների դատապաշտպանի անպատվաբեր դերը»: «Մահարին, ահա, անկարող է գտնվել անհատականացնելու Դաշնակցության առաջնորդներ Արամին, Իշխանին, Վռամյանին»: Միջարկենք՝ Մահարին նման խնդիր չի դրել իր առջև և անհատականացրել է այնքանով, որքանով պահանջել է վեպի հյուսվածքն ու ընթացքը:

Շարունակում է. «Ո՞վ է իրավունք տվել Մահարուն կուսակցությանը քննադատելու անվան տակ ոտնահարելու ժողովրդի ազատագրական պայքարի այնպիսի նահատակների հիշատակները, որպիսիների համար այլ ժողովուրդներ կոթողներ են կանգնեցնում...»: «Այսօրվա լուսավոր դարում, երբ կիսավայրենի ցեղերն անգամ ազատության և անկախության համար արյուն են թափում, Մահարին արդարացնում է «ուժի օրենք»-ը, փառաբանում ստրկամտությունն ու կույր հնազանդությունը»:

Իբր Մահարին միայն թուրք մյուդուր Քամալի կերպարն է կերտել «բարի, մարդասեր ու լայնախոհ». «Քամալն այն անառարկելի հեղինակությունն է, որ գալիս է հավաստելու Մահարու գաղափարները»:

Ահա և ամփոփումը. ««Այրվող այգեստաններ»-ը, այսպիսով, խտացումն է մի կողմից Մահարի արձակագրի անկրկնելի ինքնատիպության, մյուս կողմից՝ նրա և ոչ միայն նրա բազում անգամներ կրկնված, այսօր արդեն անընդունելի գաղափարական սխալների: Վեպի անուրանալի արժանիքները տվյալ դեպքում չեն ուրախացնում, որովհետև դրանցով զարգացվում է մի տեսակետ, ըստ որի՝ հայ ժողովրդի մեծ եղեռնը ոչ թե թուրքական կառավարության կողմից երկար ժամանակ նախապատրաստված ու պարբերաբար կիրառվող քաղաքականության արդյունք էր, այլ... ինքնասպանության»:

Սա արդեն չափազանց է:

Ըստ Հրանտ Թամրազյանի՝ «Մահարու հիմնական սխալն այն է, որ չի կարողացել պատկերացնել հարցը,

անլուրջ է մոտեցել իր առջև դրված խնդրին: Փորձել է քաղաքական վեպ գրել, բայց ճիշտ պատկերացում չունի նկարագրվող ժամանակաշրջանի քաղաքական երևույթների մասին, այդ պատճառով էլ առաջին պլան է մղել կենցաղը՝ տապալվելով իր մտահղացումների մեջ գլխավոր խնդրում»[3]: Ուրեմն՝ Մահարին «անլուրջ է» և քաղաքականի փոխարեն առաջ է մղել կենցաղայինը: Սա վեպին տրված իրական գնահատական չէ:

Ինչպես գրողների միության քարտուղարության նիստը, այնպես և համալսարանի քննարկումը խորքում հակագրական էին և, մակերեսային հայրենասիրության կարգախոսներ ծածանելով, չէին թափանցում թե՛ պատմական դեպքերի հետևանքների մեջ (Արևմտյան Հայաստանի, ապա և Կարսի մարզի կորուստ), թե՛ բուն գեղարվեստի օրինաչափությունների խորքերը՝ անընդհատ Մահարու երեսին խփելով նրա «զվարթ» երգիծանքը[4]:

Որպես կուսակցական կազմակերպության ղեկավար, ՀԳՄ նույն քարտուղարության նիստին մասնակցած, կրկնակի աքսորի ճակատագրով:

Մահարուն բախտակից Վաղարշակ Նորենցը նրան հասցեագրած նամակում տեղեկացնում է և հորդորում. «...այդ գիրքը ահավոր զայրույթ է առաջացրել ինչպես մտավորականության, այնպես էլ երիտասարդության մեջ: <...>: Եթե ես լինեի քո գրքի հեղինակը, հրապարակավ ներողություն կխնդրեի ամենից առաջ վասպուրականցիներից, ապա ամբողջ հայ ժողովրդից և կհայտարարեի, որ այս գիրքը ոչ միայն ձախողանք է, այլև հետևանք ինչ–ինչ հանգամանքների» (ԱԱ, 629):

Այս նամակի ազդեցությամբ Մահարին 1967 թ. հուլիսի 16-ին նոթագրել է՝ «Ծանր նախազգացումը» արդարացավ. ըստ Վ. Նորենցի նամակի՝ ակադեմիայի բոլոր ինստիտուտներում (ներառյալ քիմիականը) քննարկել են վեպը և դատապարտել ու դատափետել ինձ: Ներառյալ ԲՈՒՀ-երը, երիտասարդությունը... Նորենցը խորհուրդ է տալիս... հրապարակորեն հրաժարվել վեպից: Ոչ ավել, ոչ պակաս»:

Մի քանի օր անց՝ հուլիսի 20–ին արված գրառումն սկսվում է այս տողերով. «Ալիքյանից նամակ, թախանձում է չվերադառնալ Երևան միառժամանակ: Ծանր է: Հանձնեցի վերամշակված վեպը: Հոգիս հոժար է, մարմինս... նույնպես»:

Այս ընթացքում վեպը քննարկվել և քննադատվել է նաև պատմության ինստիտուտում. Մարգո Մխիթարյանի զեկուցումը տպագրվել է ԳԱ «Տեղեկագիր»–ում (1967, թիվ 10):

Մահարու վեպի դեմ ընդվզեց դարձյալ Մահարուց նեղացած Մկրտիչ Արմենը: Նրա հոդվածը նախ տարածվեց մեքենագիր տարբերակով, ավելի ուշ տպագրվեց: Ոչ ավել, ոչ պակաս «Նոյեմբեր»–ի ընկերն ու ստալինյան հալածանքների զուգընկերը Մահարուն համարում է «թուրք գրող», «ներքին թուրք», վեպը՝ «ամենաստորն ու ամենակեղտոտը հայ գրականության մեջ», այլ խոսքով «գարշելի գիրք», կապկություն ու խեղկատակություն («Բանաստեղծի պասկվիլը առանձին հատորով», ԳԹ, 1998, թիվ 13, 15–30 նոյեմբեր):

Եվ հայրենիքում, և՛ սփյուռքում վեպը դարձավ լայն քննարկման նյութ: Ըստ Լեյլի Դժխոյանի՝ Մահարու կերտած կերպարները իգամոլ, դրամասեր, դրամաշորթ, բամբասող ու մարդասպան են, բոլորն անխտիր՝ աղաներ, էֆենդիներ, փաշաներ ու ընկերներ: Այդ իսկ պատճառով «Հայաստանը պարսավանքի սյանը գամեց Մահարուն...»[5]:

Ա. Կեորկիզյան անունով մեկը, դրվատելով Մահարու արվեստը, հերոսների կերպավորման հարցում միանում է հիշյալ Դժխոյանին. «...կը մեղադրեմ զինք, որ առանց բացառության իր վեպին հերոսները ներկայացուցած է իբրև բացասական տիպեր <...>: Մահարին կորցրել է վանեցու հոգին, Մահարին կորցրել է հայի հոգին: Մահարուն հայ ժողովուրդը այլևս չի ընդունում իր գիրկը»[6]:

Մահարու վեպը քննադատության ենթարկվեց սփյուռքի հատկապես դաշնակցական և հնչակյան մամուլի էջերում՝ «Բագին», «Աշխարհ», «Արարատ», «Երիտասարդ Հայաստան»:

Մահարու վեպի դեմ ընդվզել են նաև Վարագ Առաքելյանը, Գևորգ Արշակյանը, Լևոն Միրիջանյանը և ուրիշներ: Եվ երբ ժամանակ անց Լևոն Միրիջանյանը, ում հոր՝ Վարդան Միրիջանյանի կերպարը Մահարին շողարձակել է վեպում, հաշտության համբույրի առաջարկ է արել՝ Մահարին նրան թիթեռի պես գամել է պատին. «Ես հուդաների հետ չեմ համբուրվում» (ԱԱ, 652):

Ինչպես «Այրվող այգեստաններ»–ի, այնպես և Մահարու դեմ տարբեր առիթներով և հետևողականորեն արտահայտվել են հայր և որդիներ Թոփչյանները: Նրանց «բարեկամությունը» սկսվել է դեռևս նույն շքամուտքում ապրելու տարիներից (Երևան, Կասյան 3): Էդվարդ Թոփչյանը՝ ՀԳՄ վարչության առաջին քարտուղարը, առաջինն է կարդացել վեպը և ողջունել Մահարուն: Բայց դրան հաջորդեցին ՀԳՄ վարչության քարտուղարության քննարկումը և հայր Թոփչյանի բացասական դիրքորոշումը: Ստեփան Թոփչյանը «Սովետական գրող» հրատարակչության գեղարվեստական գրականության բաժնի վարիչն էր, ում անմիջական ղեկավարությամբ տպագրվում էր Մահարու «Երկերի ժողովածու»–ի 4–րդ հատորը, ինչն ընդգրկում էր «Այրվող այգեստաններ» վեպը: Ըստ Մահարու որդու վկայությունների՝ նա արել է բազմաթիվ անցանկալի միջամտություններ (ԱԱ, 767–768): Այս կապակցությամբ Մարկ Նշանյանը Ստեփան Թոփչյանին վերապահում է «գրաքննիչի դեր» (ԱԱ, 8): Ստեփան Թոփչյանը նաև հանդես եկավ հոդվածով[7]: Հետագայում կրակահերթը շարունակեց Ալեքսանդր Թոփչյանը[8]:

Հիշյալ «Բաց նամակ»–ում (ԳԹ, 1968, թիվ 14, 5 ապրիլ) Սարինյանը անդրադարձել է նաև «Այրվող այգեստաններ»–ին. «Թվում էր, թե «Այրվող այգեստաններ» վեպի շուրջ ստեղծված հասարակական կարծիքը լուրջ մտահոգություն պիտի պատճառեր Ձեզ՝ ելք որոնելու ստեղծագործական փակուղուց»: Պարզվում է, որ Սարինյանը նախապես «մեծ կարծիքի» է եղել վեպի մասին, այդ կարծիքը մարդկանց ներկայությամբ բարձրաձայնել է «Գրական թերթ»–ի խմբագրությունում, հաջորդել են «Բաց նամակ»–ի վերաբերյալ տողեր, ինչը Մահարին համարում է անազնիվ ու ստոր քայլ: «Բաց նամակ»–ի պարզաբանումները Սարինյանին հասցնում են հակասությունների. «Այո, հակամահարիական կրքերի բուռն տարերքի օրերին ես պաշտպանել եմ

Էդվարդ Թոփչյան



Պարույր Սևակ

«Այրվող այգեստաններ»–ը: Այնուհետև. «... ես բնավ չէի արդարացնում հեղինակի սխալ ու հակապատմական հայացքը հայոց ազգային–ազատագրական շարժման, Հայ Յեղափոխական Դաշնակցության և «թուրքական կոմպլեքսի» սրբագործման վերաբերյալ»: Ի՞նչ եղավ՝ «պաշտպանել եմ...» և հետին թվով «չէի արդարացնում»...

Շարունակության մեջ («Մի էջ անցյալի արձագանքներից», «Լրագիր», 1994, թիվ 37, 18 մարտ) Սարինյանը գերազանցում է բոլորին. «Ամենուրեք տեղի էին ունենում հավաքներ, քննարկումներ, ցույցեր, ընդհուպ մինչև վեպի բազմաքանակ օրինակների հրկիզումը: Բացահայտ ու շեշտակի էր հնչում մեղադրականը, թե «ծախու գրիչը» կուսակցական պատվեր է կատարել՝ պսակազերծելու հայոց ազատագրական պայքարը, ցեղասպանության մեղքը բարդելու հայկական հրահրումների՝ «շնաճանճի բույնը քանդելու» անխոհեմ արարքների վրա, դրանով իսկ հավասարակշռելու ազգայնական տրամադրությունների արթնացումը հանրապետությունում»: Սարինյանն իր նախնական ճիշտ դիրքորոշումը զոհել է գրական հարաբերություններին, «քանի որ իմ դեմ գրած նրա հոդվածները թելադրված էին գրական միջակությունների խմբակային բանսարկությանն ընդառաջելու միտումով»:

Ծանոթագրություն

1. Տես Ս. Գրիգորյան, Պարույր Սևակ: Արձագանքող անտառը, Ե., «Վան Արյան», 1998, էջ 85–89:
2. Քննարկման արդյունքները տես «Այրվող այգեստաններ» վեպի քննարկումը, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1967, թիվ 2:
3. «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, թիվ 2, էջ 261:
4. Ես ինքս այդ տարիներին համալսարանի բանասիրական բաժանմունքի 2-րդ կուրսի ուսանող էի, կարդացել էի վեպը, և ներկա գտնվեցի քննարկմանը, լսեցի դասախոսներին ու խորապես հիասթափվեցի

նրանց ելույթների հարձակողական-սպառնալի բնույթից:

5. Լ. Դժխոյան, Դարձյալ Մահարու մասին, «Պայքար», Ուղթրթաուն, 1968, թիվ 10, 13 հունվար:
6. Ա. Կեորկիզյան, Գուրգեն Մահարիի «Այրվող այգեստաններու» մասին, «Նոր օր», Լոս Անջելես, 1968, թիվ 10, 11. 9, 13 փետրվար:
7. Ս. Թոփչյան, Այրվող այգեստանները, «Ասպարեզ», Լոս Անջելես, 1995, 2 դեկտեմբեր: Սույն հոդվածի դեմ հանդես եկավ Գրիգոր Աճեմյանը՝ Ակամա պատասխան, «Յառաջ», Փարիզ, 2009, թիվ 4, 1 ապրիլ: Տես նաև նույնի «Այրվող այգեստանները» Գուրգեն Մահարու նամակներում, «Գարուն», Ե., 2002, թիվ 1: Դրանց ի պատասխան Ս. Թոփչյանը հանդես եկավ նոր հոդվածով՝ Կրկնակի պղծություն, «Գարուն», Ե., 2004, թիվ 7-8:
8. Բանավեճն ըստ հաջորդական ընթացքի ունի այսպիսի պատկեր. Գ. Աճեմյան, «Կարճ նամակ», «Գարուն», 2004, թիվ 10: Ա. Թոփչյան, «Արջի ծառայություն հորը», «Գարուն», 2005, թիվ 10: Գ. Աճեմյան, «Գուրգեն Մահարին և ռուս գրականությունը», «Ազգ», «Մշակույթ», թիվ 8, 07.05.2011: Ա. Թոփչյան, «Թե ինչպես որդին խայտառակեց սեփական հորը» (Կամ վարքագրության ժանրի վերածնունդը Հայաստանում), «Ազգ», «Մշակույթ», թիվ 10, 11.06.2011: Գ. Աճեմյան, «Լավ էր երբեք, քան այսպես ուշ», «Ազգ», «Մշակույթ», թիվ 12, 16.07.2011: Ա. Թոփչյան, «Բանսարկության հաղթարշավը, բայց մինչև ե՞րբ...», «Ազգ», «Մշակույթ», թիվ 17, 08.10.2011:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հատված Կիմ Աղաբեկյանի «Գուրգեն Մահարի» գրքից

Պատմագրության մեջ վաղուց հիմնավորված է, որ հայերին բնաջնջելու թուրքական բռնակալության ոճրածին ծրագիրը **պետական քաղաքականություն էր,** որի վերջնական իրագործման համար իրար հաջորդող թուրք թագակիր մարդասպաններն ու կառավարությունները, սրանց շրջապատող մտավորականությունն ու հասարակական գործիչները առանց թաքցնելու սպասում էին հարմար առիթի:

Ուրեմն, եթե նույնիսկ ինչ–որ գերերկրային զորությամբ բացառվեին հայ ազգային–ազատագրական շարժումներն ու կանխվեր ազգային կուսակցությունների գոյությունը, միևնույնն է, պետք է տեղի ունենար մեր ժողովրդի մեծ ողբերգությունը:

Այս ճշմարտությունը հետևողականորեն խեղաթյուրվում է թուրքական (և ոչ միայն թուրքական) պատմագրության մեջ և կեղծ վկայական տրվում՝ այն մոլորեցնող ու հակապատմական տեսակետին, ըստ որի՝ Արևմտյան Հայաստանում հայերն ու թուրքերը ապրում էին համերաշխ և իբր թե հայ ազգային կուսակցություններն էին, որ իրենց գործունեությամբ պատճառ դարձան սեփական ժողովրդի աննախադեպ սպանդին:

«Այրվող այգեստաններ» վեպում Մահարին տուրք է տվել այս արատավոր տեսակետին, որի պատճառով վնասվել է պատմականությունը՝ ազդելով վեպի գեղարվեստական որակի վրա:

Ցավալի է, որ 20–ական թվականներին մեր մտավորականներից ոմանք որդեգրեցին թուրքական պատմագրության նենգափոխած վերոհիշյալ տեսակետը, որը և հետագայում ստացավ պաշտոնական զգեստավորում: Այս բանում առկա է նաև այդ տարիներին մեծ չափեր ընդունած անցյալի մերժման բուռն ոգևորությունը: Անտեսվում էին հայ քաղաքական կյանքի պատմության առանձնահատկությունները: Ռուսաստանում կատարվող պատմական փոփոխությունները, ինչպես կյանքի սոցիալական ոլորտներում, այնպես էլ գրականության և արվեստի մեջ՝ իրենց շարունակությունն ու զարգացումն էին ապրում այլ հանրապետություններում: Եվ եթե մի տեղ դա ամբողջովին ներքին օրինաչափություն էր՝ բխում էր պատմական անհրաժեշտությունից, մի այլ տեղ այդ անհրաժեշտությունը ձև էր առնում



Կիմ Աղաբեկյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

պատմական այլևայլ հանգամանքների խաչաձև զուգորդումներով: Պատմության կոնկրետությունն ու ժամանակի բարդություններն էր նկատի ունենում հեղափոխության առաջնորդը, երբ Կովկասի կոմունիստներին հղած նամակում գրում է, թե պետք է մեքենայորեն ընդօրինակել ռուսական հեղափոխության փորձը, հարկավոր է «կիրառել 1917–1921 թվականների փորձի ոչ թե տառը, այլ ոգին, իմաստը, դասերը»: Ժամանակաշրջանը բարդ էր, կողմնորոշվելը՝ դժվար: Թուրք կոմունիստների արյամբ իր դրոշը ներկած Մուստաֆա Քեմալը, որը հայերի նկատմամբ վարում էր իր անմիջական նախորդների գազանային ու ստոր քաղաքականությունը, մոլորեցրեց հեղափոխական աշխարհը և ստեղծեց այն պատրանքը, թե ուր որ է Թուրքիայում պետք է կատարվի սոցիալիստական հեղափոխություն:

Բայց նույնիսկ այս իրավիճակում, պատմական, քաղաքական ու բարոյական ոչ մի հարկադրանք չի արդարացնում մեր անցյալի պատմությանը թեթևակի նայելու միտումնավորությունը:

«Հիմա, 1965-ի բարձունքներից նայելով անցած տարիներին, զարմանալով զարմանում

ենք այն ժամանակվա մեր մտածողության վրա: Ողբերգության պատմությանը թեթևակի անդրադառնալով՝ չէինք բացահայտում իսկական ոճրագործներին: Մեղավորներ էին համարում՝ հայ հայդուկներին, որ զենք վերցնելով, սարերն էին գնում, հայ կամավոր զինվորներին, որ հավատալով, թե ռուսական բանակը Արևմտյան Հայաստանը կազատագրի, գնում էին կռվելու թուրքական բռնակալության դեմ, ոգեշնչված այդ հավատով: Մեղավոր էին համարում բոլոր այն անհատներին ու կազմակերպություններին, որոնք զենք էին վերցրել թշնամուն դիմադրելու, որ կռվել էին, մեռել կամ հազար վերքերով խոցված՝ ապրել էին: Եվ չէին գիտակցում այդ մարդիկ, - գրում է Հրաչյա Քոչարը,- որ պատմության դատաստանից փրկում են սուլթան Համիդին և իթթիհատական բռնակալներին, որ դահիճներին արդարացնում և հանցանքը զոհերի վրա են դնում»[1]:

Հասկանալի պատճառներով անհատի պաշտամունքի տարիներին ավելի կարծրացավ այս տեսակետը: Մեր նոր պատմության շարադրողները ամեն կերպ խուսափում էին 1890-1920 թվականների պատմությանը մերձենալուց:

Ընդհակառակը, ինչպես գրում է պրոֆ. Հր. Թամրազյանը, «...մեր պատմության մեջ ձևավորվեց և երևան եկավ նաև այն լեգենդը, որ իբր հայ ժողովուրդը ինքն է ստեղծել իրեն կործանող ուժը»[2]:

Գրական ասպարեզ իջնելով 20–ական թվականներին և չունենալով դեռևս ձևավորված աշխարհայացք՝ երիտասարդ Մահարին չէր կարող տուրք չտալ այդ սխալ տեսակետներին, մանավանդ, որ դրանք իրենց ուղղակի արձագանքներն էին գտել նոր կազմավորվող սովետահայ գրաքննադատության մեջ ևս:

Տեսանք, թե ինչպիսի փոթորիկների միջով էին անցնում կորած մանկության և խլված հայրենիքի մասին Մահարու գրքերը: Կենսագրական եռագրության առաջին մասի հրատարակվելուց անմիջապես հետո նրան հայտարարեցին «դաշնակցության իդեոլոգ և դասակարգային թշնամի», չնկատելով կամ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ գրողը հենց այդ գրքում տուրք էր տվել վերոհիշյալ արատավոր տեսակետին: Այսօրվա համար արատավոր վերոհիշյալ տեսակետի ուղիղ հակառակ ծայրից էր քննադատվում Մահարին (և ոչ միայն Մահարին) 30–ական թվականներին: Տակավին «Մանկություն և պատանեկություն» գրքում որոշակիորեն նկատելի են ազգային–ազատագրական շարժումների նկատմամբ Մահարու դրսևորած քաղաքական սխալ դիրքորոշման նախանշանները: Այս դեպքում նախանշաններ, որովհետև «Մանկություն և պատանեկություն» գիրքը լինելով մանկական անարատ ու անմեղ աչքերում անմիջականորեն արտացոլված մանկության օրրանի չքնաղ նկարագիրը, այդ նշանները նվաստանում են, դառնում աննկատ և նույնիսկ տեղ-տեղ էլ դառնում միջավայրն ամբողջացնելու անհրաժեշտ երանգ:

Քննադատության սրբազան պարտքն էր ժամանակին զգուշացնել գրողին, մինչդեռ տեղի ունեցավ հակառակը: Մահարին մեղադրվեց չկատարած մեղքերի համար, նրանից պահանջեցին այսօրվա արատավոր տեսակետի գրական մարմնավորում: Եվ երբ քաղաքական սխալ դիրքորոշման նախանշանները առավել շոշափելի դարձան «Այրվող այգեստաններ» վեպի համար հիմք ծառայած «Գուրգեն խանի տոհմը» վիպակի հրատարակված հատվածներում, քննադատությունն այն ընդունեց գոհունակությամբ:

Նույնիսկ «Մանկություն և պատանեկություն» գրքի առաջին և ճշմարիտ գնահատողներից Ակսել Բակունցն **ստիպված** էր «դրական» համարել «Գուրգեն խանի տոհմը» վիպակում Մահարու սխալ դիրքորոշումը, կամ ավելի ճիշտ, այս դեպքում արդեն գրական կյանքով պայմանավորված հարկադրական նահանջը:

Այսպիսին էր շոշափվող հարցի դրվածքը 30-ական թվականներին, երբ Գուրգեն Մահարին մեխանիկորեն կտրվեց գրական կյանքից և հետո էլ չգիտակցեց այդ տեսակետի վերանայման անհրաժեշտությունը:

Հետագայում վերոհիշյալ պատճառներին գումարվեց նաև հայրենիի եզերքի նկատմամբ ունեցած թանձրացող կարոտի մահարիական խորունկ զգացումը, հայրենի եզերքի վերագտնումի սպառվող հույսն ու անորոշությունը և կարոտի հավերժական դառնալու կսկիծն ու կասկածը: Այս հանգամանքը գրողին հնարավորություն չտվեց վեր բարձրանալ անձնական ողբերգությունից, մի բան, որ Մահարուն շատ փայլուն կերպով հաջողվել էր շատ ու շատ այլ գործերում:



Մենք բոլորովին էլ հակված չենք մեղմելու գրողի կատարած գաղափարական սխալը, բայց և հեռու ենք այն մտքից, թե իբր Մահարին ունեցել է նպատակադրված դիտավորություն: Մենք միայն ցանկանում էինք մատնանշել վրիպումի ակունքները:

Քաղաքացիական զգացումի և մարդկային ներանձնական ապրումների բացահայտ հակասության չգոյությունը հաստատում է այն, որ Մահարին տուրք տալով այդ արատավոր տեսակետին, թերևս չի գիտակցել իր գրած գրքի քաղաքական ու գաղափարական հետևանքները:

«Մահարու հիմնական սխալն այն է,- գրում է պրոֆ. Հր. Թամրազյանը, - որ չի կարողացել պատկերացնել

հարցը, անլուրջ է մոտեցել իր առջև դրված խնդրին: Փորձել է քաղաքական վեպ գրել, բայց ճիշտ պատկերացում չունի նկարագրվող ժամանակաշրջանի քաղաքական երևույթների մասին, այդ պատճառով էլ առաջին պլան է մղել կենցաղը՝ տապալվելով իր մտահղացումների մեջ գլխավոր խնդրում»[3]:

«Այրվող այգեստաններ» վեպի ամբողջական արժեքավորման ծանրակշիռ չափանիշը, ինչպես նշել ենք, պատմականության չափանիշն է: Գրողը կարողացե՞լ է իր հերոսների մեջ մարմնավորել նկարագրվող ժամանակաշրջանի բնորոշ կողմերն ու նկարագիրը:

Վեպի գլխավոր հերոս Օհանես աղան չի դարձել ժամանակաշրջանն ամբողջացնող կերպար: Ընդհանուր շղթայում նա ներկայացնում է կյանքի կենցաղային կողմը՝ պայմանավորված առևտրականի հոգեբանությամբ:

Վերոհիշյալ հարցադրումները բնականաբար կապված են ազգային գոյատևումի պայքարը ղեկավարող և քաղաքական կուսակցությունները ներկայացնող հերոսների հետ:

Արամին ընթերցողն առաջին անգամ հանդիպում է Էրմանց գյուղում, կրտսեր Մուրադխանյանի տանը: Հենց առաջին հանդիպումից գրողն աշխատում է համոզել ընթերցողին, որ Արամը անտեղյակ է արևմտահայ կյանքին և իր համար ընտրել է գործունեության այնպիսի վայր, որտեղ անհասկանալի է նույնիսկ նրա հայերենը: Մահարու սուբյեկտիվ վերաբերմունքը Արամի կերպարը զրկել է համոզչությունից: Մխոյի հետ նրա երկխոսությունը թողնում է արկածախնդիր հերոսի գործելակերպի տպավորություն: Նա զզվանքով է մտնում իր առջև բացված տան դռնից և ակամայից հիշեցնում Մուրացանի տխրահռչակ առաքյալին՝ չունենալով զոհերին խղճալու վերջինիս հատուկ բարեհոգությունը: Նա բացահայտ ատելություն է տածում դեպի, ինչպես հեղինակն է գրում, «հաստակաշի տաշկահայերը» և դույզն-ինչ անգամ պատկերացում չունի արևմտահայ գյուղի իրական վիճակի մասին:

Մնում է զարմանալ, թե ունենալով այդքան ատելություն ու զզվանք, հերոսն էլ ինչո՞ւ է գնացել, ի՞նչ գործ ունի այդ անծանոթ ու վտանգներով լի վայրերում:

Հետագայում Արամին են միանում Իշխանն ու Վռամյանը, Փարամազը, բուլղարացի Գրիգորն ու Արմենակ Եկարյանը, միանման ու միադեմ, որ տարբերվում են լոկ անուններով: Նրանք բոլորն էլ զբաղված են արկածախնդրությամբ, և սրանց գործունեությունն է, որ Վասպուրական աշխարհը տանում է դեպի կործանում:

«Սրանք քայլում են բոլոր սրբերի գերեզմանների վրայով և ուզում են իշխել բոլոր սրբերի վրա: Ուխտավորը մատաղի փոխարեն վանք է բերում սպառնագիր, թողնում խորանում և անհետանում: Իսկ հիմա ուզում են տանել վանքի հարստությունը, չեմ տա, ոչինչ չեմ տա, վանքի հարստության տերը ժողովուրդն է, և ոչ թե օտարամուտ բախտախնդիրները», — այս է Աղթամարի վանքի՝ մեղքերի մեջ կորած վանահոր կարծիքը, իսկ վանքի քարտուղարը մտածում է. «Անցավ 96-ը, բայց կգա մի նոր 96, ժողովրդին չպետք է զինել բռնությամբ, ժողովուրդը ինքը պիտի զինվի, չպետք է շտապեցնել նոր 96-ը, պետք է ժամանակ շահել. ի՞նչ կարող է անել մի ամբողջ պետականության դեմ մի Վան...»:

Հավիտենական զրկանքի ու տառապանքի ենթարկված մի ողջ ժողովրդի պաշտպանության սկզբունքից բխած պայքարի անհրաժեշտությունը վեպում հաճախ «հերքվում է» այսպիսի տկարամիտ կարծիքներով:

Անշուշտ, ոչ սերբ գիմնազիստ Գավրիլո Պրինցիպը պիտի սպասեր Վանի ու Վասպուրականի զինվելուն և ոչ էլ Վիլհելմ Երկրորդը պիտի սպասեր իր պատմական՝ **այժմ** կամ **երբեք**-ը ասելու համար: Ըստ էության ժամանակաշրջանի էական կողմերն ընդհանրացնելու հնարավորություն ունեցող հերոսները կտրվում են գործունեության կոնկրետ միջավայրից և դառնում գունատ ու անդեմ ստվերներ:

«Հարբուխով» հիվանդ արևմտահայությունը չկարողացավ զգալ նրանցից փչող «կենդանական արյան հոտը» և «սպանդանոց տարվող այծի միամտությամբ հլու-հնազանդ հետևել նրանց»: Ինչո՞վ է տարբերվում թափանցիկ երգիծանքով ասված այս հակապատմական կարծիքը նույն հեղինակի կողմից իմաստավորված, մեր ժողովրդի կրած դառնությունների նկատմամբ սառն անտարբերությամբ ասված անգլիացի դիվանագետի կարծիքից՝ «Մենք ինչ իմանայինք, որ հայերը չպիտի կարողանան իրենց վայելուչ պահել, մի մասը գնացել, առանց ծանր ու բարակ կշռադատելու կոտորվել է, ուրիշներն ընկել են թուրք չեթեների առաջ և Տեր-Զորի անապատները քշվել, իսկ մյուս մասը թողել փախել է Կովկաս և այլուր»[4]: Եթե նույնիսկ այս մտայնությունը համարենք ճիշտ, ապա ողբերգությունը կանխելու ի՞նչ ճանապարհ է ցույց տալիս հեղինակը, ի՞նչ պոտենցիալ հնարավորություն կար, որ չօգտագործվեց: Ո՞րն էր ճշմարիտ ելքը: Գուցե Գևորգ աղա Ջիդեջյանի տանը կազմակերպված ճոխ խնջո՞ւյքը, որտեղ պիտի նա առևտրականի իր «հեռատեսությամբ» եվրոպական դեսպանների և թուրք կուսակալի առաջ «ի ցույց հաներ հայ-թուրքական ավագանու համերաշխությունը և դեմ արտահայտվեր արտասահմանից զենքեր ներմուծող «օտարամուտ» խռովարարների, որոնք երկպառակություն են սերմանում թուրք պետականության և հայ հպատակության, հայ և թուրք ժողովրդի Ազատ, Հավասար և Եղբայրական ընտանիքում»:

Գրողը, անշուշտ, հասկանում է, որ թուրքական քաղաքականության այս արտաքին փաղաքշանքը լի է ներքին նենգությամբ, բայց օրինական չի համարում նաև ազգային կուսակցությունների գոյությունը: Մեզ, անշուշտ, հետաքրքրողը գործողությունների արյունոտ հետևանքները չեն, որոնք ավելի շատ պայմանավորված էին իմպերիալիստական տերությունների հակասություններով, այլ պատմության ճշմարիտ ընթացքը, մեր ժողովրդի կացությունից թելադրված հրամայական պահանջը: Ահա թե ինչ էր պահանջում Վահան Տերյանը 1916 թվականին գրած «Մեր պարտքը» հոդվածում:

«Դժվարին ու արկածալի այս օրերում, պայծառ պահին մեր միտքը և մեր հոգին թող չմթագնեն առօր-

յական չնչին ու փոքրիկ զգացումները: Բարձրանանք սրտով, լայնասիրտ լինենք այս դաժան պահին: Ընդունենք, զգանք այսօրվա ահավոր ու արյունոտ անցքերի ճակատագրական նշանակությունը: Ահա մեր աչքի առջև հսկա ժողովուրդները ֆիզիկական և բարոյական գերագույն լարումով, բարձր ոգևորությամբ միացնում են իրենց տարբեր խավերը, տարբեր հատվածները, որպեսզի փրկեն իրենց ապագան: Եթե հսկա ժողովուրդներն են կարիք ու անհրաժեշտություն համարում միահամուռ ու միաձույլ գործունեությունը՝ ապա որքան ու որքան անհրաժեշտ ու անհետաձգելի պետք է համարվի այդպիսի մի համերաշխ ոգևորություն մեր փոքրաթիվ, բայց ոսոխներով շրջապատված ազգի համար, մի ազգի համար, որի ջլատված, քայքայված ուժերի ծայրահեղ լարումը միայն, բարոյական բարձր պարտազգացումը միայն, կարող է փրկել այս աղետալի պահին: Ընդունա՞կ է, արդյոք, մեր ժողովուրդը նյութական ու բարոյական ուժերի մի այդպիսի լարումի, միահամուռ ներշնչուն գործունեության...

Այո՛, այդ հավատը դեռ կենդանի է, այդ հերոսական ոգևորությանը ընդունակ է մեր ժողովուրդը...»:

Սիրելի բանաստեղծի հավաստիացումի շքեղ վկայություններն եղան Ղարաքիլիսայի, Սարդարապատի և բազմաթիվ հերոսական այլ ճակատամարտեր, որտեղ ժողովուրդը նվաճեց ապրելու իր իրավունքը: Այդ շքեղ վկայություններից էր նաև քննարկվող գրքում այնքան անգույն նկարագրված Վանի հերոսական ինքնապաշտպանությունը:

Չընմբռնելով այդ միասնության պատմական անհրաժեշտությունը և պատճառաբանվածությունը՝ Մահարին «օտարամուտ» խռովարարների վրա է բարդում «Վասպուրականում բռնկված կրակը» բորբոքելու մեղքը և աղավաղում պատճառի ու հետևանքի բնական ու բանական փոխկապվածությունը:

Պատմական Արամին մերկացնելու ձգտումը ոչ թե պատմության նկատմամբ վերապահված հեղինակային ազատության հետևանք է, այլ երևույթների ներքին կապն ու օրինաչափ պայմանավորվածությունը անտեսելու և սուբյեկտիվ վերաբերմունքի հետևանք:

Ընթերցողն Արամին հաճախ է տեսնում՝ ծիծաղելի և շինծու վիճակներում: Դիերցի Դավոյի դավաճանությունը բացատրվում է Արամի բարոյական թուլությամբ: Անշուշտ, մեծ թերություն է հասարակական գործչի բարոյական խոտորումը և լի հասարակական նշանակություն ունեցող վտանգավոր հետևանքներով: Բայց չէ՞ որ հայրենիքին դավաճանելը նույնպես անբարոյականություն է և առավել աններելի: Դա անբարոյականության վերջին, ծայրագույն սահմանն է:

Անձնական և հասարակական շահերի ներքին բախման գոյությունը առավել հետաքրքիր կդարձներ հերոսների ներաշխարհը և այս դեպքում գուցե գեղարվեստորեն համոզիչ դառնար Դավոյի մեջ մոլեգնող վիրավորված մարդու վրեժխնդրությունը, որի արդարացման համար շատ է ճգնում հեղինակը՝ աշխատելով ընթերցողի մեջ համակրանք ստեղծել նրա նկատմամբ:

Սակայն հեղինակը չի մտնում հերոսների հոգեբանության մեջ, և նկարագրությունը թողնում է լսված լուրերի սուբյեկտիվ շարադրանքի տպավորություն: Դավոն իր արարքով հիշեցնում է Մուրացանի Ցլիկ Ամրամին, բայց չունի նրա մեծ ու հզոր հոգեկան աշխարհը, չունի այն ողբերգական ծանր ապրումներն ու հորդացող սերը, որով վերջինս դառնում է վիպական անհատականություն և շահում ընթերցողի խղճահարությունը: Արամին քննադատելու մոլուցքը գրողին տանում է ավելի հեռուն: Ակամայից համեմատության մեջ են դրվում հայ ազգային գործիչները և թուրք ոստիկանությունը: Պարզվում է, որ վերջիններս ավելի մարդկայնորեն են տրամադրված իրենց զոհերի նկատմամբ, քան նրանք, ովքեր բախտ ու փառք որոնելու ավելի հավանական ասպարեզները թողած՝ նետվել են կրակի մեջ՝ այդ նույն զոհերին փրկելու սրբազան նպատակով:

Խոշոր թերություն է նաև, որ ազգային–ազատագրական շարժումների, կուսակցությունների վարքագծի ու գործելակերպի քննադատությանը նվիրված հատվածներում անուղղակիորեն ընդգծվել է թուրքերի ստեղծած «համակեցության» համեմատական առավելությունը և հայոց ընդվզումի ավելորդ լինելը:

«Իրենց գլուխն ուտի իրենց հեղափոխություն, ժողովուրդին ապրել է հարկավոր, սև օրով, սպիտակ օրով, բայց թող ապրի, թող ապրի, ջանըմ, թող ապրի, թող դժվար ապրի, բայց ապրի...»,— այսպես է մտածում Օհանես աղան և փափագում այն ժամը, երբ ազատագրական պայքարի ղեկավարները կլսեն ուժի օրենքը սրբագործող, ստրկամիտ համակերպվածների բողոք-պահանջը. «Աշխարհում ուժի օրենքն է տիրում և չկան երջանիկ հպատակներ, և չկան արդար տիրողներ: Մտրակը մտրակ է, անգամ եթե նրա կոթը ոսկեջրած լինի: Մեկ մտրակի տակ էինք, ձեր գալով երկու մտրակի տակ ընկանք, մեկ լծի տակ էինք, լուծը դարձավ կրկնակի: Գնացեք, գնացեք ձեր եկած ճանապարհով ու թող օրհնված լինեն ձեր կրունկները»:

Այդ մռայլ տարիներին ներկուսակցական պայքարը ծանր ու անուղղելի հետևանքներ ունեցավ: Հաճախ գործի գլուխ էին կանգնում մարդիկ, ովքեր տարված լինելով առաջնորդի դափնին նվաճելու կույր մոլուցքով, մոռանում էին կարևորը: Նրանց շեփորահարած կոչերը չէին համապատասխանում եղած հնարավորություններին: Ուժի միասնական դրսևորումը խաթարվում էր նրանց տհաս ու անհամերաշխ գործունեությամբ: Ընդհանուր աղմուկն ու իրարանցումը, համակրանք ու հեղինակություն շահելու սին մարմաջը, ազատագրական պայքարի մեջ առաջնորդի դեր ստանձնելու փառասիրությունը բթացրել էին նրանց զգոնությունը, դեպքերն ու իրողությունները ըմբռնելու և գնահատելու կարողությունը: Նրանք ժողովրդին ոգևորում էին պատմության դասերով, իսկ իրենք ինչ–որ տեղ առաջնորդվում էին անհատական մանր ու գծուծ շահերով: Այլապես մեր ժողովրդի տված կորուստը, գուցե արդեն իրողություն դարձած ծավալը չունենար:

Ազգային կուսակցությունների թերությունների բացահայտումը, նրանց վարած անխոհեմ քաղաքականության քննադատությունը, անշուշտ, ճիշտ է ու տեղին: Սակայն գրողը սերունդներին ուղղված իր ասելիքով զարգացնում է մի այլ արա-

տավոր, կեղծ ու շինծու տեսակետ: Նա արհեստականորեն երկփեղկում է մեր ժողովրդի միասնական պատմությունը և արևմտահայ հատվածը հակադրում արևելահայ հատվածին՝ վերջինիս համարելով Արևմտյան Հայաստանի կործանման պատճառ: Ըստ գրքում իշխող մտայնության՝ արևելահայերի մասնակցությունը պատերազմին, հայ կամավորական ջոկատների կազմակերպումը ևս գրգռեց թուրք բարբարոսներին:

Գրողը շրջանցում է այն հանգամանքը, որ արևելահայերը նաև կատարում էին հպատակի իրենց պարտականությունները:

Պատասխանատվությունից խուսափելու համար թուրք ջարդարարներն իրենց հանցագործությունները պատճառաբանում էին այն հանգամանքով, թե իբր Ռուսաստանից զենք ներմուծելով, հայերը պատրաստվում են ոչ թե ինքնապաշտպանության, այլ՝ ապստամբության, որը և իրենց հարկադրում էր դիմելու կտրուկ միջոցների: Դժբախտաբար այս վարկածը պաշտպանում է նաև Մահարու հերոսը՝ Օհանես աղան. «Դու կառավարության քթի տակ զենքեր բերես և տներն ու վանքերը դարձնես ջաբախանա, դու գաղտնի թերթեր, գրքեր ստանաս կառավարության դեմ, ֆիդայիներ սար հանես, փաշա ու կայմակամ սպանես... ես քո գլուխ մաժե՞մ...»: Մոռացության է տրվում, որ «փաշա ու կայմակամ» սպանելը, ֆիդայիների գոյությունը թուրքական կառավարության ստեղծած «համակեցության», հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող քաղաքականության արդյունք էր, և բնավ ոչ ներմուծովի:

Բացի այս, չէ՞ որ արևմտահայության այն բեկորները փրկվեցին միայն, որոնք դիմեցին զենքի: Ժողովրդի մյուս կեսը, որ կոչվում է արևելահայություն, կարո՞ղ էր անտարբերությամբ ընդունել մյուս կեսի տառապանքները: Դա կլիներ մեծագույն անբարոյականություն: Մինչդեռ գրողն անտեսում է ժողովրդական շարժման այս լայնությունը և ազատագրական պայքարը դիտելով որպես դաշնակցական կուսակցության մենաշնորհ՝ անվերապահորեն ընդունում Օհանես աղայի կարծիքը՝ իրեն դատապարտելով ձախողման:

Չունենալով ողբերգությունը կանխելու, շրջանցելու ոչ մի պատճառաբանված հնարավորություն, գրողն իր այս հակապատմական մտայնությունն է դրել հերոսի բերանում: Եվ այն ինչքան ներելի է հերոսի համար, որպես կոնկրետ հարաբերությունների հապճեպորեն ընդհանրացրած արտահայտություն, նույնքան աններելի է գրողի համար, որ պարտավոր է երևույթներն ընդգրկել ամբողջությամբ և անկողմնակալ կերպով:

Եթե հայերի ընդվզումը նույնիսկ չդիտենք որպես գոյության պայքար, ապա այն, այնուամենայնիվ, տեղի պիտի ունենար որպես կյանքի բնականոն զարգացման հետևանք: Այստեղ ժամանակի և նպաստավոր պայմանների ընտրության հարցն էր, իսկ մեր ժողովուրդը զրկված էր ընտրելու կամ չընտրելու ամեն մի հնարավորությունից: Ի՞նչ բարոյական նկարագիր պիտի ունենա այն ազգը, որ հավիտենապես համակերպվել է ստրկության շղթաներին և այդ շղթաները փշրելու յուրաքանչյուր փորձ դիտում է որպես ինքնասպանություն: Պատմության ճշմարիտ քննությունը ցույց է տալիս, որ համակերպվելը նույնպես փրկություն չէր լինի: Այս ճշմարտությունը ոչ մի արձագանք չի գտել վեպում:

Վանում ծրագրված աղետի իրագործման նախօրյակին կուսակալ Զևդեթը իր մոտ է կանչում Վասպուրականի հայության ղեկավարներին և պահանջում, որ ամբողջ նահանգի՝ 18-ից 45 տարեկան զենքի ընդունակ բոլոր մարդիկ ներկայանան զինծառայության: Հայ գործիչները ձեռնարկում են բոլոր հնարավոր միջոցները մի կողմից՝ կառավարության պահանջը կատարելու, մյուս կողմից՝ Վասպուրականի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Այդ ահավոր օրերին շաբաթական 500 կարող ձեռքեր պետք է զորակոչվեին թուրքական բանակում «ծառայելու», իսկ թե հայ զորակոչիկների հետ ինչպես էին վարվում հետագայում, դա ևս հայտնի է: Ամբողջ Վասպուրականի երիտասարդությունը պահանջում է դուրս գալ զինված ապստամբության, սակայն ղեկավարությունը չի ընդառաջում երիտասարդներին, պատճառաբանելով՝ որ նախ հայերը ապստամբներ չեն, և որ ապստամբությունն ինքնին բավական կլինի, որպեսզի թուրքերն անցնեն իրենց դիտավորությունը իրականացնելուն: Նրանք փորձում են փոքր զիջումներով կանխել աղետը: Ծանոթ պատմություն է: Կրկնվում էր հինգերորդ դարը: Հիշենք, թե ինչպես պարսից Հազկերտը իր մոտ կանչեց հայ նախարարներին: Հիշենք նաև, թե ինչպես Վահան Ամատունին անընդհատ խնդրում էր Վարդան զորավարին՝ սկսել ապստամբությունը, իսկ վերջինս հապաղում էր: Կարիք կա՞ ապացուցելու, որ մեծ զորավարի հապաղումը նրբորեն մտածված ու մշակված քաղաքականություն էր: Այո՛, քսաներորդ դարի առաջին քառորդում կրկնվում էր հինգերորդ դարի մեր պատմությունը: Նորօրյա թշնամին ավելի դաժան էր և ավելի խորամանկ: Հենց այս տագնապաշատ օրերին կուսակալ Զևդեթը խորամանկությամբ իր մոտ է կանչում Վռամյանին և Իշխանին: Արամը նույնպես կանչված էր, բայց չի ներկայանում: Կասկածից դուրս է, որ թե՛ Վռամյանը և թե՛ Իշխանը գիտակցել են իրենց քայլի ճակատագրական լինելը: Բայց դա բխում էր ժողովրդին փրկելու նրանց վարած զիջման քաղաքականությունից: Ճիշտ է եղել այդ քաղաքականությունը, թե ոչ, տվյալ դեպքում դա չէ կարևորը: Չնայած նորից կարող ենք վկայակոչել հինգերորդ դարը: Հետաքրքիրն այստեղ այն է, որ այդ մարդիկ չափազանց հեշտությամբ են գնում դեպի մահ, իրենց վիճակված դառը ճակատագիրը ընդունում են առանց փոքր-ինչ երկմտելու, առանց ներքին տառապանքի: Չէ՞ որ իրականում նրանք պետք է ունեցած լինեն իրարամերժ ապրումներ, նպատակի մեծությամբ պայմանավորված անձնազոհության գաղափար և սեփական ժողովրդի ողբերգական կացության խորը զգացում:

Այս հերոսները բացահայտում ու լրացնում են Արամին և բացարձակապես չունեն իրենց անհատականությունը հաստատող, վեպում իրենց գոյությունն արդարացնող բնավորության ինքնուրույն գծեր:

Թե՛ Արամը, և թե՛ Վռամյանն ու Իշխանը այնքան թեթև, այնքան արկածախնդիր և անողնաշար են ստացվել վեպում, որ շատ տարօրինակ է թվում նրանց պատժաչափը՝ նրանց գործունեությամբ պայմանա-

վորված աղետի մեծությունը: Եթե այդ մարդկանց պատճառով է կատարվել ողբերգությունը, պետք է որ այն շատ աննշան լիներ:

Կանխակալ ու սուբյեկտիվ վերաբերմունքը հնարավորություն չի տվել հեղինակին մտնելու հերոսների ներաշխարհը, որի հետևանքով էլ նրանց կերպարները զրկվել են հոգեբանական և գեղարվեստական համոզչականությունից: Իհարկե, սա պայմանավորված է նաև վեպի բնույթով: Ինչպես Չարենցը, «Երկիր Նաիրի» վեպում, այնպես էլ Մահարին, այս վեպում, տեղի ունեցած իրողությունները պատմում է որոշակի հեռավորությունից, աշխատում կողքից նայել ու գնահատել կատարված դեպքերն ու նրանց թողած հետևանքները: Ազգային կուսակցությունների գործունեության որոշ կողմերի ճիշտ ու համոզիչ քննադատությունը գրողը հաճախ հասցնում է աններելի ծայրահեղության:

Նա բացառում է ազգային կուսակցությունների և նույնիսկ առանձին գործիչների մոտ ազգօգուտ որևէ բան տեսնելու հնարավորությունը:

Այս է ապացուցում Միհրան Մանասերյանը՝ իր խոհերով ու գործունեությամբ, Աշերը՝ իր օրագրով:

Բայց չէ՞ որ մինչև Աշերը գրողի ձեռքով կլրացներ իր օրագիրը, հայ ազգային հայտնի կուսակցությունը դաշնակցել է երիտթուրքերի հետ: Եվ չէ՞ որ երիտթուրքերին դաշնակցելու, հավատալու նրանց միամիտ և ապաշնորհ քաղաքականությունը վերջին հաշվով ունեցավ ծանր հետևանքներ:

Նույնիսկ Ադանայի կոտորածից հետո դաշնակցությունը հավատարիմ մնաց երիտթուրքերին: Բայց չէ՞ որ այդ հավատարմությունը ևս հանցագործության աստիճանի հասնող սխալ էր: Աշերի օրագիրը գրվելու ժամանակ հայ ազգային կուսակցությունները բացարձակապես զրկված էին «խաղաղության տարիներ շահելու» ոչ միայն իրավունքից, այլև ամենաչնչին իսկ հնարավորությունից: Սպանողը պաշտպանվելու իրավունք և հնարավորություն չի տալիս իր զոհին:

«Խաղաղություն շահելու», «դիվանագիտական ստրատեգիա» առաջադրելու տկարամիտ կարծիքները հակապատմական են: Մահվան դատապարտված ժողովուրդը չի կարող հաշտություն կնքել մահվան հետ: Նա պայքարում է մահվան դեմ:

Պատմական իրողությունների ներքին տրամաբանությանը հասու չլինելը, երևույթների փոխկապվածության և պատճառաբանվածության անտեսումը կործանարար ազդեցություն են թողել Մահարու տաղանդի վրա: Եվ պատահական չէ, որ վեպի քաղաքական հարցեր արծարծող բազմաթիվ էջեր ու հատվածներ զուրկ են պատումի հստակությունից ու հավաստիությունից: Այդ հատվածներում կորչում է Մահարու խոսքին հատուկ փայլն ու հնչեղությունը, պատկերավորությունն ու գեղարվեստականությունը:

Չկարողանալով կերպավորել քաղաքական հերոսներին՝ գրողը չի հաղորդել նաև ժողովրդական կյանքի լարվածությունը՝ պատմության թատերաբեմից հեռանալու ներքին երկյուղը, չմեռնելու կիրքը, հերոսական մթնոլորտը: Մինչդեռ Մահարին կարող էր ժամանակի հերոսական ոգին և ծայրահեղ ողբերգականությունը պատկերել թեկուզ Վանի աննախադեպ պաշտպանության ճշմարիտ նկարագրությամբ:

Թուրքական կանոնավոր զորքերով և բաշիբոզուկներով շրջապատված վանեցիների հաղթանակը Գևորգ վարժապետը հիմնավորում է շեֆերի բացակայությամբ: «Վանը պիտի դիմանա առանց շեֆերի, իսկ ժողովուրդն առանց շեֆերի հրաշքներ կարող է գործել...»: Թվում է, թե գրողը գոնե այս դեպքում կհաղորդի այդ հերոսական մթնոլորտը, այն իրական հրաշքը, որ կատարեցին վատ զինված վանեցիները՝ ավելի քան մեկ ամիս դիմագրավելով թուրքական գերազանց ուժերի ահեղ հարձակումներին:

Ի՞նչն էր մղում նրանց այդօրինակ քաջագործության: Հայրենի հողի սե՞րը, այն հավերժորեն կորցնելու վտանգի զգացո՞ւմը, ազգային արժանապատվությունը պաշտպանելու անզիջում կա՞մքը, թե՞ դարերով փայփայած ազգային երազանքի մոտալուտ իրականացման ծխացող հույսն ու անկոտրում հավատը:

Գրողը ոչ մի պատասխան չունի: Ինչպես նկատել է գրականագետ Գ. Անանյանը, Վանի հերոսական ինքնապաշտպանությունը համարելով միայն կուսակցությունների գործունեության արդյունք, Մահարին ըստ էության առանց համակրանքի է խոսում նաև այդ մասին, որի հետևանքով էլ ընթերցողն այդ ահեղ օրերի նկարագրության մեջ չի տեսնում այն օրինական հիացքն ու ազնվացնող խանդավառությունը, որ ապրում են նույնիսկ օտարները[5]:

Ընդհակառակը, Վանի հերոսական ինքնապաշտպանությունը հեղինակը նորից ծառայեցնում է քաղաքական գործիչների և կուսակցությունների քննադատությանը: Չնայած «բացվել էր մի դարաշրջան, երբ չկար, գոյություն չուներ ոչ դաշնակ, ոչ հնչակ, ոչ արմենական, կար միայն կռվող, մարտնչող վանեցին և մի Եկարյան Արմենակ՝ առանց, սակայն, արմենականության»: Բայց որտե՞ղ է այդ «կռվող, մարտնչող վանեցին», որտե՞ղ են մեռնելու երկյուղից գոտեպնդված և ազգային արժանապատվությունը պաշտպանելու խանդով խանդավառված ու հերոսացած պաշտպանները: Վանի պաշտպանության նկարագրության մեջ չի երևում Արմենակ Եկարյանը, որ կարող էր դառնալ վիպական հզոր անհատականություն, հայրենի հողի ու ժողովրդի գոյատևումը մարմնավորող գրական կերպար, չի երևում բուլղարացի Գրիգորը, որին նույն վանեցիները օրինական հպարտությամբ հետագայում թաղեցին Պոլսում՝ որպես «հերոս մը անմոռանալի» (Շահնուր):

Ծանոթագրություններ

1. Ա. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգությունը, 1965, էջ 5:
2. «Բանբեր Երևանի համալսարանի», 1967 թ., № 2, էջ 261:
3. «Բանբեր Երևանի համալսարանի», 1967 թ., № 2, էջ 261:
4. Գ. Մահարի, Երիտասարդության սեմին, էջ 390:
5. «Բանբեր Երևանի համալսարանի», 1967 թ., № 2, էջ 258:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երկու Արամ

Դաճախ եմ մտածել՝ արդյոք թերություններ ու թերիներ տեսանող, հավերժ ընդդիմադիր Լեռ Կամսարը որևէ դրվատելի անձ կամ արարք տեսե՞լ և արձանագրե՞լ է: Դիցուկ թե, մասնագիտության բերումով երգիծաբանի աչքը միայն թերությունները պետք է նկատի, այնուհանդերձ, լինում են չէ՞ դեպքեր, որ մարդ իրենից անկախ հիանում և գովաբանում է մեկին:

Չզարմանաք՝ հազվադեպ, բայց կա՛ նման բան: Հիմնականում դա արտահայտվում էր դրականի կողքով լուռ անցնելով: Եթե չի անդրադարձել որևէ մեկին կամ որևէ բանի, փառք Աստծու, ուրեմն ժամանակի քննությունը վերջիններս հաղթահարել էին ու կարող էին հանգիստ շունչ քաշել:

Հիշում եմ՝ մեկ անգամ Սիլվա Կապուտիկյանը օգնել էր Կամսարի դստերը մի կարևոր հարցում, և տիկին Սիլվային հաճոյանալու համար նա ասաց.

- Չեք պատկերացնի Լեռ Կամսարն ինչպես էր ձեզ սիրում և մեծարում:

Բանաստեղծուհին քահ-քահ ծիծաղելով ասաց.

- Սիրո՞ւմ, ինչ ես խոսո՞ւմ, Նորա ջան, երբ Կամսարի գլուխը տեսնում էինք գրողների միությունում, բոլորս թաքնվում, ծակուծուկ էինք մտնում, որ մեզ ո՛չ նկատի, ո՛չ էլ հիշի իր գրավոր մտորումներում:

(Փակագծում տեղեկացնեմ, որ այս դիպվածն ասելիքիս հետ կապ չունի, բայց ամեն դեպքում հպանցիկ նշեմ, որ սիրելի տիկնանց տիկին բանաստեղծուհին այնքան էլ հաջող չէր թաքնվել...):

Հա, ի՞նչ էի ասում... Կամսարի մոտ կան նաև դրվատանքի խոսքեր որոշ գրողների, արվեստագետների հասցեին: Բայց, որ նա կարող էր անթաքույց իր սերն արտահայտել իր ժամանակի որևէ իշխանավորի, քաղաքական գործչի հանդեպ՝ դա արդեն չափազանցություն էր:

Չեք հավատո՞ւմ՝ ահա փաստը.

«Վասպուրականը, սակայն, 20-րդ դարասկզբին կկազմեր ուրախալի բացառություն մը Տարոնի, Բարձր Հայքի և այլոց հետ համեմատած: Սա չընկճվեցավ այս բոլորեն ու կներկայացներ շնչելի մթնոլորտ մը հայ թոքին համար, և այդ՝ շնորհիվ Արամ իշխանի:

Արամ իշխանը, որը ծագմամբ Սյունեցի էր, իր եռանդուն գործունեությամբ, իր պարզությամբ և իմաստությամբ գրավեց ոչ միայն հայերու, այլև թուրքերու սիրտը, որք «փաշա» տիտղոսը տվին իրեն: Այս բանը շատ լավ կհասկնար ժամանակի ոստիկան Ջևտետ փաշան: Նա գիտեր, որ քանի կենդանի է Արամ՝ իր իշխանությունը չի կարելի հաստատուն համարել: Եվ օր մը ալ, ապստամբության դրոշ բարձրացնելով կրնար անկախություն հայտարարել և դուրս վռնդել թուրք ոստիկանին Վասպուրականի սահմաններեն:

Վասպուրականի ոստիկան, խորամանկ Ջևտետն առիթը հարմար սեպելով, կպատրաստվի իր հաշիվը մաքրել Արամին հետ: Ուստի հոտ կհանե իբրև թե Մոսկոֆներու վրա կռվի պիտի երթա, կսկսե տենդագին պատրաստություններ տեսնել: Դեսպաններ կղրկե Արամին քով և խումբ մը հայագունդ զորք կխնդրե ի սատար օգնականության: Արամը բոլորովին անտեղյակ չըլլալով մեկտեղ մահմեդական ոստիկանին խորամանկությանը, կհավանի գունդ մը քաջ կռվողներ ղրկել, որոնք Վասպուրականի Արճակ ավանի մեջ կմիանան մահմեդական զորաց:

Ջևտետն իր խառնիճաղանջ բանակը, ըստ երևույթին, դեպի Ատրպատականի սահմանները կխաղացնե:

Վասպուրականը պահ մը խաղաղ զգաց իրեն, բայց այս խաղաղությունը երկար չտևեց...

Անմիջապես արևելյան գավառներեն գուժկաններ հասան Արամի մոտ, թե՝ Ջևտետը իր ճամփան փոխած՝ Վասպուրականին վրա կգալե. քո պատրաստությունը տես, կըսեն, ո՛վ քաջ: Գյուղերը, ավանները ասպատակելով, կոտորելով Վանա պարիսպներուն կմոտենա քեզի անպատրաստ վիճակի մեջ բռնելու համար:

Սակայն Հայաստանի ամեն կողմերեն եկած այս բոթերը չշփոթեցրին զԱրամ: Անիկա իր վերջնագիրը հղելով առ թուրք ոստիկանին, գործի անցավ: Լուր ղրկեց դաշնակցականց, ռամկավարաց, հնչակենից, լբանց, ճղբաց և այլն ազգաց և ազանց, որ վազվազակի գան հասնեն թիկունս օգնականության: Հայ նախարարները հասկցան Հայաստանին սպառնացող վտանգի ամբողջ մեծությունը, և ամեն կողմե քաջ պատերազմիկ գունդեր շտապեցին իրենց սիրելի Արամ իշխանին քովը համախմբվիլ:

Մյուս կողմե Արամ սպարապետը նամակ մը կղրկե Ռուսիա և հիշեցնելով ռուսաց խոստումները՝ օգնություն կխնդրե: Սպասված օգնությունը չուշանար, և Ջևտետ ոստիկանը հասկնալով իր վիճակին լրջությունը՝ քաղաքին մահմեդական բնակչությունն առած Բիթլի (Լեռ Կամսար,«Հայոց պատմություն», 1916թ.):

Արամ Մանուկյանի գլխավորությամբ «Ժողովուրդն այս հաղթութունեն գինովցած,

անմիջապես Եզնիկ Մոկացու նախագահությամբ ժողով մը գումարեց Վանի Մայր եկեղեցու մեջ և որոշեց Արամ իշխանը գահ բարձրացնելով՝ նահանգապետ հռչակել:

Արամ Մանուկյանը իր իշխանության ամբողջ ընթացքին ցույց տվավ, որ ոչ միայն քաջ կռվող մըն է պատերազմի դաշտին մեջ, այլև շինարար նահանգապետ մը խաղաղության ատեն: Արամ Ա.-ի օրոք երկրագործությունը իր գագաթնակետին հասավ: Ոսկին ու արծաթն առատացավ երկրին մեջ:

Արամ Մանուկյանը ամբողջ 70 օր հայրաբար խնամեց իր ժողովուրդը: Ոչխար չունեցողին ոչխար տվավ, ծառ չունեցողին ծառ տվավ: Ժամանակի վարժապետները իրենց իսկ բերանով խոստովանած են, որ Արամի իշխանության օրոք բնավ անոթություն զգացած չունեն»: (Լեռ Կամսար, «Հայոց պատմություն», 1916թ.):

Տեսեք ի՞նչ արժանիքներ ու առաքինություններ է ունեցել Արամ Մանուկյանը, որքա՜ն մեծ ազգային գործիչ և իշխանավոր է եղել նա, որ Արամ Թովմաղյան երգիծաբանի «չարախինդ» լեզուն անգամ ի զորու չի եղել իր հիացմունքը չհայտնել: Վանեցիները սիրում, հավատում և նվիրվում էին Արամ Մանուկյանին, որովհետև փոխադարձ էր դա: Արամն իրեն չէր բարձրազատում ժողովրդից, նա բոլորի հետ էր և բոլորից մեկը: Իր հոգածության տակ էին Վանի և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ մշակութային ու կրթական հարցերը: Ամեն ոք աջակցություն կարող էր ակնկալել նրանից առանց բացառության:

Ահա ի՞նչ ենք կարդում Ամերիկա Վրացյանին ուղղած իր նամակներում.

1.

Սիրելի Վրացեան,

Նամակաբերս՝

Տոքտ. Ոէյնոլդս գալիս է Ամերիկա Վանի մէջ Ամերիկեան Կոլէճ մը բանալու համար հանգանակութիւն անելու:

Վերջերս սրանց հետ կրթական հարցերու շուրջը համերաշխած լինելով՝ մենք ուրախ կը լինենք, որ սրանք յաջողին կանոնաւոր կոլէճ մը ունենալ հոս:

Արամ Թովմասյան
(Լեռ Կամսար)



Արամ Մանուկյան

Ուստի կը խնդրենք՝ ես եւ ընկերներ, որ թերթի եւ այլ միջոցներով ամեն կարգի աջակցութիւն ցոյց տաս:

Ուրիշ խնդիրներու մասին չեմ գրում. ոտի վրայ եմ. գաւառ կը մեկնիմ:

Համբոյրներով՝ քո ԱՐԱՄ
1913, Սեպտ.6, Վան

2.

Սիրելի Սիմոն,

Նախորդ երկար նամակս յուսամ ստացել ես եվ խնդրածներս միևտար ալթի չես անի: Գրաբերս խաս վանեցի է եւ ինձ շատ մօտիկ: Գալիս է այդտեղ միլիոններ վաստակելու: Նայիր, որ շուտ վաստակէ եւ վերադառնալով՝ մեզ էլ բաժին հանէ: Յանձնում եմ քո հոգատարութեան:

Ուրախ եմ, որ հոգ ես տանում, որ «Հայրենիք»-ում Վանից շատ թղթակցութիւններ երեւան: Քո յիշած տղաների մասի կ'ասեմ, որ բոլորն էլ լաւ են, բացի Հրանտից, որ զաւզակին մէկն է: Առանձնապէս յանձնարարում եմ Հմայեակին, որ ապագայ ունեցող տղայ է, թէեւ քիչ մը դժուարամարս: Թովմաղեանն էլ կարող է լաւ գրող դառնալ (Լեռ Կամսար), եթէ վրան աշխատիս, դժուար տաշելիք քար է: Հումոր ունեցող տղայ է եւ կարող է լաւ երգիծաբան դառնալ:

Խնդրեմ լուրջ ուշադրութիւն դարձրու Վանին. հիանալի երիտասարդութիւն ունինք: Ես շատ եմ ոգեւորուած: Զուր ես ծաղրում իմ «ղարաբաղցիական վանեցիութիւնը»: Իրաւունք ունիս, ես աւելի վանեցի եմ զգում ինձ, քան թէ ղարաբաղցի: Եւ ի՞նչ ես կարծում. Վանի վերջալոյսը տեսնողը ուրիշ տեղացի կ'ուզէ՞ լինել: Վանայ քաղաք...

Համբոյրներով՝ ԱՐԱՄ
(անթուակիր)

Նամակների այս փոքրիկ պատառիկներն անգամ աներկբա բացահայտում են Արամ Մանուկյան հզոր պետական այրի կերպարը, ով դարերով պետականություն չունեցող հայոց ծվենների վրա սատարեց կերտելու Վանի առաջին հանրապետության ծնունդը և փրկեց վանեցիներին կոտորածից:

Բայց դեռ գալու էր Ճն ամենակարևորը...

Այնուհետև, թերթելով մեր պատմության տխուր էջերը՝ երկու Արամներին մենք արդեն հանդիպում ենք Երևանում, ուր հասել էին նրանք Վանի «Նահանջ բյուրացից» հետո: Ուր 1918թ.-ին հայ ժողովրդի, փառապանծ

հերոսների գերմարդկային ջանքերով և Արամ Մանուկյանի ղեկավարությամբ կերտվեց մեր անկախությունը և ստեղծվեց Առաջին Հայկական Հանրապետությունը՝ մեր պատմության ամենափառահեղ հաղթանակը:

Արամ Մանուկյանի խստագույն պահանջով Թիֆլիսից Հայաստան ժամանեցին հեռվից կառավարող պետական այրերը, և կազմավորվեց առաջին հայկական կառավարությունը, որտեղ նա նշանակվեց նորաստեղծ պետության Ներքին գործերի նախարար:

Եվս մի մեջբերում՝ տեսնելու համար պետական այր Արամի տեսակը, ում մշտական հոգածության տակ եղավ Հայրենիքը և այնտեղ ապրող քաղաքացին:

«Հիշողութիւն չորրորդ 1918 Յուլիս-օգոստոս:

Երեւանի պզտիկ հանրապետությունը կապրեր իր սովի ամենատխուր օրերը, ամեն օր կմեռնեին ոչ պակաս 600 անձ, միայն Երեւան քաղաքին մեջ:

Պաթումի դաշնագրով նորաստեղծ հանրապետութեան սահմանը Երեւանեն հինգ քիլոմեթրի վրայ կը վերջանար: Հինգ քիլոմեթրեն այն կողմ հասած ցորենի արտերը կը մնային անքաղ: Վասպուրականի լեռնցիները որոշեցին մահվան գնով երթալ այդ արտերեն ցորեն հավաքել: Թուրք զինվորները նախապես սպանեցին մի քանի գյուղացիներ և ապա Վեհիպ փաշայի արտօնութեամբ իրաւունք տրուեցաւ ցորենի հասկեր հաւաքել ու թուրք զինուորներու հսկողութեն տակ վերադառնալ Երեւան:

Այս անպաշտօն արտօնութիւնը մեզ քաջալերեց ամէն օր կազմակերպել կանանց և երեխաներու խմբեր ցորենի հաւաքման համար:

Ահա այս օրերէն մէկ առաւօտ արեւածագին փողոցը իջած այս գործին կը նայեի, տեսայ, որ դերասան Գարագաշը՝ օգնական դերասան պարետ Արշօ Շահխաթունուն, մօտ յոթանասուն տարեկան մոկացի ծերունիի մը օձիքեն բռնած, թե՝ «զինվորացու ես՝ բանակ պիտի երթաս»: Մօտեցա Երեւանի օգնական պարետին, թե՝ պրն. Գարագաշ ո՞ւր կը տանէք այս խեղճ ծերունկը, ձգեցեք, որ հաց հավաքելու երթայ: Մեր դերասան պարետը սոսկալի բարկացավ ըսելով, թե՝ ո՞վ եք դուք, որ կը համարձակեք իմ գործին խառնուելու: Պատասխանեցի՝ ես ան եմ, որ մեր գավառացիներու գործին կը խառնուեմ ու ձեզի կըսեմ, որ դուք իրաւունք չունիք նեղութիւն տալու այս խեղճ ծերուկին:

Այն ատեն դերասան-պարետը զայրացած մտրակը ձեռք իր ձին իմ կողմը քշեց հրամայելով, թե՝ «լաւ, եթէ ան ծեր է, հո դուք երիտասարդ էք, հայդե զօրանոցը»: Շատ բարի, ըսի, երթանք, ու սկսայ զինուորական քայլուածքով անոր ձիու կողքեն առաջանալ փողոցի կեդրոնով: Մեր դիմացը կուգար միստեր Արրոլը, երկու ամերիկացիներեն մէկը (միւսը միստեր Էլտրը), որ զիս տեսնելով կանչեց.

- Հըլլօ, ի՞նչ զինուորութիւն կը խաղաս,- և առանց սպասելու պատասխանին գլխարկը հակառակ կողմը դարձուց և ինծի ընկերանալով սկսաւ իրեն յատուկ կօմիկ ձեւերով քալել: Ու տակաւին Պեյպութեան փողոցին ծայրը չը հասած, Լեռ Կամսարը երեւցաւ, որ իրեն յատուկ «լրջութեամբ» եկաւ ու մեր խումբին միացաւ: Հազիւ հասած էինք Աստաֆեան կեդրոնական փողոցը (ապա Ազատութեան՝ իմմա Աբովյան), երբ մեկ-երկու զինուորական սպաներ մեզ տեսան՝ օգնական պարետ Գարագաշին վրայ յարձակվեցին ու զինք նախատելով ըսին.

- Մինչեւ ե՞րբ պիտի շարունակեք ձեր այս խայտառակ դերասանութիւնը...

Երբ իհարկե դերասան-պարետը իր ձիովը փախուստ տուաւ, մեր խումբը սակայն շարունակեց իր ճամբան մինչեւ Ներքին գործոց նախարարութիւնը, ուր հոն հասնելով խնդիրը պարզեցի Արամ Մանուկեանին (փաշա):

Ներքին գործոց նախարար Արամը իսկոյն հեռախօսը վերցուց ու քաղաքին պարետ Շահխաթունին իր մօտ հրավիրեց:

Անշուշտ խայտառակութեան լուրը հասած ըլլալով Շահխաթունուն, հեռախոսով յայտնեց, թե.

- Լսեցի Գարագաշի խայտառակութեան մասին, ներեցեք մեզի ու ներեցեք, որ չը կրնամ գալ:

Ապա, երբ անդրադարձաւ Լեռ Կամսարի ներկայութեանը, հարցուց.

- Արամ, դու ի՞նչ գործ ունիս հոս:

Ե՞ս, - լրջութեամբ ըսավ Արամը, ես, փաշա, տեսնելով, որ դերասան Գարագաշը փողոցներ ինկած դերասաններ կը հաւաքեր, եկայ որպեսզի դեր մըն ալ ինծի համար ապահովեմ....»: (Հատված Նշան Յովհաննիսյանի «Հուշերից», Ապրիլ 15,1959թ.: Ձեռագիրը գտնվում է Երեւանի Ե. Չարենցի անվան գրականության թանգարանում):

Ինչպես նկատեցիք նա նորից իր հայ ժողովրդի հետ էր, հոգ էր տանում իր երկրի յուրաքանչյուր քաղաքացու մասին, անթիկնապահ ու առանց զրահապատ մեքենայի հասանելի էր իր կարիքն ունեցողներին...

Արամ Մանուկյանը մեր պետականության խորհրդանիշն է...

Նրա հավատամքը՝ Երկրին ծառայելը...

Հավերժ փառք ու մեծարում նրան...

Վանուհի Թովմասյան

Վան, հին բերդի մնացորդները

ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑՆԵՐ, ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Ալես Պարսամյան

Արմենակ Շալջյան

Ավետիս Ահարոնյան

Բուլղարացի Գրիգոր
(Գրիգոր Գեոզեյան)

Դանիել
Բեկ Փիրումյան

Դրո (Դրաստամատ
Կանայան)

Հակոբ Տեր-Հակոբյան

Իսաջան Առաքելյան

Վարդան-Շահբազ
(Մինաս Տոնիկյան)

Մալխաս (Արտաշես
Հովսեփյան)

Արմենակ Եկարյան

Մելո (Ղևոնդ Մելոյան)

Վանայ Իշխան
(Նիկոլ Պողոսյան)

ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑՆԵՐ, ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Մենակ (Եգոր Առստամյան)

Մկրտիչ Մուսինյան

Թովմաս Նազարբեկյան

Ընծայր (Գևորգ վրդ. Նալբանդյան)

Պարույր Լևոնյան

Պողոս Բեկ Փիրումյան

Ռուբեն (Մինաս Տեր-Մինասյան)

Սալման (Համազասպ Բաղեշցյան)



Վանա Սարգիս (Սարգիս Օդաբաշյան)



Փանոս Թերլեմեզյան

Թորգոմ (Թուման Թումյանց)

ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑՆԵՐ, ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Արշավիր Աստվածատրյան



Ավետիք Սահակյան

Հովհաննես Պարոնյան (Յապոն)

Արշավիր Շահխաթունի

Ջահանգիր աղա

Միքայել Աթաբեկյան

Սահակ Թորոսյան

Սամսոն Հարությունյան

Սիրական Տիգրանյան



Կոմս (Վահան Փափազյան)

Տիգրան (Կողբեցի Հարություն)

Թեոս Տեղտրիկյան

Մովսես Սիլիկյան

Թե ինչպես Ձեյվա (Դավիթբեկ) գյուղում ծնված Սարգիս Հովհաննիսյանը դարձավ Արամ Մանուկյան

Սարգիս Հովհաննիսյան (Արամ Մանուկյան). շատերը կասեն՝ լսել ենք, քչերն էլ թե՝ համարձակ, խելացի, պետական-հասարակական գործիչ, Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրներից էր: Մարդիկ էլ կան, որ նրան համարում են շուշեցի: Բայց...

Նախ՝ ասեմ, որ ես և Սարգիսը Հովհաննեսի և Հովհաննեսի քրոջ՝ Թագուհու թոռներն ենք՝ արյունակիցներ: Սարգսի (Արամի) մասին հայրս՝ Անտոնը, հիացած շատ պատմություններ էր անում: Լինելով պատանի՝ չհասկացա՝ լրիվ գրի առնեմ:

Սարգիս Հովհաննիսյանը ծնվել է 1879թ. Ձեյվա՝ Դավիթբեկ գյուղում: Ինչպե՞ս Սարգիսը (ըստ մեծերի պատմությունների) Արամ դարձավ:

Պարզվում է հետևյալը: Սարգսի պապը՝ Հովհաննեսը, սև դեմքով արհեստավոր մարդ էր: Սև դեմքն ավելի էին սևացնում դարբնի աշխատանքները, նալբանդ էր (ձիեր, ջորիներ պայտող): Ադրբեջաներեն սև բառը կոչվում է ղարա: Այդ իսկ պատճառով նրան երբեմն անվանում էին ղարա Ավանես, Սարգսին՝ ղարա Ավանեսի թոռ: Հովհաննեսը միաժամանակ մեկ-երկու փողանի հրացանի (ղոշալուլա) փայտային մասն էր պատրաստում: Այդ փայտային մասն անվանում են վերադրակ՝ ղոնդաղ (փողը փայտի վրա ամրացնել), և հաճախ Ավանեսին կոչում էին ղոնդաղչի գարա Ավանես:

Հովհաննեսի զավակներից երկուսը տղա էին՝ Շամիր եւ Արամ: Շամիրն օգնում էր հորը, գյուղից չէր բացակայում: Վար ու ցանք էր անում, խնամում անասուններին: Քչախոս էր, բարեկամասեր: Շամիրի աղջիկները՝ Համեստը, Լիզան, Աշխենը, Անուշը շատ հետաքրքիր, զվարճալի բաներ էին պատմում այն ժամանակվա կյանքի վերաբերյալ, հպարտանում իրենց հորով:

Արամը հիմնականում զբաղվում էր առևտրով: Շատ էր լինում Շուշիում:

Հովհաննեսը ճոխ հարսանիքով շուշեցի Շուշան աղջկան բերում է Արամին հարս: Սարգսի երկու տարեկանը չլրացած՝ մահանում է հայրը՝ Արամը: Երկու տարվա ընթացքում

Շուշանի հարազատները գալիս-գնում են, ի վերջո, Շուշանին համոզում են, երեխայի հետ տանում հորանց տուն: Որոշ ժամանակից հետո երեւան է գալիս Մանուկյան ազգանունով (անունը մոռացել եմ) մարդ, ամուսնության առաջարկ անում Շուշանին: Շուշանը պնդում է, որ պահպանի երեխայի Սարգիս Հովհաննիսյան անուն-ազգանունը, Մանուկյանն՝ իրենը: Հաշտվում են՝ Սարգսին գրանցել հոր անունով՝ Արամ և Մանուկյան ազգանունով: Այսպես Սարգիս Հովհաննիսյանը դարձավ Արամ Մանուկյան:

Սովորել է Շուշիի թեմական դպրոցում: Տակավին պատանի էր, երբ մահանում են հայրը, մայրը՝ Շուշանը: Մանուկյանի ազգականները նրան տանում են Երեւան: Մեծանալով մանկատանը՝ 1901թ. ավարտում է Երեւանի թեմական դպրոցը: 20-րդ դարասկզբին հայ ժողովուրդը պայքարի մեջ էր ցարական կառավարության դեմ: Այդ ժամանակվանից էլ Արամը ճանաչվում է իբրև քաղաքական-հասարակական գործիչ:

1901-03-ին գործել է Բաքվում, Գանձակում, Թիֆլիսում, Կարսում, Ալեքսանդրապոլում զբաղվել է Արեւմտյան Հայաստան զենք-զինամթերք, կամավոր զորախմբեր փոխադրելով:

1904-08-ին գործել է Վանում, Օրդու քաղաքում ուսուցիչ աշխատել: Ապրել է Ժնևում: 1910-ին վերադարձել է Վան, եղել Վասպուրականի հայության սիրված ղեկավարը:

1915թ. կազմակերպել և ղեկավարել է Վանի հերոսամարտը, հաղթանակից հետո աշխատել է Վանի նահանգապետ:

1916-17թթ. աշխատել է Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյում, ապա ժամանել է Երեւան, ղեկավարել ստեղծված հատուկ լայն լիազորություններով կոմիտեն, 1918թ. մարտին ժողովրդի կողմից ընտրվում է դիկտատոր, իսկ Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո ղեկավարել է երկիրը մինչեւ հուլիսի 19-ը, երբ Թիֆլիսում ստեղծված Հայաստանի կառավարությունը Հ. Քաջազնունու գլխավորությամբ եկավ Երեւան: Նոր կառավարության մեջ Արամը ներքին գործերի նախարար էր և այդ պաշտոնը վարեց մինչեւ մահը՝ 1919թ. հունվարի 29-ը: Մահացավ բծավոր տիֆից:

Հորեղբայրս՝ Ալավերդի Եղիազարյանը, ծառայել է ցարական բանակում: 1918թ. գարնանը զորացրվել է: Երեւանում իր փեսա Ասատուր Պողոսյանի հետ հանդիպել է Արամին: Ասատուրն աշխատում էր ներքին գործերում եւ աներոջը՝ Ալավերդուն, ներկայացրել է ներքին գործերի նախարարին: Արամն ուրախացել է և ասել, որ շատ աղոտ է հիշում իրենց տունը, բայց լավ հիշում է, որ մոր հետ հինգ տարեկանում գնացել է Շուշի: Ալավերդու հարցին՝ ընտանիք, երեխաներ ունի՞ արդյոք, քանի՞սն են, պատասխանել է. «Օրդու քաղաքում երկու տարի աշխատել եմ ուսուցիչ, ամուսնացել եմ ուսուցչուհու հետ, ունեցել եմ Վան անունով տղա, բայց հիմա...»: Փոխվեց խոսակցության թեման, ո՞վ գիտի՝ ինչ եղավ:

1990թ. սեպտեմբերին Դավիթբեկ գյուղի միջնակարգ դպրոցն անվանակոչվել է Արամ Մանուկյանի անունով:

Հանդիսավոր արարողության ժամանակ նախկին կոլվարչության նախագահը՝ Տիգրան Սարգսյանը, իր ելույթը վերջացրեց այսպես. «Ձեյվացիներ-Դավիթբեկցիներս իրավունք ունենք հպարտանալու Սարգիսով, քանզի պայքարել է լուսավոր գործի համար: Դպրոցը կրթության, լուսավորության, գիտության օջախ է: Սարգիսն արժանի է սրան: Նոր սերունդը պետք է ճանաչի Սարգսին, լինի նրա նման հայրենասեր, ազգասեր»:

2009-ին լրանում է Սարգսի ծննդյան 130, մահվան՝ 90-րդ տարին:

ՍԱՖԱՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
գ. Դավիթբեկ
«Այունյաց Երկիր», 2009 թ. № 4

Դավիթբեկ գյուղի միջնակարգ դպրոցը, որ կրում է Արամ Մանուկյանի անունը



Արամ Մանուկյանի կիսանդրին ծննդավայր Դավիթբեկում, վերականգնող քանդակագործ՝ Դերենիկ Ահարոնյան

Արամ Մանուկյանի դուստր Սեդայի նամակն Արմեն Ասրյանին

Հարգելի Արմեն

Ստացա Ձեր նամակը, զգացված եմ, որ Դուք ձեռնամուխ եք եղել Արամի կյանքի ու գործունեությանը նվիրված աշխատության ստեղծմանը: Ես կփորձեմ Ձեզ օգնել այդ հարցում, չնայած անձնական հիշողություններից զուրկ եմ: Ես հորս չեմ տեսել, ծնվել եմ նրա մահից չորս ամիս առաջ: Տեղեկություններ Արամի հեղափոխական գործունեության մասին ձեռք եմ բերել արտասահմանում հրատարակված Արշալույս Աստվածատրյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի, Օնիկ Մխիթարյանի, Տաճատ Թերլեմեզյանի եւ ուրիշների հոդվածներից ու աշխատություններից: Ինչ վերաբերում է Արամի անձնական կյանքին, ապա այն ձեւավորվել է մորս եւ հորաքրոջս հուշերի օգնությամբ:

Արամ Մանուկյանը (Սարգիս-Սերգեյ Հովհաննիսյան) ծնվել է 1879 թ. մարտի 19-ին: Ինչպես ինձ հայտնի է՝ նրա ծննդավայրը Շուշին է, այդ մասին ես լսել եմ մանկուց՝ մորիցս, հորաքրոջիցս եւ այլ ղարաբաղցիներից: Ձեյվայի տարբերակի մասին տեղեկացա միայն 70-ականներին: Հավանական է, որ այս տարբերակի ստեղծման պատճառը այն է, որ Արամի հայրը Ղափանից էր: Արամի հայրը՝ Հարություն Հովհաննիսյանը զինագործ էր, ուներ սեփական արհեստանոց, ուր վերանորոգում էր հրացաններ եւ այլ զենքեր: Մայրը՝ Շուշանը զբաղվում էր տնային տնտեսությամբ եւ հինգ երեխաների խնամքով: Երեխաներից երեքը տղաներ էին՝ Հովհաննես, Կարապետ, Արամ, երկուսը աղջիկ՝ Աննա, Սառա: Արամը ամենակրտսերն էր: Իր արտակարգ ընդունակություններով ընտանիքի սիրո եւ ուշադրության առարկան էր: Արամի նախնական ուսումնառության գործում մեծ դեր է կատարել ավագ եղբայր Հովհաննեսը, որ չնայած նյութական ծանր պայմաններին՝ Արամին տեղավորել է տեղի ծխական, հետագայում թեմական դպրոցում: Արամի հարազատներից մի քանիսը մահացել են բնական մահով մինչ Ղարաբաղյան կոտորածները, իսկ մյուսները կոտորածի ժամանակ: Արամի եղբայրներից ու քույրերից միայն Սառային է հաջողվում շուրջը հավաքել իր եւ Կարապետի երեխաներին, արնաքամ, վիրավոր հասնել Երեւան, որտեղ մորս օգնությամբ հանգրվան գտան: Արամի քույրերի ու եղբայրների երեխաներից այժմ կենդանի է Կարապետի դուստրը, որ երկար տարիներ ապրում էր Բագվում. հիշյալ դեպքերից հետո տեղափոխվել է Բելոռուսիա: Նրա եղբայրը զոհվել է Հայրենական պատերազմում: Հովհաննիսյանների ժամանակակից սերունդը (ծոռները) հուշերով կապված չեն իրենց նախնիների հետ:

Սեդա Մանուկյան

Հորաքույր Սառայի (մահացել է 1944-ին) հիշողությունները Արամի մասին էմոցիոնալ երանգ ունեն: Ինչպես հայտնի է, Արամը հեռացել է Շուշիից 19 տարեկան հասակում, փաստորեն կտրվել է ընտանիքից. եզակի, կարճատեւ այցերը հայրենիք ի վիճակի չէին խոր հետք թողնել Սառայի հիշողություններում: Մայրս՝ Կատարինե Զաքարի Ձալյանը (հայրս նրան անվանում էր Կատյուշա) ծնվել է Երեւանում (1886-1951), ուսուցչի ընտանիքում: Ուսումը շարունակելու պատճառով 1908-ին մեկնում է Մոսկվա, 1909 թ. ընդունվում է տեղի բժշկական ինստիտուտը, որը 1914-ին ավարտելով մինչեւ 1916 թ. աշխատում է նույն ինստիտուտում որպես օրդինատոր: Այդ տարիներին Մոսկվայում գործում էր Հայաստանի օգնության կոմիտե, որը կոչ էր անում Հայաստանից դուրս ապրող հայերին մեկնել Հայաստան, օգնել գաղթականներին: Տեղեկանալով այդ մասին, մայրս թողնում է իր աշխատանքը, բնակարանը ու շտապ մեկնում է Երեւան, որտեղ ստանձնում է Ղուրդուղլիի մանկական որբանոցի գլխավոր բժշկուհու պաշտոն: Արամը, որի ուշադրության ներքո էր գաղթականների տեղավորման գործը, այցելում էր այն վայրերը, որտեղ տեղավորվում էին մանկատները եւ փախստական հայերը: 1917-ի սկզբին տեղի է ունենում Արամի հանդիպումը Կատարինե Ձալյանի հետ: Որբերի խնամքի ու հմուտ բուժման մորս ջանքերը, գործը կազմա-

կերպելու նրա ունակությունները գրավում են Արամի ուշադրությունը: Մայրս իր մասնագիտությանը նվիրված անձնավորություն էր. անձնազոհ, անշահախնդիր, զարգացած ու կիրթ: Մորս արժանիքները լրացվում էին նրա գեղատեսությամբ, բարի ու մեղմ բնավորությամբ: Բնական է, որ Արամի վրա, որը բարձր էր գնահատում ազգին ծառայելու ձգտումները, մայրս խորը տպավորություն է թողնում: Ամուսնացան նրանք 1917-ի մայիսի 1-ին Երեւանում, բնակվեցին այն տարիներին Ցարսկայա, հետագայում՝ Սպանդարյանի, այժմ՝ Արամի անվան փողոցի N 9 երկհարկանի տան առաջին հարկի բնակարանում: Ծնողներիս ամուսնական կյանքը տեւեց ոչ լրիվ երկու տարի: Գաղթականների բնակավայրեր այցելելու պահին հայրս վարակվեց բծավոր տիֆով ու մահացավ 1919-ի հունվարի 29-ին: Ծնողներիս ամուսնական կյանքի կարճատեւ տարիները Հայաստանի քաղաքական կյանքի տագնապալից պահերն էին: Երեւանը, Բաշ-Աբարանը, Ղարաքիլիսան շրջապատված թուրք ոսոխներով, հերոսական ճիգեր էին ներդնում դիմադրելու թշնամուն: Արամը հասկանում էր, որ թշնամուն դիմադրելու գործում պետք է ապավինել սեփական ուժերին: Այդ իսկ պատճառով հայտարարեց 27-28 տարեկանների զորահավաք: Սրանց միացան բազմաթիվ կանայք, դպրոցական աղջիկներ՝ բանակին ծառայելու համար: Մայրս այդ հայրենասեր աղջիկներին եւ կանանց նախապատրաստեց որպես հիվանդապահներ: Սարդարապատի, Բաշ-Աբարանի, Ղարաքիլիսայի փայլուն հաղթանակից հետո, երբ ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը, մայրս ընտրվեց Ազգային Խորհրդարանի անդամ, բժշկական հանձնախմբերի շրջանում մեծ աշխատանք կատարեց: Ծնողներս այնպես էլ չապրեցին նորմալ ընտանեկան կյանքով: Մայրս ողջ օրը գտնվում էր հիվանդանոցներում, որբանոցներում, հայրս՝ զբաղվում հասարակական-քաղաքական գործունեությամբ: Երբ հետագայում խոսք էր բացվում Արամի մասին, մայրս պատմում էր, որ Արամը հեղափոխական գաղափարին, ժողովրդի ճակատագրին վերին աստիճանի նվիրված անձնավորություն էր: Մոռացած անձնական կյանքը, նա ձգտում էր իրականացնել այն խնդիրները, որոնք այն ժամանակ առաջադրում էր Դաշնակցությունը: Մորս հիշողություններում Արամը վերին աստիճանի համեստ բնավորության տեր մարդ էր, կենցաղում պարզ, բավարարվում էր քչով, ձգտում էր օգնել ուրիշներին: Մայրս հիշում էր Արամի ելույթները Ազգային խորհրդարանում, ժողովներում, հանդիպումների ժամանակ, նրա կրակոտ ճառերը, նրա մոգական ունակությունը հմայում էր ունկնդիրներին: Նրա ռազմական տաղանդը ի նպաստ էր դրվում ժողովրդի մարտական ոգու բարձրացմանը ու գործունեության ակտիվացմանը:

40 տարին չբոլորած հայրս հեռացավ կյանքից: Հայ ժողովուրդը կորցրեց հայրենիքի ազատության գործին նվիրված հերոսներից մեկին: Նրան թաղեցին Երեւանի կենտրոնական գերեզմանատանը՝ Հայ Դաշնակցության պանթեոնում: Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրերից Արամի գործունեությունը ոչ միայն անտեսվեց, այլեւ ամեն ինչ արվեց, որպեսզի մոռացության մատնվի նրա հիշատակը:

Նորաստեղծ Խորհրդային կառավարությունը բռնագրավեց Արամի բնակարանը՝ զրկելով ընտանիքը հարկից, ոչնչացրեց պատմական արժեք ներկայացնող Արամի գրառումները, նամակագրությունները, լուսանկարները, վտարեց կնոջը աշխատանքից: Զրկված բնակարանից, աշխատելու իրավունքից՝ մայրս երեք տարեկան երեխան ձեռքին մնաց փողոցում: Օգնության հասան Ստավրոպոլում բնակվող Արամի բարեկամները, նրանք հրավիրեցին մեզ Ստավրոպոլ, ստեղծեցին կյանքի բարենպաստ պայմաններ, մայրս տեղի հիվանդանոցում ընդունվեց աշխատանքի: Մենք ապրեցինք այնտեղ 1923-1929 թթ.:

Այդ տարիներին Խորհրդային Հայաստանը խիստ կարիք ուներ մասնագետների: Մտավորականների գերակշռող մասը խորհրդայնացման առաջին իսկ օրերից մեկնեցին արտասահման: Առանձնակի կարիք կար բժիշկ մասնագետների, որովհետեւ տիֆի համաճարակը, զանազան մաշկային հիվանդությունները հնձում էին բնակիչներին: Առողջապահության կոմիսարիատը դիմեց «ծայրահեղ» քայլի՝ մինչ այդ աշխատանքից ազատված, անտեսված մասնագետներին՝«թշնամիներին» հրավիրեց աշխատանքի: Տեղի Առողջապահության ժողկոմը ինչ-որ ուղիներով տեղեկանալով մորս

Կատարինե Ձալյան

Ստավրոպոլում բնակվելու մասին, նամակով խնդրեց վերադառնալ Երեւան ու մասնակցել տեղում կազմակերպվող մաշկավեներական դիսպանսերի կազմավորմանը:

Հեռանալով Երեւանից, մայրս չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ Արամի գերեզմանը գտնվում է առանց հսկողության, այդ ստիպեց նրան ընդունել հրավերը եւ վերադառնալ Երեւան: Այստեղ սկսեց աշխատել հիշված դիսպանսերում: Բնակարանի հարցը նորից ծառացավ մեր առջեւ: Ստիպված մի սենյակ վարձեցինք կոմունալ բնակարանում եւ տասնյակ տարիների ընթացքում մեզ այնպես էլ բնակարան չհատկացրեցին եւ մենք վարձով ապրեցինք՝ մայրս մինչ վախճանը, ես՝ մինչեւ Մոսկվա մեկնելը:

1937 թ. ստալինյան ահարկման տարիներին մորս նորից վտարեցին աշխատանքից, որպես Արամի կին, մեղադրանք բարդեցին նրա վրա, որ իբրեւ թե նա կապ է պահպանում արտասահմանում գտնվող դաշնակցականների հետ: Ինչպես մենք հասկացանք, այս կեղծիքի ու պարսավանքի պատճառը արտասահմանից Վահան Նավասարդյանի նամակն էր՝ ուղարկած Երեւան իր մորը, որտեղ խնդրում էր բարեւել Կատարինեին: Այս երկու բառերը պատճառ դարձան երկար հետաքննությունների, որոնք քայքայեցին մորս առանց այդ էլ տկար վիճակը եւ խորացրեցին մեր ծանր կացությունը:

Դեռեւս Արամի մահվան առաջին իսկ տարիներից մորս, իսկ հետագա-



Վարագ Առաքելյան
Խորհրդահայ լեզվաբան, հայերենագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

յում իմ նպատակը եղավ պահպանել Արամի գերեզմանը ոչնչացումից: 30-ականների սկզբին Երեւանի քաղաքային խորհրդի որոշմամբ կենտրոնական գերեզմանը պետք է վերածվեր զբոսայգու (այժմյան Կոմիտասի զբոսայգին): Տեղեկանալով այդ մասին, մայրս բանվորներ վարձեց եւ մենք մեկնեցինք գերեզմանատուն: Ժամանակին Արամի մարմինը զմռսած էր եւ տեղավորված ցինկե դագաղում: Բանվորների անզգուշության պատճառով դեմքը ծածկող ապակին կոտրվեց եւ ես առաջին անգամ կյանքում տեսա հորս: Արամի աճյունը կենտրոնական գերեզմանատնից տեղափոխեցինք ներկայիս ժամացույցի գործարանի տարածքում այն տարիներին գտնվող «Կոզեռն» կոչվող գերեզմանատունը: Մի քանի տարի անց, նորից հայտարարվեց այդ վայրում ժամացույցի գործարանի եւ դպրոցի շենք կառուցելու մասին: Ինչպես անցյալ անգամ, վարձեցինք բանվորներ, նորից վերապրեցինք հոգեկան դառն պահեր, տեղափոխեցինք այդ շրջանում արդեն գործող Թոխմախ լճի գերեզմանատուն: Ճակատագրի առումով Արամի մարմինը երեք անգամ հանձնվեց հողին: Մայրս պատվիրեց համեստ շիրմաքար, որպեսզի աչքի չզարնվի, փորագրեցինք միայն անունը, առանց ծննդյան ու մահվան թվերի: Հետագայում, մորս մահից հետո 80-ականների սկզբներին ես բանասեր, պրոֆեսոր Վարագ Առաքելյանի աջակցությամբ, խաչքար կանգնեցրեցի Արամի գերեզմանին: Հետաքրքիր է, որ այն տարիներին, երբ Արամի հիշատակը ոտնակոխ էր արվում իր հայրենիքում, Սփյուռքը, ի տարբերություն Մայր Հայաստանի, ամեն կերպ աշխատում էր պահպանել նրա հիշատակը, հրատարակում նրա գործունեությանը նվիրված աշխատություններ, հուշեր, ստեղծում նրան նվիրված կուլտուրայի կենտրոններ, նշում ծննդյան, մահվան տարելիցը:

Խրուշչովյան «ձնհալի» տարիներին հայ պատմագրության շրջանակում սկսեցին տեղաշարժեր: Հրատարակված աշխատություններում եւ հոդվածներում փորձեր էին կատարվում վերանայել դարասկզբի՝ մոռացության մատնված իրադարձությունները: Տեղ-տեղ հիշվում էր Արամի անունը, հրատարակվեց Հ. Թուրշյանի «Սարդարապատի ճակատամարտը», որտեղ հեղինակը ժամանակի գաղափարական սկզբունքներից ելած, հակիրճ փորձում էր վերանայել Արամի գործունեությունը:

Հետաքրքրությունը Արամի հանդեպ վերելք ապրեց Գ. Մահարու «Այրվող այգեստաններ» վեպի հրատարակմամբ, որտեղ հեղինակը բավականին բացասական գծերով էր կերտում Արամի՝ որպես մարդ ու հեղափոխական գործչի կերպարը եւ յուրօրինակ մեկնաբանում Վանի հերոսամարտը: Սկսվեցին վեպի քննարկումներ՝ Ակադեմիայի գրականության ինստիտուտում, Համալսարանում, գրվեցին հոդվածներ, որտեղ նոր լույսի ներքո վերանայվեց հեղափոխական դաշնակցության եւ նրա գործիչ Արամ Մանուկյանի գործունեությունը: Կյանքում առաջին անգամ, 57 տարի անց հորս մահից, Խորհրդային Հայաստանում լսեցի Արամի մասին դրվատանքի խոսքեր:

Ցավոք սրտի, այդ տրամադրությունները երկար չտեւեցին, ժամանակը դեռ չէր հասունացել: Այդ կարող էր իրականանալ ազգային զարթոնքի պայմաններում: Այդ տեղի ունեցավ Խորհրդային Միության փլուզումից հետո: Հասարակական ու քաղաքական կյանքի նոր պայմաններում Հայաստանը արթնացավ երկարամյա քնից: Մոռացության մատնված ոչ վաղ պատմական անցյալի հանդեպ սկսվեց բուռն հետաքրքրություն: Հրատարակվեցին Արամի հուշերը, հուշատախտակ ամրացվեց Արամի երբեմնի բնակված շենքին:

Հայաստանի եւ Սարդարապատի համալիրի թանգարանները Արամի կյանքին ու գործունեությանը նվիրված բաժիններ բացեցին: Դիմեցին ինձ օգնության: Մինչ այդ, Մոսկվա տեղափոխվելու նախօրյակին, ես Մատենադարանին հանձնեցի Արամի անավարտ հուշերի բնագիրը, մի շարք լուսանկարներ, որոնք մեզ հաջողվել էր պահպանել: Պատմության եւ Սարդարապատի թանգարաններին հանձնեցի Արամի կենցաղի հետ կապված կիրառական առարկաները՝ բաժակակալը, դրամապանակը, թեյի գդալը, ճարմանդները, զինվորական հագուստը (ֆրենչը), կոստյումը, Սակիից (Ղրիմ) մորս ուղարկած բացիկները, որտեղ պատմում է առողջարանում անցկացրած իր օրերի մասին: Մասունքներ, որոնք պահպանվել են ոչնչացումից իմ եւ մորս ջանքերով:

80-ականների վերջին Երեւանից ինձ ուղարկեցին Արմենպրեսի աշխատակից, իմ նախկին ուսանող Վանիկ Սանթրյանի հոդվածը: Հոդվածը վերաբերվում էր հեղինակի այցին Դամասկոս, ծանոթությունը համայնքի կյանքին, Արամի անվան կուլտուրական կենտրոնի հետ: Հոդվածը հետաքրքրեց ինձ, զանգահարեցի Սանթրյանին, նա հայտնեց, որ պատրաստվում է գալ Մոսկվա, մտադիր է այցելել ինձ: Մենք հանդիպեցինք իմ բնակարանում, երկար զրուցեցինք: Սանթրյանը ձայնագրեց զրույցի այն հատվածները, որոնք նրա ապագա հոդվածի հիմք պետք է դառնային: Հոդվածը հրատարակվեց 1990 թ. «Արամ Մանուկյանի դստեր հիշողության տեսադաշտը» (Հարցազրույց Սեդա Մանուկյանի հետ): Հոդվածը վերատպվեց արտասահմանյան մի շարք երկրներում: Առաջինը արձագանքեց Ուրուգվայը: Տեղի հայկական ռադիոժամի տնօրեն Աբո Պալյանը՝ տեղեկանալով իմ գոյության մասին, Արմենպրեսի օգնությամբ զանգահարեց ինձ Մոսկվա: Խոսակիցս դժվարությամբ էր զսպում իր հուզմունքը, ուրախությունը, չէր հավատում, որ զրուցում է Արամի աղջկա հետ: 1991թ. Ուրուգվայի հայ համայնքի հրավերով մեկնեցի Մոնթեվիդեո: Այդ իմ առաջին այցն էր արտասահման, առաջին



Արամի տունը Երևանում

հանդիպումը Հայաստանից հեռու ապրող հայրենակիցների հետ: Ընդունելությունը ջերմ էր ու հուզիչ: Բազմաթիվ հրավերներ, ընդունելություններ, տեղի հայկական եկեղեցում հոգեհանգիստ Արամի եւ Կատարինեի հիշատակին, զրույց պրեզիդենտի տիկնոջ հետ, որը հրատարակվեց «Էլ-Պահս» թերթի էջերում: Նույն թերթում տպագրվեց Արամի լուսանկարը եւ հարցազրույց նրա դստեր հետ: Ազգային Խորհրդի նիստերից մեկում նշվեց իմ ժամանումը Մոնթեվիդեո, դրվատանքի խոսքեր ասվեցին «ժողովրդի լավագույն ներկայացուցիչ» Արամի հասցեին: Այն, ինչ որ ես տեսա ու զգացի Ուրուգվայում, թվում էր ոչ իրական, անրջային: Երկարամյա հալածանքներից ու հետապնդումներից, հորս գործունեությունը նսեմացնելուց հետո, ինչ-որ հեռու, անծանոթ երկրում բարձրաստիճան անձինք հարգանքի խոսք են ասում Արամի մասին:

Կարծում եմ, որ Ուրուգվայի տնտեսական եւ կուլտուրական կյանքում տեղի հայության նշանակալից ներդրումը հարգանք էր ծնում դեպի հայությունը եւ նրա պատմությունը կերտող առաջնորդներից մեկը:

Հայաստանի առաջին հանրապետության հռչակման եւ Սարդարապատի հերոսամարտի 80-ամյակի կապակցությամբ կազմակերպված տոնակատարությանը հրավիրված հյուրերի շարքում եղա եւ ես: Այդ տոնակատարությունը համաժողովրդական ցնծության պահ էր, Արամի եւ այլ հեղափոխական գործիչների մեծարման օր էր: Էջմիածնի վանքում, Արամի շիրիմին հոգեհանգիստ կատարվեց, ներկա էին կառավարության անդամները, բազմաթիվ հոգևորականներ, արտասահմանյան հյուրեր, լրագրողներ: Արամի գերեզմանին պսակներ դրվեցին կառավարության, Դաշնակցական կուսակցության, Էջմիածնի, բրիտանական հայ համայնքի ներկայացուցիչների կողմից: Տոնակատարության օրերին ինձ հանդիպող անծանոթ մարդիկ, նրանց թվում արտասահմանյան հյուրերը, իրենց հարգանքի խոսքն էին ասում Արամի հասցեին:

Անսահման ցավում եմ, որ մայրս չտեսավ Արամի մեծարումը: Երբեք չեմ մոռանա մահից առաջ նրա ասած խոսքերը՝ «Ես չտեսա, դու կտեսնես: Չի կարող պատահել, որ հայ ժողովուրդը մոռանա Արամին, չգնահատի նրան: Վաղ թե ուշ դու կտեսնես այդ»: Մորս մարգարեական խոսքը իրականացավ, ինձ բախտ վիճակվեց լսել ու տեսնել այն, ինչ մայրս եւ ես երազում էինք երկար տասնամյակներ: Մորս թաղեցի Արամի գերեզմանին կից: Նրանք ապրեցին միասին ոչ լրիվ երկու տարի, սակայն մահից հետո արդեն 49 տարի է՝ գտնվում են կողք-կողքի:

Հարգելի Արմեն

Չգիտեմ իմ վերհիշումները կբավարարե՞ն Ձեզ, թե՞ ոչ: Այնքան սեղմ ու անհանգիստ էր ծնողներիս, հետագայում իմ եւ մորս կյանքը՝ պարփակված մեր գոյությունը պահպանելու, Արամի գերեզմանը փրկելու խնդիրներով, այն էլ մորս ձերբակալման վտանգի պայմաններում: Հաճախակի խուզարկումները, մտացածին մեղադրանքները արգելում էին գրի առնել մորս հիշողությունները, շփվել Արամի ժամանակակից շարքային մարդկանց հետ, որոնց հիշողության մեջ դեռեւս թարմ էին մնացել անցյալի պատմական իրադարձությունները:

Այժմ մի քանի խոսք իմ կենսագրությունից: Ծնվել եմ 1918 թ. հոկտեմբերին Երեւանում: Դպրոցական տարիներից մինչեւ 1976 թվականը, մինչեւ Մոսկվա տեղափոխվելը ակնհայտ թե քողարկված կրել եմ բարոյական բազմաթիվ հարվածներ լոկ այն պատճառով, որ ինձ վիճակված էր լինել Արամի դուստրը: Սովորել եմ Շահումյանի անվան դպրոցում,

Արամի և տիկնոջ՝ Կատարինե Զալյանի գերեզմանը

միաժամանակ 7-ամյա երաժշտական դպրոցի դաշնամուրի դասարանում: Երաժշտական կրթությունս շարունակել եմ Երաժշտական ուսումնարանում, հետագայում՝ Պետական կոնսերվատորիայում, դաշնամուրի ֆակուլտետում: Ավարտել եմ 1941-ին: 1938-1968 աշխատել եմ Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում որպես դասատու: 1943-ին ընդունվել եմ Պետ. Համալսարանի բանասիրական ֆակուլտետի եվրոպական գրականության ու լեզվի բաժինը: Մասնագիտացել եմ եվրոպական գրականության եւ անգլերեն լեզվի բնագավառում: Համալսարանը ավարտել եմ գերազանց դիպլոմով՝ 1948-ին: Սկզբից եւեթ ճիգեր թափվեցին զրկելու ինձ առաջին կարգի դիպլոմից, հանձնեցին շարքային: Կյանքին դիմադրելու իմ զենքերից մեկը լուրջ վերաբերմունքն էր դեպի ուսումը, ձգտումը լինել առաջավոր աշակերտ, ուսանող: Այդ օգնում էր ինձ պահպանել իմ անհատականությունը եւ հեղինակությունը համադասարանցիների եւ համակուրսեցիների շրջանում: Դիպլոմներ բաշխող հանձնախմբի վերաբերմունքը վրդովեցրեց ինձ, ես ներկայացրեցի հինգ տարիների ընթացքում վաստակած գերազանց գնահատականները, երկար քաշքշուկներից հետո փոխեցին դիպլոմը:

1949-ին ինձ համար անսպասելի առաջարկեցին աշխատել արտասահմանյան գրականության ամբիոնում որպես դասախոս: Այս «մարդասիրական» քայլը ուներ իր պատճառները: Ամբիոնը կարիք ուներ ռուսերենին տիրապետող մասնագետի, որը ի վիճակի լիներ վարել ռուսական բաժնում արտասահմանյան գրականության կուրսը: Շրջապատում բացակայում էին այդպիսիները, մի քանիսը զբաղված էին Հայկական մանկավարժական ինստիտուտում: Ես ամբիոնի համար հարմար էի այն առումով, որ կարող էի դասախոսել եւ՛ ռուսական եւ հայկական բաժիններում, հարկ եղած դեպքում վարել անգլիական գրականության հատուկ կուրս: Այսպիսով, դեպքերի բերումով, ես սկսեցի աշխատել համալսարանում: Ծանրաբեռնեցին չափից դուրս. կարդում էի անտիկ գրականություն, միջնադարից մինչեւ 20-րդ դարի եվրոպական գրականության կուրսը:

Այսպիսի պայմաններում, առանց ղեկավարի և առանց ասպիրանտուրայի, գիտական գործուղմամբ սկսեցի աշխատել դիսերտացիայիս վրա: Ընտրեցի ժամանակակից անգլիական գրականության թեմա:

Իմ առկայությունը համալսարանում այնքան էլ հաճելի չէր կուսակցական վերնախավին, որը զանազան միջոցներով ձգտում էր ցույց տալ համալսարանում իմ գոյության անհեռանկարությունը: Հիշում եմ, համալսարանի 50-ամյա հոբելյանի կապակցությամբ մեր ողջ ամբիոնը պարգեւատրվեց շնորհակալագրերով, պատվոգրերով, դրամական նպաստով, ինձ բաժին չհասավ: Նույնպիսի տենդենց դրսեւորվեց իմ դիսերտացիան 1967 թ. պաշտպանության առաջադրելու պահին: Սկսվեցին քաշքշուկներ փաստաթղթերի ձեւակերպման եւ ավտոռեֆերատը հրատարակելու հարցում: Համալսարանի տպարանը, որը մինչեւ այդ տպագրում էր համալսարանի դասախոսների, ասպիրանտների աշխատանքները, հրաժարվեց տպագրել իմ ավտոռեֆերատը, ձգձգեց մինչեւ տարեվերջը: Գիտական մասը չէր ընդունում իմ փաստաթղթերը ավտոռեֆերատի բացակայության պատճառով: Ստեղծվեց անելանելի վիճակ: Ձմռան կողմերը, վերջապես, կարգավորվեցին փաստաթղթերը, մնում էր նշանակել պաշտպանության ժամկետը: Նորից խոչընդոտներ ծագեցին: Գիտական մասը գտավ, որ դիսերտացիան անհրաժեշտ է ուղարկել Մոսկվա՝ Համաշխարհային գրականության ինստիտուտ՝ կարծիքի ու քննարկման: Բանասիրական ֆակուլտետի առջեւում այդպիսի օրինակ չէր եղել: Ինչպես ասում են «չիք չարիք առանց բարիքի»: 2-3 ամսից հետո դիսերտացիան վերադարձավ բարձր գնահատականով: Վերացան այն պատնեշները, որոնք կարող էին ձախողել պաշտպանությունը: Դոցենտի կոչում ստացա պաշտպանությունից յոթը տարի անց:

Պատճառներից մեկը, որ ինձ ստիպեց տեղափոխվել Մոսկվա, բնակարանի հարցն էր: Մենք մեր ողջ կյանքի ընթացքում ապրել էինք վարձով մի սենյակում, կոմունալ հարմարություններով, մարդաշատ բնակարանում: 10-15 տարիների ընթացքում իմ խնդրանքները՝ հատկացնել մեզ մի սենյակից բաղկացած բնակարան, մերժվում էին, չնայած այդ տարիներին համալսարանը շենքեր կառուցեց դասախոսների համար: Ապրել Երեւանում՝ կենցաղային այդպիսի պայմաններում՝ անհնար էր: Հնարավորություն ստեղծվեց մեկնել Մոսկվա, որտեղ ամուսնուս ջանքերով ստացանք բնակարան, ես շարունակեցի աշխատել Մոսկվայի մանկավարժական ինստիտուտում: Այժմ անցել եմ թոշակի, ժառանգներ չունեմ: Ամուսինս՝ Ռուբեն Վարդանի Մեհրաբյանը (1912-1980), մասնագիտությամբ ինժեներ՝ Խանասորի հերոս՝ Քաջ Վարդանի (Վարդան Մեհրաբյանի) որդին էր:

Հարգելի Արմեն, այլեւս գրելու բան չունեմ: Ցանկանում եմ Ձեր գիտական աշխատանքների բնագավառում հաջողություն, Ձեր ընտանիքին բարի օրեր ու երջանկություն:

Հարգանքներով՝
Սեդա Մանուկյան
24.01.2000 թ., Մոսկվա

Արամ Մանուկյանի ծննդավայր Դավիթբեկ (Ձեյվա) գյուղը

Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի ծննդավայրի վերաբերյալ պատմագրության մեջ երկու տարբերակ է շրջանառվում:

«Հայկական սովետական հանրագիտարանում» (Երևան, 1981 թ. հատոր 7, էջ 254) ծննդյան տարեթիվը և բնակավայրը նշված է՝ 1879, Շուշի:

Նա, ըստ մեկ այլ վարկածի՝ հոր մահվանից հետո, վաղ տարիքում տեղափոխվել է Շուշի, սովորել է Շուշիի թեմական դպրոցում: Գուցե այս հանգամանքն է թյուրըմբռնման տեղ թողել:

Այլ աղբյուրները և հետազոտողները հիշատակում են Կապանի տարածաշրջանի Դավիթբեկ (Ձեյվա) գյուղը: Այս վերջինի կողմնակիցները շատ ավելին են և արժանահավատ: Դրան հավելած՝ այսօր գյուղում և Կապանում բնակվում են մարդիկ, ովքեր նրա գերդաստանի շառավիղներն են:

Քաղաքական գործչի անվանման վերաբերյալ էլ երկվություն կա, վաղ տարիքում և պատանեկան տարիներին կրում էր Սարգիս Հովհաննիսյան անուն-ազգանունը, իսկ ավելի ուշ Արամ Մանուկյան:

Ինչևէ, Արամ Մանուկյանի անձի և գործունեության վերաբերյալ տեղեկություններ իմանալու նպատակով որոշեցինք լինել Դավիթբեկում: Գյուղի դպրոցը 1990 թվականից կրում է պատվելի հայի անունը, կրթօջախի մուտքի պատին ամրացված է նրա հարթաքանդակը (հեղինակ՝ Դերենիկ Ահարոնյան), իսկ գյուղի կենտրոնում կանգնեցված է կիսանդրին:

Դավիթբեկ այցելեցինք 2025 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման օրը և ծաղիկներ խոնարհեցինք մեծն Արամ Մանուկյանի կիսանդրու պատվանդանին:

Հանդիպեցինք նրա շառավիղներին՝ Ռազմիկ Հայրապետյան (1939 թ. ծնված), Կամո Հարությունյան (1932 թ. ծնված). գյուղում մեզ ուղեկցում էր դպրոցի պատմության ուսուցիչ Վահագն Մովսիսյանը, ով քաջատեղյակ է իր նշանավոր հայրենակցի կյանքին և գործունեությանը:

Ռազմիկ Հայրապետյանն Արամի ազգականն է մոր կողմից, մայրը՝ 1907 թ. ծնված, Արամ Մանուկյանի հորեղբոր աղջիկն է: Պատմում էր, որ Արամը մոր հետ տեղափոխվել է Ղարաբաղ, սովորում էր Շուշիի թեմական դպրոցում: Մայրն իրենց նշանավոր ազգականի մասին շատ բան չի պատմել: Ժամանակներն էին այդպիսին...

«Քանի որ Արամը դաշնակցական գործիչ էր, խորհրդային տարիներին ընդունված չէր նրա մասին խոսել: Թեթևակի գիտեինք, որ այդպիսի բարեկամ ունենք, նրա գործերի մասին մանրամասն չգիտեինք, եթե Խորհրդային Միությունն ավելի շուտ փլուզվեր, ավելի շատ բան կիմանայինք նրա մասին», - եզրակացնում է Ռազմիկ Հայրապետյանը: Հայտնում է նաև, որ Արամի հայրը ղոնդաղսազ է եղել՝ հրացանի կոթ պատրաստող: Արամը երկու տարեկան էր, երբ հայրը մահացել է, Արամենց գերդաստանի անունը Վնեսաց էր:

Ընկուզենի էր բերել Արամի Հովհաննես պապը, տնկել Դավիթբեկում, որ մինչև վերջերս կար...

Ղարա Վանեսի հետնորդներից է Կամո Հարությունյանը, ով բնակվում է Դավիթբեկ գյուղի ներքին թաղում: Մինչ նրան հանդիպելն անցնում ենք Արամ Մանուկյանի ապագա տուն-

Կամո Հարությունյան

թանգարանի մոտով: Նախաձեռնությունը Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանինն է. տուն-թանգարանն առայժմ կիսակառույց է, լրիվ ամբողջանալուց հետո կլինի ուխտատեղի դավիթբեկցիների և գյուղ այցելողների համար: Նաև թանգարան այցելողները հավելյալ տեղեկություններ կստանան մեծանուն հայի մասին:

Կամո Հարությունյանն Արամ Մանուկյանի ազգականն է մորական կողմից: Նա էլ շեշտեց այն հանգամանքը, որ խորհրդային տարիներին արգելված էր խոսել Արամ Մանուկյանի մասին՝ նրա դաշնակցական լինելու պատճառով: **«Սուս մնա, կգան, կբռնեն՝ կտանեն»,** - սաստում էին Արամ Մանուկյանի մասին խոսակցություն բացողին: **«Հպարտանո՞ւմ եք, որ Արամի ազգականն եք»,** - հարցնում ենք: **«Հիմա՝ այո, այն ժամանակ վտանգավոր էր, Արամի անունը տվողն աքսորի ճամփան էր բռնում»,** - պատասխանում է Կամո Հարությունյանը: Նրա փոխանցմամբ՝ Արամի շառավիղների մի մասը բնակվել է Կավարտում՝ տեղափոխվելով Դավիթբեկից:

Պարզվեց նաև, որ մեր գործընկերուհի Գայանե Բաղդասարյանն Արամի հորեղբոր որդու՝ Բագրատի, թոռնուհին է:

Ռազմիկ Հայրապետյան

Վահագն Մովսիսյան

Ըստ Գայանե Բաղդասարյանի՝ Արամի հորեղբոր տղաներն են Բագրատը և Սուրենը: Սուրենը Կապանի Լենինանքերի վարիչն էր: Տեղափոխվել էր Դավիթբեկ գյուղից և բնակություն հաստատել Կավարտում:

Կավարտ էին տեղափոխվել նաև Բագրատի քույրերը՝ Փառանձեմը, Անուշը, իսկ մյուս քույրը՝ Սոնան, բնակվում էր Դավիթբեկում, ում որդու հետ բարեբախտություն ունեցանք զրուցելու և որոշ մանրամասներ քաղելու Արամ Մանուկյանի մասին:

Պատմության ուսուցիչ Վահագն Մովսիսյանը մեզ փոխանցեց՝ մեծերից լսել է, որ Արամ Մանուկյանը ծնվել է Դավիթբեկում: Գյուղում մի ղաչաղ մարդ կար՝ Վանունց Վարդանը, միշտ կրկնում էր՝ մենք Արամ փաշա ենք ունեցել, հզոր մարդ էր: Արամը կրթություն է ստացել Շուշիում, որտեղ տեղափոխվել է վաղ տարիքում՝ հոր մահվանից հետո: Վ. Մովսիսյանի փոխանցմամբ՝ Արամի եղբայրը Շուշիում դերձակությամբ է զբաղվել, նաև հավելեց, որ Արամի ամենահավաստի կենսագրությունը դաշնակցության վերաբերյալ գրքերում են շարադրված, քանզի այդ կուսակցությանն էր անդամագրվել, իսկ այդ գրքերում նրա ծննդավայրը նշվում է Զեյվա (Դավիթբեկ): Գյուղում պահպանվել է Արամ Մանուկյանի հիշատակը, իսկ 2018 թվականին՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակի առթիվ, իր նախաձեռնությամբ գյուղում շուքով նշվել է հոբելյանը:

Դավիթբեկ գյուղի պատմական անցյալի, բնակավայրի տոհմերի և գերդաստանների մասին գրքույկ է հրատարակել դավիթբեկցի Գավրուշա Հարությունյանը, որում հակիրճ անդրադարձ կա Արամ Մանուկյանին՝ **«Զեյվա գյուղի նշանավոր մարդիկ»** խորագրի ներքո: Հեղինակը գրում է, որ Ա. Մանուկյանը Ղարաբաղից եկած տոհմից է՝ Վնեսաց ցեղից, որ նա գյուղում ծնվելուց հետո վաղ տարիքից տեղափոխվել է Ղարաբաղ ու այլևս չի վերադարձել: Արամ Մանուկյանի ծնվելուց մի քանի տարի անց մահանում է հայրը, ում ազգանունը Հովհաննիսյան էր: Հոր մահից հետո մայրն ամուսնանում է ղարաբաղցու հետ, ում ազգանունը Մանուկյան էր: Այդ իսկ պատճառով Արամի ազգանունն էլ դառնում է Մանուկյան...

Ավելի շատ բան կիմանայինք Արամ Մանուկյանի մասին, եթե մեր զրուցակիցները նրա ժամանակակիցները լինեին: Բայց Արամը վախճանվել է 1919 թ.՝ 40 տարեկանում, և նրա փոթորկուն կյանքի վերաբերյալ բազմաթիվ դրվագներ այդպես էլ անհայտ են մնացել...

Վահրամ Օրբելյան

Արամը

Իսկական անունը Սարգիս էր կամ Սերգէյ Յովհաննիսեան : Ղափանի Զեյվա գիւղից էր, ծնւած 1879 թւին, զինագործի մի համեստ ընտանիքում:

Ծնողների չքաւորութեան պատճառով, Արամը վաղ մանկութիւնից ճաշակեց կարիքի բոլոր դառնութիւնները: Ուսում էլ կարողացաւ առնել միայն շնորհիւ Շուշում դերձակութիւն անող մեծ եղբօր օգնութեան: Նախնական կրթութիւնը ստացաւ Շուշու Ագուլեաց ծխական դպրոցում եւ 11 տարեկան հասակից կարողացաւ մտնել Շուշու թեմական դպրոցը:

Աշխատասէր, խելացի և ընդունակ տղայ էր և դպրոցում ցոյց էր տալիս աչքի ընկնող յաջողութիւն:

Սիրւած էր և՛ ուսուցիչներից, և՛ ընկերներից, որոնց մէջ հետզհետէ ձեռք բերեց լայն հեղինակութիւն:

Ինսական թւականներին Շուշին էլ յեղափոխական խմորումների վայր էր: Հ.Յ. Դաշնակցութիւնը արագ նւաճումներ էր գործում հասարակական զանազան խաւերի, բայց, մանաւանդ, երիտասարդութեան մէջ: Աշակերտութիւնը կազմակերպւում էր ինքնազարգացողական և յեղափոխական խմբակների մէջ, պատրաստւում էր ապագայ գործունէութեան: Միւս կողմից, քնած չէին և պահպանողական ու կղերական տարրերը և ամէն կերպ աշխատում էին հակազդել յեղափոխական տրամադրութիւններին: Շուշում վերջիններիս պարագլուխն էր թեմական դպրոցի տեսուչ տխրահռչակ Բենիկ վարդապետը՝ Հայաստանի այսօրւայ «ազատ եկեղեցու» սիւներից մէկը:

Արամը հէնց սկզբից ընկաւ դաշնակցական խմբերի մէջ և շուտով դարձաւ նրանց վարիչ դէմքերից մէկը: Մասնակցում էր ոչ միայն աշակերտական, այլ և դրսի կեանքին: Գնում էր գիւղերը կազմակերպական աշխատանքով: Շուշու թեմական դպրոցն այդ ժամանակ յեղափոխական աշակերտութեան կենտրոն էր, այնտեղից դուրս եկան յետագային նշանաւոր դարձած բազմաթիւ դաշնակցական գործիչներ:

Աշակերտութեան այս «ըմբոստ» և «անկարգ» տրամադրութիւնը չէր կարող տեսչի ուշադրութիւնը չգրաւել: Շուտով ծնունդ առաւ սուր բախում մանկավարժական կազմի ու հոգաբարձութեան և աշակերտութեան միջև: Բենիկ վարդապետ դիմեց ոստիկանութեան. առաջ եկաւ ընդհարում: Եւ հետևանքը եղաւ այն, որ բարձր դասարանների մի խումբ աշակերտներ, որոնց մէջ և Արամն ու Իշխանը, արձակւեցին դպրոցից և ոստիկանական ուժով արտաքսւեցին քաղաքից:

Հեռացւած աշակերտներին յաջողւեց մտնել

Սիմոն Վրացյան

Երևանի թեմական դպրոցը, ուր և նրանք աւարտեցին 1901 թւին: Արամը այստեղ էլ գործօն մասնակցութիւն ունեցաւ աշակերտական ու կուսակցական կեանքում և աչքի ընկաւ իր կազմակերպական կարողութիւններով և ձեռներէց ու յանդուգն բնաւորութեամբ:

Թեմական դպրոցն աւարտելուց յետոյ, Արամը 1902–ին գնաց Բագու՝ աշխատանքի: Գալիցինեան ռէակցիայի օրերն էին. դաշնակցութիւնը պատրաստւում էր պայքարել ցարական բռնապետութեան դէմ: Արամը պայքարի ջատագովներից էր և այդ ոգով էլ աշխատում էր աշակերտութեան և բանւորութեան մէջ:

Մինչև 1903 թ. Բագւում: Երբ սկսւեցին ցոյցերը եկեղեցական կալւածքների գրաւման առթիւ, Արամը, Բագւի կենտրոնական կոմիտէի կողմից ուղարկւեց Գանձակ՝ դիմադրութիւնը կազմակերպելու համար: Այստեղից անցաւ Կարս, որ այն օրերին դաշնակցական եռուն գործունէութեան վայր էր. այնտեղ էր պատրաստւում Երկիր մտնող մարտական խմբերի մի մասը: Այնտեղ հաւաքւած էին դաշնակցական աչքի ընկնող գործիչներ - մարտիկներ ու քարոզիչներ: Գումանի ձիաւոր խումբը նոր էր մեկնել դէպի Սասուն՝ հետը տանելով Մուրատին, Կայծակ Առաքելին, Աւետիսին, Սեպուհին, Դուրբախին և ուրիշներին: Պատրաստւում էր Խանի խումբը: Տաճկական Բասէնում աշխատում էր Մենակը, Ռուսականում՝ Իշխանը: Աննկարագրելի եռուզեռ ու ոգևորութիւն էր տիրում ամէն կողմ:

Արամն էլ պատրաստւում էր անցնել Երկիր, թէև տեղական ընկերները պահանջում էին, որ

նա մնայ, իբրև անփոխարինելի կազմակերպող ոյժ: Սակայն, նա չհամակերպւեց ու միացաւ Խանի խմբին, բայց ստիպւած եղաւ կէս ճանապարհից վերադառնալ. նրա թոյլ կազմւածքը և աչքի հիւանդութիւնը արգելք եղան ճանապարհը շարունակելու:

Քիչ յետոյ, ռուսների և թիւրքերի ձեռքով բնաջնջւեցին Երկիր մտնող խմբերը: Ռուս դաժան բռնապետութիւնը գործում էր ձեռք ձեռքի Աբդուլ Համիտի հետ: Արամի ընկերներից շատերը նահատակւեցին. ազատ մնացողները մտան Երկիր կամ պատրաստւում էին մտնելու: Կարսի շրջանը այլևս դարձաւ անտանելի Արամի համար. «Խիղճս ինձ տանջում էր, որ ամենքը գնացին և նահատակւեցին, իսկ ես, կարծես մի խորամանկութեամբ, յետ մնացի»,- գրում է նա իր «Յուշեր»-ում:

Եւ Արամը որոշեց թողնել Կարսը և անցնել Սասուն: Բայց Թիֆլիս հասնելով՝ համոզւեց, որ Սասունի գործը վիժած է, և Հ.Յ.Դ. Բիւրօի առաջարկութեամբ, 1904 թ. աշնանը, մեկնեց Վան: Այսպիսով սկիզբը դրւեց նրա գործունէութեան Վասպուրականում, որից դուրս եկաւ ապագայ Վանի Արամը:

Արամի այս ժամանակաշրջանի կեանքը, մինչև 1906 թ., երբ նա մեկնեց Կովկաս 4-րդ ընդհ. ժողովին մասնակցելու համար, նկարագրված է իր «Յուշեր»-ում, և մենք կանգ չենք առնի նրա վրա: Այդ «Յուշեր»–ը գրւած են 1917 թ. ամառը և կրում են գեղարւեստական դրւածքի բոլոր արժանիքները: Նրանք ունեն ահագին դաստիարակչական նշանակութիւն նոր սերնդի համար: Ափսոս միայն, որ առանձին գրքով լոյս չտեսան և մնում են, շատերի համար անմատչելի, «Հայրենիք» ամսագրի էջերում:

Արտասահմանում Արամը մնաց մօտ կէս տարի: Վիէնայի ընդհ. ժողովին նա և Իշխանը հարուստ նիւթ մատակարարեցին Երկրի գործունէութեան մասին: Խիստ բարերար եղաւ Արամի ներկայութիւնը և ընկերվարականների և հակաընկերվարականների պայքարում. Արամը կենտրոնում էր, Ռոստոմի կողքին և, հակառակ երիտասարդ տարիքին, խոշոր ազդեցութիւն ունէր թէ մարտիկ և թէ երիտասարդ ընկերվարական ընկերների վրա:

Ընդհ. ժողովից յետոյ նորից վերադարձաւ Վան, ուր մնաց մինչև Օսման. Սահմանադրութեան օրերը: Վանում նա կենտրոնական դէմք էր: Նրա շուրջ էին համախմբւած միւս ընկերները, որոնց ջանքերով հաւաքւեց ահագին զէնք ու ռազմանիւթ: Դաւոի դաւաճանութեան հետևանքով բացւած պահեստները ցոյց տւին, թէ ինչ հսկայական աշխատանք էր կատարւած: Իսկ աւելի ուշ պարզւեց նաև, թե մշակութային- կազմակերպչական տեսակէտից էլ Արամի և ընկերների ներկայութիւնը Վանում եղել էր վերին աստիճանի բարերար, մի ամբողջ սերունդ էր ստեղծւել Արամի և Իշխանի շնչի տակ:

Սահմանադրութիւնից յետոյ Արամը ուսուցչութեամբ զբաղւեց Օրդուում և 1911–ին անցաւ Ժընև, ուր անցկացրեց մօտ մի տարի: Բայց Եւրոպան նրան չէր կարող երկար գրաւել: Շուտով նորից վերադարձաւ Երկիր և մի տարի Օրդուում ուսուցչութիւն անելուց յետոյ, կրկին անցաւ Վասպուրական, որը դարձել էր նրա իսկական հայրենիքը:

Ու այնուհետև մի քանի տարի շարունակ, մինչև 1915 թ. յուլիսեան նահանջը, Արամը մարմնաւորեց Վասպուրականի ազգային, մշակութային ու դաշնակցական կեանքը: Ինչպէս Ռոստոմը բովանդակ կուսակցութեան մէջ, Արամը Վասպուրականում ամէն ինչ էր. դպրոց, ազգային մարմիններ, տեղական մամուլ, երեկոյթ ու ժողովներ, երիտասարդական շրջաններ, գաւառ, Աղթամար — ամէն տեղ էր և ամէն ինչ: Կուսակալը նրան էր դիմում խորհուրդների համար: «Արամ փաշան» լայն հեղինակութիւն ունէր և քիւրդերի մէջ: Եւ հասկանալի է այն կատաղութիւնը, որով Վանի աղաների ու չարչիների խմբակը յարձակւում էր նրա վրա. Արամը և նրա ներկայացրած կուսակցութիւնը աշխատաւորութեան իրաւունքներն ու շահերն էր պաշտպանում և պայքարում էր վաշխառութեան և ամէն կարգի շահագործումների դէմ...

Վրա հասաւ 1914 թւականը: Պատերազմ: Զարհուրելի կացութիւն ստեղծւեց Երկրի և հայ ժողովրդի համար: Մահւան ուրւականը սաւառնում էր նրա գլխին: Արամը մնաց Վանում և Վռամեանի, Իշխանի և միւս ընկերների հետ հերոսական ճիգ էր թափում վերահաս աղէտի առաջն առնելու համար:

Յիշում եմ նրա մի նամակը Հ.Յ.Դ. Բիւրօին, 1914-ի աշնանը, գրւած կտաւի կտորի վրա, քիմիական մատիտով: Մի քանի հատու խօսքերով ներկայացնում էր կացութիւնն ու կոտորածի անխուսափելիութիւնը եւ խնդրում շուտով օգնութեան հասնել: Այդ նամակի վրա էր, որ Անդրանիկի կամաւորական խումբը Պարսկաստանից աշխատեց օր առաջ հասնել Վան, բայց չկարողացաւ...

Վանում, բարեբախտաբար, կոտորած չեղաւ: Ջևատէթի ուժերը պարտւեցին, և 1915 թ. ապրիլին Վասպուրականը ազատւեց: Եւ ոչ ոք չզարմացաւ, երբ ռուս հրամանատարութեան կողմից Արամը նշանակւեց Վանի նահանգապետ: Այդպէս էլ պէտք է լինէր. չէ՞ որ նա էր գլխաւորել Վանի ազատամարտը: Չէ՞ որ նա միակ մարդն էր, որի հեղինակութիւնն այն օրերին ճանաչում էին ամենքը - և՛ նրանք, որոնք այսօր երկիւղածութեամբ են արտասանում նրա անունը, և՛ նրանք, որոնք, կրքից կուրացած, ցեխ են քսում նրա յիշատակին:

Արամի նահանգապետութիւնը կարճ տևեց - ընդամենը չորս ամիս: Բայց այդ չորս ամսում էլ, անհնարին ծանր պայմաններում, նրան յաջողւեց կարգ ու օրէնք հաստատել շրջանում և կազմակերպել կառավարական մեքենան: Այդ օրերին Վասպուրականը իրական Հայաստան էր, ուր վերաշինական աշխատանք էր կատարւում տենդագին: Լճի հարաւային եզերքներից դեռ թնդանօթի որոտ էր հասնում և այդ երաժշտութեան տակ վանեցին, մրջիւնի ժրաջանութեամբ, հարստութիւն էր ամբարում, իսկ երիտասարդութիւնը փարած էր մշակութային աշխատանքի: «Աշխատանք» թերթը երազում էր գւիցերական կարգեր...

Յուլիսեան նահանջը ահաւոր հարւած էր Երկրի վերապրող ժողովրդի համար: Շէն Վասպուրականը քար ու քանդ եղաւ: Խորտակւեց և Արամի հոգին: Մի պահ նա սոսկալի տագնապ էր ապրում, բայց հէնց որ հնարաւոր դարձաւ, երիտասարդութեան գլուխն անցած, նորից ուղևորւեց Վան, ուր այս անգամ երկար չմնաց ու կրկին վերադարձաւ Կովկաս: Եւ Թիֆլիսում ընկաւ անկողին՝ հիւանդ. յօդացաւը, աչքի հիւանդութիւնը սուր տանջանք էին պատճառում նրան: Ընկերների պնդումի վրա նա մեկնեց Ղրիմ, Սակիի ցեխաբուժարանը, և մի քանի ամսից յետոյ վերադարձաւ բոլորովին առողջացած: Այս շրջանում էր, որ գրի առաւ իր յուշերը:

1916 և 17 թւականները Արամը անցկացրեց Թիֆլիսում: Մասնակցում էր Ազգ. Բիւրօի, Արևմտահայ մարմինների և Հ.Յ. Դաշնակցութեան աշխատանքներին:

Ռուսական յեղափոխութիւնից յետոյ Արամն էլ սթափւեց ու նոր շունչ առաւ: Թիւրքահայ նահանգների առանձին նահանգապետութեան յայտարարութիւնը և ներգաղթի ու վարչութեան կազմակերպութիւնը նոր բովանդակութիւն ու թափ տւին Արամի գործունէութեան. նա բժ. Յ . Չաւրեանի աջ բազուկն էր, արեւմտահայ կազմակերպութիւնների ու մարմինների գլխաւոր ոյժը: Արևմտահայերի Երևանի համագումարում նա արտասանեց բացման ճառը և գործօն մասնակցութիւն ունեցաւ բոլոր աշխատանքներին: Կենտրոնական դէմք էր նաև Ռուսահայոց Խորհրդաժողովում 1917 թ. սեպտեմբերին, ուր ընտրւեց Ազգային Խորհուրդը: Շատ կենդանի մասնակցութիւն ունեցաւ Ազգային Խորհրդի աշխատանքներին: Եւ Ազգային Խորհրդի կողմից էլ մեկնեց Երևան, իբրև լիազօր ներկայացուցիչ՝ տեղական գործերը վարելու համար:

Արամի գործունէութիւնը Երևանում, նրա դիկտատորութիւնը, Սարդարապատի ու Բաշ- Աբարանի հերոսամարտերում և Հայաստանի պետականութեան հաստատման գործում կատարած դերը այնքա՜ն թարմ են ու հանրածանօթ, որ հազիւ թէ պէտք լինի խօսել նրանց մասին: Այս շրջանում էր, որ առանձնապէս երևան եկան նրա արտակարգ կարողութիւնները, յեղափոխական, կազմակերպչական ու պետական տաղանդը: Իզուր չէ, որ հանրային կարծիքը նրան է համարում Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր. պատմութեան արդար գնահատութիւնն է այդ:

1918 թ. դեկտեմբերին, երբ բծաւոր տիֆը կոտորած էր անում Երևանում, վարակւեց և Արամը: Հիւանդութիւնը եղաւ երկար ու տաժանելի, և 1919 թ. յունւ. 29–ին նա փչեց վերջին շունչը: Հայ ժողովուրդը նրան արաւ յուղարկաւորութիւն, որպիսին չէր տեսել Երեւանը. ամբողջ քաղաքը լալիս էր և երկիւղածութեամբ հետևում նրա դագաղին: Արամի մարմինը տեղաւորւեց Երևանի հասարակաց գերեզմանատանը, Հ. Յ. Դաշնակցութեան Պանթէոնի բաժնում, Մասիսի աչքերի առջև...

Սիմոն Վրացեան
«Դրօշակ»
Յունուար-Փետրուար 1929
Թիւ 1-2 (284-285)

ԱՐԱՄԻ ՄԱՍԻՆ

(հատված Թադէի հուշերից)

Ո՞վ էր Արամը — Դաշնակցութեան, ուրեմն, և հայութեան այդ պարծանքը:

Հայ ազատագրական շարժման մէջ Դաշնակցութիւնը եղաւ մեր ժողովրդի անօրինակ ազատասիրութեան և հերոսական գաղափարականութեան, վսեմ տենչերու ամենափայլուն արտայայտութիւնը, իսկ անոր գաղափարին փարած յեղափոխականը՝ մտաւորականի և մարտիկի հիասքանչ համադրութիւնը: Եւ Արամը մէկն էր այդ ամբողջական յեղափոխական դէմքերէն:

Հայ ժողովուրդը կը ճանչնայ զայն որպէս Վասպուրականի ազատամարտի հերոս՝ Արամ փաշա, մեր պետական կեանքի մէջ ան պատմութեան էջն է անցած Արամ Մանուկեան անունով, բայց անոր իսկական անունը Սարգիս Յովհաննիսեան էր՝ զաւակը ազատասէր եւ հպարտ Սիւնիքի, ծնւած 1879-ին Չէյվա գիւղը, համեստ աշխատաւոր ծնողներէ:

Արամի հայրը յայտնի զինագործ էր, եղբայրները արհեստաւոր, եւ Արամը՝ բոլորի գուրգուրանքին ենթակայ: Հարազատներու միակ իղձն էր «ուսումնական» դարձնել իրենց սիրասուն Սաքօն, սակայն, տնտեսական միջոցները թոյլ չէին տար: Օր մը հայրը կը տանէ ծխական երկսեռ դպրոցի տեսչին եւ կը խնդրէ. «Վարժապետ, տըղաս պէրալըմ վէր լո՛ւս հըվաքի, չորս ղօլը մըթէն ա, թող մը՛զ նըման քէօռ չմընայ»: Եւ Արամը կը սկսի յաճախել դպրոցը: Ապա «ուսումնական» դարձնելու նպատակով աւագ եղբայրը կը տանէ Արցախի գիտութեան տաճարը՝ Թեմական դպրոցը եւ 1890 թւականին Սարգիսը թեմականի աշակերտ էր:

Արամին բաժին ընկաւ Վասպուրականը, ուր իր հզօր կամքով, անօրինակ նւիրումով արհամարհեց բռնապետական եաթաղանը եւ հայ կեանքին յեղափոխական կորով ու շունչ ներշնչեց: Անոր եւ իր ընկերներուն պարտական ենք Վասպուրականի հերոսամարտը...

Դաժան խորշակը զարկաւ, եւ Արամը Վասպուրականի հայութեան հետ անցաւ Կովկաս. եւ հոս ալ դարձաւ կեդրոնական դէմքը Հայաստանի գործիչներու մէջ:

1918-ի գարնան մահու եւ կենաց օրերն էին: Հայկական միջնաշխարհի յուսացող աչքերը Արամին էին ուղղւած: Ժողովուրդն, առանց բացառութեան, Արամէն կը սպասէր փրկութեան ուղին: Եւ Արամ կրցաւ հերոսական վճռականութեամբ, անսասան կամքով, դաշնակցականի բովանդակ նւիրումով մարմնաւորել իր պաշտած ժողովուրդին յոյսը:

Եւ Արամը, գործօն յեղափոխականի այդ անզուգական տիպարը, Քրիստափոր-Չաւարեան-Ռոստոմի կենսատու պատգամներու մշտավառ հնոցը, այդ ճակատագրական օրերին հնչեցուց իր ձայնը՝ «Բոլոր բազուկները՝ դէպի աշխատանք... բոլոր կամքերը՝ հայրենիքի համար... Բոլոր անձնւէրները՝ պայքարի դաշտ...»:

Արամի բերնով մեծ յոյսի ոգին էր, որ փրկարար ուղին կը ցուցնէր: Ժողովուրդը ոտքի ելաւ առիւծի ամեհի մռնչիւնով մը, եւ յաղթական եւ փառապանծ Սարդարապատներն ու Բաշ Աբարանները կերտեց...

Եւ թափւած արիւնի մէջէն ծնունդ առաւ Հայաստանի Հանրապետութիւնը, որու առաջին ճիչը ողջունողը եղաւ Արամը:

Թադէ
«Դրօշակ» Յունուար-Փետրուար 1929
Թիւ 1-2 (284-285)

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Էջեր «Արամ Մանուկյան. փաստաթղթերի ժողովածու»-ից





Ամատունի Վիրաբյան
Պատմական գիտությունների դոկտոր

N21
Վանի շրջանային կառավարիչ Ա. Մանուկյանի կոչը հայ բնակչությանը՝ նոր կառավարության շուրջը համախմբվելու անհրաժեշտության մասին

8 մայիսի 1915 թ.
Վան

Քաղաքացիներ!

Ռուսական յաղթական բանակի առաջխաղացումը նոր դարագլուխ և իրաւակարգ կբանայ մեր քաղաքի ու գաւառներու իրաւազուրկ ժողովրդի համար: Դարերու ստրկութեան և քաղաքական ճնշումներու վախճանն է, որ մենք կապրինք այս օրերուն, հայ ժողովրդի շինարար և ստեղծագործող ոգիի ծնունդն է, որ մենք կտօնենք այժմ:

Ռուս զօրքերու հրամանատարը՝ գեներալ Նիկոլաև, գնահատելով Վասպուրականի հայ ժողովրդի հերոսական ջանքերը թուրք կառավարութիւնը անզոր դարձնելու իր ազգասպան քաղաքականութեան մէջ և հաւանելով հայ ժողովրդի ազգային-կուլտուրական ձգտումները բարեհաճեցաւ 7 մայիսի 1915 թ. N 16 մասնաւոր հրամանագրով ինձ նշանակել քաղաքի և շրջանի կառավարիչ և կազմակերպել նոր գործը իւր բոլոր ճիւղերով:

Այսօր արդէն կազմակերպուեցան ոստիկանական, դատական, գիւղատնտեսական, գաղթականական, քաղաքապետական և այլ վարչութիւններ: Ասով կայտարարեմ ամբողջ ժողովրդին, որ նոր կառավարութիւն կազմակերպուած ըլլալով, անհրաժեշտ է բոլոր նոր գործերու համար դիմել նոր կառավարութեան յանձնախմբին, քաղաքի և շրջակայքի մէջ բնական վիճակ ստեղծելու համար: Ներկայ պատմական պատասխանատու օրերուն մէջ հայ ժողովուրդը միայն մէկ նշանաբան պիտի ունենայ՝ համախմբուել ամբողջ եռանդով կառավարութեան շուրջը, վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի և շրջանի մէջ, արժանի լինելու քառորդ դարէ աւելի մղած պայքարի մէջ ընկած հերոսներու յոյսերուն և յիշատակին ու միշտ բարձր պահելու համար հայ ազգի կուլտուրական պաշտօնի գիտակցութիւնը Փոքր-Ասիոյ այս ծայրագաւառի մէջ:

Ռուս գեներալը մեր այս յոյսերու լիակատար գիտակցութեամբ է, որ հայ ժողովրդի և իմ հանդէպ ցոյց տուաւ այդ մեծ վստահութիւնը:

Քաղաքացիներ, ձեզ կմնայ մեր այդ հաւակնութեանց և յոյսերուն ընդառաջ գնացող յաղթական բանակի և գեներալի վստահութիւնը բացարձականապէս արդարացնել և աւելի լաւագոյնին արժանի ու պատրաստ գտնուել:

Վանի շրջանային կառավարիչ՝ Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 4 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N22

Վանի ժամանակաւոր կառավարիչ Արամ Մանուկյանի հրամանը՝ քաղաքում կարգ ու կանոն պահպանելու մասին

8 մայիսի 1915 թ.
Վան

Նկատելով, որ նոր իրաւակարգի մէջ կարգ մը անպատեհութիւններ տեղի կ՛ունենան, որոնք կարող են վատ հետևանքներ առաջ բերել, ներկայիս կը յայտարարեմ որ՝

1. Հրազէն պարպելը ամենախիստ կերպով կ՛արգելուի:
2. Կ՛արգելուի ոգելից խմիչքներ ծախել զօրքերուն, խանութներու և մասնաւոր տուներու մէջ:
3. Իսպառ կ՛արգիլուի թալան, կողոպուտ, ծառեր կտրելը, փայտեր տանելը և այլն:
4. Լքուած տուները ինքնագլուխ տիրանալը արգելուած է, ոչ մի գրաւում ոյժ չունի, ունեցողները պէտք է դիմեն ինձ:
5. Հեռագրական և հեռախօսական թելերը՝ թէ հին և թէ նոր հաստատուածները - պէտք է խնամքով պահպանել, ոչնչացումէ ազատել և հսկել որ թշնամին չկտրէ: Գեներալ Նիկոլաևի հրամանով, հեռագրական և թելեֆօնի թելերը կտրելու մէջ մեղադրուողը 24 ժամուայ ընթացքին դաշտային դատարանի պիտի ենթարկուի և գնդակահարուի:
6. Ով որ թելեֆօնի և հեռագիրի գործիքներ ունի, անմիջապէս պէտք է բերէ կառավարչատունը:

Այս հրահանգներուն անսաստողները ամենաուժեղ պատժի պիտի ենթարկուին:

Կառավարչատունը կը գտնուի Դօմինիկեան քոյրերու դպրոցի մէջ (Փոքր Քէնտրչի), պաշտօնատունները բաց են առաւօտ ժամը 9-12 և կէսօրէ ետք ժամը 2-5:

Վանի շրջանի կառավարիչ՝ Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 43, թ. 1, տպագիր օրինակ:

N 277

Երևանի Հայոց ազգային խորհրդի կոչը հայ սպաներին՝ թշնամուն դիմակայելու համար կազմավորված կամավորական խմբերին հրամանատարությունը ստանձնելու մասին

21 մայիսի 1918 թ.
Երևան

ԿՈՉ

Երևանի ամբողջ հայ ժողովուրդը վճռել է դիմադրել:

Դիմում ենք բոլոր հայ սպաներին, որպէսզի նրանք գան և կամաւորական խմբերի գլուխ անցած ընդառաջեն թշնամուն:

Ովքեր ցանկանում են ղեկավարի, առաջնորդի դեր ստանձնել, թող դիմեն Երևանի Հայոց Ազգային Խորհուրդ հէնց այսօրուանից:

Երևանի Հայոց ազգային խորհուրդ

ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 8, թ. 4, տպագիր օրինակ:

N 278
Երևանի Հայոց ազգային խորհրդի կոչը՝ Ղարաքիլիսայի բնակչության գաղթը դադարեցնելու անհրաժեշտության մասին

23 մայիսի 1918 թ.
Երևան

Տաճիկները գրավել են Ղարաքիլիսեն: Կորպուսի շտաբը փոխադրվել է Դիլիջան: Նույն իսկ Դիլիջանից ահագին գաղթականություն է սկսվել դեպի Նոր-Բայազեդի գավառը:

Ախտայից հայտնում են, որ այդ շրջանում կուտակվել է հարյուր հազարանոց գաղթականություն, որը խելակորույս, սոված, ծարավ թափառում է սարերում: Նրանց դրությունը սոսկալի է: Նույնիսկ շատ տեղեր գաղթականների մեջ արյունահեղ դեպքեր են տեղի ունենում: Հենց այս րոպեյիս մեծ հացի պակաս է զգացվում:

Պարզ է,որ գաղթելու տեղ չկա և գաղթը միանգամայն կորստաբեր է:

Իմացեք և հետևյալը: Երբ որ տաճիկները մի որևէ տեղ տիրապետում են, այն տեղից փախած ժողովրդին նրանք այլևս թույլ չեն տալիս վերադառնալ իրանց նախկին բնակավայրերը:

Ուրեմն երկու չարիքից ամենափոքրագույնը այն է, որ ժողովուրդը չգաղթի և մնա իր տեղում:

Երևանի Հայոց ազգային խորհուրդ
ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 10, թ. 1,
տպագիր օրինակ:

N 279
Երևանի Հայոց ազգային խորհրդի՝ դեպի ռազմադաշտ կոչը

25 մայիսի 1918 թ.
Երևան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Թուրքիայի կորստաբեր պահանջները և վիրաւորական տմարդութիւնը վերջապէս ազդեց հայ ժողովրդի հոգու վրայ: Այժմ, գոնէ, պարզւում է, որ մենք մեր յոյսը պիտի կապենք մեր խիզախութեան հետ: Ամեն տեղ ոգևորութիւն է տիրում: Սարդարաբատի շրջանում հայ զինուորներն ու նրանց եզիդի դաշնակիցները գովելի արիութեամբ յետ են վանում թշնամուն՝ թուրք ասկեարներին և թուրք ու քիւրդ խուժանին: Էջմիածնի գաւառի բոլոր գիւղերից օգնութեան են գնում քաջերին: Աւելի սրտապնդիչ թռիչքներ են կատարւում Դիլիջանի շրջանում:

Ժողովուրդը ոտքի է կանգնել և իր հազարաւոր զաւակներին մղում է դէպի ռազմի դաշտ: Հայ գիւղացիները տալիս են իրենց ամբողջ ունեցածը՝ հրացան, փամփուշտ ու հաց: Հայ ժողովուրդը հարիւրաւոր դարեր քաջութեամբ է պաշտպանել իր հայրենի օջախը, իր տունն ու ընտանիքը. նրան յաղթել են, բայց նրա հոգին ընկճել չեն կարողացել: Վերջին պատերազմական ու քաղաքական անցքերը որոշ լքում, ոգու անկում էին առաջացրել: Այսօր այդ հիւանդութիւնը բուժւում է, հին խիզախութիւնը վերածնւում է, և այդ փրկութեան միակ իրական ելքն է մեր դժւարին պայմաններում ու ժամանակում: Ի զէն, մեր քաջեր, դէպի ռազմադաշտ:

Երևանի Հայոց ազգային խորհուրդ
ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 8, թ. 6,
տպագիր օրինակ:

N 287
Ա. Մանուկյանի գրությունը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին՝ Հայաստանի ծանր կացության և նրա շտապ կարգով Երևան գալու անհրաժեշտության մասին

26 հունիսի 1918 թ.
Երևան

Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդին

Հակառակ մեր թափած բոլոր ջանքերին, մենք չկարողացանք կապ հաստատել ձեզ հետ և ձեզնից հրահանգ ստանալ այս կամ այն հարցի առթիւ:

Կեանքը հոսում է և օրը օրին բարդ խնդիրներ է առաջադրում, հրամայաբար լուծում պահանջում: Իսկ մենք այդ չենք կարողանում անել:

Ա. Ամենքը զարմանում են ձեր անտարբերութեան վրա. ամբողջ ամիս է խաղաղութեան դաշինք էք ստորագրել այս երկրի համար, սակայն այս դժբախտ երկիրը այդ դաշնագրի իսկական պատճէնը մինչև օրս չունի: Տաճիկները սիստեմատիկ կերպով պահանջում են դաշնագրի այս կամ այն պայմանների իրագործում, իսկ եթէ մենք ենք պահանջում նոյնը մեր երկրի կամ ժողովրդի համար, ասում են, որ դաշնագրում այդպիսի կէտեր չկան. օրինակ փախստականների յետ դառնալու մասին: Ձեր բոլոր նամակներով՝ այդ յայտնւած էր մեզ: Ալէքսանդրապօլում եղած թիւրքերէն դաշնագրի մէջ, ասել են, այդ կէտը չկայ: Յետոյ ինչպէս պէտք է վարուել մեր կայարաններում եղած երկաթուղու շարժուն սաստաւի մասին. նրանք պահանջում են իրանց թողնել և վարպետօրէն ամեն բան տարան. մենք պնդում էինք ընդհանուրից օգտվելու իրաւունքի վրայ: Արդէն գիտէք, որ Ղարաքիլիսայի գիծը մինչև օրս չեն դատարկել, երևի գիտէք նաև նրանց առարկութիւնը մինչև հայերի և վրացիների մէջ, սահմանների նկատմամբ (հաշտութիւն) համաձայնութիւն կայանալը, իրանք հայերի օգտի տեսակէտից այդ գիծը պահում են իրանց մօտ: Ի՞նչ դիրք բռնել, ինչ պատասխան տալ: Դաշն դուք էք կնքել, պահանջում են, որ մենք իրագործենք, առանց իսկական պայմաններն իմանալու: Հասկանալի է, որ դուք դրել եք մեզ սոսկալի դրութեան մէջ: Թեև ամեն կերպ կարող էք յաջողեցնել դաշնագրի իսկականը և ձեր հրահանգները մեզ ճամփելու, որ սակայն, չէք անում: Մենք ձեզ թուրք սուրհանդակ էինք ուղարկել, որին դուք չգիտենք ինչու, դատարկ յետ էք ուղարկել: Թւում է թէ դուք էլ հեշտութեամբ կարող էիք այդտեղից մեզ սուրհանդակ ճամփել:

Բ. Երկրորդ կարևոր հարցը ֆինանսների խնդիրն է. այս աղքատ ու դըժբախտ երկիրը 4 ամիս է կերակրում է քառասուն հազարանոց բանակ. ամսից աւելի է, որ 1-ին դիւիզիայի մասերը և կօմկօրը մեր վզին են: Ժողովրդին թալանելով, կողոպտելով հազիւ ենք հասցրել այստեղ. այլևս անկարելի է շարունակել, բոլոր

հասարակութեան դրամները գրավել ենք, բոլոր ձեռքի տակ եղած դրամները սպառել ենք, իսկ իւրաքանչիւր օր ավելի քան 100.000 ռուբլի ծախք ունինք - եկամուտ՝ ոչ մի կօպէկ: Սպայութիւնը ամիսներով ռոճիկ չի ստացել. խեղճերը ման են գալիս կամ չարուխներով կամ՝ ոտաբոբիկ ու գրեթէ մերկ. սոսկալի, չտեսնւած թանկութիւն է, ապրել չի լինում. աշխատէք դրամ հասցնել, այլապէս զօրքը կարող է մի օրում ցրւել և մենք կխայտառակվենք:

Գ. Ներքին անարխիան սոսկալի չափեր է ընդունել. հարկաւոր է շուտափույթ իշխանութիւն կազմակերպել և գործի անցնել. մինչև հիմա այդ չենք արել, շարունակ սպասել ենք ձեզ, իսկ դուք չընկաք ու չընկաք, դրամ է պէտք ադմինիստրացիա և միլիցիա կազմակերպելու, դրամ չկայ: Մեր ֆինանսների դրութիւնը վերևում պարզեցի ձեր առաջ:

Դ. Պարենաւորման գործը ամենադժւարը և անելանելի է. մօտ մէկ միլիօն ժողովուրդ կայ այս մի թիզ երկրի վրա, իսկ գիտէք թէ որքան հաց կայ մեզանում, գաղթականութիւնը սկսել է ցորենի արտերը անխնայ արածացնել և փչացնել, անհրաժեշտ է շուտով կազմակերպել բերքի պաշտպանութիւնը, այս տարի նմանը չտեսնւած առատ բերք կայ: Որոշել ենք հացը պետականացնել, պետական մենավաճառութիւն յայտարարել ու հաւաքել: Այս բոլորը մեր ունեցած ոյժերով անել անկարող ենք: Նամանաւանդ, դա անկարելի է ֆինանսական սնանկութեան պատճառով. անհրաժեշտ է դրամ ունենալ և սկզբից վճարել ցորեն գնելիս, այլապէս գիւղացիք կարող են պատերազմ սկսել մեր դէմ:

Ե. Բարդ խնդիր է հայ-թրքական յարաբերութեան խնդիրը. տեղացի թուրքերը իրանց համարում են արտօնեալներ. ոչ մի պարտականութիւն չեն վերցնում իրանց վրա. մենք էլ դրութեան անորոշութեան պատճառով, ի նկատի ունենալով նաև մօմենտի փափկանկատութիւնը, չենք կարողանում որոշ դիրք բռնել նրանց վերաբերմամբ:

Զ. Ձեզ քաջ յայտնի է գաղթականութեան սոսկալի վիճակը. պէտք է նրանց կազմակերպել, որոնք անղեկ ու անգլուխ թափառում են. այս վերջին օրերն էլ նրանք ոչխարի նման հետևել են Անդրանիկին ու նրա հետ գլուխ առել, գնացել Պարսկաստան, որը այդ քայլը արել է մեր կամքին հակառակ: Անդրանիկը, զինւած ու անզէն գաղթականութիւնն, ասում են, մօտ 10-15 հազար, Նոր-Բայազետի, Դարալագեազի և Նախիջևանի վրայով անցել է արդեն Ջուլֆա, ուղղակի աւեր մատնելով իր անցած տեղերը Նոր-Բայազետի ու Դարալագեազի այս երկու աղքատիկ գաւառներում՝ այժմ հաւաքւած է աւելի քան 200,000 գաղթականութիւն, որոնք բառիս բուն մտքով, ապրում են տեղացիների ունեցած աղքատիկ հացի հաշվին՝ կողոպտելով, թալանելով և աւերելով ամեն ինչ:

Այս բոլորը աչքի առաջ ունենալով՝ տեղիս Ազգային խորհուրդը որոշեց կազմել ժամանակաւոր կառավարութիւն, առանց յայտարարելու այս մասին ժողովրդին և ձեռնարկել գործի եւ իբրև վերջին յուսահատական փորձ, որոշեցինք այստեղից ձեզ մօտ ուղարկել մի պատգամաւոր, որը կյայտնի ձեզ հետևեալ պայմանները: Որ եթէ այս նամակը ձեր ձեռքը հասնելու օրից հաշւելով երկու շաբաթւայ ընթացքում դուք Երևան չհասնեք, յայտարարել Թիֆլիսի և ուրիշ տեղերի թերթում, որ դուք այս երկրի ներկայացուցիչները չէք:

Որ ձեզանից յուսահատւած՝ անմիջապէս կազմակերպուելու է սահմանադիր ժողով, ժողովրդի կամքով որոշելու երկրի բախտը-ճակատագիրը: Որ սահմանադիր ժողովի և նրանից բղխած ու հաստատւած կառավարութեան առաջ դնել ձեր պատասխանատուիթեան հարցը այս երկրի ճակատագիրը այսպէս անտարբեր և անպատասխանատու ձևով վարելու համար: Իմացէք, որ յուսահատւածները կարող են աւելի սոսկալի միջոցների դիմելու: Այս բոլորը յայտնում եմ ձեզ ի գիտութիւն և ի տնօրինութիւն: Խնդրում ենք մեր ուղարկած պատգամաւորին իսկոյն վերադարձնել, ուղարկելով նրա հետ ձեր գրավոր պատասխանը:

Յարգանօք՝ ի դիմաց Երևանի Հայոց ազգային խորհրդի՝ Արամ

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 658, թթ. 149-150 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 293
ՀՀ վարչապետ Հ. Քաջազնունու հրամանը՝ Արամ Մանուկյանին Ներքին գործերի նախարար նշանակելու մասին N 24

26 հուլիսի 1918 թ.

Заведующий Отделом внутренних дел Саак Торосян освобождается от этой обязанности и в управление Министерством внутренних дел вступает Арам Манукян.

Подписал: Министр-председатель Качазнуни

Верно: делопроизводитель

Մակագրություն. Настоящая копия приказа препровождается в редакцию газеты "Известия Эриванского Армянского национального совета" для напечатания в установленном порядке. 27 июля 1918 года, N 80, гор. Эривань. Начальник I отделения

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 10, թ. 1, պատճեն, մեքենագիր:

N 294
Արամ Մանուկյանի հայտարարությունը՝ Ներքին գործերի նախարարի պաշտոնում նշանակվելու մասին N 25

26 հուլիսի 1918 թ.

Сего числа я вступил в управление Министерством внутренних дел.

Подписал: министр внутренних дел Арам Манукян.

Верно: делопроизводитель

Մակագրություն. Настоящая копия приказа препровождается в редакцию газеты "Известия Эриванского Армянского Национального Совета" для напечатания в установленном порядке. 27 июля 1918 года, N 79, гор. Эривань Начальник 1 отделения

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 10, թ. 2, պատճեն, մեքենագիր:

N 300
Դարալագյազի պարտիզանական ջոկատի հրամանատար Յապոնի նամակը Արամ Մանուկյանին՝ Դարալագյազի, Զանգեզուրի և Նախիջևանի գավառների ռազմաքաղաքական իրավիճակի մասին

31 հուլիսի 1918 թ.
Ս. Խաչ վանք

Սիրելի Արամ,
Յուլիս 25-ն թւակիր նամակդ ստացել եմ, հաւանօրէն հենց նոյն օրը կամ մի երկու օր յետոյ ստացած պիտի լինէք սպայ Անուշաւան Ազատեանի ձեռքով ուղարկած իմ նամակները, ուրեմն և ծանօթացած մեր շրջանի անցուդարձին: Դու գրում ես, որ իբր թէ հարիւր, հազար անգամ գրել էք սահմանների մասին և հրահանգել էք մեզ կանգնել մեր սահմանների վրայ և լոյալութիւն պահել. դուք մեր անտեղեակութեան և անհասկացողութեան վրայ էք զարմանում, իսկ մենք զարմանում ենք, որ դուք հազարաւոր անգամ գրում էք սահմանների մասին, բայց ամեն անգամ էլ միայն նոյնը կրկնում: Նախքան Ղնջրլուի դէպքերը այդ մասին ոչինչ չգիտէինք, մենք համոզուած էինք, որ հաշտութիւնը խախտուած է, այդ դէպքերից անմիջապէս յետոյ իմացանք, որ Ձեր սահմանը մինչև Արփա գիւղն է հասնում, իսկ այնուհետև՞, մի՞թէ Արփայից դէնը սահման գծելու պէտք չունիք: Եթէ Դուք պէտք չէք զգում, մեզ համար խիստ կենսական է այդ հարցը, որովհետև Արփաչայ գետի միւս կողմում կան 14-15 հայ գիւղեր, որոնք խարխափում են տարտամութեան մէջ: Որպէսզի յանկարծակիի չգան այդ գիւղի բնակիչները, ես կարգադրել եմ, որ հարստութիւնը, տնային իրերը, նաև ցորենը անմիջապէս անց կացնեն գետի այս կողմ, անակնկալ-ների դէպքում գիւղից հեշտ դուրս գալու համար: Այդ մասին անհրաժեշտ է շտապողաբար Ձեր հրահանգը: Ինչպէ՞ս անել, արդեօք այժմւանից հրաման տանք, որ տեղափոխուեն, թէ ոչ: Եթե այդ կողմի սահմանը որոշ է, խնդրեմ ասէք, իսկ եթե դեռևս վիճելի է, այդ ևս գրէք: Ձեզ արդէն յայտնի է, որ Ղոզըլչա և Հորս թրքական աւազակաբները ցրուել ու բնակեցրել եմ Ղարախաչի կողմի գաղթականութեամբ: Ղոզըլչան իրենց աւազակաբարոյ վարք ու բարքով յայտնի էին, այս այն գիւղն է, որ ամբողջ 7-8 ամիս կտրել է Դարալագեազը Ղարախաչի հասարակութիւնից: Քանի-քանի անգամ այդ ճանապարհին սպանութիւններ և թալաններ է կատարուել. Ռինդ, Ելփին, Այնազուր էլ տաւար ու ոչխար չմնաց, բոլորը քշեցին տարան: Քանի-քանի անգամ գրաւոր և բանաւոր դիմումներ եմ արել գիւղի աղսախկալներին, որ դադարեցնեն իրենց աւազակային ընթացքը և վերադարձնեն հայ գիւղերից տարած տաւար և ոչխարը, սակայն միշտ էլ նրանք ձգձգել ու չեն տուել: Ղարախաչի շրջանում սկսուած վերջին կռիւների ժամանակ նրանք ակտիւ մասնակցութիւն են ունեցել՝ յարձակուելով նահանջի ճանա-պարհը բռնած գաղթականութեան վրայ. տարել են մեծ քանակու-թեամբ տաւար ու ոչխար, ջարդել են շատ գաղթականների, բռնաբարել ու տարել են կին ու աղջիկներ: Այս բոլոր յանցաւոր արարքների պատճառով ռմբակոծութեան է ենթարկուել Ղոզըլչան, որոնք մի երկու օրւայ թեթև դիմադրութիւնից յետոյ թողել, գիւղից հեռացել են: Ոչ պակաս պատուհաս է եղել մեր ու Դարալագեազի գլխին Հորսը: Նոյնիսկ պատերազմից առաջ, նրանք իրենց անհաշտ և աւազակաբարոյ վարք ու բարքով յայտնի են եղել: Սելիմի գեադուկի մինչև վերջը փակման, այդ գեադուկում կատարուած բոլոր աւազակութիւնների մէջ մասնակից և հաւասար մեղսակից են եղել նորսեցիք: Հաշտութին կայանալուց յետոյ անգամ չեն փոխել իրենց ընթացքը, քշել տարել են հազարաւոր տաւար ու ոչխար: Իմ դիմումներին՝ «վերջ տալ աւազակութիւններին և վերադարձնել այնազուրցոնց, քեշիշքեանոցոց տաւար ու ոչխարը», նրանք պատասխանել են, թէ գրութիւններին և թէ ուղարկած մարդկանց - մերժումով, որից յետոյ ստիպւած եմ եղել ռմբակոծել. դիմադրութիւն ցոյց տալ Հորս գիւղի և նոյն գիւղի օբաների231 վրայ: Դարալագեազ եկող և անցնող զօրամասերի և ճանապարհորդների վրայ զինւած յարձակումներ գործելու, Արսէն անունով խմբապետի առաջարկութեամբ անցնող զօրքին թանալելու, կոտորելու, ճանապարհներին անկարգութիւններ և սպանութիւններ անելու պատճառով, զինաթափ լինելու պահանջ եմ ներկայացրել ճանապարհի վրայ ընկած Սալլուն և Ղշլաղ գիւղերին: Ես ստիպւած էի, զբաղւած լինելու պատճառով, Սալլուն և Ղշլաղը զինաթափ անելու նպատակով ուղարկել կոմիսար Հայրիկ Տէր-Աւագեանին իր միլիցիաներով, որի զինաթափ լինելու պահանջին սալլեցիք և ղշլաղցիք մերժումով են պատասխանում ու զէնքերն առած փախչում են ապաւինում սարերը:

Զինաթափ լինելու առաջարկիս չհամաձայնուելու պատճառով տեղահան են եղել Հոստուն գիւղացիք: Հոստունը ընկած է Երդափինի և Հասան գիւղի արանքում: Վերը յիշածս գիւղերի դատարկուելու պատճառով ինքնակամ թողել ու գիղից հեռացել են հորբաղեզցիք: Հորսի օպերացիան վերջացնելուց յետոյ, իմ ուշադրութիւնս գրաւում էր Արգեազը, որը ձմեռը դեռևս գրաւել էի, սակայն տեղացիների թախանձանքներին զիջելով, նրանց բարձրացրած սպիտակ դրօշակները մեզ ընկճեցին ու խաղաղ ապրելու խօսք առնելով զիջեցի և կոտորածից ազատ պահեցի, սակայն թուրքերը իրենց սովորութեան համեմատ դրժեցին իրենց խոստումը և շարունակեցին իրենց նախկին աւազակային ընթացքը: Սկսւեց մի անասելի թալան և աւազակութիւններ, նոյնիսկ հաշտութիւնը կայանալուց յետոյ տարան բաշքեանոցոց, մալիշկեցոց տաւար ու ոչխարը և այլն: Յուլիս 22 թէ 23-ին էր, որ մտայ Արգեազի Ս. Խաչ վանքը առանց մի գնդակ արձակելու: Անմիջապէս կանչել եմ տուել գիւղի աղսախկալներին և պահանջ արել, որ զինաթափ լինեն, քանի որ մեր սահմաններում զինւած գիւղացիութիւն չպիտի մնայ: Սակայն նրանք մեր բոլոր

առաջարկներին թերահաւատութեամբ են վերաբերուել: Զինադադարի լինելու համար նրանց տւած 3 ժամ ժամանակը լրանալուց յետոյ ոչ միայն զէնքերն բերին յանձնելու, այլև քաշուեցին իրենց դիրքերը և սկսեցին մեզ վրա կրակել: Ես չպատասխանեցի, որոշելով դիմել մի երկրորդ միջոցի, գիւղում մնացած մի կիսախաղաղասէր թուրքի՝ Ամրաստան անունով նորից ուղարկեցի, որ թուրքերին համոզեն ցած իջնելու, հաւատացնելով, որ զինադադարի եղած խաղաղ բնակչութեանը ձեռք տալու չենք: Թուրքերը իմ երկրորդ առաջարկին էլ հրացանային համազարկերով պատասխանեցին, երկու օր անդադար կրակ մաղեցին մեզ վրայ, որից յետոյ ստիպւած եղանք զէնքի դիմելու և ռմբակոծութեամբ լռեցնելու և գիւղի դիրքերէն հեռանալու: Այդ երկու գիւղերն էլ այժմ բնակեցրել եմ գաղթականներով: Ձեր գրաւոր կարգադրութեան համաձայն ես որոշել եմ գաւառը խաղաղացնելու, աւազակութիւններին, սպանութիւններին և թալաններին վերջ տալու նպատակով շարունակել մեր և Զանգեզուրի արանքում ընկած բոլոր գիւղերին զինադադարի անելու գործը: Դրանցից գլխաւորը և առաջինը Հերհերն է: Այս այն գիւղն է, որ դեռևս ձմեռը, երբ ամբողջ շրջանը խաղաղ ապրում էր, առաջինը եղաւ, որ խախտեց մեր բարի դրացիական յարաբերութիւնները, ջարդելով ու գիւղից տեղահան անելով հայ բնակչութիւնը, որը առանց մի չոփ անգամ վերցնելու աստանդական դարձան՝ մեծամեծ զոհեր տալով: Խլեցին և վերցրին բոլոր հայերի ստացւածքը, հարստութիւնը, բռնաբարեցին շատ կանանց, որոնցից մի քանիսը մինչև այժմ էլ չկան, իսկ մի երիտասարդ կին, որը վիրաւորւած լինելու պատճառով գիւղից փախչել չի կարողացել, մինչև այժմ էլ մնացել է թուրքերի մէջ. հաստատ լուր ունենք, հենց թուրքական աղբիւրներից, որ այդ կինը բժշկւել է, որից յետոյ որպէս նւէր ուղարկւել է Ջուլ՝ աղայի տղային: Մի քանի անգամ դիմումներ եմ արել գերի կնոջը բաց թողնելու մասին, սակայն միշտ էլ անպատասխան է մնացել և կամ տւել են խուսափողական պատասխան: Նոյն այս Հերհերի թրքութիւնն է, որ շարունակ մասնակցել է շրջանումս կատարւող աւազակային յարձակումներին, կտրելով դէպի Զանգեզուր տանող ճանապարհը, յարձակւելով այդ ճանապարհի վրայ, ինչպէս մասնաւոր ճանապարհորդների, այնպէս և անցնող էշելոնների վրայ: Հերհերցիների նախաձեռնութեամբ մի քանի անգամ կազմակերպւել է յարձակում Գնդեազ և Ղուշչիբիլակ գիւղերի վրայ և հենց ձմեռանից չարիք են դարձած այդ երկու գիւղերի համար: Սրանք էին անցնող գաղթականութեան վրայ յարձակողները, որի ժամանակ տարել են մեծ թալան, սպանել են շատ գաղթականների, բռնաբարել ու տարել են շատ կին ու աղջիկներ: Ձեր կարգադրութեան համաձայն այս ձևով շարունակելու եմ գործողութիւններս, եթէ որևէ սխալ կամ շեղում նկատում էք, խնդրում եմ օր առաջ յայտնէք, որ շտկենք: Բոլոր փորձերից եզրակացնել կարելի է, որ թրքութիւնը (մեր սահմաններում եղած) ոչ մի տեղ զինադադարի լինելու տենդենց չէ ցոյց տալիս, ընդհակառակը, ամեն տեղ զինւած դիմադրութիւն ենք գտնում, այդ պատճառով էլ շատ դէպքերում ստիպված եմ զէնքի ուժի դիմելու: Շատ անհրաժեշտ է մեր երկրամասի մասի լրիւ սահմանները գիտենալ. Խաչիկ, Գնիշիկ գիւղերը կամ Մարտիրոսի շրջանում, որ կողմով է անցնելու սահմանը: Զինադադարի անելու ծրագիրս հեշտութեամբ և արագ գլուխ կըգար, եթէ այս՝ թէև կալ ու կուտի ժամանակ, բայց սովամահութեան դատապարտւած գաղթականութիւնը հանգիստ տար:

Մեր դժբախտութիւններից ամենից մեծը հացի պակասութիւնն է, որը խեղդելու չափ մտահոգութիւն է պատճառում, որին սակայն բաւարարելու համար չեմ կարծում, իմ ունեցած միջոցները և կարողութիւնները բաւարարեն: Խնդրեմ յայտնէք ինձ, ի՞նչ է մտածում կենտրոնում այդ մասին, արդեո՞ք օժանդակութիւն դրսից լինելու է, թէ ոչ: Պարենաւորման գործը կարգաւորելու համար մեր շրջանը մարդ ուղարկելու է, թէ ոչ: Ես իմ բատալիոնով հազար կտոր լինելու ոչ կարողութիւն և ոչ էլ ցանկութիւն ունեմ: Կարծում եմ, որ կան հարցեր, որոնց լուծման համար դուք պիտի մտածէք: Ամեն անգամ նամակ գրելիս խնդրել եմ մի քանի խելքը գլխին օֆիցերներ ուղարկել: Ինչո՞ւ չէք ուզում «չաշկա չայերի» և զբոսավայրերի բաւականութիւններից զրկել մի քանի հոգու և մեզ ուղարկել, որ իմ գործս էլ մի քիչ թեթևանայ: Տելեֆոնի էլեմենտներ եմ ուզել՝ կամ сухой կամ наливной, խօսք էք տւել սակայն իմ քոռ բախտից էդ էլ չստացայ: Յայտնէք, խնդրեմ, իմ բատալիոնի վիճակի մասին, արդեօք օրէնքի առաջ ճանաչում ենք որպէս պաշտօնական զօրամաս, թէ ոչ: Օֆիցերներիս և զինւորներիս մինչև օրս մի կոպէկ ռոճիկ չեմ տւել գոնէ ասացեք, տրւելո՞ւ է թէ ոչ, եթէ չէք տալու, մի անգամ ընդմիշտ տեղեկացրեք, որպէսզի մարդկանց սին յոյսերով չկերակրեմ: Մթերքներ, հագուստեղէն, դրամ և այլն չունինք,լինելո՞ւ է թէ ոչ: Օդով, յոյսերով կամ աստւածային զօրութեամբ բատալիոն պահելու կարողութիւն և միտք չունիմ: Խնդրում եմ շուտով բոլոր այս հարցերի մասին գրէք, այլ և յանձնարարութեամբ տեղդ ուղարկած մարդկանց շուտով ուղարկէք և հսկեք, որ անտեղի գլուխ չպահեն այդտեղ: Առ այժմ Երևան գալու ոչ մի հնարաւորութիւն չունինք, Հերհերի օպերացիայից յետոյ ես կամ Նորայր կը գանք, իսկ առայժմ շատ ու շատ խնդրում եմ մի հանգամանօրէն նամակ գրէք, առաջադրածս հարցերին լուծում տալով: Մոռացայ գրել Ճնաբերդի մասին: Ճնարբերդն էլ գաղթեց, առաջին օրն իսկ թնդանօթների և պուլիմիոտների ռմբակոծութեան ճնշմամբ գիւղացիք ստիպւած եղան տուն ու տեղ թողած փախչել, սակայն երկրորդ օրը տղամարդիկ գիւղ մտան, որոնք երկու անգամ կռիւ տալով յարձակւող խուժանի դէմ, դարձեալ թնդանօթների ճնշման տակ թողին և վերջնականապէս հեռացան: Ճնաբերդցիներին ուզում եմ բնակեցնել Սելիմի գեաղուկից Այրիջա տանող ճանապարհին ընկած Խարտզզ, Եանըղ, Քարանսարա գիւղերում, որով աւազակութիւնների իսկական հնոցը կմաքրւի և Բայազէտի հետ անմիջական կապ կունենանք: Անդրանիկի և Նախիջևանի հետ կապ և յարաբերութիւն չունինք հենց այն օրից, երբ ստացանք նրա

приказ-ները: Սուրհանդակները Բատամլու և Նորս գիւղերից դէնը չեն անցել: Բատամլուից գնացած սուրհանդակը չէ վերադարձել: Վերջին սուրհանդակները ուղարկւած են Նորսից, որոնք սակայն միչև օրս չեն վերադարձել: Ձնաբերդից սուրհանդակներ են գնացել մինչև Խալխալ և Շխմահմուդ, դատարկութիւնից բացի ուրիշ բան չեն նկատել: Սուրհանդակներ են ուղարկուած նաև մինչև Ղազանչի, որոնցից մէկին տաճիկները բռնել են, միւսը փախել, եկել է յայտնելով, որ Ղազանչին անգամ բռնւած է տաճիկ զօրքերով, ենթադրում ենք, որ Անդրանիկը Ագուլիսի կողմերում լինի. Մեղրիից Ղարաբաղ անցած լինել չի կարող, որովհետև հենց այսօր Գորիսից նամակ ստացանք, որ Անդրանիկի մասին տեղեկութիւն չունին: Մեսրովբը իր խմբով ամսի 19-ից Քեշիշքեանդից դուրս է եկել դէպի Նախիջևանի գաւառը, բայց տեղեկութիւն և յարաբերութիւն չլինելու պատճառով Նորսից այն կողմ անցնել չի կարողացել, ուստի և վերադարձել է մեզ մօտ՝ սպասելով Ձեր կարգադրութեանը: Գորիսից գրում են, որ Մանուկը իր խմբով այնտեղ է, աշխատում են կարգը վերահաստատել Գորիսի շրջանում, որից յետոյ անցնելու են Սիսիան, Ղափան և Զանգեզուր, տեղական ոյժերը և ինքնապաշտպանութիւնը ամուր հողի վրայ դնելով: Նրանց գրութեան համաձայն տեղացի մուսուլմանութեան հետ համերաշխ են և այդ նրանց ասելով յաջողւում է: Թարաքեամաները Շուշայ մարմինների թոյլտուութեամբ անցել են, նրանց պատգամաւորները եկել են Գորիս և խնդրել, որ այնտեղից էլ թոյլ տրւի նրանց անցնել, սակայն մերժում ստանալով, խուժանը ետ է դարձել:

Գորիսի շրջանում տեղաւորւած են 7000 գաղթականութիւն, որի մի մասը անց է կացել Շուշի: Խնդրում են այլևս չուղարկել, ասելով, որ այնտեղ կատարեալ սով է: Արմեն Սասունին և տեղական բնակչութիւնը վճռել են թիւրքական զօրքերը գալու դէպքում դիմադրել: Մեզ մօտ եղած արտելերիայի վզւոդը ամբողջովին քեաւառցիներից է կազմւած, էդ բեղէյրաթ աննամուսները էստեղից էլ են փախչում՝ գործը երեսի վրայ թողնելով: Մի անգամ փախան 7 հոգի, մի անգամ 15 հոգի, բայց վերջին 3 հոգուն փախնելիս բռնեցինք և լաւ դատաստան արինք: Մէկը, որ պոստից էր փախել, տեղն ու տեղը վզւոդի և մեր զինւորների ներկայութեամբ մաուզէրի 3 հարւածով շանսատակ արի, իսկ նրան ընկերակցող երկուսին հարիւրական ռոզգի տալով, երկու ամսեան բանտարկութեան եմ դատապարտել: Շատ երկարացրի, գլուխներդ չտանելու համար վերջ եմ տալիս: Նորաշէնի դէպքերի մասին արդէն գրել եմ:

Բարևներով՝ Եապոն

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թթ. 382-389, բնագիր, ձեռագիր:

N 346
ՆԳՆ Ա. Մանուկյանի կարգադրությունը զենքեր գրավող հանձնախմբերին

18 սեպտեմբերի 1918 թ.

Զէնք և փամփուշտ գրաւելու նպատակով կատարւող խուզարկութիւնների ժամանակ հնարաւոր թիւրիմացութիւններից խուսափելու համար առաջարկում եմ խստիւ հետևել հետևեալ կանոններին.

1. Գրաւման ենթակայ են մագազինաւոր հրազէններ, հետևաբար գրաւումից զերծ են որսորդական և անմագազին սիստեմի զէնքերը.

2. Խուզարկութիւն կատարել միայն այն դէպքում, երբ ցուցմունքներ կամ հաւաստիացումներ կան՝ զէնք ու փամփուշտներ թագցրած լինելու մասին.

3. Խուզարկութիւնը կատարել կատարեալ կանոնաւորութեամբ, առանց միջադէպերի, ըստ որում պահանջում եմ անպայման քաղաքավարի վերաբերմունք ցոյց տալ ազգաբնակութեանը.

4. Իւրաքանչիւր բնակարան խուզարկութեան գնալիս՝ Յանձնախումբը պարտաւոր է բնակարանատիրոջ կամ տան փոխարինող անձին ներկայացնել իմ ստորագրութիւնը կրող գրաւոր լիազօրութիւնը (օրդէր) խուզարկութիւն կատարելու մասին.

5. Արգելված զէնք կամ փամփուշտ երևան հանելու դէպքում Յանձնախումբը պարտաւոր է ամեն անգամ առանձին արձանագրութիւն կազմել յատկապէս այդ նպատակով հրաւիրւած երկու վկաների մասնակցութեամբ կատարւած խուզարկութեան հետևանքի մասին, ըստ որում այդ արձանագրութիւնները պէտք է ստորագրւած լինեն յանձնախմբի անդամների, բնակարանատիրոջ կամ դրան փոխարինող անձի և վկաների կողմից.

6. Մինիստրների, Հայաստանի խորհրդի նախագահի, նախագահի օգնականների և անդամների բնակարանները ազատ են որևէ խուզարկութեան ենթարկւելուց:

Ներքին գործերի Մինիստր՝ Արամ

«Կառավարութեան լրաբեր», 24 սեպտեմբերի 1918 թ.

N 354
ՆԳՆ Ա. Մանուկյանի շրջաբերականը գավառային կոմիսարներին՝ հանցագործության դեմ պայքարելու անհրաժեշտութեան մասին

N 5024
24 սեպտեմբերի 1918 թ.
Երևան

Բոլոր գաւառական և գաւառամասային կոմիսարներին.

Ամեն օր տեղեկութիւններ են ստանում սպանութիւնների, կողոպուտների, գողութիւնների մասին, այն էլ մեծ մասամբ Երևան-Էջմիածին-Աշտարակ-Աբարան, Երևան-Ախտա-Ելենովկա-Դիլիջան-Քարւանսարայ գլխաւոր խճուղիների վրայ: Եթէ այդպէս է դրութիւնը հաղորդակցութեան այդ գլխաւոր գծերի վրայ, ապա ուրեմն պարզ է, թէ ինչ կացութիւն է տիրում աւելի հեռաւոր և խուլ վայրերում:

Այժմ, երբ միլիցիայի կազմը բոլոր գաւառներում ուժեղացւած է և միլիցիականների վարձատրութեան չափը աւելացւած է, գաւառական և գաւառամասային կոմիսարների վրայ պարտք է ծանրանում ամենախիստ կերպով հետևել, որպէսզի ամենակարճ ժամանակամիջոցում վերջ տրւի բոլոր տեսակի անկարգութիւններին,

յանցագործութիւններին և անդորրութիւն հաստատւի երկրի մէջ:

Տեղական միլիցիական ուժերը բաւարար չլինելու պարագային պէտք է իսկոյն օգնութիւն խնդրել քաղաքից պահեստի միլիցիայից:

Այնուհետև գաւառական իշխանութեանց ներկայացուցիչները, եթէ ժամանակին միջոցներ ձեռք չառնեն ճնշելու հասարակութեան վնասող տարրերը և խափանելու յանցագործ դէպքերը, կը ենթարկւեն պատասխանատուութեան՝ իբրև օրինազանցների:

Յայտնելով այս մասին՝ առաջարկում եմ անշեղ ու անթերի հետևել սոյն հրահանգի գործադրման:

Ներքին գործերի Մինիստր՝ Արամ

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 118 և շրջ., վավերացված պատճեն, մեքենագիր:

N 364

ՆԳՆ Ա. Մանուկյանի կոչը՝ որբերին օգնելու անհրաժեշտության մասին

հոկտեմբերի 1918 թ.
Երևան

Ամեն օր մեր երկրի անկյուններից տասնյակ հուսահատ դիմումներ են ստացվում, ճանապարհների վրա, պատերի տակ ու փողոցներում թափառող հազարավոր որբերը վերահաս վտանգից փրկելու մասին:

Հյուծված ու անճար նրանց կմախքները դեգերում են Երևանի մայթերի վրա, Էջմիածնի դաշտերում, Գրբ-Բուլաղի, Նոր-Բայազետի, Դիլիջանի գյուղերում:

Զուրկ ծնողներից և կարեկցող մերձավորներից, մեր արնոտ իրականության այդ անմեղ զոհերը, օրերով քաղցած, ուժասպառ, հաճախ ընկնում են անշնչացած և մահվան գրկի մեջ գտնում այն սփոփանքը, որ իզուր իրենց դալուկ ձեռները երկարած աղերսում էին ավելի կուշտերից և ավելի բախտավորներից:

Տասնյակ հազարների է հասնում այդ մերժվածների թիվը, որոնք որբ են, մերկ, սոված ու աստանդական և որոնց խնամքն ու հոգատարութիւնը մեր պետական հասարակական կնճռոտ խնդիրների շարքում կարևորագույնը պետք է հանդիսանա:

Մինչև այժմ պատսպարված են 4000 որբեր, Երևանի, Էջմիածնի, Աշտարակի, Դարաչիչագի, Նոր-Բայազետի և Դիլիջանի որբանոցներում: Կառավարությունը որոշել է դրանց թիվը հասցնել 10. ՕՕՕ-ի, որոնց պահպանության համար տարեկան առնվազն 23.000.000 ռուբլի պետական միջոցներ են պահանջվում:

Իսկ դա հազիվ 1/5-ն է իսկական կարիքի:

Բնական է, որ սոսկ պետական աղբյուրներով և այն, մեր երկրի տնտեսական և ֆինանսական անձուկ վիճակի արդի պայմաններում, մեր մանուկ կառավարությունից, որի առաջ բազմաթիվ հոգսերի և կարիքների կողքին ծառացած և գաղթականական ծանր գործը, ավելին պահանջել անկարելի է, եթե հասարակությունը վերջապես դուրս չպիտի գա իր անտարբեր հանդիսատեսի քարացած դերից:

Ժողովուրդների երջանկությունը պայմանավորվում է նրանց ինքնօգնության բնազդով և ստեղծագործող աշխատունակությամբ: Առավել ևս այդ հատկությունները պետք է հայտնաբերի մեր ժողովուրդը, որ ճակատագրական անագորույն հարվածների տակ մեկուսացած ամենքից, այսօր թողնված է իր բախտին, իր կամքին և իր ուժերին:

50.000 - ի հասնող որբերի մի ամբողջ սերունդ խնամելն ու դաստիարակելը այսօր մեզ համար ինքնօգնության լավագույն ակտերից մեկն է, որ պետք է կատարենք մեր բովանդակ ուժերը լարերով և մեր հոգու ամբողջ կորովը կյանքի կոչելով:

Թառամում է խոշորագույն մասը մեր մատաղ սերնդի, մեռնում է ապագան մեր հայրենիքի, որի համար ցեղի լավագույն մարդիկը պայքարեցին, տառապեցին և նահատակվեցին:

Մեծ է կարիքը, միջոցները սուղ, ժամանակը կարճ:

Կոչ եմ անում ամենքին, որոնց կրծքի տակ իսպառ չէ մեռել մարդասիրության զգացմունքը, որ դեռ չեն կորցրել ցեղի բնազդը, որ գիտակցում են սեփական շահը իրենց զավակների:

Օգնության եկեք ձեր կառավարությանը, փրկեցեք անկումից վաղվա հույսը մեր հայրենիքի, խնամոտ ձեռք կարկառեցեք մայթերի և ճանապարհների վրա մռմռացող անուժ որբերին, որոնց սովատանջ հայացքը աղերսում է թեկուզ փշրանք ձեր սեղանների:

Մի թողնեք, Ձեր իսկ զավակների ապագայի սիրուն, որ Ձեր աչքերի առաջ այլասերման ենթարկվի այդ մեծ բազմությունը անօգնական մանուկների:

Որդեգրեցեք նրանց:

Ազատեցեք նրանց փողոցի թույնից և թող ամեն մի ընտանիք, որ ավելի կուշտ է ու բախտավոր, իր սրբազան պարտքը համարի վերցնել գոնե մեկը այդ թշվառ որբերից իր հարկի տակ, իր զավակի կողքին հաց տալու նրան, շունչ տալու նրան:

Թող կրկին ջերմանա սառած սիրտը մեր հասարակության, կրկին թող զարթնի ամենքի խիղճը, պարտքի գիտակցությունը և մենք փոխադարձ ջանքերով որբանոցներ հիմնելով, որբեր որդեգրելով, նրանց համար անկողին, հագուստ ու մթերք նվիրաբերելով - փրկենք խեղճ որբերին, որ հաց է աղերսում, պատսպարան է որոնում և մեր գուրգուրանքն է երազում:

Ձմեռ է գալիս, թշվառների համար իր սոսկումներով: Փրկեցեք նրանց:

Ներքին գործոց մինիստր՝ Արամ

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 599, թթ. 1-2, պատճեն, մեքենագիր:

N 442
Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի ելույթները և հարցումների պատասխանները Հայաստանի Հանրապետության խորհրդում

5-ՐԴ ՆԻՍՏ
8 օգոստոսի 1918 թ.

Ներքին գործոց նախարար Արամ՝ տալիս է համառոտ զեկուցում պարենավորման և գաղթականական գործերի մասին: Ապա պատասխանեց սոց-հեղափոխական ֆրակցիայի հարցապնդումիս՝ չորս թուրք գյուղերի ցանքերը չորս անձնավորությանց տրվելու մասին: Նախարարն ասաց, թե այդ խնդիրը պարզելու համար կարևոր է ի նկատի ունենալ այն ժամանակը, երբ տեղի ունեցավ պայմանագրությունը: Թուրքական այդ գյուղերի բերքը բրինձ է, որ աճում է բացառիկ պայմաններում, եթե ուշացնեինք այդ մարդկանց հետ պայման կապել, բրինձի ամբողջ բերքը պիտի փչանար և մեր երկիրը պիտի զրկվեր նրանից: Գյուղացիները այդ պայմանը կնքելուց հետո միայն դիմել են, որ այդ բերքը իրենց տրվի:

Նախարարի բացատրություններից հետո տեղի ունեցան բուռն և երկարատև վիճաբանություններ և ի վերջո խորհուրդը ընդունեց հետևյալ բանաձևը.

Լսելով հարցապնդումը և կառավարության բացատրությունները՝ խորհուրդը անցնում է հերթական հարցերին:

«Զանգ»,
17 օգոստոսի 1918 թ.

9-ՐԴ ՆԻՍՏ
23 օգոստոսի 1918 թ.

Երկրորդ հարցն էր ներքին գործերի մինիստրի օրինագիծը՝ ընդհանուր զինաթափության կամ մասնավոր զենքերի պետականացման (ազգայնացման) մասին:

Առաջարկելով գրավել և պետության սեփականությունը համարել Հայաստանի Հանրապետության մեջ մասնավոր սեփականություն համարվող բոլոր զենքերը, բացի որսորդական և սառն զենքերից և պաշտպանելով այդ նախագծի անհրաժեշտությունն ու շտապողականությունը, ներքին գործերի մինիստրը ասաց մոտավորապես հետևյալը:

Հայ ժողովուրդը, մանավանդ վերջին տարիներս, շնորհիվ հայտնի հանգամանքների, ենթարկված էր զինվելու պսիխոզին: Թե որքան առատ է զենքը նրանում, դա ցույց են տալիս այն դեպքերը, երբ կառավարության դեմ դուրս էին գալիս մինչև 1000 զինված մարդ, իսկ 50-100 զինված ամենափոքր տեղում իսկ կարելի էր հանդիպել:

Շնորհիվ այդպիսի զինվածության, մարդիկ սովորական վեճերը լուծում են արյունով և սպանությամբ, օրինակ՝ Ախտայի շրջանում 1 գառան պատճառով ջարդվեցին 3 ընտանիք և դիակները հնար չկար թաղելու և պետք էր ֆրոնտից 1 բատալիոն զորք բերել՝ նրանց զսպելու համար:

Այդպիսի զինվածությունը ազգամիջյան բարդությունների պատճառ էր դառնում:

Նա մի մեծ ուժ և հող է՝ դասալիքներին և ավազակներին պաշտպանելու:

Նա պատճառ է մեր բանակի զենքերի առևտրի:

Մյուս կողմից մեր աղքատիկ պետությունը ոչ մի տեղից հույս չունի զենք ստանալու, այնինչ ժողովրդի մեջ եղածը մի անսպառ պաշար է՝ 60-ից մինչև 150 հազար հատ, որը դրսից բերելու համար միլիոններ պետք կլիներ ունենալ, որ մենք հնար չունենք նույնիսկ ֆինանսական տեսակետից:

Միևնույն ժամանակ այդ զենքը ժողովրդի մեջ մնալով՝ անխնամ դրության մեջ պիտի փչանա:

Ահա այս տեսակետներից զենքերի պետականացումը անհրաժեշտ է:

Գուցե թվում է, թե մեր երկրի այս անորոշ դրության ժամանակ անհրաժեշտ է համբերել ժողովրդի այս զինվածության, սակայն փորձը ցույց տվեց, որ այդ զինումը որևէ արժեք և օգնություն չունի բանակի համար, ընդհակառակը, խանգարում է նրան:

Որ թեկուզ լավ զինված ամբոխը, այնուամենայնիվ, ռազմական ուժ չի ներկայացնում, դրան ապացույց կարող է լինել հետևյալը:

20 օր առաջ Նոր Բայազետի շրջանի քրդերը հարձակվեցին և 10 գյուղերի ոչխարները փախցրին, որ միլիոնի արժեք ուներ, պետք է ենթադրել, որ քրդերի թիվը գուցե 300-ից ավելի չլիներ, այնինչ այդ 10 գյուղերում 8000 զինվածներ կային:

Ղամարլուի շրջանում 4000 զինված հայեր կային, որոնք շարունակ Երևանից էին օգնություն խնդրում և մեր 1000 հոգուց բաղկացած մի վաշտ ավելի արժեք ուներ:

Ժողովրդի զինաթափության հետ միաժամանակ պետք է երկրում կազմվի միլիցիայի ուժեղ կազմ և սահմանները լավ պաշտպանվեն զորքով արտաքին վտանգի դեմ:

Զենքը թաքցնողները պիտի ենթարկվեն 3 ամսվա բանտարկության կամ 3000 ռ. տուգանքի, նայած մինիստրի հրամանի:

Այն հարցը, թե հնարավո՞ր է արդյոք կատարել զինաթափությունը, նա գտնում էր, որ պետք է դա անել մաս-մաս և գործի դնել կամք, հետևողականություն և անաչառություն:

Այն հանգամանքը, թե Վրաստանում դա դժվարության հանդիպեց, մեզ օրինակ չի կարող լինել, քանի որ մեզանում այնպիսի սոցիալական և քաղաքական պատճառներ չկան:

Թեև մեզնում կան շատերը, որոնք մի հրացանի համար վճարել են 1500-2000 ռ., գուցե իրենց վերջին կոպեկը, սակայն դրանք միայն 10 տոկոս կարող են կազմել, այնինչ զենքերի մեծամասնությունը գողացված ու փախցված է: Այնպես որ այդ փոքրամասնության պատճառով չպետք է վարձատրության սիստեմ մտցնել և դեռ փող տալ նրանց, որոնք կատարել են այդ ավազակությունը:

«Ժողովուրդ»,
29 օգոստոսի 1918 թ.

ՖԻԼՄԵՐ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴԱՇԱՐԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

1. Արամ Մանուկյան (նվիրվում է 20-րդ դարասկզբի պետական, քաղաքական խոշոր գործիչ, հայոց նոր պետականության հիմնադիր Արամ Մանուկյանի ծննդյան 130-ամյակին), Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, 2009 թ.

2. Առաջ դեպի անցյալ - Արամ Մանուկյան, «Նուռ» հեռուստաալիք, 2022 թ.

3. Առաջին այրեր- Արամ Մանուկյան, «Մայրաքաղաք» հեռուստաընկերություն, Արա Նախշքարյան, 2012 թ.

4. Հայորդիներ/Արամ Մանուկյան/, 29.03.2016, «Արարատ» հեռուստաընկերություն

5. Փ/Ֆ «Արամը», Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, 2019 թ.

6. «Հայտնի անհայտը». 1982 թ. Արամ Մանուկյանի գերեզմանին խաչքարի թաքուն տեղադրումը, Ռուզան Խաչատրյան, 2021 թ.

7. Մի երգի պատմություն. «Արամ Մանուկյան», Արա Նախշքարյան, 2014 թ.

Արամ Մանուկյան

Ռաֆֆի Հալէպլեան

Այունիք աշխարհում ծնված մի Սերգեյ տղա,
Խիզախ, արի պատանի՝ ոնց Միհեր Սասնա,
Թողեց կյանքն իր աշխարհիկ, լծվեց գործին սուրբ,
Հեղափոխական կռվի մեծ գործիչ ասուպ:

Դաշնակցական մոսինը դարերից խոսող՝
Քո գործով դու դարձրեցիր պահապան հայոց,
Խրոխտ կյանքդ զոհեցիր հանուն քո ազգի,
Ազգիս փառապանծ հերոս՝ Արամ Մանուկյան:

Հայ անկախության մտքի հզոր ռահվիրա,
Կորուսյալ մեր պետության շունչ տվող Մեսիա,
Կարսից Թիֆլիս, Երևան, Վան, Սարդարապատ,
Անմահ շունչդ է թևածում հայ հողի վրա:

«Ազատություն կամ Մահ»՝ Սուրբ երդման ճամփին,
Վանա Արամ քեզ տվին Փաշա մականուն,
Ես մի ընկեր՝ կգովեմ քո փառքը անհուն,
Հայաստանի դիկտատոր Արամ Մանուկյան:

Դաշնակցական մոսինը դարերից խոսող՝
Քո գործով դու դարձրեցիր պահապան հայոց,
Ես մի ընկեր՝ կգովեմ քո փառքը անհուն,
Հայաստանի դիկտատոր Արամ Մանուկյան:

Խրոխտ կյանքդ զոհեցիր հանուն քո ազգի
Ազգիս փառապանծ հերոս՝ Արամ Մանուկյան,
Արամ Մանուկյան, Արամ Մանուկյան:

Արամ Մանուկյան

Սուրեն Աճեմեան, Գուսան Հայկազուն

Հայկազուն ես եղել արի ու անվախ
Սյունյաց արծիվ, ճախրում էիր Մուշից – Սասուն,
Կարսից – Վան
Առյուծի նման տարել ես լուռ ու մունջ
Անհուն զրկանք ու տառապանք անտրտունջ
Հայոց ազգի պարծանք Արամ Մանուկյան:

Համախմբվեց հայոց ազգը քո կողքին,
Ու հրաշքով երկնեց մոխրից քսանութը մայիսի,
Թեկուզ փոքրիկ, բայց նոր Հայաստանը ծնվեց,
Մեր յոթ հարյուր տարվա իղձը կատարվեց,
Հայոց ազգի պարծանք Արամ Մանուկյան:

Ահա մեկ դար, ուղիղ հարյուր տարի անց
Մեր այս չքնաղ, դրախտավայր, սուրբ հայրենիքի համար
Պարտական ենք քեզ ու նաև բոլոր նրանց
Ում շնորհիվ կերտվեց անկախ Հայաստան,
Հայոց ազգի պարծանք Արամ Մանուկյան:

Դու Սասնա ծուռ, դու նվիրյալ անսահման
Դեռ կունենանք առաջնորդներ քեզ նման,
Եվ կստեղծենք հզոր, անկախ
Ու միացյալ Հայաստան:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՐԳԵՐԻ ՄԵՋ

Անունը՝ Արամ

Սաքո Բուդուզյան

Ազգը հայոց առյուծներ է ծնել,
Հայ մայրերի սուրբ կաթով է սնել:
Քաջ Արամ է ծնել ազգը հայոց,
Ով դարձել է վահան, բերդ ու ամրոց:

ԿՐԿ.
Դու Վանի քաջ Արամն ես մեր ահեղ,
Չեն հաղթի քեզ ահեր ու սև մահեր:
Պետություն ես կերտել քո ձեռքերով,
Հեռացել ես ցավով ու վերքերով:
.....

Ու կմնա փառքը քո անսասան,
Ետ կբերենք Արդահան, Մուշ ու Վան:
Սուրբ անունդ պիտի միշտ շողշողա,
Դրոշի պես հայոց պիտ փողփողա:
.....

ԿՐԿ.
Դու Վանի քաջ Արամն ես մեր ահեղ,
Չեն հաղթի քեզ ահեր ու սև մահեր:
Պետություն ես կերտել քո ձեռքերով,
Հեռացել ես ցավով ու վերքերով:

Դու դաշնակ մեր հերոսն ես փառահեղ,
Հաղթեցիր մարտերում վեհ ու ահեղ:
Քո անունը կապրի միշտ, հարատև,
Քո անունը՝ հնոց, լույս ու արև՛:

Շուշի՝ հայոց հնամյա պատմության առասպելը, որտեղ մանկությունն է անցկացրել Արամ Մանուկյանը

Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին



Լորիս Մելիքովի փողոցը, 1920 թ. սկիզբ

Հայոց թեմական դպրոցի շենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1-ԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայտարարություն

Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով եւ Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ, Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն եւ միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար:

Հայոց ազգ. խորհուրդ
1918թ. մայիս 30 Թիֆլիս

Հայոց ազգային երգը

Մեր հայրենիք, թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչում է
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ:

Ահա՛ եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի.
Բայց երանի՜, որ իւր ազգին
Ազատութեան կը զոհուի:

Միքայել Նալբանդեան

Զինանշանը

1920-ի հուլիսին կառավարությունը հաստատեց ակադեմիկոս Ալ. Թամանյանի կազմած եւ նկարիչ Կոջոյանի գծած Հայաստանի պետական զինանշանի (գերբի) նախագիծը: Զինանշանի կենտրոնում կար վահանաձեւ մի տարածություն՝ բաժանված չորս մասի. յուրաքանչյուր մասում տեղավորված էր հին Հայաստանի չորս անկախ շրջաններից մեկի զինանշանը՝ Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց, Ռուբինյանց: Մեջտեղը դրված էին մեծ ու փոքր Մասիսները եւ նրանց վերեւ՝ Հ.Հ. տառերը: Վահանի աջ ու ձախ կողմերը բռնել էին մի արծիվ եւ մի առյուծ, իսկ ներքեւը՝ սուր, գրիչ, հասկեր եւ շղթա:

Առաջին հանրապետության վարչատարածքային բաժանումը

1920 թ. ամառը Հայաստանը բաժանված էր չորս նահանգապետությունների. 1) Արարատյան՝ նահանգապետ ներքին գործոց նախարարի օգնական Ս. Թորոսյան, 2) Շիրակի՝ նահանգապետ Կ. Սասունի, 3) Վանանդի՝ Ստ. Ղորղանյան, 4) Սյունյաց՝ Ս. Մելիք-Յոլչյան (հրաժարվելուց հետո՝ Զ. Յոլյան): Նահանգներն իրենց հերթին բաժանվում էին գավառների:

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո՝ մինչև Թիֆլիսում ստեղծված ՀՀ կառավարության ժամանումը Երևան (23.07.18 թ.) երկիրը ղեկավարում էր Արամ Մանուկյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1-ԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջին կազմը

Նախագահ
Հովհաննես Քաջազնունի

Արտաքին գործերի նախարար
Ալեքսանդր Խատիսյան

Ներքին գործերի նախարար
Արամ Մանուկյան

Ռազմական նախարար գեներալ-լեյտենանտ
Հովհաննես Հախվերդյան

Ֆինանսների նախարար
Խաչատուր Կարճիկյան

Հայաստանի 1-ին հանրապետության վարչապետները



Հովհաննես Քաջազնունի
(07.06.1918 - 07.08.1919 թթ.)

Ալեքսանդր Խատիսյան
(07.08.1919 - 05.05.1920 թթ.)

Համո Օհանջանյան
(05.05.1920 - 23.11.1920 թթ.)

Սիմոն Վրացյան
(23.11.1920 - 02.12.1920 թթ.)

Սարդարապատում բացվել է Արամ Մանուկյանին նվիրված հուշակոթող

Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության թանգարանում՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության նախաձեռնությամբ, 2019թ. մայիսի 28-ին հանդիսավոր արարողությամբ բացվել է Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր, պետական քաղաքական գործիչ Արամ Մանուկյանի ծննդյան 140-ամյակին նվիրված հուշակոթող:

Վեց մետր բարձրությամբ կարմիր տուֆից կերտված համալիրը, կառուցված ՀՅԴ Կանադայի կառույցի և Տորոնտոյում Հայաստանի պատվո հյուպատոս Վան Լապոյանի բարերարությամբ, հեղինակել են ճարտարապետ Հայկ Ասատրյանը եւ քանդակագործ Արտակ Համբարձումյանը: Հուշարձանը տեղադրվել է զանգաշտարակի մոտակայքում, այնտեղ, ուր թաղված են Արցախյան ազատամարտիկները: Ըստ ճարտարապետ Հայկ Ասատրյանի՝ **«Հուշարձանի մեջտեղում հավերժությունից «ծնվող» սուրն է, որը հաղթանակներով եկել է դարերով: Խորհրդանշում է մեր պատմության փառահեղ էջերը՝ ազատությունը: Թուրը աջ եւ ձախ կողմերից «պաշտպանում» են երկու արծիվները, որոնք իրենց հերթին խորհրդանշում են սահմանին կանգնած խաղաղություն պաշտպանող զինվորներին: Հուշարձանի կենտրոնում հավերժության նշանն է: Թուրը, ծնվելով հավերժությունից, երկնասլաց մխրճվում է երկինք: Թրի գաղափարը գալիս է Ռաֆայել Իսրայելյանի չիրագործված նախագծից, ըստ որի՝ զանգաշտարակների փոխարեն դա պիտի լիներ: Այս հուշակոթողը կարծես գալիս է համալրելու, ինչու չէ, նաեւ ամբողջացնելու Իսրայելյանի նախագիծը»**:

Արամ Մանուկյանի հող-մասունքը՝ նրա հուշակոթողի մեջ՝ Սարդարապատի վեհ բարձունքում

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի տարածքում 2019 թ. մայիսի 28-ին տեղադրված՝ Արամ Մանուկյանի արձանը հուշակոթող- սրբատեղի կարելի է անվանել, որտեղ ամփոփվեց պետական գործչի, Հայաստանի Հանրապետության հիմնադրի հող-մասունքը: Արամ Մանուկյանի 140-ամյակին նվիրված հուշակոթողի մեջ մասունքը զետեղելու արարողությունը կատարվեց Արմավիրի մարզի թեմի առաջնորդ Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռամբ: Ներկա էին դաշնակցականներ, ՀՄԸՄ-ականներ ու Մանուկյանի հիշատակին հավատարիմ հայորդիներ:

Ախքան Առաջին Հանրապետության հիմնադրի մասունքը հուշակոթողի մեջ զետեղելը՝ ելույթով ու երախտիքի խոսքով հանդես եկավ հուշակոթողի մտահղացման հեղինակ ու նախաձեռնող Հակոբ Ջամբազյանը: **«20-րդ դարն իր մեջ է խտացրել հայ ժողովրդի երկար պատմությունը, որի փառահեղ էջերից մեկն է 1918-ի մայիսի 28-ը: Այսօր ինձ առիթ է ընձեռվել այդ խորհրդի մասին խոսելու: Ինձ համար պատիվ է լինել մտահղացման հեղինակն այս փառավոր հուշակոթողի, ինչի համար ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել Սարդարապատի Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի տնօրեն Կարեն Արիստակեսյանին և ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանին: Հայոց ցեղասպանության մահասարսուռ օրերից երեք տարի անց ո՞վ կարող էր երևակայել, որ 1918-ի մայիսի 28-ին հայոց մթագնած երկնակամարի վրա պիտի ծագեր անկախ պետականության արևը: Հարգանք մեր հեղափոխական սերնդին, նրա հայտնի ու անհայտ բոլոր հերոսներին, որոնք իրենց թանկագին կյանքը զոհաբերեցին հայրենիքի ազատության սրբազան բագինի վրա, որպեսզի հայ ժողովուրդը հարություն առնի մայիսյան արշալույսով ու ապրի ազատ, անկախ՝ իր սեփական հողի վրա»**,- ասաց նա:

Ըստ Ջամբազյանի՝ թեև Առաջին Հանրապետության անկախությունը եղավ կարճատև, սակայն ազատ ու հայավայել ապրելու ոգին միշտ վառ ու անխաթար մնաց հայ ժողովրդի տարասփյուռ հատվածներում ու հայրենիքում: Ընդգծեց՝ պատահական չէր, որ 1988 թ. փետրվարյան օրերին հայ ժողովուրդը, ականջալուր Արամ Մանուկյանի վավերական կտակին, քաջություն ունեցավ փշրելու իրեն շղթայած և ազատությունը բռնաբարած համայնավար բռնակալության կապանքները՝ ստեղծելով Հայաստանի ու Արցախի անկախ հանրապետություններ:

Սարդարապատի հուշահամալիրի Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի տնօրեն Կարեն Արիստակեսյանը ելույթի սկզբում նշեց, որ հուշակոթողի մեջ

ամփոփվում է Արամ Մանուկյանի գերեզմանից, նրա Երևանի տնից, Վանից և Շուշիից բերված հող-մասունքը՝ ապահովելով Արամ Մանուկյանի ներկայությունն ու կենդանի շունչը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսների՝ նրա զինակիցների ու և գաղափարակիցների հետ:

Արիստակեսյանն էլ իր հերթին շնորհակալություն հայտնեց մտահղացման հեղինակին՝ Հակոբ Ջամբազյանին, հուշակոթողի բարերարին՝ Տորոնտոյում Հայաստանի Հանրապետության պատվո հյուպատոս Վարուժան Լապոյանի, այս մտահղացումն իրականացնելու համար, ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանին՝ հանդիսությանն աջակցություն ցուցաբերելու համար:

«Արամ Մանուկյանն իրավամբ մեր նորագույն պատմության Փոքր Միհրն է, և ուզենք, թե չուզենք, նրա հետ են կապված լինելու մեր երեկվա և այսօրվա ազգային մեծ ու փոքր իղձերը և երազանքները: Նա անմահ է Փոքր Միհրի պես: Նա լուսավորելու է բոլորիս ճանապարհը: Նա անմահ է Փոքր Միհրի պես, բայց ո՛չ՝ անժառանգ: Ու քանի դեռ նա կա, մենք «հաջողելու ենք և լույս աշխարհ ենք դուրս գալու», որովհետև նա գործ է արել, իսկ մենք հանձն ենք առել շարունակել այդ գործը, որ ղեկավարվում է «Ցեղի Ձայնով ու Ոգով», քանի որ... «հերոսն ինքը ժողովուրդն է», որը «իր սեփական ջանքերով, իր անձնազոհությամբ պիտի փրկե իրեն»,- նշեց հուշահամալիրի տնօրենը՝ երանի տալով բոլոր նրանց, ովքեր իրենց հոգիներում Արամ Մանուկյան ունեն, մեծանում են իրենց հերոսների հետ ու նրանց փառքը վերածում նոր խոյանքների ու նոր երազների:

ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ Շաղիկ Մարուխյանն էլ ասաց, որ այսօրվա իրադարձությունը ևս իր տրամաբանական բացատրությունն ունի՝ Արամ Մանուկյան անձը հայության հավաքական ձգտումների լավագույն խորհրդանիշներից է: **«Մարդ և հավաքականության մասնիկ, որի համար հայրենիքը մեկն էր՝ անտարանջատելի ու իր հատվածներով հավասարարժեք, ինչը վերաբերում է նաև այդ բնօրրանի տերերին: Արամի պայքարը համահայկական էր, Արամը մայրաքաղաքը վերականգնեց նախ պատմական Հայաստանի մայրաքաղաք Վանում և այդ կործանված փորձից հետո՝ երկրորդ անգամ, այն վերածնեց Արևելահայաստանի տարածքում: Արամն իր ընդգրկուն ու հսկայածավալ առաքելությունն իրականացրեց՝ գործակիցներ ունենալով թե՛ իր գաղափարակից ընկերներին, թե՛ բոլոր այն հայորդիներին, որոնց ուսերն ունակ էին կրելու տվյալ պատասխանատվության բեռը: Այսօր՝ հարյուր տարի անց, Արամի և նրա ժամանակի այս դասերն առավել քան այժմեական են մեզ համար, որպեսզի թույլ չտանք աններելի սխալներ: Որպեսզի պատմականորեն ճակատագրական հանգրվանում ունակ լինենք համախմբելու ազգային ամբողջ ներուժը և համազգային ճիգով հաղթահարելու այսօրվա ու վաղվա մարտահրավերները»**,- ասաց ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամը:

Զինվորական համազարկով ու հոգևորականների իրականացրած հատուկ կարգով Արամ Մանուկյանի հող-մասունքը զետեղվեց նրա հուշակոթողի մեջ՝ հավերժելով Հայաստանի Հանրապետության հիմնադրի ներկայությունը Սարդարապատի վեհ բարձունքում:

7 հունիսի 2019

Արամ Մանուկյանի անձնական իրերը՝ թանգարանում

Այս մեծ հայրենասէրի, անմնացորդ նուիրեալի անձնական առարկաները պահպանւում եւ ցուցադրւում են թանգարանում: 1998թ. յունիսի 24-ին թանգարան է այցելել Արամ Մանուկեանի 80-ամեայ դուստրը՝ Սեդա Մանուկեանը, հօր անձնական իրերը թանգարանին նուիրելու առաքելութեամբ: Իրեր, որոնք նա տարիներ շարունակ մասունքի պէս խնամքով պահել-պահպանել էր: Երիզանախշ, քանդակազարդ սիրամարգի տեսքով ձեւաւոր բռնակով եւ դուրս ճկուած նստուկով արծաթէ բաժակակալը /ՀԱՊԹ 8196/1 «ԹՄ» 835/ նուէր է ստացել 1916թ. նոյեմբերի 5-ին, ունի «Քաւոր աղին 195/x16» գրութիւնը: Արամ Մանուկեանի արծաթէ թեզանիքակալները /ՀԱՊԹ 8196/3 ա, բ «ԹՄ»-835/ շատ ինքնատիպ են՝ կլոր վերնամասով, զարդանախշ: Թեզանիքակալների միւս մասն ունի զոյգ թռչունների պատկերով «Ա» տառի ձեւ: Երկու մասերը միմեանց միացուած են շղթայով:

Հաւաքածուի մաս է կազմում Արամ Մանուկեանի գրպանի ժամացոյցը /ՀԱՊԹ 8196/2 «ԹՄ»-835/2/: Կլոր, ժամերի ու վայրկեանների համար նախատեսուած մեծ ու փոքր դաշտերով, ոսկեգոյն հատիկաշարով երիզուած, լատինատառ գրութեամբ /K. Serkisoff, Constantinople/ ժամացոյցի բացուող կափարիչն ունի բուսական զարդանախշեր եւ «Remonto in Mncre 18 Rubis/ գրութիւնը/: Յայտնի բրենդ Serkisof Demiryolu գրպանի ժամացոյցների ֆաբրիկան հիմնադրել է թուրքահայ ոսկերիչ Սարկիսովը 1880թ.: Կարճ ժամանակամիջոցում ընկերութեան յաճախորդները դարձել են Օսմանեան կայսրութեան եւ բանակի բարձրաստիճան պաշտօնեաները: Բոլոր դէպքերում դա չփրկեց Սարկիսովների ընտանիքին, որը սպանուեց թուրքերի կողմից, իսկ բրենդն, արդէն Աթաթուրքի օրօք, անցաւ թուրք արտադրողի ձեռքը: /http://barev.today/news/demiryolu/, 30 января, 2016, 05:44//

Թանգարան մտնող իւրաքանչիւր այցելու մեծ հետաքրքրութեամբ է զննում այդ առարկաները եւ կարծես դրանց միջոցով հաղորդակից լինում հայոց պետականութեան հիմնադիր Արամ Մանուկյանի հետ:

Արևիկ Մելիքյան

ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՅՈՒՄ

Արամի փողոցը
Երևանում

Արամ Մանուկյան փողոցը
Կապանում

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր

Արմավիր քաղաքից 10 կմ հեռավորության վրա, ընդարձակ տարածքում 1968-ին կառուցված ճարտարապետական–քանդակագործական համալիր նվիրված Սարդարապատի ճակատամարտ 1918-ի հերոսների հիշատակին (հեղինակ ճարտ. Ռ. Իսրայելյան, քանդակագործներ Ա. Հարությունյան, Ս. Մանասյան և Ա. Շահինյան):
Հորինվածքի ուղղաձիգ շեշտը 4 մույթերի վրա հանգչող կամարներով կազմավորված զանգաշտարակն է, որ երկու կողմից ասես պաշտպանվում է թևավոր ցուլերի հզոր արձաններով:
Քանդակագործական խորհրդանիշերի թեման շարունակում են ծառուղու երկայնքով տեղադրվ նդակազարդված կորագիծ հուշապատով, որից այն կողմ, գմբեթածածկ սեղանատունն է:
Հուշահամալիրի օրգ. մասն է Հայաստանի ազգագրության թանգարանը:
Ուղղանկյուն (64,9 մ X 61,7 մ) հատակագծով, 10 մ բարձրությամբ շենքում «հազարաշեն» գմբեթներով ծածկված, վերևից լուսավորվող երեք դահլիճներն են, որոնց կից ներքին 4 բակերից առատ լույս է թափանցում պարագծով դասավորված ցուցասրահները (ցուցադրման համար օգտագործվող մակերեսը 5000 մ2-ից ավելի է):
Արտաքին խուլ պատերի եռանկյունաձև որմնախորշերը ուժեղացնում են շենքի ծավալատարածական հորինվածքի արտահայտչականությունը և օրգանապես կապված են ցուցասրահների նպատակահարմար հատակագծմանը:
Արմավիրի վառ կարմիր տուֆից կառուցված հուշահամալիրի հուզական ուժեղ ներգործությունը պայմանավորված է նաև կերպարային լուծման ժողովրդայնությամբ, կրում է հերոսական անցյալի համաժողովրդական գնահատության խորհուրդը:

Լ. Բաբայան

Հովհաննես Թումանյան.

«Ի՞նչ ասես, որ չէր տա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ ազատ Հայաստանը»

Արամ Մանուկյանի հրահանգը եռագույն դրոշը՝ կարմիր, կապույտ, դեղին, գործածելու մասին

ՀՀ ներքին գործերի մինիստրի հրահանգը եռագույն դրոշակը գործածելու մասին
13 սեպտեմբեր, 1918թ.

Հայաստանի Հանրապետության պետական-կառավարական հիմնարկությունները պետք է ունենան և կրեն Հանրապետության դրոշակ հետևյալ գույներով, ըստ կարգի վերևից ներքև՝ կարմիր, կապույտ, դեղին:
Հայտնելով այս մասին, առաջարկում եմ անմիջապես կիրառել սույն հրահանգը և հետևել նրա անթերի իրագործմանը:

Ներքին գործոց մինիստր՝ ԱՐԱՄ